2021/3(10)
ԵՐԵՎԱՆ

ԱՄԲԵՐԴ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

AMBERD
BULLETIN

АМБЕРД
БЮЛЛЕТЕНЬ

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն, 2021
ASUE «TNTESAGET» Publishing House, 2021
Издательство АГЭУ «ТНТЕСАГЕТ», 2021

«Ամբերդ» տեղեկագիրը հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ
Бюллетень «Амберд» издается по решению Ученого совета АГЭУ
The "Amberd" Bulletin is published by the decision of ASUE Scientific Council

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

Թաթուլ ՄԿՐՏՉՅԱՆ *(ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր)*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ *(«Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն)*, **Վարդան ԱԹՈՅԱՆ** *(«Ամբերդ» հետազոտական կենտրոնի փոխտնօրեն-ավագ փորձագետ)*, **Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ** *(«Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ)*, **Զոյա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** *(ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր)*, **Տիգրան ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** *(ՀՊՏՀ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի պետ)*, **Գրիգոր ՆԱԶԱՐՅԱՆ** *(ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան)*, **Արմեն ՔԹՈՅԱՆ** *(ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի վարիչ)*, **Էդգար ԱՂԱԲԵԿՅԱՆ** *(ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի դոցենտ)*, **Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ** *(«Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող)*, **Սաթենիկ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ** *(ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչության խմբագիր)*

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Նաիրա ԽՉԵՅԱՆ *(ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչության խմբագրահրատարակչական բաժնի համակարգող)*

ГЛАВНЫЙ РЕДАКТОР

Татул МКРТЧЯН *(Проректор по науке АГЭУ)*

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Давид АХВЕРДЯН *(Директор исследовательского центра «Амберд», АГЭУ)*, **Вардан АТОЯН** *(Заместитель директора-старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ)*, **Самвел АВЕТИСЯН** *(Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ)*, **Зоя ТАДЕВОСЯН** *(Профессор кафедры Международных экономических отношений АГЭУ)*, **Тигран МАРТИРОСЯН** *(Начальник отдела по организации научно-исследовательских работ АГЭУ)*, **Григор НАЗАРЯН** *(Декан факультета Регулирования экономики и международных экономических отношений АГЭУ)*, **Армен КТОЯН** *(Заведующий кафедрой Статистики АГЭУ)*, **Эдгар АГАБЕКЯН** *(Доцент кафедры Финансов АГЭУ)*, **Амазасп ГАЛСТЯН** *(Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ)*, **Сатеник АЛАВЕРДЯН** *(Редактор издательства «Тнтесагет», АГЭУ)*

ОТВЕТСТВЕННЫЙ СЕКРЕТАРЬ

Наира ХЧЕЯН *(Координатор редакционно-издательского отдела издательства «Тнтесагет», АГЭУ)*

EDITOR-IN-CHIEF

Tatul MKRTCHYAN *(Vice Rector for Science, ASUE)*

EDITORIAL BOARD

Davit HAKHVERDYAN *(Director, «Amberd» Research Center, ASUE)*, **Vardan ATOYAN** *(Deputy Director & Senior Expert, «Amberd» Research Center, ASUE)*, **Samvel AVETISYAN** *(Senior Expert, «Amberd» Research Center, ASUE)*, **Zoya TADEVOSYAN** *(Professor, Chair of International Economic Relations, ASUE)*, **Tigran MARTIROSYAN** *(Head, Division of Organization of Scientific-research Affairs, ASUE)*, **Grigor NAZARYAN** *(Dean, Faculty of Regulation of Economics and International Economic Relations, ASUE)*, **Armen KTOYAN** *(Head, Chair of Statistics, ASUE)*, **Edgar AGHABEKYAN** *(Associate Professor, Chair of Finance, ASUE)*, **Hamazasp GALSTYAN** *(Researcher, «Amberd» Research Center, ASUE)*, **Satenik ALAVERDYAN** *(Editor, «Tnthesaget» Publishing House, ASUE)*

EXECUTIVE

Naira KHCHEYAN *(Coordinator, «Tnthesaget» Publishing House, ASUE)*

«Ամբերդ» տեղեկագիր, 2021
ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչություն, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ . CONTENTS

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԿԵՐԱԿ . ПУЛЬС ЭКОНОМИКИ . PULSE ECONOMICS

Նարեկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
5 «Հետլոքդաունյան» տնտեսական վերականգնման հայաստանյան խճանկարը
Нарек КАРАПЕТЯН. Обзор восстановления экономики Армении после локдауна
Narek KARAPETYAN. Snapshot of Post-lockdown Economic Recovery in Armenia

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ . ФИНАНСОВАЯ СИСТЕМА . FINANCIAL SYSTEM

Էդգար ԱՂԱԲԵԿՅԱՆ
12 ՀՀ բանկերի ներդրումային փաթեթները, կամ արժեթղթերի շուկան որքանո՞վ է կախված բանկային համակարգից
Эдгар АГАБЕКЯН. Инвестиционные портфели банков РА или насколько рынок ценных бумаг зависит от банковской системы
Edgar AGHABEKYAN. Investment Portfolios Banks of RA or to What Extent the Securities Market Depends on the Banking System

Գագիկ ԲԱԴԱԴՅԱՆ
20 Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշները. ո՞ր ֆոնդերն են առավել եկամտաբեր ՀՀ-ում
Гагик БАДАДЯН. Основные показатели обязательных пенсионных фондов: какие фонды самые выгодные в РА?
Gagik BADADYAN. Main Indicators of Mandatory Pension Funds: Which Funds are the Most Profitable in RA?

Սասուն ՍԱՀԱԿՅԱՆ
28 ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի փոփոխությունը ծրագրային բյուջետավորման ներդրման արդյունքում
Сасун СААКЯН. Изменение структуры расходов государственного бюджета РА в результате введения программного бюджета
Sasun SAHAKYAN. Change in the Structure of Expenditures of the State Budget of the RA as a Result of Introduction of the Program Budgeting

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ . ТЕРРИТОРИАЛЬНОЕ РАЗВИТИЕ . TERRITORIAL DEVELOPMENT

Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ
37 Տարածքային աճի բևեռների չափորոշիչները
Вагe БУЛАНИКЯН. Критерии полюсов территориального роста
Vahe BULANIKYAN. Ichoice of Criterias for the Poles of Territorial Growth

ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ . РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ . MARKETS AND COMPETITION

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ
43 Ինչպե՞ս է COVID-19 համավարակն ազդել պարենի գների վրա
Самвел АВЕТИСЯН. Как пандемия COVID-19 повлияла на продовольственные цены?
Samvel AVETISYAN. How has the COVID-19 Pandemic Affected Food Prices?

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ
50 «Խելացի» զբոսաշրջության կազմակերպումը՝ տեխնոլոգիական լուծումների և նորամուծությունների օգտագործմամբ
Гаяне ТОВМАСЯН. Организация «умного» туризма с использованием технологических решений и инноваций
Gayane TOVMASYAN. Organization of «Smart» Tourism Using Technological Solutions and Innovations

Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ
57 ՀՀ-ում սպառողական վարքագծի փոփոխության միտումները համավարակի պայմաններում
Тереза ШАГРИМАНЯН. Тенденции изменения поведения потребителей в условиях эпидемии в РА
Tereza SHAHRIMANYAN. Trends in Changing Consumer Behavior in the Conditions of the Pandemic in the RA

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ . ГОРОДСКАЯ ЭКОНОМИКА . URBAN ECONOMY

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

66 Երևան քաղաքի վերգետնյա հասարակական տրանսպորտ. հավակնոտ ծրագրի ոդիսականը

Амазасп ГАЛСТЯН. Наземный общественный транспорт в Ереване: одиссея амбициозного проекта

Hamazasp GALSTYAN. Overground Public Transport in Yerevan: The Odyssey of an Ambitious Project

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԵԼԻՔ . ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ . EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

Նարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

79 Թվային տնտեսության արդի միտումները. արդյո՞ք աշխարհը նույնը կլինի COVID-19-ից հետո

Нарине ПЕТРОСЯН. Текущие тенденции в цифровой экономике: будет ли мир таким же после COVID-19?

Narine PETROSYAN. Current Trends in Digital Economy: Will the World be the Same After COVID-19?

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ . АРМЕНИЯ И МИР . ARMENIA AND WORLD

Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

89 ՀՀ արտահանման ներուժը. ո՞ր ոլորտներում է ՀՀ-ն մրցունակ

Шушан МОВСИСЯН. Экспортный потенциал Армении: в каких сферах Армения является конкурентоспособной?

Shushan MOVSISYAN. Export Potential of Armenia: Which Areas Armenia is Competitive in?

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

96 ՀՀ բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանման շարժընթացը

Рузанна ТАДЕВОСЯН. Динамика экспорта высокотехнологичных товаров РА

Ruzanna TADEVOSYAN. The Dynamics of the Export of High-Tech Products of the RA

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХРОНИКА . GEOPOLITICAL CHRONICLE

Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

103 Կառավարության քաղաքականության ազատականացման ազդեցությունը տնտեսության վրա (Իսրայելի օրինակով)

Альберт АЙРАПЕТЯН. Влияние либерализации политики правительства на экономику (на примере Израиля)

Albert HAYRAPETYAN. Impact of Liberalization of Government's Policies on the Economic Affairs (the Case of Israel)

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ . ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА . VISION OF ARMENIAN SOCIETY

Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

112 Աշխարհագրական միջավայրի և ժողովրդի ներդաշնակության անգիտացումը՝ «հայրենիք և ազգ կորցնելու արվեստի» համատեքստում

Юрий ОВАКАНЯН. Неосознавание гармоничности географической среды и народа в контексте «искусства потери родины и нации»

Yuri HOVAKANYAN. Ignorance of Geographical Environment and People's Harmony in the Context of «the Art of Losing Motherland and Nation»

ԻՍԿ ԴՈՒՔ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ... . А ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...? . DO YOU KNOW THAT...?

Աննա ՓԱԽԼՅԱՆ

125 Բնության օրենքների խախտումը՝ հանուն ձկնաբուծության բիզնեսի մոնոպոլացման

Анна ПАХЛЯН. Нарушение природных законов во имя монополизации рыбоводственного бизнеса

Anna PAKHLYAN. Violation of Nature Laws for Monopolization of Fishery Business

«ՀԵՏԼՈՔԴԱՈՒՆՅԱՆ» ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԽՃԱՆԿԱՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_5

Հիմնաբառեր. *տարբերակված վերականգնում, սեզոնային ճշգրտում, տնտեսական ակտիվության ցուցանիշ, տնտեսության «արգելափակում», արտարկման մեթոդ*

Նարեկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2019 թ., ավարտելով ՀՊՏՀ-ն, ընդունվել է ասպիրանտուրա: 2016-2018 թթ. եղել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, ապա փորձագետ:

Վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների հեղինակավոր կազմակերպություններում:

Աշխարհի երկրները 2021 թ. անցնում են «հետլոքդաունյան» վերականգնման ճանապարհով՝ տարբերակված արագություններով: Բացահայտելու համար, թե ՀՀ տնտեսությունն ինչ չափով է վերականգնվել 2020 թ. մարտ-ապրիլ ամիսների խիստ սահմանափակումների պատճառով առաջացած տնտեսական խոր անկումից հետո, հեղինակն ուսումնասիրել է տնտեսական ակտիվության, ինչպես նաև ոլորտային, արտաքին առևտրի և աշխատանքի շուկայի ցուցանիշների սեզոնայնորեն ճշգրտված ցուցիչները (ինդեքսները): Ըստ այդմ՝ պարզվել է, որ տնտեսությունը, չնայած առանձին ցուցանիշների գծով տպավորիչ արդյունքներին, 2021 թ. մայիսի դրությամբ վերականգնել է «լոքդաունի» (արգելափակման) ընթացքում կրած կորստի 2/3-ը, իսկ միտումների արտարկումից բացահայտվել է, որ կրած կորստի մինչև 90%-ը կարող է վերականգնվել մինչև տարեվերջ, ինչի արդյունքում տարեկան կտրվածքով 2021 թ. արդյունքներն ավելի բարձր կլինեն, քան 2019-ինը: Սակայն, սա չի նշանակում, որ 2020 թ. ճգնաժամից հետո տնտեսության աճի ներուժը չի թուլացել: Հեղինակի կարծիքով՝ վերջինիս ուժեղացման համար կարևոր է, թե ինչպես կընթանան իրականացվող կառուցվածքային բարեփոխումները:

Արժույթի միջազգային հիմնադրամի «Համաշխարհային տնտեսական հեռանկարներ. ապրիլ, 2021» խորագրով զեկույցում կանխատեսվում էր, որ 2021 թ. համաշխարհային տնտեսությունը մեծապես կվերականգնի նախորդ տարվա կորուստները՝ 2020 թ. 3.3% անկումից հետո աճելով 6%-ով: Միաժամանակ, ԱՄՀ-ն

նշում էր, որ վերականգնումն ըստ երկրների չափազանց տարբերակված է լինելու՝ պայմանավորված պատվաստումների ընթացքով, պետության կողմից իրականացվող տնտեսական աջակցման միջոցառումներով և կառուցվածքային գործոններով, այդ թվում՝ զբոսաշրջության ոլորտից կախվածությամբ[1]:

Տնտեսական վերականգնման տարբերակվածությունն արդեն իսկ իրականություն է, ինչի մասին վկայում են այս տարվա առաջին եռամսյակի տնտեսական աճի ցուցանիշները: Գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ չնայած երկրների մեծ մասում թվերը տատանվել են 2% աճից մինչև 2% անկման միջակայքում (ցուցանիշների մեդիանը՝ 0.7% անկում), որոշ երկրներում գրանցվել են մեծապես շեղվող ցուցանիշներ: Այսպես՝ տնտեսական աճի առումով առաջատար Չինաստանում 2020 թ. առաջին եռամսյակի 6.8% անկման դիմաց այս տարվա առաջին եռամսյակում արձանագրվել է 18.3% աճ, մինչդեռ, օրինակ, Մեծ Բրիտանիայում՝ 6.1% անկում:

Հայաստանում 2021 թ. առաջին եռամսյակում գրանցվել է 3.3% անկում, ինչը զիջում է դիտարկվող երկրների մեդիանային ցուցանիշին: Սակայն, իրավիճակի «ախտորոշում» իրականացնելու համար պետք է հասկանալ, թե ինչ հիմքի նկատմամբ է տեղի ունեցել փոփոխությունը. եթե համեմատելի ժամանակահատվածում գրանցվել է աճ (օրինակ՝ եթե համավարակը փոքր-ինչ ավելի ուշ է բռնկվել և գրեթե չի ընդգրկել առաջին եռամսյակը), ապա ներկա ցուցանիշն ավելի համեստ է լինելու, իսկ եթե անկում՝ առավել բարձր: Այսպես՝ Հայաստանի 3.3% անկումը տեղի է ունեցել 4.2% աճի, իսկ, օրինակ, ԵՄ երկրների 1.2% անկումը՝ 2.7% անկման հիմքի վրա, ինչն անհամեմատելի է դարձնում այս ցուցանիշները: Հետևաբար՝ աշխարհի տարբեր երկրների առումով, տնտեսական անհամահունչ և տատանողական միտումների պարագայում աճի ցուցանիշները հաճախ շփոթեցնում են, և առավել արդյունավետ է ցուցիչների մակարդակների ուսումնասիրությունը, որը նաև հնարավորություն է տալիս գնահատելու ցուցանիշի ներկա դիրքը նախաճգնաժամային «պիկի» համեմատ:

Այդ նպատակով հաշվարկել ենք տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) և ոլորտային ակտիվության ցուցանիշների սեզոնայնորեն ճշգրտված ցուցիչները (ինդեքսները): Վերջիններս ցույց են տալիս տնտեսական ակտիվության ամսական, սեզոնային գործոնից «մաքրված» մակարդակները: Ինչպես կարելի է նկատել գծապատկեր 2-ից, սեզոնայնորեն ճշգրտված



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տնտեսական աճն աշխարհի տարբեր երկրներում 2021 թ. առաջին եռամսյակում (2020 թ. առաջին եռամսյակի նկատմամբ)[2]

[1] IMF, Managing Divergent Recoveries, April 2021, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2021/03/23/world-economic-outlook-april-2021

[2] Աղբյուրը՝ https://tradingeconomics.com/country-list/gdp-annual-growth-rate



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՏԱՑ-ի սեզոնայնորեն ճշգրտված ցուցիչը (2017 թ. հունվար = 100)

ՏԱՑ-ի ցուցիչը կտրուկ անկում է գրանցել 2020 թ. մարտին և ապրիլին՝ երկու ամսվա ընթացքում նվազելով շուրջ 22%-ով: Նշենք, որ այս ժամանակահատվածում տնտեսական գործունեության նկատմամբ գործում էին ամենախիստ սահմանափակումները, որոնք զգալիորեն թուլացվեցին մայիսին: Վերջինս նպաստեց նրան, որ ՏԱՑ-ը մայիսին նախորդ ամսվա նկատմամբ աճեց մոտ 5%-ով, իսկ հունիսին՝ 4.3%-ով: Ամռան հաջորդ ամիսներին վերականգնման գործընթացը կանգ առավ, սակայն, փոխարենը, սեպտեմբերից աճի ընդհանուր միտում ձևավորվեց, ինչի արդյունքում 2020 թ. մայիսի դրությամբ տնտեսական ակտիվության մակարդակը նույն տարվա փետրվարի համեմատ նվազեց 7.3%-ով, ինչը նշանակում է, որ ՀՀ տնտեսությունը վերականգնել է 2020 թ. մարտ-ապրիլին արձանագրված անկման 67%-ը:

Դիտարկենք զարգացումներն արդյունաբերության, շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտներում (գծապատկեր 3): 2020 թ. մարտ-ապրիլին ամենամեծ անկումը գրանցվել է շինարարության ոլորտում, որը կորցրել է թողարկման ծավալների շուրջ կեսը (51.4%-ը): Վերջինիս հաջորդել է առևտուրը, որը նվազել է մոտ մեկ երրորդով (33.4%-ով), ապա ծառայությունները՝ մոտ 20%-ով, իսկ արդյու-





ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Տնտեսական ակտիվության ոլորտային ցուցանիշների սեզոնայնորեն ճշգրտված ցուցիչները (2017 թ. հունվար = 100)

նաբերությունը կրել է ամենափոքր կորուստը՝ անկում ապրելով 15%-ով: Սահմանափակումների մեղմացումից հետո՝ մինչև 2021 թ. փետրվար, շինարարությունը բավական արագորեն վերականգնվել է, այնուհետև նվազել: Առևտուրը կտրուկ կերպով վերականգնվել է 2020 թ. մայիսին, սակայն հաջորդող ամիսներին նվազել է, իսկ ծառայությունները 2020 թ. ընթացքում այդպես էլ չեն վերականգնվել: Այս ոլորտների բավական արագ վերականգնում տեղի է ունեցել 2021 թ. հունվար-մայիսին: Արդյունաբերությունը, ի տարբերություն մյուս ոլորտների, նման տատանողականություն չի ցուցաբերել և աստիճանաբար վերականգնվել է մինչև 2021 թ. մայիս:

Արդյունքում, 2021 թ. մայիսի դրությամբ միայն արդյունաբերության ոլորտն է, որ գերազանցել է 2020 թ. փետրվարին արձանագրված մակարդակը (ապրիլի ցուցանիշներով՝ 2.8%-ով): Վերականգնվել են առևտրի շրջանառության գրանցված կորուստի 96%-ը, ծառայությունների 62%-ը և շինարարության 46%-ը:

Տնտեսության «արգելափակումը» համեմատաբար թույլ ազդեցություն է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների վրա: Մասնավորապես՝ 2020 թ. մարտ-ապրիլին արտահանումը նվազել է 16.4%-ով, իսկ ներմուծումը՝ 11%-ով, սակայն կորուստները գրեթե ամբողջությամբ վերականգնվել են նույն տարվա ընթացքում: Իսկ արդեն 2021 թ. մայիսի դրությամբ արտահանումը գերազանցել է 2020 թ. փետրվարի ցուցանիշը 33.3%-ով, ներմուծումը՝ 9.5%-ով (գծապատկեր 4):

Աշխատանքի շուկայի սեզոնայնորեն ճշգրտված ցուցանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ 2020 թ. մարտ-ապրիլին գրանցված կազմակերպությունների թիվը նվազել է մոտ 2.5 հազարով (շուրջ 5%-ով), իսկ գրանցված վարձու աշխատողներինը՝ մոտ 39 հազարով (մոտ 6.2%-ով), սակայն այդ ցուցանիշները վերադարձել են նախաճգնաժամային մակարդակներին բավական արագորեն (առաջինը՝ մայիսին, իսկ երկրորդը՝ օգոստոսին): Միջին աշխատավարձը նույն ժամանակահատվածում նվազել է մոտ 2.5%-ով, որի՝ նախաճգնաժամային մակարդակի վերականգնում գրանցվել է նոյեմբերին: 2021 թ. ապրիլի տվյալներով՝ սեզոնայնորեն ճշգրտված գրանցված կազմակերպությունների թիվը 2020 թ. փետրվարի ցուցանիշը գերազանցել է 11.4%-ով, գրանցված աշխատողներինը՝ 2.5%-ով, իսկ միջին աշխատավարձը՝ 5.3%-ով: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ բերված տվյալները հիմնվում են ՀՀ ՊԵԿ-ի բազաներում առկա տեղեկությունների վրա, ինչը նշանակում է, որ դրանք կարող են արտացոլել ինչպես աշխատանքի շուկայի իրական շարժընթացը, այնպես էլ ոչ ձևականից



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Սեզոնայնորեն ճշգրտված արտահանման և ներմուծման ծավալները
(մլն ԱՄՆ դոլար)





ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Գրանցված կազմակերպությունների, վարձու աշխատողների թիվն ու միջին աշխատավարձերն ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների *(սեզոնայնորեն ճշգրտել է հեղինակը)*[3]

(ֆորմալից) ձևական (ֆորմալ) հատված տեղափոխությունները, որոնք հնարավոր է՝ խթանված լինեն կառավարության հակաճգնաժամային օժանդակության միջոցառումների արդյունքում (գծապատկեր 5):

Այսպիսով՝ զարգացման միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսությունը COVID-19 համավարակի պատճառով տեղի ունեցած «լոքդաունից» հետո դեռ վերականգնման ընթացքում է, ընդ որում, եթե, օրինակ, արդյունաբերությունը վերականգնվել է բավական արագորեն և ամբողջությամբ, ապա ծառայությունները և շինարարությունը հետ են մնում, ինչի հետևանքով ամբողջ տնտեսությունը «նախաքովիդյան» ցուցանիշի համեմատ վերականգնվել է 2/3-ի չափով՝ չնայած աշխատանքի շուկայի և արտաքին առևտրի տպավորիչ վերականգնմանը: Իսկ տնտեսական ակտիվության ցուցանիշի միտումների արտարկումը ցույց է տալիս, որ տնտեսությունն իր նախաճգնաժամային մակարդակին (2020 թ. փետրվարի պիկին) չի հասնի նաև այս տարեվերջին, թեև վերականգնում է մարտ-ապրիլին գրանցած կորուստների գրեթե 90%-ը[4] (գծապատկեր 6):

Ըստ գնահատման արդյունքների՝ 2021 թ. ՏԱՑ-ը կկազմի 7.8%՝ 4.1%-11.6% անորոշության միջակայքով: Այս պարագայում նշված ցուցանիշը կգերազանցի 2019 թ. մակարդակը, ինչը կարելի է դիտարկել որպես դրական սցենար, հաշվի առնելով, որ, ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների, զարգացող երկրների 2/3-ը չի կարողանա վերականգնել 2019 թ. ունեցած մակարդակը: Բայց, մյուս կողմից, սա ակնհայտորեն ցածր ցուցանիշ է այն զարգացող երկրների համեմատությամբ, որոնք դուրս են գալիս համավարակի ցնցումից՝ համաշխարհային տնտեսության մեջ զբաղեցնելով առավել ամուր դիրքեր: Նման երկրներից են Չինաստանը և Հնդկաստանը, որոնք, ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների, այս տարի կաճեն համապատասխանաբար՝ 8.5%-ով (2.3% աճի հիմքի վրա) և 8.3%-ով (7.3% անկման հիմքի վրա), երբ 2021 թ. սպասումը համաշխարհային տնտեսության համար 5.6% է՝ 2020 թ. 3.5% անկման նկատմամբ: Չինաստանի աճը, ըստ ՀԲ փորձագետների, առաջ է մղում ներքին և արտաքին հետաձգված պահանջարկը, ինչի շնորհիվ էլ համաշ-

[3] Վարձու աշխատողների թվի և աշխատավարձերի վիճակագրությունը ներառում է համատեղությամբ աշխատողների և չի ներառում զինվորականների տվյալները: Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» զեկույցներ, 2018-2021 թթ., Աշխատանքի վարձատրություն և աշխատողների թվաքանակ:

[4] Նշենք, որ դիտարկված սցենարում 2021 թ. ՏԱՑ-ը կազմելու է 7.8%, որը, հաշվի առնելով ընդունված անորոշության միջակայքը, կտատանվի 4.1-11.6%-ի շրջանակում: Միտումների արտարկման պարագայում 2021 թ. թողարկման մակարդակը 0.6%-ով ավելի բարձր է, քան 2019-ին:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

ՏԱՑ-ի միտումների արտարկումը 2021 թ. հունիս – դեկտեմբերի համար[5]

խարհային տնտեսության մեջ այս երկրի մասնաբաժինը կաճի: Որոշակի չափով իր դիրքը կարող է ամրապնդել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները[6]:

Իսկ ինչ է նախանշում 2021 թ. հնարավոր վերականգնումը Հայաստանի համար, և մասնավորապես՝ արդյոք կարելի է ասել, որ մեր տնտեսությունը պահպանում կամ մեծացնում է իր աճի ներուժը: Այսպիսի լավատեսական գնահատականի համար այնքան էլ ամուր հիմք չկա՝ հաշվի առնելով մեզանում պատվաստումների դանդաղ ընթացքը, առաջին եռամսյակում արձանագրված՝ համախառն կուտակման փոքր կշիռը ՀՆԱ կառուցվածքում, օտարերկրյա ուղղակի ներդրումների ցածր մակարդակը և այլն: Թերևս, այդ գործոններին հակակշռում են մետաղների (հատկապես՝ պղնձի) բարձր գները՝ ձևավորված միջազգային ապրանքային շուկաներում, ինչի արդյունքում հանքարդյունաբերությունն առաջանցիկ աճի միտումներ է ցուցաբերում (այսպես՝ 2021 թ. հունվար-ապրիլին ոլորտն աճել է 8.8%-ով, մինչդեռ մշակող արդյունաբերությունը նվազել է 3.9%-ով[7]):

Տնտեսական ներուժը վերականգնելու և հետագա աճ ապահովելու տեսակետից, կարևոր է, թե ինչ ընթացք կունենան կառուցվածքային բարեփոխումները, որոնց արդյունավետ իրականացումը կարող է բարելավել ՀՀ տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ աճի հեռանկարները:

[5] Իրականացվել է ARIMA մոդելի օգնությամբ՝ վերջինիս ավտոմատ հատկորոշմամբ:
[6] Word Bank Group, Global Economic Prospects: A Strong but Uneven Recovery, June 2021, https://www.worldbank.org/en/publication/global-economic-prospects
[7] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-ապրիլին, https://www.armstat.am/am/?nid=82&id=2389

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՎԿ, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» տեղեկագրեր, https://www.armstat.am/am/?nid=157
2. ՀՀ ՎԿ, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» զեկույցներ, https://www.armstat.am/am/?nid=82
3. GDP Annual Growth Rate. Trading Economics, https://tradingeconomics.com/country-list/gdp-annual-growth-rate
4. Word Bank Group, Global Economic Prospects: A Strong but Uneven Recovery, June 2021, https://www.worldbank.org/en/publication/global-economic-prospects, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2021/03/23/world-economic-outlook-april-2021
5. IMF, Managing Divergent Recoveries, April 2021, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2021/03/23/world-economic-outlook-april-2021

Нарек КАРАПЕТЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, аспирант

ПУЛЬС ЭКОНОМИКИ

ОБЗОР ВОССТАНОВЛЕНИЯ ЭКОНОМИКИ РА ПОСЛЕ ЛОКДАУНА

Экономики стран мира восстанавливаются с разной скоростью после локдауна из-за пандемии COVID-19. Чтобы выявить степень восстановления экономики РА после глубокого экономического спада, вызванного жесткими ограничениями марта-апреля 2020 года, автор анализирует сезонно скорректированные ряды индекса показателя экономической активности, отраслевых индексов активности, показателей внешней торговли и рынка труда. Анализ показал, что несмотря на впечатляющее восстановление некоторых показателей, до мая 2021 года экономика восстановила лишь 2/3 своих потерь марта-апреля 2020 года. Между тем, экстраполяция тенденций показывает, что около 90% потерь можно восстановить до конца 2021 года, в результате чего экономическая активность превысит уровень 2019 года. Но это не означает, что потенциал роста экономики не сократился после рецессии в 2020 году, и для его повышения необходимы структурные реформы.

Ключевые слова: *расходящееся восстановление, сезонная корректировка, индикатор экономической активности, экономический локдаун, метод экстраполяции*

Narek KARAPETYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE, PhD student

PULSE ECONOMICS

SNAPSHOT OF POST-LOCKDOWN ECONOMIC RECOVERY IN RA

World economies experience their post-lockdown recoveries with divergent speeds. To reveal the degree at which RA economy has recovered after deep drop of economic activity due to strict restrictions during March-April 2020, the author analyzes seasonally adjusted series of economic activity indicator index, sectoral activity indexes, foreign trade and labor market indicators. The analysis has revealed that, despite impressive recovery of some of the indicators, by May 2021 the economy has recovered only 2/3 of its losses of March-April 2020. Meanwhile, the extrapolation of trends indicates that around 90% of losses can be expected to recover by the the end of2021, which also implies that the economic activity will surpass the level of 2019. However, it does not mean that the growth potential of economy did not shrink after the recession in 2020, and structural reforms are needed for boosting it.

Keywords: *divergent recoveries, seasonal adjustment, economic activity indicator, economic lockdown, extrapolation method*

Էդգար
ԱՂԱԲԵԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2004 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2007 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան և աշխատանքի անցել ՀՊՏՀ արժեթղթերի շուկայի (այժմ՝ ֆինանսների) ամբիոնում, սկզբում՝ որպես ասիստենտ, ապա դոցենտ: Հեղինակ է մի շարք գիտական հրապարակումների և հետազոտությունների:

ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԸ, ԿԱՄ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆ ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԿԱԽՎԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_12

Հիմնաբառեր. *առևտրային բանկեր, ներդրումային փաթեթ, ներդրումներ, պետական պարտատոմսեր, եվրոբոնդեր, ռեպո գործարքներ*

ՀՀ-ում ֆինանսական շուկան բնորոշվում է բանկային համակարգում ակտիվների կենտրոնացմամբ: Բանկերը, որպես տնտեսությունը ֆինանսավորող առանցքային ինստիտուտներ, ակտիվ են նաև արժեթղթերի շուկայում: Մի կողմից դրանք կորպորատիվ պարտատոմսեր թողարկող հիմնական ընկերություններ են, իսկ մյուս կողմից՝ պետական պարտատոմսերի շուկայի հիմնական ներդրողներ: Հոդվածում հեղինակը փորձում է ուսումնասիրել բանկերի կողմից կատարվող ներդրումներն արժեթղթերում, բանկերի ներդրումային փաթեթների կառուցվածքը: Առանձնակի ուշադրություն է սևեռվում կնքվող ռեպո գործարքներին և ԿԲ-ի կողմից այդ շուկայի ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորման հիմնահարցին:

Առևտրային բանկերի ավանդական գործառույթն ավանդների ներգրավումն ու վարկերի տրամադրումն է: Սակայն, որպես ֆինանսական ինստիտուտներ, բանկերը ներդրումներ են կատարում արժեթղթերում և կարիք ունեն նաև իրացվելիության կառավարման, ինչն անհնար է իրականացնել առանց արժեթղթերի ու ֆինանսական այլ գործիքների կիրառման: Այս առումով, հետաքրքրական է իմանալ, թե ինչպիսին է հայաստանյան բանկերի ներդրումային վարքագիծը, և արդյո՞ք դրանում առկա են որոշակի ռիսկեր:

Բանկերը՝ որպես հիմնական ներդրողներ: ՀՀ-ում ֆինանսական շուկան բնորոշվում է բանկային համակարգում ակտիվների կենտրոնացմամբ: Բանկերը, որպես տնտեսությունը ֆինանսավորող առանցքային ինստիտուտներ, ակտիվ են նաև արժեթղթերի շուկայում: Մի կողմից դրանք կորպորատիվ պարտատոմսեր թողարկող հիմնական ընկերություններ են, իսկ մյուս կող-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Պետական պարտատոմսերի ռեզիդենտ ներդրողների կառուցվածքը 2015 թ.-ից մինչև 2020 թ. մարտ[1]

մից՝ պետական պարտատոմսերի շուկայի հիմնական ներդրողներ:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, տևական ժամանակ է, որ բանկերը հանդես են գալիս իբրև պետական պարտատոմսերի հիմնական սեփականատերեր: Բանկերի կշիռը պետական պարտատոմսերի սեփականատերերի կառուցվածքում միշտ գերազանցում է 50 տոկոսը, այն դեպքում, երբ ոչ բանկ ներդրողների կշիռը, սկսած 2018 թ.-ից, 20 տոկոսի շրջանակում է:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Բանկային համակարգի ակտիվները, ներդրումները վարկերում, արժեթղթերում, պետական պարտատոմսերում ու եվրոբոնդերում (հազ. դրամ)[2]

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, բանկային համակարգի ակտիվներն ու բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալներն անընդհատ աճել են:

Մյուս կողմից, բացարձակ առումով, աճել են նաև բանկերի կողմից արժեթղթերում, այդ թվում՝ պետական պարտատոմսերում ու եվրոբոնդերում կատարվող ներ-

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տեղեկագրեր:
[2] Ցուցանիշները հաշվարկված են որոշ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների համախմբմամբ:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ բանկերի ներդրումներն արժեթղթերում 2015 թ. չորրորդ եռամսյակից մինչև 2021 թ. առաջին եռամսյակ (հազ. դրամ)[3]

	2015_Q4	2016_Q4	2017_Q4	2018_Q4	2019_Q4	2020_Q4	2021_Q1
«Արմսվիսբանկ» ՓԲԸ	29,939,508	60,765,040	82,598,302	135,004,705	154,579,874	221,380,000	213,148,968
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	23,185,391	35,860,317	41,004,393	35,858,385	43,463,559	107,539,939	130,092,665
«Ինեկոբանկ» ՓԲԸ	14,060,108	24,929,256	31,307,180	28,999,460	29,474,135	70,683,459	84,230,606
«Արդշինբանկ» ՓԲԸ	21,963,475	37,724,434	34,132,613	41,763,857	54,879,274	71,919,298	81,173,245
«Արցախբանկ» ՓԲԸ	8,783,041	17,647,485	22,907,170	34,487,343	42,086,315	47,048,202	77,849,896
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	29,849,306	38,227,353	53,822,858	51,455,375	52,680,630	75,003,917	72,329,415
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	15,144,701	32,846,022	29,328,229	33,320,448	38,404,665	41,542,969	44,825,428
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	6,602,172	16,050,625	21,704,806	19,771,096	25,512,200	44,226,444	43,446,937
«Կոնֆերս Բանկ» ՓԲԸ	5,050,972	14,974,444	26,655,661	27,034,296	20,972,705	39,609,436	42,649,139
«Մելյաթ Բանկ» ՓԲԸ	7,892,849	21,296,205	26,921,329	25,838,910	28,261,420	32,935,036	32,986,497
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	19,970,764	26,300,153	20,699,385	27,041,605	22,697,760	18,959,068	31,384,391
«ԱՎԴԻ Բանկ» ՓԲԸ	4,206,129	19,118,686	29,406,955	25,488,670	31,917,675	29,320,181	29,733,851
«Էյչ-Ես-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	14,556,286	22,435,501	20,215,071	18,955,639	24,488,392	31,450,034	28,838,251
«ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ	4,118,433	21,530,251	26,078,994	30,954,555	34,968,128	27,059,431	26,347,226
«Էվիոնբանկ» ՓԲԸ	9,077,487	12,044,547	12,013,878	11,897,279	11,213,092	20,217,278	21,081,728
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	20,259,527	23,853,118	26,322,232	23,006,645	21,928,699	18,410,332	20,519,837
«Յունիբանկ» ՓԲԸ	8,548,621	14,399,954	21,474,879	17,853,349	17,410,072	16,455,695	16,155,153

դրումների ծավալները: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ բանկերի կողմից արժեթղթերում կատարվող ներդրումների կշիռն ընդհանուր ակտիվների կազմում նույնպես աճել է՝ 2015 թ. առաջին եռամսյակի 6,9 տոկոսից 2021 թ. առաջին եռամսյակում հասնելով 14,5 տոկոսի: Սա վկայում է այն մասին, որ բանկային համակարգն ընդհանրապես սկսում է առավել մեծ տեղ հատկացնել արժեթղթերում կատարվող ներդրումներին:

Որոշ բանկերի վարքագիծը: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, արժեթղթերում կատարված ներդրումների ծավալով առաջատարն «Արմսվիսբանկն» է: Ընդ որում, ներդրումային փաթեթի աճ այդ բանկն արձանագրել է՝ սկսած 2016 թ.-ից: Արդյունքում, 2021 թ. առաջին եռամսյակում բանկի՝ արժեթղթերում կատարած ներդրումների ծավալն աճել է մոտ 7 անգամ: Նմանատիպ պատկեր է նաև «Հայբիզնեսբանկում», որն արժեթղթերում կատարած ներդրումների ծավալով 2021 թ. առաջին եռամսյակում երկրորդն է բանկային համակարգում: Տվյալ բանկի փաթեթի աճն ըստ էության մեկնարկել է 2020 թ.-ից: Այսպիսով՝ 2015 թ. չորրորդ եռամսյակի համեմատ, 2021 թ. առաջին եռամսյակում բանկի ներդրումային փաթեթն աճել է մոտ 5,6 անգամ: «Ինեկոբանկը» նույնպես, սկսած 2020 թ.-ից, քաղաքականության էական փոփոխություն է կատարել, ինչի արդյունքում, 2015 թ. համեմատ, 2021 թ. առաջին եռամսյակում արժեթղթերի պորտֆելն աճել է մոտ 6 անգամ (աղյուսակ 1):

Երբ որոշ բանկերի ներդրումային փաթեթներ համեմատում ենք բանկային համակարգի՝ պետական պարտատոմսերում կատարած ներդրումների ընդհանուր ծավալի հետ, երևում է, որ մի շարք բանկերի դեպքում ներդրումային փաթեթների ծավալները գերազանցում են դրանց 20-30 տոկոսը: Քանի որ բանկերը միմյանցից էականորեն տարբերվում են իրենց ակտիվների ծավալներով ու կառուցվածքով, հետևաբար՝ դրանց ներդրումային քաղաքականության առանձնահատկությունները գնահատելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել արժեթղթերում կատարվող ներդրումների կշիռն ընդհանուր ակտիվների կառուցվածքում: Արդյունքում, որոշ բանկերի դեպքում ակներև է դառնում ընդհանուր ակտիվների կազմում արժեթղթերում ներդրումների մեծ մասնաբաժինը (աղյուսակ 2):

Այսպես, օրինակ, «Արմսվիսբանկի» դեպքում, սկսած 2017 թ.-ից, արժեթղթերում կատարված ներդրումները գերազանցում են

[3] Այս և մի շարք այլ բանկերի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվություններ:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ բանկերի արժեթղթերում ներդրումների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում 2015 թ. չորրորդ եռամսյակից մինչև 2021 թ. առաջին եռամսյակ

	2015_Q4	2016_Q4	2017_Q4	2018_Q4	2019_Q4	2020_Q4	2021_Q1
«Արմսվիսբանկ» ՓԲԸ	35.1%	46.6%	51.0%	57.4%	54.7%	57.2%	56.9%
«Մելլաթ Բանկ» ՓԲԸ	26.8%	51.6%	58.2%	48.0%	43.7%	42.4%	42.4%
«Արցախբանկ» ՓԲԸ	9.3%	16.9%	16.7%	22.2%	23.2%	24.7%	41.5%
«ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ	10.4%	33.5%	30.6%	32.8%	33.9%	26.2%	26.2%
«Ինեկոբանկ» ՓԲԸ	5.9%	10.6%	11.3%	9.9%	8.7%	18.2%	22.2%
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	11.5%	15.2%	13.8%	14.9%	17.3%	16.7%	16.8%
«Այդի Բանկ» ՓԲԸ	4.6%	6.7%	22.3%	20.2%	21.2%	16.6%	16.4%
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	7.6%	8.9%	7.1%	5.6%	5.6%	12.0%	14.5%
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	7.5%	11.0%	11.4%	8.9%	9.1%	13.7%	13.2%
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	3.1%	7.8%	10.5%	9.6%	6.4%	11.9%	12.0%
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	5.3%	10.4%	9.4%	9.7%	11.5%	13.2%	11.9%
«Էվոկաբանկ» ՓԲԸ	11.6%	13.3%	11.4%	9.0%	6.8%	10.0%	10.3%
«Արդշինբանկ» ՓԲԸ	5.5%	7.5%	6.0%	6.2%	7.6%	7.8%	8.5%
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	5.8%	5.3%	7.9%	6.6%	5.4%	6.9%	7.2%
«Յունիբանկ» ՓԲԸ	5.4%	7.8%	10.6%	8.5%	7.0%	6.9%	6.6%
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	7.3%	9.3%	6.7%	7.7%	5.2%	3.8%	6.4%
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	6.5%	10.3%	12.2%	8.0%	7.1%	5.5%	5.8%

ընդհանուր ակտիվների 50 տոկոսը, իսկ 2021 թ. առաջին եռամսյակի դրությամբ այդ ցուցանիշը հասնում է 56,9 տոկոսի: Հաջորդ առաջատարն այս առումով «Մելլաթ բանկն» է: Վերջինիս՝ արժեթղթերում կատարած ներդրումների մեծ մասնաբաժինն ավելի շատ կարելի է պայմանավորել ոչ թե ներդրումային քաղաքականությամբ, այլ գործունեության սահմանափակումներով: «Արցախբանկի» ներդրումային փաթեթի կշռի կտրուկ աճ է նկատվում 2021 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ, ինչը կարելի է պայմանավորել հետպատերազմյան իրավիճակում ներդրումային քաղաքականության էական փոփոխությամբ: Հետաքրքրական է «Ամերիաբանկի» դեպքը, որը թեև ներդրումային փաթեթի մեծությամբ հինգերորդն է, սակայն, կապված ակտիվների մեծության հետ, ներդրումային փաթեթի կշիռն ընդհանուր ակտիվների կազմում 7,2 տոկոս է: «Արդշինբանկի» պարագայում նույնպես, չնայած ներդրումային փաթեթի մեծությանը, ակտիվների կառուցվածքում դա ընդամենը 8,5 տոկոս է:

Ուշագրավ պատկեր է արձանագրվում նաև բանկերի ներդրումային փաթեթների կառուցվածքն ուսումնասիրելիս: Նախ՝ բանկերում գերակշռում են պետական պարտատոմսերը և եվրոբոնդերը: Ոչ պետական արժեթղթերի կազմում էլ գերակշռում են կորպորատիվ պարտատոմսերը, որոնց հիմնական թողարկողներն առևտրային բանկերն են: Նշենք նաև, որ բանկերի մի մասը հենց կորպորատիվ արժեթղթերի շուկա ստեղծող է և բորսայում ամենօրյա գնանշումներ կատարելու պարտավորություն ունի: Սա էլ պատճառներից մեկն է, որ շուկա ստեղծող բանկերն իրենց փաթեթներում նման արժեթղթերի զգալի ծավալ ունենան (աղյուսակ 3):

Ռեպոների շուկան կամ ԿԲ-ն՝ որպես պարտատոմսերի շուկայի ֆինանսավորող: Խոսել ՀՀ-ում ներդրումային փաթեթի կառավարման մասին, առանց անդրադառնալու ռեպոներին, անհնար է: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում շատ ֆինանսական ինստիտուտներ ներդրումային փաթեթներ են ձևավորում ոչ միայն սեփական, այլև փոխառու միջոցների հաշվին: Այս առումով, բացառություն չեն նաև առևտրային բանկերը: Ռեպո գործարքները հնարավորություն են ընձեռում կարճաժամկետ փոխառու միջոցներ ներգրավելու և, շնորհիվ ֆինանսական լծակի, մեծացնելու սեփական միջոցների շահութաբերությունը: Փաթեթն ըստ էության կառավարվում է ֆինանսական բուրգի սխեմայով՝ անընդհատ վերաֆինանսավորումների միջոցով: Գնված պարտատոմսի դիմաց վճարումը կատարվում է այդ պարտատոմսով կնքված ռեպո պայմանագրով ներգրավված գումարով, իսկ այ-

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ բանկերի պետական պարտատոմսերում և եվրոբոնդերում ներդրումների կշիռն արժեթղթերում ներդրումներում 2015 թ. չորրորդ եռամսյակից մինչև 2021 թ. առաջին եռամսյակ

	2015_Q4	2016_Q4	2017_Q4	2018_Q4	2019_Q4	2020_Q4	2021_Q1
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	90.9%	94.7%	98.8%	99.0%	99.9%	99.9%	99.9%
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	97.7%	97.3%	95.9%	94.6%	94.6%	97.8%	98.2%
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	95.7%	96.9%	96.4%	94.2%	95.4%	97.2%	97.7%
«Արմսվիսբանկ» ՓԲԸ	98.8%	97.3%	96.6%	93.4%	94.5%	94.6%	95.5%
«Ինեկոբանկ» ՓԲԸ	98.4%	99.9%	99.1%	97.8%	98.8%	97.2%	92.4%
«Յունիբանկ» ՓԲԸ	97.3%	96.5%	56.7%	89.3%	94.7%	91.5%	91.3%
«Էվոկաբանկ» ՓԲԸ	98.4%	96.4%	87.7%	88.0%	83.2%	89.8%	90.7%
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	89.4%	92.0%	88.3%	99.2%	91.5%	92.6%	90.6%
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	87.1%	88.1%	83.6%	94.5%	93.9%	90.8%	89.9%
«ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ	98.5%	99.0%	95.1%	94.1%	91.0%	88.5%	89.4%
«Արդշինբանկ» ՓԲԸ	90.6%	93.2%	94.4%	83.7%	83.1%	86.6%	88.7%
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	73.7%	88.6%	72.4%	43.8%	67.7%	83.3%	86.9%
«Այդի Բանկ» ՓԲԸ	91.9%	87.1%	95.9%	83.9%	77.9%	83.5%	83.9%
«Մելլաթ Բանկ» ՓԲԸ	99.8%	99.9%	90.9%	99.9%	99.1%	81.2%	81.6%
«Արցախբանկ» ՓԲԸ	72.6%	43.2%	40.2%	55.1%	62.4%	65.6%	79.6%
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	93.7%	94.1%	90.3%	78.3%	71.4%	49.9%	68.1%
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	99.4%	100.0%	88.1%	78.7%	61.2%	62.2%	62.1%

նուիետև երկարաձգվում կամ այլ ռեպո համաձայնագրի կնքմամբ մարվում է այդ պայմանագիրը: Պետական պարտատոմսերի եկամտաբերության ու ռեպո գործարքի տոկոսադրույքի տարբերությունն էլ հենց փաթեթի տոկոսային զուտ եկամուտն է: Շուկան, ըստ էության, բավական ռիսկային է, և ռիսկերը հիմնականում կապված են ինչպես ռեպո տոկոսադրույքների տատանման, իրացվելիության, այնպես էլ շուկայում պարտատոմսերի եկամտաբերության փոփոխության հետևանքով գրավադրված ակտիվների արժեքի շեղումների հետ:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից արժեթղթերով և ռեպոներով կնքված գործարքների ծավալները 2014 թ. դեկտեմբերից մինչև 2021 թ. ապրիլ (մլն դրամ)[4]

[4] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց շրջանառության ծավալները, https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/IC_turnover_arm.xls



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Պետական պարտատոմսերի և ԿԲ-ի կողմից բանկերին տրամադրված ռեպոների ծավալները 2015 թ. հունվարից մինչև 2021 թ. մայիս[5]

Հետաքրքրական է նաև ռեպո շուկայի կառուցվածքը: Նախևառաջ, շուկայում գործարքներ են կատարում ՀՀ կենտրոնական բանկն ու առևտրային բանկերը: Այնուհետև գործարքներ են կնքվում ֆինանսական շուկայի մնացած մասնակիցների միջև՝ առևտրային բանկեր, ներդրումային, ապահովագրական ընկերություններ, վարկային կազմակերպություններ, ներդրումային ֆոնդեր և նույնիսկ՝ մասնավոր ներդրողներ:

Շուկայում արդյունավետ ներդրումային գործիքների պակասը այդ թվում ֆինանսական ինստիտուտներին, այլև բանկերին ստիպում է ֆինանսական լծակի կիրառմամբ ռեպո գործառնություններով մեծացնել իրենց ներդրումային փաթեթները: Արդյունքում, ռեպո գործարքների շրջանառությունը մի քանի անգամ գերազանցում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից առաջնային և երկրորդային շուկաներում կատարվող առք ու վաճառքի գործառնությունները (գծապատկեր 3):

Գծապատկեր 4-ից երևում է, որ, սկսած 2018 թ.-ից, ԿԲ-ի կողմից բանկերին տրամադրվող ռեպոների ծավալները, որպես կանոն, աճում են: Ճիշտ է, այս գործիքը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Պետական պարտատոմսերում բանկերի ներդրումների և ԿԲ-ի կողմից բանկերին տրամադրված ռեպոների ծավալները 2015- 2021 թթ. մարտ ամիսներին[6]

[5] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ ամփոփ ցուցանիշներ, https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/2-Money%20Base.xlsx, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության պարտքի ամսական ամփոփ տեղեկագրեր, https://minfin.am/hy/page/amsakan_ampop_teghekagir/

[6] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տեղեկագրեր, www.cba.am և ՀՀ ԿԲ ամփոփ ցուցանիշներ, https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/2-Money%20Base.xlsx

բանկային համակարգում կիրառվում է իրացվելիության կառավարման համար, սակայն, եթե դիտարկենք դրա շրջանակում տրամադրված գումարների և բանկային համակարգին պատկանող պետական պարտատոմսերի հարաբերակցությունը, պատկերն առավել ակներև կդառնա:

Գծապատկեր 5-ից երևում է, որ ԿԲ-ի կողմից տրամադրված ռեպոյի ծավալը 2020 թ. վերջին հասել է 69,4, իսկ 2021 թ. մարտին՝ 63,9 տոկոսի: Եթե հաշվի առնենք, որ հետագա ամիսներին, կապված բանկային համակարգում պահուստավորման նորմատիվի խստացման հետ, բանկերը կարճաժամկետ իրացվելիության առավել մեծ պահանջարկ են ունեցել, պարզ կդառնա, որ այդ հարաբերակցությունն աճելու է: Ուստի կարող ենք ասել, որ շուկայում առկա պարտատոմսերի և ԿԲ-ի կողմից առևտրային բանկերի հետ կնքվող ռեպո գործառնությունների ծավալների համեմատումը ցույց է տալիս, որ պետական պարտատոմսերի շուկայի մի զգալի մասն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորում է հենց ԿԲ-ն:

Հիմնական առանձնահատկություններ, թե՞ ռիսկեր: Ընդհանրացնելով իրավիճակի նկարագրությունը՝ կարող ենք կատարել մի քանի հետևություններ:

Նախ՝ առևտրային բանկերում գնալով աճում են արժեթղթերի փաթեթների ծավալները, ինչը պայմանավորված է մի կողմից բանկերի կողմից լրացուցիչ ֆինանսական գործիքներ կիրառելու հետաքրքրվածությամբ, իսկ մյուս կողմից՝ այդ ֆինանսական գործիքներով իրացվելիության կառավարման դյուրինությամբ:

Երկրորդ՝ որոշ բանկերի ներդրումային փաթեթների մեծությունն էական չափերի է հասնում՝ գերազանցելով ընդհանուր ակտիվների 40 տոկոսը, ինչպես նաև դա գերազանցում է պետական պարտատոմսերում բանկերի ընդհանուր ներդրումների 20-30 տոկոսը: Սա մի կողմից այդ բանկերին էական կախվածության մեջ է դնում արժեթղթերի շուկայում եկամտաբերությունների տատանումներից, իսկ մյուս կողմից՝ նման խոշոր փաթեթ ունեցող բանկերին հնարավորություն է տալիս, անընդհատ գործարքներ կնքելով, ուղղորդելու այդ գործընթացները: Բանկերի համար էական խնդիր է նաև այն, որ հիմնական ներդրումները կատարվում են պետական պարտատոմսերում, ինչը թեև ցածր վարկային ռիսկով գործիք է, սակայն շուկայում այլ գործիքների բացակայության պատճառով բավական ռիսկային է դարձնում ներդրումային փաթեթները:

Մյուս կարևոր գործոնը ռեպո գործարքների էական ծավալներն են, որոնց պարագայում բանկերը հնարավորություն են ունենում բարձրացնելու փաթեթի եկամտաբերությունը: Սակայն, եթե դիտարկում ենք ներդրումային փաթեթների ծավալներն ու ԿԲ-ի կողմից բանկերին տրամադրվող ռեպոները, պարզ է դառնում, որ ԿԲ-ն հիմնականում ֆինանսավորում է պետական պարտատոմսերի զգալի մասը կամ դրանց հիմքում առկա ռեպոների բուրգը:

Վերոնշյալ խնդիրների լուծումը պետք է փնտրել ոչ թե ներդրումային խիստ սահմանափակումների մեջ, որոնք, իրենց հերթին, կարող են հանգեցնել շուկայում էական ցնցումների ու զարգացման դանդաղման, այլ հարկ է կիրառել ներդրումային և ռիսկերի հեջավորման բազմազան արդյունավետ գործիքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԿԲ տեղեկագրեր, www.cba.am
2. ՀՀ ԿԲ, Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց շրջանառության ծավալները, https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/IC_turnover_arm.xls
3. ՀՀ ԿԲ ամփոփ ցուցանիշներ, https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/2-Money%20Base.xlsx
4. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության պարտքի ամսական ամփոփ տեղեկագրեր, https://minfin.am/hy/page/amsakan_ampop_teghekagir/
5. ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվություններ

Эдгар АГАБЕКЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

ИНВЕСТИЦИОННЫЕ ПОРТФЕЛИ БАНКОВ РА ИЛИ НАСКОЛЬКО РЫНОК ЦЕННЫХ БУМАГ ЗАВИСИТ ОТ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ

Финансовый рынок Армении отличается концентрацией активов в банковской системе. Банки являются основными учреждениями, финансирующими экономику, а также активны на рынке ценных бумаг. С одной стороны, они являются основными компаниями, выпускающими корпоративные облигации, а с другой стороны - основными инвесторами на рынке государственных облигаций. В данной статье автор пытается изучить вложения банков в ценные бумаги, структуру инвестиционных портфелей банков. Особое внимание уделяется операциям репо, вопросу прямого или косвенного финансирования этого рынка Центральным банком.

Ключевые слова: *коммерческие банки, инвестиционный портфель, инвестиции, государственные облигации, еврооблигации, операции репо*

Edgar AGHABEKYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

FINANCIAL SYSTEM

INVESTMENT PORTFOLIOS BANKS OF RA OR TO WHAT EXTENT THE SECURITIES MARKET DEPENDS ON THE BANKING SYSTEM

The financial market of Armenia is distinguished by the concentration of assets in the banking system. Banks are the main funding institutions for the economy and they are also active in the securities market. On the one hand, they are the main companies issuing corporate bonds, and on the other hand, they are the main investors in the government bond market. In this paper, the author tries to study the investments of banks in securities, the structure of investment portfolios of banks. Special attention is paid to repo transactions, the issue of direct or indirect financing of this market by the Central Bank.

Key words: *commercial banks, investment portfolio, investments, government bonds, Eurobonds, repo transactions*

Գագիկ
ԲԱԴԱԴՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը («Հակաճգնաժամային կառավարում»), ապա մագիստրատուրան («Գործարար վարչարարություն»): Այժմ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ է: Ուսմանը զուգահեռ, եղել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբի անդամ: Ներկայում «Փարվանյան Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության ֆինանսական տնօրենն է, ինչպես նաև, որպես փորձագետ աշխատում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունում: Հեղինակ և համահեղինակ է 12 գիտական հոդվածների:

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ. Ո՞Ր ՖՈՆԴԵՐՆ ԵՆ ԱՌԱՎԵԼ ԵԿԱՄՏԱԲԵՐ ՀՀ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_20

Հիմնաբառեր. *կենսաթոշակային ֆոնդ, ներդրում, եկամտաբերություն, արդյունավետություն, ռիսկ*

Կենսաթոշակային տարիքում գտնվող անձանց բարեկեցիկ ծերության ապահովման կարևորագույն խնդիրներից է կենսաթոշակի այնպիսի մեծության ապահովումը, որը թույլ կտա տվյալ սոցիալական խմբում գտնվող քաղաքացիներին բավարարել իրենց պահանջմունքները: Այս խնդրի երկարաժամկետ լուծման համար Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, որը գործում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի գործունեության հիման վրա: Վերջիններիս գործունեությունը միտված է կոլեկտիվ ներդրումների միջոցով ներդրողների համար ցանկալի եկամտաբերության ապահովմանը:

Հետևաբար՝ անձնական ներդրումային միջոցների արդյունավետ օգտագործման և բարեկեցիկ ծերություն ունենալու համար անհրաժեշտ է մշտապես ուսումնասիրել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, առավելապես՝ եկամտաբերությունը: Հենց այդ խնդիրների բացահայտմանն է ուղղված հոդվածում կատարված վերլուծությունը:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդն ակտիվների համախումբ է, որը նպատակ է հետապնդում ապահովել միասնական ներդրումային քաղաքականության շրջանակներում ներդրողներից (կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներից) հավաքագրված միջոցների կոլեկտիվ ներդրումն արժեթղթերում և (կամ) այլ ակտիվներում[1]: Վերոնշյալ ներդրմամբ ֆոնդն ապա-

[1] «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, հոդված 3:

հովում է եկամուտներ, որոնք, կատարված ներդրումների հետ միասին, ենթակա են վերադարձման ֆոնդի մասնակիցներին: Կատարված ներդրումները և դրանց միջոցով ձևավորված եկամուտները պետք է նպաստեն ֆոնդի մասնակիցների բարեկեցիկ կյանքին կենսաթոշակային տարիքում: Հետևաբար՝ այդ ֆոնդերի գործունեության արդյունավետության ապահովումը պարզապես անհրաժեշտություն է:

Ընդհանուր առմամբ, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերը Հայաստանի Հանրապետությունում երեքն են՝ հավասարակշռված, պահպանողական (կոնսերվատիվ) և կայուն եկամտային: Դրանք միմյանցից տարբերվում են ռիսկայնության աստիճանով, այսինքն՝ ներդրված միջոցների բաշխման հնարավոր համամասնություններով, մասնավորապես.

1. Հավասարակշռված ֆոնդի դեպքում բաժնային արժեթղթերի և դրանց հեջավորման նպատակով ձեռք բերված ածանցյալ գործիքների կշիռը ֆոնդի ակտիվներում չի կարող գերազանցել 50 տոկոսը:
2. Պահպանողական (կոնսերվատիվ) ֆոնդի դեպքում բաժնային արժեթղթերի և դրանց հեջավորման նպատակով ձեռք բերված ածանցյալ գործիքների կշիռը ֆոնդի ակտիվներում չի կարող գերազանցել 25 տոկոսը:
3. Կայուն եկամտային ֆոնդի դեպքում ակտիվները չեն կարող ներդրվել բաժնային արժեթղթերում և դրանց վրա հիմնված ածանցյալ գործիքներում[2]:

Ինչպես տեսնում ենք, ամենառիսկայինը հավասարակշռված, իսկ ամենացածր ռիսկ ունեցողը կայուն եկամտային ֆոնդն է: Սակայն, պետք է արձանագրել, որ մասնակիցների կողմից ֆոնդի ընտրություն չկատարելու դեպքում ներդրողի միջոցներն ուղղվում են պահպանողական ֆոնդի համալրմանը[3]:

Ֆոնդերի արդյունավետությունը հասկանալու համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են ֆոնդերի մասնակիցների թիվը, ֆոնդերի զուտ ակտիվների մեծությունը և, իհարկե, ֆոնդերի եկամտաբերության ցուցանիշները:

Առաջինն անդրադառնանք ֆոնդերի մասնակիցների թվին: 30.04.2021 թ. դրությամբ երեք ֆոնդերի մասնակիցների հանրագումարային թիվը կազմել է 632,577 մարդ: Մասնակիցների բաշխվածությունն ըստ յուրաքանչյուր ֆոնդի ներկայացված է գծապատկեր 1-ում:

Ինչպես և ենթադրվում էր, մասնակիցների թվով առաջատարը պահպանողական կենսաթոշակային ֆոնդերն են, որոնք համարվում են ռիսկայնության միջին մակարդակ ունեցողներ: Դրանց մասնակիցների թիվը կազմում է ընդհանուր մասնակիցների թվի 99.35%-ը: Այսինքն՝ կարելի է ասել, որ կենսաթոշակային ֆոնդերի գրեթե բոլոր մասնակիցները պահպանողական ֆոնդերի ներդրողներ են: Մասնակիցների նման քանակը պայմանավորված է



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների բաշխվածությունը[4]

[2] «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, հոդված 42:
[3] Նույն տեղում, հոդված 39:
[4] Տես ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ, 19.06.2021 թ.՝ 18:31 դրությամբ:







ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների թվի փոփոխության շարժընթացը[5]

իրավական կարգավորմամբ, որի մասին արդեն իսկ նշել ենք (ֆոնդի ընտրություն չկատարելու դեպքում մասնակիցն ինքնաբերաբար համալրում է պահպանողական ֆոնդի մասնակիցների շարքերը):

Հետաքրքրական է նաև պարզել, թե ինչպես է փոփոխվել յուրաքանչյուր ֆոնդի մասնակիցների թիվը շարժընթացում (գծապատկեր 2):

Գծապատկեր 2-ում ցուցանիշները ներկայացված են եռամսյակային պարբերականությամբ՝ սկսած 1.01.2016 թ.-ից: Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ երեք ֆոնդերի դեպքում էլ դրանց մասնակիցների թիվն ունի ակնհայտ աճի միտում, իսկ ցուցանիշների փոփոխման միտման կորն ունի դրական թեքվածություն, սակայն, ենթադրաբար, պահպանողական ֆոնդի դեպքում կորի թեքությունը բավականաչափ մեծ է մյուս երկու դեպքերի համեմատությամբ: Առանձնահատուկ է նաև այն, որ երեք կորերի դեպքում էլ որոշ ցուցանիշների շեղվածությունը փոքրագույն քառակուսիների մեթոդով կառուցված միտումից բավականաչափ փոքր է, մասնավորապես՝ երեք ֆոնդերի դեպքում էլ R^2 ցուցանիշը բարձր է 0.9-ից: Այդ ցուցանիշով (վերջինս ցույց է տալիս շարքի շեղվածությունը միտումից) ևս առաջատարը պահպանողական ֆոնդերն են:

[5] ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, արխիվ, 19.06.2021 թ.՝ 18:58 դրությամբ:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների մեծության բաշխվածությունը[6]

Ֆոնդերի ակտիվների կառուցվածքային սահմանափակումից և մասնակիցների թվից զատ, բավական կարևոր ցուցանիշ է ֆոնդերի զուտ ակտիվների մեծությունը, որը հաշվարկվում է ընդհանուր ակտիվների և պարտավորությունների տարբերությամբ[7]: Այլ հավասար պայմաններում այն ցույց է տալիս սեփական միջոցների՝ կապիտալի իրական ծավալը: Այսինքն՝ այս ցուցանիշն ակտիվների մնացորդային այն ծավալն է, որը մնում է բոլոր պարտավորությունները մարելուց հետո: Ավելին, բիզնեսի արժեքի գնահատման գործընթացում զուտ ակտիվների մեծության հաշվարկը բիզնեսի արժեքի հաշվարկման մեթոդներից մեկն է: Հետևաբար՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի «արժեքի» ուսումնասիրությունը նույնպես էական է, քանի որ բարձր «արժեքը» ֆինանսական կայունության հիմքերից մեկն է:

ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների (NVA) հանրագումարային մեծությունը 30.04.2021 թ. դրությամբ 409.7 մլրդ ՀՀ դրամ է, ինչը 01.01.2016 թ. համեմատ աճել է շուրջ 1200.4%-ով: 01.01.2016 թ. սկսած՝ եռամսյակային դիտարկման պարագայում այդ ցուցանիշի միջին աճի տեմպը կազմել է 17.5%, վերջինիս նկատմամբ միջին քառակուսային շեղումը՝ ընդամենը 8.02%, ինչը վկայում է, որ ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների մեծությունը (ֆոնդերի հանրագումարային «արժեքը») դիտարկված ժամանակահատվածում գրանցել է այնպիսի աճ, որն առավելապես բնութագրվում է կայունությամբ:

Այժմ անդրադառնանք զուտ ակտիվների մեծության բաշխմանն ըստ կենսաթոշակային երեք ֆոնդերի (գծապատկեր 3):

Ինչպես կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների թվի դեպքում, այստեղ նույնպես ցուցանիշի բաշխումն աչքի է ընկնում բարձր տարբերակվածությամբ (որպես մասնակիցների թվի խոր դիֆերենցման հետևանք): Մասնավորապես՝ 409.7 մլրդ ՀՀ դրամի չափով զուտ ակտիվներից 401.4 մլրդ ՀՀ դրամը բաժին է ընկնում պահպանողական ֆոնդերին: Սակայն, հարկ է նշել, որ այդ տարբերակվածությունը, ֆոնդի մասնակիցների թվի համեմատ, փոքր չափով, բայց մեղմվել է: Այս համատեքստում մեզ առավելապես հետաքրքրում է մեկ այլ ցուցանիշ՝ միջինում մեկ մասնակցին բաժին ընկնող զուտ ակտիվների մեծությունը (ֆոնդի զուտ ակտիվներ / ֆոնդի մասնակիցների թիվ), որը ներկայացված է գծապատկեր 4-ում՝ ըստ երեք ֆոնդերի:

Միջին ցուցանիշի պարագայում իրավիճակն ամբողջությամբ փոխվում է: Մասնավորապես՝ ամենամեծ զուտ ակտիվներ ունեցող ֆոնդի դեպքում քննարկվող միջին ցուցանիշն ամենացածրն է. այն 4 անգամ փոքր է հավասարակշռված և 2 անգամ փոքր՝ կայուն եկամտային ֆոնդերի նույն ցուցանիշներից: Այս իրավիճակն ունի իր ենթադրելի մեկնաբանությունը. ցածր կամ միջին ռիսկայնության կենսաթոշակային ֆոնդի ընտրություն հիմնականում կատա-

[6] ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ, 19.06.2021 թ.՝ 18:31 դրությամբ:

[7] The official page of CFI, https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/net-asset-value/, visited 19.06.2021, 18:02.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների միջին մեծությունն ըստ ֆոնդերի մասնակիցների թվի







ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների մեծության փոփոխման շարժընթացը[8]

[3] ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, արխիվ, 19.06.2021 թ.՝ 18:58 դրությամբ:

ում են կրթական որոշակի ցենզ ունեցող մարդիկ, և այս պարագայում նրանք փոխում են իրենց համար օրենքով ի սկզբանե սահմանված ֆոնդը (պահպանողականը)՝ ի տարբերություն մյուս քաղաքացիների, որոնք նույնիսկ չեն էլ մտածում այդ մասին: Կրթական ցենզի համեմատական բարձր մակարդակը ենթադրում է նաև անձնական եկամուտների համեմատական բարձր մակարդակ, ինչն էլ, իր հերթին, նախանշում է կենսաթոշակային ֆոնդերին կատարվող առավել մեծ հատկացումներ, որոնք էլ, բնականաբար, հանգեցնում են ֆոնդի ակտիվների մեծացմանը, որն ուղիղ համեմատական է զուտ ակտիվների մեծությանը և այլ հավասար պայմաններում հանգեցնում է վերջինիս առավել մեծ չափով մեծացմանը: Այս տրամաբանությամբ են բացատրվում գծապատկեր 4-ի ցուցանիշները:

Այժմ ներկայացնենք զուտ ակտիվների մեծության փոփոխման շարժընթացն ըստ յուրաքանչյուր ֆոնդի (գծապատկեր 5):

Ակնհայտորեն, երեք ֆոնդերի դեպքում էլ զուտ ակտիվների մեծությունն ունի աճի միտում: Ցուցանիշների փոփոխման միտման կորը բոլոր ֆոնդերի դեպքում էլ ունի դրական և բարձր աստիճանի թեքվածություն: Ինչպես ֆոնդերի մասնակիցների թվի դեպքում, այստեղ ևս կառուցված միտումից փաստացի ցուցանիշները բավական քիչ են շեղված (R^2>0.93, ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում մոդելները բարձր որակի են):

Որքան էլ որ ֆոնդերի ակտիվների կառուցվածքի սահմանափակումները, դրանց զուտ ակտիվների մեծությունը և մասնակիցների թիվը բավական կարևոր գործոններ են, այնուամենայնիվ, ֆոնդերի կառավարման արդյունավետության մասին վկայող ամենաէական ցուցանիշը եկամտաբերությունն է: Ուստի ցուցանիշների վերլուծությունն ավարտենք երեք ֆոնդերի եկամտաբերությունների ուսումնասիրությամբ: Նշենք, որ հոդվածում դիտարկվել է ֆոնդերի եկամտաբերությունը՝ հաշվարկված ստեղծման պահից (գծապատկեր 6):

Ֆոնդերի եկամտաբերության դեպքում ձևավորվել է բավականաչափ հետաքրքրական իրավիճակ: Ամենացածր եկամտաբերությունը գրանցվել է կայուն եկամտային ֆոնդերում, որոնց դեպքում ակտիվները չեն կարող ներդրվել բաժնային արժեթղթերում և ածանցյալ գործիքներում: Այս ֆոնդերում եկամտաբերության գործակիցը 30.04.21 թ. դրությամբ 9.36% է: Հաշվի առնելով ռիսկային արժեթղթերում ներդրումներ կատարելու սահմանափակումը՝ եկամտաբերության այս մակարդակը կարողենք համարել առանց ռիսկի տոկոսադրույք (risk-free rate)[10]: Այսինքն՝ քաղաքացիները, ներդրում կատարելով այս ֆոնդում, գրեթե զրոյական ռիսկով հնարավորություն ունեն ստանալու 9.36% եկամուտ: Այժմ այս տոկոսադրույքը համեմատենք մյուս երկու ֆոնդերում ձևավորված դրույքների հետ՝ հասկանալու համար ռիսկի պարգևավճարի չափը (risk premium):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը՝ սկսած ստեղծման պահից, 30.04.2021 թ. դրությամբ[9]

[9] ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ, 19.06.2021 թ.՝ 18:31 դրությամբ:

[10] The official page of CFI, https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/risk-free-rate/#:~:text=What%20is%20Risk%2DFree%20Rate,investment%20that%20carries%20zero%20risk, visited 19.06.2021, 22:52.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերության կայունությունը 01.01.2016 - 30.04.2021 թթ. ընթացքում[11]

Պահպանողական ֆոնդում, որի դեպքում ակտիվների 25%-ը կարող է ներդրվել բաժնային արժեթղթերում և ածանցյալ գործիքներում, եկամտաբերության տոկոսադրույքը 9.66% է: Այսինքն՝ ակտիվների 25%-ը ներդնելով ռիսկային արժեթղթերում՝ մասնակիցը ստանում է ընդամենը 0.3% ռիսկի պարգևավճար: Իսկ ահա հավասարակշռված ֆոնդի դեպքում, երբ ակտիվների 50%-ը կարող է ներդրվել բաժնային արժեթղթերում և ածանցյալ գործիքներում, եկամտաբերությունը 9.95% է, այսինքն՝ ռիսկի պարգևավճարն այս դեպքում ընդամենը 0.59% է: Փաստորեն, մասնակիցը «վտանգում» է իր ներդրումների 50%-ը, մինչդեռ դրա դիմաց եկամտաբերությունն ավելանում է ընդամենը 0.59%-ով: Սա, բնականաբար, ռիսկի պարգևավճարի շատ ցածր ցուցանիշ է:

Եկամտաբերության վերաբերյալ ամփոփ կարծիք տալու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այդ ցուցանիշի շարժընթացին և կայունությանը՝ ներկայացնելով եկամտաբերության միջինի նկատմամբ շեղումների մեծությունը՝ սկսած ստեղծման պահից (գծապատկեր 7):

Ինչպես տեսնում ենք, եկամտաբերության կայունության տեսանկյունից, ամենաարդյունավետը հավասարակշռված ֆոնդերն են: Այս առումով, նշված կայունությունը հարաբերականորեն կարող ենք համարել ռիսկի «ոչ նյութականացված» պարգևավճար: Հետևաբար՝ կայուն եկամտային ֆոնդերի համեմատ՝ այս ֆոնդերում ներդրումները, բացի չնչին ռիսկի պարգևավճարից, նախորդ տարիներին փաստացի ապահովել են եկամտաբերության կայունություն:

Սակայն, այս նույն մեկնաբանությունը չենք կարող տալ պահպանողական ֆոնդերի դեպքում, քանի որ դրանցում եկամտաբերության կայունությունը զիջում է կայուն եկամտային ֆոնդերի նույն ցուցանիշին: Սա նշանակում է, որ մասնակիցը, դիմելով ռիսկի և ներդրում կատարելով պահպանողական ֆոնդում, ստանում է ռիսկի չնչին պարգևավճար և միաժամանակ, «պատժվում» է եկամտաբերության անկայունությամբ: Հետևաբար՝ ակնհայտ է, որ պահպանողական ֆոնդերը, ըստ գրանցված փաստացի ցուցանիշների, ամենաքիչ գրավչություն ունեցողներն են ներդրողի համար, այնինչ հենց դրանցում է ներդրված ակտիվների ավելի քան 98%-ը:

Ամփոփելով վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր ֆոնդի գրավչությունը բնութագրող գործոնները նույնական և նույնամակարդակ չեն, ավելին, տարբեր իրավիճակներում ժամանակակից աշխարհի գերարագ փոփոխությունները կարող են հանգեցնել այդ գործոնների կտրուկ վատթարացմանը կամ բարելավմանը, հետևաբար՝ անհնար է ֆոնդի այս կամ այն տեսակը համարել ամբողջությամբ արդյունավետ՝ չնայած որևէ պահի որևէ ֆոնդում ձևավորված արդյունավետությանը: Այնուամենայնիվ, կենսաթոշակային ֆոնդերի արդյունավետության շարունակական ուսումնասիրությունը, հնարավոր միտումների բացահայտման տեսանկյունից, անհրաժեշտություն է, իսկ ներդրումային գործունեության ընթացքում այդ միտումների դիտարկման էականությունը՝ վաղուց ընդունված ճշմարտություն:

[3] ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, արխիվ, 19.06.2021 թ.՝ 18:31 դրությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին:
2. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին:
3. ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, արխիվ, 19.06.2021 թ.՝ 18:58 դրությամբ:
4. ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ, 19.06.2021 թ.՝ 18:31 դրությամբ,
5. The official page of CFI, https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/net-asset-value/, visited 19.06.2021; 18:02.
6. The official page of CFI, https://corporatefinanceinstitute.com/resources/knowledge/finance/risk-free-rate/#:~:text=What%20is%20Risk%2DFree%20Rate,investment%20that%20carries%20zero%20risk, visited 19.06.2021, 22:52.

Gagik BADADYAN
Аспирант кафедры управления, АГЭУ

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

ОСНОВНЫЕ ПОКАЗАТЕЛИ ОБЯЗАТЕЛЬНЫХ ПЕНСИОННЫХ ФОНДОВ: КАКИЕ ФОНДЫ САМЫЕ ВЫГОДНЫЕ В РА?

Одной из важнейших задач в обеспечении благосостояния людей пенсионного возраста является предоставление пенсии, которая позволит гражданам данной социальной группы удовлетворить свои потребности. Для долгосрочного решения этой проблемы в Республике Армения введена обязательная накопительная пенсионная система, действующая на основе деятельности обязательных пенсионных фондов. Деятельность этих фондов направлена на обеспечение желаемой доходности для инвесторов за счет коллективных вложений.

Следовательно, в контексте эффективного использования личных инвестиционных ресурсов и обеспечения благополучной старости всегда существует необходимость изучения основных показателей, характеризующих деятельность обязательных пенсионных фондов, особенно доходности. Проведенный в статье анализ направлен на выявление этих проблем.

Ключевые слова: *пенсионный фонд, вложение, доходность, эффективность, риск*

Гагик БАДАДЯН
PhD Student at the Chair of Management, ASUE

FINANCIAL SYSTEM

MAIN INDICATORS OF MANDATORY PENSION FUNDS: WHICH FUNDS ARE THE MOST PROFITABLE IN RA?

One of the most important issues in ensuring the well-being of people of retirement age is to provide a pension that will allow citizens in that social group to meet their needs. For the long-term solution of this problem a mandatory funded pension system has been introduced in the Republic of Armenia, which operates on the basis of activities of mandatory pension funds. The activities of these funds are aimed at ensuring the desired return for investors through collective investments.

Therefore, in the context of effective use of personal investment resources and in the context of ensuring a prosperous old age, there is always a need to study the main indicators characterizing the activities of mandatory pension funds, especially profitability. The analysis conducted in the paper is aimed at revealing these problems.

Keywords: *pension fund, investment, profitability, efficiency, risk*

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_28

Սասուն ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՊՏՀ հայցորդ

2019 թ. գերազանցությամբ ավարտելով ՀՊՏՀ բակալավրիատը («Հակաճգնաժամային կառավարում»), 2021 թ.-ին ընդունվել և գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ մագիստրատուրան՝ «Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ: Ուսումնառությանը զուգահեռ, ծավալել է գործունեություն «Ամբերդ» գիտահետազոտական կենտրոնում՝ որպես հետազոտական խմբի անդամ:

Հիմնաբառեր. *պետական բյուջե, ծախսեր, ծրագրային բյուջետավորում, ծախսային կառուցվածք, արդյունավետություն*

Յուրաքանչյուր պետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում առանցքային նշանակություն ունի արդյունավետ ծախսային քաղաքականության իրականացումը, որը բյուջետային գործընթացի կատարելագործման հիմնական ուղղություններից է, և դրանից է էապես կախված հասարակական զարգացման բնականոն ընթացքի ապահովումը:

ՀՀ-ն, հետամուտ լինելով վերոնշյալ նպատակին, շնորհիվ վերջին տարիներին ներդրված ջանքերի, անցում կատարեց ծրագրային բյուջետավորման սկզբունքներին: Մինչ այդ ծախսերի պլանավորումն իրականացվում էր առավելապես նախահաշվային մեթոդով, որն անհրաժեշտ փոխկապակցվածություն չէր ապահովում ծախսերի և արդյունքների միջև: Ծրագրային բյուջետավորման ներդրումը, բարձրացնելով ընդունվող որոշումների հիմնավորվածության աստիճանը և հնարավորություն տալով առավել արդյունավետ կերպով վերահսկելու դրանց կատարումը, ինքնին հանգեցրեց ծախսերի կառուցվածքային որոշակի փոփոխությունների:

Հոդվածում անդրադարձ է կատարվել հենց այդ փոփոխություններին, ծրագրային բյուջետավորման առավելություններին ու բյուջետային ծախսերին՝ ըստ տարբեր դասակարգումների:

Գոյություն ունեն բյուջետավորման հինգ հիմնական տեսակներ՝ ըստ հոդվածների, ըստ արդյունքների, ծրագրային, զրոյական և հաշվեկշռված: Ըստ էության, նշվածներից յուրաքանչյուրի կիրառումն ուղղված է ծախսերի կառավարման ոլորտում որոշակի

գործառույթների իրականացմանը և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանը: Ընդ որում, համաձայն այլ երկրների փորձի, նշված մոդելներից ոչ մեկի կիրառությունը չի կրում մշտական բնույթ, և շատ դեպքերում գործում են դրանց տարբեր համադրություններ:

Այս համատեքստում կարելի է նկատել, որ ծախսերի արդյունավետության բարձրացման ապահովմանն ուղղված կարևորագույն քայլերից մեկը եղավ աշխարհի շատ երկրներում ներդրված, իսկ շատերում էլ ներդրման փուլում գտնվող ծրագրային բյուջետավորման (ԾԲ) կիրառումը: Ծրագրային բյուջետավորման հիմնական բնորոշ գծերից են բյուջետային գումարների դիմաց մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Իսկ ծրագրերի սոցիալական և տնտեսական արդյունավետության գնահատականներն օգտագործվում են հաջորդ բյուջետային տարվա ծախսերի պլանավորման ժամանակ:

Շնորհիվ արդյունքների վերաբերյալ հաշվետվության և հետևողական մշտադիտարկման՝ ծրագրային բյուջետավորումը թույլ է տալիս ժամանակին հայտնաբերել պետական մարմինների գործունեության, մատուցվող ծառայությունների և ոչ ֆինանսական արդյունքների հետ կապված խնդիրներն ու շտկել դրանք:

Հայաստանի Հանրապետությունում բավական ժամանակ քննարկվում և շրջանառվում էր պետական բյուջեի նախագծի կազմման գործընթացում ծրագրային բյուջետավորման ներդրման անհրաժեշտության հարցը: Հատկանշական է, որ 2019 թ. պետական բյուջեն առաջին անգամ կազմվեց վերոնշյալ սկզբունքով:

ՀՀ-ում ԾԲ համակարգի ներդրման փորձեր ձեռնարկվել են դեռ 1990-ականներին, ինչը երևում է նաև այդ տարիների բյուջեների մասին օրենքներից: Սակայն, առկա ծրագրերը հաճախ չեն համապատասխանել ԾԲ մեթոդաբանությամբ ամրագրված մոտեցումներին և բյուջետային փաստաթղթերում ներկայացվել են որպես գործառական դասակարգման ենթամակարդակ՝ իրական կապ չապահովելով ոլորտային ռազմավարությունների հետ: Այդուհանդերձ, 2003 թվականից ի վեր Հայաստանում սկսվել են ծրագրային բյուջետավորման ներդրմանն ուղղված նախնական աշխատանքները՝ որպես միջնաժամկետ ծախսերի ծրագրի ներդրման տրամաբանական զարգացում, որի նպատակներից մեկը հենց ծախսերի արդյունավետության բարձրացումն է: Առաջին փորձնական աշխատանքներն իրականացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, իսկ հետագայում գործընթացում ներգրավվել են այլ նախարարություններ ևս: 2005-2008 թթ. արդեն փորձնական աշխատանքներ են կատարվել գրեթե բոլոր այն գերատեսչություններում (նախարարություններ, ծառայություններ, մարզպետարաններ), որոնք բյուջետային գլխավոր կարգադրիչներն էին: Այդ ցանկում բացառություն էին միայն մի քանի ուժային կառույցներ, որոնք էլ ներառվեցին գործընթացում 2009-2010 թթ.-ի ընթացքում:

Սակայն, ծրագրի տեղեկատվական ոչ բարձր որակը, պայմանավորված մարդկային ռեսուրսների սահմանափակությամբ, խոչընդոտեց գործընթացի իրականացումը: Ու թեև բոլոր գերատեսչությունները ներկայացնում էին ծրագրեր և դրանց գծով ոչ ֆինանսական ցուցանիշներ, սակայն դրանց բովանդակությունը ոչ բոլոր դեպքերում էր հնարավորություն տալիս վերլուծելու ծրագրերի արդյունավետությունը թե՛ բյուջեի պլանավորման ու կատարման և թե՛ հաշվետվության առումներով[1]:

Ինչպես վերը նշեցինք, 2019 թ. ՀՀ պետական բյուջեն առաջինն էր, որ կազմվեց ըստ ծրագրային բյուջետավորման սկզբունքների, և կառավարությունը, ըստ էության, շարունակում է ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարությամբ նախատեսված բարեփոխումների իրականացումը: Ուստի, կարող ենք վկայել, որ, սկսած 2019 թ.-ից, պետական բյուջեի կազմման մեթոդաբանությունը էապես փոխվել է:

Հատկանշական է, որ ներկայում նոր մեթոդաբանությամբ կազմված (2019, 2020 և 2021 թվականների) բյուջետային ցուցանիշները նախորդ տարեթվերի համա-

[2] Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները Հայաստանում. վերլուծական գործիքակազմ, Եր., 2014, էջ 23:

նման ցուցանիշների հետ համեմատության մեջ կարող ենք դիտարկել միայն տնտեսագիտական դասակարգմամբ: Դա նշանակում է, որ ծրագրային բյուջետավորման սկզբունքների ներդրումը մեթոդական փոփոխության է ենթարկել գործառնական դասակարգմամբ բնորոշվող ծախսերը՝ դրանք վերանվանելով ծրագրային:

Ծախսերի կառուցվածքային փոփոխություններն առավել պատկերավոր կերպով հասկանալու համար դիտարկենք 2018 և 2019 թթ. պետական բյուջեի ծախսերը: Այդ երկու տարիների ընտրությունը պայմանավորված է տվյալ տարիների բյուջեի մասին օրենքներով կազմված ծախսային ուղղությունների մեթոդական տարբերությամբ, այլ կերպ ասած, սրանք ծրագրային բյուջետավորման սկզբունքների կիրառմանը նախորդող ու հաջորդող տարիներն են:

Նախևառաջ, անդրադառնանք 2018 և 2019 թթ. պետական բյուջեների ծախսերի տնտեսագիտական դասակարգմանը: Հաշվի առնելով այն, որ, համաձայն այս դասակարգման, ներկայացվում է բյուջետային ծախսերի բաշխումն ըստ տնտեսագիտական հոդվածների, ենթադրաբար, ծրագրային բյուջետավորման սկզբունքների ներդրումից հետո ևս որևէ առանցքային փոփոխություն չէր ակնկալվում: Ինչպես նախկինում, նոր մեթոդաբանության կիրառությունից հետո նույնպես պահպանվել է բյուջետային ծախսերի բաշխման տրամաբանությունը: Ավելի համակարգված ու ամբողջական պատկեր ստանալու համար եթե դիտարկենք 2018 և 2019 թթ. պետական բյուջեների մասին կատարողական զեկույցները կամ ՀՀ հաշվեքննիչ պալատի հրապարակած եզրակացությունները, կնկատենք, որ նախ՝ ներկայացվում է տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծախսերի կատարումը (համապատասխանաբար՝ 1,465.2 մլրդ[2] և 1,648.1 մլրդ դրամ[3]), այնուհետև անդրադարձ է կատարվում ՀՀ պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագրերին (որքա՞ն են կազմել փաստացի ծախսերը, քանի՞ տոկոսով է կատարվել պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը, շեղումների ընդհանուր գումարից որքա՞ն է բաժին ընկել ընթացիկ ծախսերին, որքանը՝ ոչ ֆինանսական ակտիվներով գործառնություններին, ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ բյուջեի ծախսերի քանի՞ տոկոսն է կատարվել ներքին աղբյուրների և քանիսը՝ արտաքին աղբյուրներից ստացված դրամաշնորհների և վարկերի հաշվին, քանի՞ տոկոսով են կատարվել դրանց տարեկան ծրագրերը):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ 2018 թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի բաշխումն ըստ տնտեսագիտական հոդվածների (մլրդ դրամ և կշիռը ծախսերում)[4]

[2] ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն:
[3] ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն, էջ 179:
[4] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ 2019 թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի բաշխումն ըստ տնտեսագիտական հոդվածների (մլրդ դրամ և կշիռը ծախսերում)[5]

Հաջորդիվ ներկայացվում է ծախսերի դասակարգումն ըստ համապատասխան տեսակի: Ասվածն ավելի ակնառու դարձնելու համար դիտարկենք գծապատկերներ 1-ը և 2-ը՝ կազմված ՀՀ 2018 և 2019 թթ. պետական բյուջեների ծախսերի վերաբերյալ հրապարակված հաշվետվությունների տվյալների հիման վրա՝ ըստ տնտեսագիտական հոդվածների[6]:

Գծապատկերներից երևում է, որ, ըստ տնտեսագիտական դասակարգման, ծրագրային բյուջետավորման սկզբունքների ներդրումից առաջ և հետո պետական բյուջեի ծախսերի կառուցվածքային փոփոխություն չի արձանագրվել:

Այժմ դիտարկենք ծրագրային՝ նախկին գերատեսչական դասակարգումը: ՀՀ 2019 թ. պետական բյուջեի ծրագրերի թիվը եղել է 205, միջոցառումներինը՝ 1162[7], իսկ 2018 թ. ծրագրերի քանակը՝ 715[8]: Այսինքն՝ ծրագրային բյուջետավորման ներդրումից հետո ծրագրերի օպտիմալացմամբ դրանց քանակը կրճատվել է շուրջ 3,4 անգամ: ՀՀ հաշվեքննիչ պալատի հրապարակած եզրակացությունում արտացոլվել է նաև, թե որքան է եղել օրենքով նախատեսված, սակայն չկատարված, օրենքով չնախատեսված, սակայն փաստացի կատարված, գերակատարված, ճշտված պլանի նկատմամբ 50%-ից ցածր կատարողականներ ապահոված ծրագրերի ու միջոցառումների քանակը: Համեմատություն անցկացնելով՝ նկատում ենք, որ 2018 թ. 54 ծրագրի փաստացի կատարողականները ճշտված պլանի նկատմամբ պակաս են եղել 50%-ից[9], իսկ 2019 թ. 19 ծրագիր եղել է նշված բնորոշմամբ[10]:

Ընդհանրապես, բյուջեի կատարողականներում և եզրակացություններում արտացոլված ծրագրերի ու միջոցառումների քանակային փոփոխության վերլուծությունը ցույց է տալիս, որ ծրագրային բյուջետավորման սկզբունքները թույլ են տվել կատարել որոշակի փոփոխություններ այս կամ այն ծրագրերում ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներում հենց բյուջետային տարվա ընթացքում: Սա վկայում է բացահայտ ոչ արդյունավետ կամ թերակատարվող ծրագրերին ու միջոցառումներին ուղղվող պետական միջոցների այլընտրանքային օգտագործման հնարավորության մասին: Այսինքն՝

[5] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը:
[6] ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն, էջ 180:
[7] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն, էջ 8:
[8] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն, էջ 9:
[9] Նույն տեղում, էջ 10:
[10] ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն, էջ 9:

համապատասխան ղեկավարները, հընթացս հայտնաբերելով ոչ արդյունավետ օգտագործվող միջոցները, դրանք կարող են ներդնել նույնիսկ չնախատեսված միջոցառումներում:

Նախկինում, երբ գործ ունեինք գործառնական դասակարգման հետ, նշվում էր միայն, թե ինչ ծրագրեր են կատարվել, դրանց քանակը և ամենաընդհանուր կերպով՝ բնութագիրը՝ անվանում, նկարագիր, ակնկալվող արդյունք, նպատակ: Մինչդեռ ներկայում, հիմնվելով ծրագրային բյուջետավորման սկզբունքների վրա, ներկայացվում է ոչ միայն ծրագրերի քանակը, այլև դրանց նպատակը, նախանշվող միջոցառումների ցանկը, իրականացվելիք քայլերի հերթականությունը, յուրաքանչյուր միջոցառմանը հատկացված գումարի չափը, կատարողականը և թերակատարման պատճառները (նախկինում որևէ հիմնավորում կամ մեկնաբանություն չկար՝ ինչո՞ւ է թերակատարվել ծրագիրը կամ շարունակվել անարդյունավետ կերպով): Նման մոտեցումը, անկասկած, բարձրացնում է տվյալ ծրագրերի և միջոցառումների ղեկավարների պատասխանատվության աստիճանը, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ պետական ֆինանսների առումով, համակարգային բացերից մեկը հենց պետական կառավարման մարմինների կողմից բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման խթանների բացակայությունն է:

Ծախսերի գերատեսչական դասակարգման տեսանկյունից, մինչև 2019 թ. ծրագրերի բարձր կատարողականներով առանձնանում էին ՀՀ պաշտպանության նախարարությունը և ոստիկանությունը: Սա պայմանավորված էր նրանով, որ տվյալ գերատեսչություններին բնորոշ են շտաբային աստիճանակարգային կառուցվածքը, վերադասի և պատասխանատուների կարգադրությունների ու հրամանների համապարտադիր անվերապահ կատարման բնույթը: Սակայն, արժե ևս մեկ անգամ նշել, որ բարձր կատարողականը դեռևս չի նշանակում կատարված ծախսերի արդյունավետություն, այլ հիմնականում վերաբերում է դրանց բաշխման նախնական գործընթացին:

Հիմք ընդունելով ՀՀ 2019 թ. պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը և բյուջեի մասին օրենքը՝ ստորև, ըստ գերատեսչական դասակարգման, ամփոփ կերպով ներկայացնենք այն 5 գերատեսչությունների ծախսային ծրագրերը (գծապատկեր 3), որոնց բաժին է ընկել պետական բյուջեի փաստացի ծախսերի 66.1%-ը (2018 թ.-ի հետ համեմատություն չի կատարվել, քանի որ համապատասխան տվյալները բացակայում են)[11].

- *ՀՀ աշխատանքի և սոցիալական հար-*



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ՀՀ 2019 թ. պետական բյուջեի ծախսերն ըստ գերատեսչական դասակարգման[12]

[11] Հայաստանի Հանրապետության սահմանադրություն՝ ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:
[12] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը:

ցերի նախարարության պատասխանատվությամբ պետական բյուջեի միջոցներով իրականացվել է 16 ծրագիր: Այդ նպատակով, ընդհանուր առմամբ, տրամադրվել է շուրջ 454 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 97.5%-ը:

- *ՀՀ պաշտպանության նախարարության* պատասխանատվությամբ պետական բյուջեի հաշվին կատարվել է 7 ծրագիր, և համապատասխան ծախսերը կազմել են 307.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.8% ը:
- *ՀՀ ֆինանսների նախարարության* պատասխանատվության ներքո նախատեսված 4 ծրագրի ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 161.1 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 98.3% կատարողական:
- *ՀՀ պետական եկամուտների կոմիտեի* պատասխանատվությամբ պետական բյուջեից ֆինանսավորվել է 3 ծրագիր: Դրանց ծախսերը կազմել են ավելի քան 28.8 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95.4% ը:
- *ՀՀ առողջապահության նախարարության* պատասխանատվությամբ ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել է 12 ծրագիր: Այդ նպատակին ուղղվել է շուրջ 97.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 95.7%-ը:

Անկախ նրանից, թե ծրագրային բյուջետավորումն ինչ փոփոխությունների է ենթարկել պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը, այնուամենայնիվ, կան օրինաչափություններ, որոնք շարունակելու են մնալ արդիական պետական բյուջեի ծախսերի բաշխման գործընթացներում:

Մասնավորապես՝ ուսումնասիրելով մի քանի տարվա միջնաժամկետ ծախսային ծրագիրը՝ դժվար չէ նկատել, որ դրանում ծախսային գերակայությունները գրեթե միշտ անփոփոխ կերպով են ներկայացված: Առաջնային տեղն ու ծախսերի ամենամեծ տեսակարար կշիռը բաժին են ընկնում սոցիալական ոլորտի որոշ ճյուղերի (ռազմական ծախսերն այս համատեքստում չեն դիտարկվել՝ դրանց պարտադիր լինելու սկզբունքից ելնելով, պայմանավորված աշխարհաքաղաքական հրամայականով): Համաձայն ՀՀ սահմանադրության առաջին հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»[13], այսինքն՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական պետություն հանդիսանալու հանգամանքից բխում է, որ պետք է գերակայեն սոցիալական ոլորտի որոշակի ճյուղերին ուղղված ծախսերը: Սա այն ուղղությունն է, որն անմիջականորեն փոխկապված է բնակչության ընդհանուր կենսամակարդակի բարձրացման հետ, ուստի և սրան է հատկացվում բյուջեի ծախսերի գերակշիռ մասը: Այսպես՝ 2020 թ. պետական բյուջեի ծախսերի վերլուծությունից (ըստ ծրագրային դասակարգման) ակնհայտ է դառնում, որ փաստացի ծախսերի 69,1%-ը բաժին է ընկնում 5 գերատեսչության, մասնավորապես՝ 22,4%-ը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՍԱՊԾ-ին (Սոցիալական ապահովության պետական ծառայություն), որին հետևում են ՊՆ-ն և ՖՆ-ն, համապատասխանաբար՝ 20,5% և 11,8%: Հարկ ենք համարում ընդգծել, որ 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ տնտեսությունում արձանագրվեց 14,1% անկում, և դրամը արժեզրկվեց մոտ 23%-ով, նույնիսկ այդ պայմաններում պետությունը հավատարիմ մնաց սոցիալական ոլորտում իր ստանձնած պարտավորություններին և չնվազեցրեց ՍԱՊԾ-ին ուղղվող ծախսերը: Ինչ է սա ենթադրում:

Պայմանականորեն, կարելի է ասել, որ սոցիալական պետության գոյության ողջ ընթացքում ծախսերի «առյուծի բաժինը» միշտ էլ հատկացվելու է հենց այս ուղղությանը՝ ՍԱՊԾ-ին, քանի դեռ պետությունը ունակ չէ ստեղծելու ու կայացնելու ինքնաֆինանսավորման որոշակի կառուցակարգեր և ճյուղեր ոլորտների ներսում: ՀՀ կառավարությունը նույնպես նախաձեռնեց նման կառույցի ստեղծում՝ ի դեմս 2014 թ. ՀՀ-ում ներդրված ինքնաֆինանսավորվող կուտակային կենսաթոշակային համակարգի: Առավել պատկերավոր կարծիք կազմելու համար կարելի է պայմանականորեն վերցնել հենց այս օրինակը:

Համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ պարտադիր

[13] Հայաստանի Հանրապետության սահմանադրություն՝ ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:

կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակցում են 1974 թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները և հանրային ծառայության մեջ գտնվող անձինք[14]: Եթե հաշվի առնենք, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդին գումար է հատկացվել 1974 թ.-ից հետո ծնված ամեն մի աշխատողի աշխատավարձից, և կենսաթոշակի անցնելու տարիքը ՀՀ-ում 63 տարեկանն է, ապա կարելի է ասել, որ մոտավորապես 2037 թ.-ից սկսած՝ պետական բյուջեից կենսաթոշակային ֆոնդերին հատկացվող ծախսերը նվազելու են յուրաքանչյուր աշխատողի՝ մինչ այդ կուտակած գումարի չափով: Եվ, անկասկած, ամեն տարի բյուջեից տվյալ ճյուղին տրամադրվող ծախսերը նվազելու և այլ ոլորտներ են ուղղորդվելու: Սա վկայում է այն մասին, որ, 2037 թ.-ից սկսած, պետական բյուջեի՝ սոցիալական ոլորտին հատկացվող ծախսերը կա՛մ հարաբերականորեն նվազելու են և ուղղվելու այլ ոլորտներ, կա՛մ տրամադրվելու են նույն ոլորտի մեկ այլ ճյուղի:

Ընդհանուր անդրադարձ կատարելով ծրագրերի վերլուծության բնույթին՝ կարող ենք նշել, որ յուրաքանչյուր ծրագիր ենթարկվում է վերջնական քննության՝ ըստ կատարողականի, ապա, իրականացնելով տվյալ ծրագրից ակնկալվող և ստացված վերջնարդյունքի համեմատություն, տրվում է դրա արդյունավետության գնահատականը: Այսինքն՝ գերատեսչությունների ծրագրերի արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե դրանց կատարողականների ապահովմամբ, այլ վերջնարդյունքով և ոչ ֆինանսական ցուցանիշներով: Սակայն, ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը չափազանց դժվարին ու բարդ գործընթաց է, որի պատշաճ կազմակերպման համար նույնիսկ հնարավոր է՝ գերատեսչություններում ստեղծվեն համապատասխան ստորաբաժանումներ կամ հավելյալ հաստիքներ: Իսկ գերատեսչության ընդհանուր գործունեության արդյունավետությունը, նախևառաջ, պայմանավորված է ընդհանուր համակարգային ծրագրերի արդյունավետությամբ, այսինքն՝ և՛ դրանց բարձր կատարողականներով, և՛ ոչ ֆինանսական ցուցանիշների բարելավմամբ:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ ստացված արդյունքների և ոչ ֆինանսական ցուցանիշների վրա կենտրոնացումը հնարավորություն է տալիս նաև իրականացնելու բյուջետային ծախսերի օպտիմալացում: Հենց նման մոտեցման շնորհիվ էլ շատ երկրներում արձանագրվել է բյուջեից հատկացվող ծախսերի կրճատում: Այսինքն՝ ներդնելով արդյունքի վրա հիմնված բյուջետավորման համակարգ՝ այդ երկրները կատարել են ծախսերի տնտեսում: Ինչպես վկայում է արտերկրի փորձը[15], վերջին 20-25 տարվա ընթացքում ըստ արդյունքի բյուջետավորում նախաձեռնող առաջատար երկրներին (ԱՄՆ, Նոր Զելանդիա, Ավստրալիա, Կանադա, Մեծ Բրիտանիա) միացել է ինչպես ՏՀԶԿ անդամ, այնպես էլ զարգացման միջին և ցածր մակարդակ ունեցող երկրների մեծ մասը: Այս համատեքստում նշենք նաև, որ, օրինակ, Մեծ Բրիտանիայում 2010-2013 թթ.-ի ընթացքում բյուջետային միջոցների տնտեսումը կազմել է կենտրոնական կառավարության ծախսերի՝ միջինում 19%-ը (բացառությամբ առողջապահության ծախսերն ու զարգացող երկրներին տրամադրվող օգնությունը), Ֆրանսիայում և Իռլանդիայում (2011 թ.-ի համեմատ) համապատասխանաբար՝ 15,0 և 7,8 մլրդ եվրո, իսկ Նիդեռլանդներում (2010 թ. համեմատ)՝ 36,0 մլրդ եվրո[16]:

Ի վերջո, յուրաքանչյուր նոր համակարգի ներդրում տարբեր երկրներում կարող է ապահովել տարբեր արդյունք: ՀՀ–ում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրումը, բնականաբար, կարող է այլ դրսևորումներ ունենալ: Հետևաբար՝ ընդհանուր արդյունավետության գնահատման համար մեզ անհրաժեշտ է որոշակի ժամանակագրական շարք: Միայն որոշակի շարժընթացում է հնարավոր պարզել նշված գործընթացի փաստացի և իրական արդյունքները: Սակայն, քանի դեռ չու-

[14] ՀՀ օրենքը «Կուտակային կենսաթոշակների մասին», գլուխ 2, հոդված 5, կետ 1:

[15] Դիտարկվել են ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) կազմում ընդգրկված մի քանի երկրների օրինակներ, հաշվի առնելով, որ այս կառույցում կան զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներ:

[16] Robinson M., Spending reviews. OECD Journal on Budgeting, 2014, vol. 13, iss. 2. DOI: 10.1787/16812336. Available at: http://www.oecd-ilibrary.org/governance/oecd-journal-on-budgeting/volume-13/issue-2_ budget-v13-2-en., p. 39–40.

նենք ամփոփված շարք այս ցուցանիշների վերաբերյալ, կարող ենք պնդել, որ ներդրված համակարգն անհամեմատ ավելի արդյունավետ է, քան նախկինում գոյություն ունեցողը, մասնավորապես՝ նախորդ տարիների համեմատ 2019 թ. պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ ստացված տվյալներն ավելի թափանցիկ են և հնարավորություն են ընձեռում հասկանալու, թե որոնք են եղել անարդյունավետ բյուջետային ծախսերի ու ծրագրային թերի կատարողականների պատճառները:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ պետական բյուջեի ծախսերի արդյունավետության տեսանկյունից, ծրագրային բյուջետավորման համակարգն անփոխարինելի առավելություններ ունի: Հաշվի առելով մեր երկրում ծրագրային բյուջետավորման մեթոդի ներդրման երիտասարդ փորձը՝ պետք է նշել, որ դրա կայացման ու կատարելագործման ջանքերը և պետական բյուջեի ծախսային գերակայությունների ճիշտ սահմանումը էականորեն կբարձրացնեն բյուջետային միջոցների բաշխման արժանահավատության մակարդակը, կխթանեն պետական կառավարման մարմինների կողմից բյուջետային ծախսերի արդյունավետ օգտագործումն ու ծրագրերի պատշաճ կատարման նկատմամբ պատասխանատվությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն՝ ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:
2. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», https://www.arlis.am/documentview.aspx?docid=425
3. ՀՀ օրենքը «2018 թվականի բյուջեի մասին», https://www.gov.am/files/docs/2575.pdf
4. ՀՀ օրենքը «2019 թվականի բյուջեի մասին», https://www.gov.am/files/docs/3124.pdf
5. ՀՀ օրենքը «2020 թվականի բյուջեի մասին», https://www.gov.am/files/docs/3929.pdf
6. Բաղանյան Լ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Եր., 2010:
7. Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ., Ավետիսյան Մ., ՀՀ-ում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Եր., 2016:
8. Ծրագրային բյուջետավորման բարեփոխումները Հայաստանում. վերլուծական գործիքակազմ, Եր., 2014:
9. ՀՀ պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգ:
10. ՀՀ կառավարության բյուջետային ուղերձներ:
11. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարողական, https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_byuje_e_kataroghakan_/
12. ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարողական, https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_byuje_e_kataroghakan_/
13. ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարողական, https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_byuje_e_kataroghakan_/
14. ՀՀ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվություն, https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2018_t_tarekan
15. ՀՀ 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվություն, https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2019_t_tarekan
16. ՀՀ 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվություն, https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2020_t_tarekan
17. ՀՀ 2019-2023 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, http://www.irtek.am/views/act.aspx?aid=150781
18. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի եզրակացություն, http://www.armsai.am/files/conclusions/conclusion2018.pdf
19. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի եզրակացություն, http://www.armsai.am/files/conclusion2019.pdf
20. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի եզրակացություն, http://www.armsai.am/files/conclusion2020.pdf
21. ՀՀ 2020 պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն:

22. Финансы. Учебник для вузов. Под ред. Л. Дробозиной. М., Юнити. 2015.
23. Стиглиц Дж. Экономика государственного сектора. Пер с англ. М., 2008г.
24. Robinson M. Spending reviews. OECD Journal on Budgeting, 2014, vol. 13, iss. 2. DOI: 10.1787/16812336.
http://www.oecd-ilibrary.org/governance/oecd-journal-on-budgeting/volume-13/issue-2_budget-v13-2-en
25. www.minfin.am
26. www.armstat.am
27. www.gov.am
28. www.armsai.am
29. www.e-draft.am

Сасун СААКЯН
Соискатель кафедры управления, АГЭУ

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

ИЗМЕНЕНИЕ СТРУКТУРЫ РАСХОДОВ ГОСУДАРСТВЕННОГО БЮДЖЕТА РА В РЕЗУЛЬТАТЕ ВВЕДЕНИЯ ПРОГРАММНОГО БЮДЖЕТА

Реализация эффективной расходной политики, являющейся одним из основных направлений совершенствования бюджетного процесса, имеет ключевое значение в решении социально-экономических проблем, стоящих перед каждым государством, и от этого зависит обеспечение нормального хода социального развития.

Республика Армения, следуя вышеупомянутой цели, благодаря предпринятым в последние годы усилиям, перешла на принципы программного бюджетирования, поскольку планирование расходов в основном осуществлялось оценочным методом, который не обеспечивал необходимой корреляции между расходами и результатами. Введение программного бюджетирования за счет повышения обоснованности принимаемых решений и обеспечения более эффективного контроля за ними привело к определенным структурным изменениям в затратах.

В статье говорится об этих изменениях, преимуществах программного бюджетирования и расходах бюджета по разным классификациям.

Ключевые слова: *государственный бюджет, расходы, программное бюджетирование, структура расходов, эффективность*

Sasun SAHAKYAN
PhD Student at the Chair of Management, ASUE

FINANCIAL SYSTEM

CHANGE IN THE STRUCTURE OF EXPENDITURES OF THE STATE BUDGET OF THE RA AS A RESULT OF INTRODUCTION OF THE PROGRAM BUDGETING

The implementation of an effective expenditure policy, which is one of the main directions for the improvement of the budget process, is of key importance in solving the socio-economic problems faced by each state, and ensuring the normal course of social development depending on it.

Pursuing the above-mentioned goal, the Republic of Armenia, due to the efforts made in recent years, switched to the principles of program budgeting, as expenditure planning was mostly carried out by the estimate method, which did not provide the necessary correlation between expenditures and results. The introduction of program budgeting, which increased the validity of decisions made enabling them to be more effectively monitored, implied certain structural changes in costs.

The paper refers to these changes, program budgeting benefits and budget expenditures according to different classifications.

Key words: *state budget, expenditures, program budgeting, expenditure structure, efficiency*

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_37

Հիմնաբառեր. չափորոշիչ, տարածքային աճի բևեռ, մարզերի հավասարաչափ զարգացում, տնտեսական ներուժ, ռեսուրսային ապահովվածություն

Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: 1998 թ. առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է: Հեղինակ է շուրջ 35 գիտական աշխատանքների:

Յուրաքանչյուր երկրի տնտեսության կայուն և ներառական զարգացման գրավականն է մարզերի համաչափ զարգացումը, ինչը հնարավոր չէ իրագործել միանգամից և մեքենայաբար: Այս տեսանկյունից, կարևորվում են համապատասխան մեկնարկային պայմանների ստեղծումը և որոշակի քայլերի իրականացումը՝ միտված ինչպես տարածքային աճի բևեռների բացահայտմանը, այնպես էլ վերջիններիս ձևավորման ու զարգացման հիմնախնդիրների վերհանմանը:

Տարածքային համաչափ զարգացումը երկրի առջև ծառացած տնտեսական, սոցիալական և քաղաքական մարտահրավերներին դիմագրավելու կարևոր նախադրյալ է: Համայնքների տնտեսական ու սոցիալական զարգացման անհամաչափությունները պայմանավորված են այնպիսի հիմնական գործոններով, ինչպիսիք են համայնքի բնակչության թիվը և սոցիալ-ժողովրդագրական կազմը, հեռավորությունը տնտեսական զարգացման մոտակա կենտրոնից, տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը, դիրքը միջհամայնքային ու հանրապետական նշանակության ճանապարհների նկատմամբ, գյուղատնտեսական նշանակության հողերի քանակն ու որակը, դրանց ոռոգման առանձնահատկությունները, գործող արտադրական հզորությունների քանակը, համայնքի ֆինանսական կարողությունները և այլն[1]: Այս համատեքստում, մեր կարծիքով, կարևոր է տարածքային աճի բևեռների (առաջնահերթությունների) ձևավորման և

[1] Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, https://www.gov.am/am/prsp/

զարգացման հիմնախնդիրների բացահայտումը: Տարածքային աճի բևեռը պետության որոշակի տարածք է, համայնք, որտեղ տնտեսության որոշակի ոլորտ, երկրի միջինացված ցուցանիշների համեմատ, կարող է ապահովել ավելի արագացված որակական և քանակական զարգացում՝ աստիճանաբար նոր թափ հաղորդելով երկրի տնտեսության թերզարգացած ոլորտներին, տարածքներին, սուբյեկտներին և «շոգեքարշի» դեր կատարել դրանց համար[2]:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ տարածքային համաչափ զարգացման համար, որպես արդյունավետ տարբերակ, հանդես են գալիս տարածքային աճի բևեռների ձևավորումն ու զարգացումը: Խնդիրն այստեղ աճի բևեռների ընտրության չափորոշիչների բացահայտման ու հիմնավորման մեջ է: Այս տեսանկյունից, նախևառաջ, անհրաժեշտ է դասակարգել որոշակի ճյուղերի ազդեցության աստիճանը երկրի տնտեսության վրա: Ֆրանսիացի հայտնի տնտեսագետ, «աճի բևեռների» տեսության հիմնադիր Ֆ. Պերուն առանձնացնում է ազդեցության երեք տեսակ.

1. ճյուղեր, որոնք շատ դանդաղորեն են զարգանում, և դրանց տեսակարար կշիռը երկրի ընդհանուր տնտեսության մեջ ունի անընդհատ նվազման միտում,

2. զարգացման բարձր տեմպ ունեցող ճյուղեր, որոնք, սակայն, էական ազդեցություն չունեն տնտեսության հարակից ճյուղերի զարգացման վրա,

3. ճյուղեր, որոնք զարգանում են արագորեն և, միաժամանակ, նպաստում փոխկապակցված ճյուղերի զարգացմանը՝ ստեղծելով տարածաշրջանային արդյունաբերական կենտրոններ[3]:

Աճի բևեռների ընտրության ճշգրտությունը որոշվում է նրանով, թե որքանով են դրանք իրականում նպաստել երկրի ՀՆԱ աճին, որը գնահատվում է ցուցանիշների երկու համախմբի միջոցով.

- աճի բևեռների (առաջնահերթությունների) աճի տեմպը և դրանց մասնաբաժինը ՀՆԱ-ում,
- աճի բևեռների (առաջնահերթությունների) ունակությունը՝ դրական մուլտիպլիկատիվ (բազմարկչի) էֆեկտ հաղորդելու տնտեսության հարակից ճյուղերին:

Տնտեսական փորձում կիրառվում են աճի բևեռների բացահայտման հետևյալ հիմնական մեթոդները.

♦ *որոշակի ժամանակահատվածում մարզում թողարկված ընդհանուր արտադրանքի մեջ տվյալ ճյուղի տեսակարար կշիռը:* Այս նպատակով հաշվարկվում է տվյալ մարզում որոշակի ժամանակահատվածում թողարկված արտադրանքի ընդհանուր շուկայական արժեքը և որոշվում յուրաքանչյուր ճյուղի մասնաբաժինը:

Կիրառելով վերը նշված մեթոդը՝ հնարավոր է դառնում աճի բևեռների երեք խումբ բաղկացուցիչների բացահայտումը.

1. առավել բարձր աճի տեմպ ապահովող ճյուղեր,

2. ընդհանուր արտադրանքի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ճյուղեր,

3. ընդհանուր արտադրանքի մեջ միջինից բարձր տեսակարար կշիռ ունեցող ճյուղեր (օրինակ՝ եթե տվյալ մարզում ընդհանուր արտադրանքի ծավալը պայմանականորեն 100% է, և դրա թողարկմանը մասնակցել է 5 ճյուղ, ապա պետք է դիտարկել այն ճյուղերը, որոնց տեսակարար կշիռն ընդհանուրում 20% և ավելի է):

Շնորհիվ այս երեք ֆիլտրի՝ կարող ենք բացահայտել այն ճյուղերը (ոլորտները), որոնց օգնությամբ հնարավոր կլինի ուրվագծել մարզի ռազմավարական զարգացման աճի բևեռները: Միաժամանակ, պետք է նշել, որ այս մեթոդն ունի մեկ հիմնական թերություն. ըստ դրա՝ դժվար է հաշվել յուրաքանչյուր ճյուղի ծախսատարությունը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում կիրառելու հաջորդ մեթոդը կամ ֆիլտրը.

♦ *հաշվարկվում է յուրաքանչյուր ճյուղի (ձեռնարկության) շահութաբերության մակարդակը:* Այս մեթոդը ևս թերի է. բանն այն է, որ հնարավոր է՝ տվյալ ճյուղը

[2] ՀՀ կառավարության 21.12.2017 թ. N 53 արձանագրային որոշում, Տարածքային աճի բևեռների զարգացմանը հավանություն տալու մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=93189

[3] Perroux F., A Note on the concept of Growth Poles. In Regional Economics: Theory and Practice. New York: Free Press, 1970.

կամ ձեռնարկությունը ունենա շահութաբերության բարձր մակարդակ, սակայն դրամական արտահայտությամբ՝ վերջինիս թողարկած արտադրանքի ծավալն էական կշիռ չունենա մարզային առումով: Ուստի անհրաժեշտություն է առաջանում կիրառելու հաջորդ ֆիլտրը.

♦ *հաշվարկվում է յուրաքանչյուր ճյուղի (ձեռնարկության) շահույթի մակարդակը՝ դրամական արտահայտությամբ:* Այս մեթոդի կիրառությունը թույլ է տալիս բացահայտել աճի այն բևեռները (ճյուղեր, ձեռնարկություններ), որոնք նշանակալի դեր ունեն և՛ շահութաբերության, և՛ արտադրության ծավալների տեսանկյունից:

Ըստ էության, գոյություն չունեն միատեսակ կարողություններով օժտված մարզեր և տարածաշրջաններ, ինչը հնարավորություն կտար օգտագործելու աճի բևեռների այս կամ այն որոշակի մոտեցումը, հետևաբար՝ արդյունավետության տեսանկյունից, նպատակահարմար է կիրառել դրանց համադրումը՝ հիմնված տարածաշրջանի տնտեսական ներուժի, ռեսուրսային ապահովվածության և ոլորտների (ճյուղերի) փոխադարձ կապերի վրա: Այս առումով, պետք է առանձնացնել հետևյալ սկզբունքները կամ քլաստերների առաջացման պայմանները.

1. տնտեսության տարբեր ճյուղերի կողմից ռեսուրսների համատեղ օգտագործում,

2. նույնատիպ տեխնոլոգիաների առկայություն,

3. մի ճյուղի կողմից թողարկվող արտադրանքի իրացման հնարավորություն մեկ այլ ճյուղի կողմից[4]:

Վերը թվարկված քանակական չափորոշիչների օգնությամբ, իհարկե, հնարավոր է ուրվագծել տարածքային զարգացման աճի հիմնական բևեռները, սակայն դրանք լիարժեքորեն չեն արտացոլում հիմնախնդրի էությունը, քանի որ.

- քանակական չափորոշիչների միջոցով հիմնականում կարողանում ենք վերլուծել նախորդ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձություններն ու միտումները, ինչը չի կարելի ասել ապագայի վերաբերյալ, քանի որ ապագայում այդ միտումները կարող են ամբողջովին փոխվել (օրինակ՝ տնտեսության գերակա ճյուղերի փոփոխության պարագայում),
- քանակական չափորոշիչների միջոցով հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել տնտեսության այն ճյուղերի (ձեռնարկությունների) մասին, որոնք ձևավորման (սաղմնային) փուլում են (օրինակ՝ այլընտրանքային էներգիայի օգտագործման բնագավառ),
- շատ դեպքերում քանակական չափորոշիչների միջոցով հնարավոր չէ գնահատել աճի ընտրված բևեռների (ճյուղեր, ձեռնարկություններ) մուլտիպլիկատիվ ազդեցությունը տնտեսության հարակից ճյուղերի և ձեռնարկությունների վրա (օրինակ՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի ազդեցությունը տնտեսության ավանդական ճյուղերի վրա),
- միայն քանակական չափորոշիչների հիման վրա տարածքային աճի բևեռների ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև խոչընդոտել տնտեսության ժամանակակից ճյուղերի զարգացումը (օրինակ՝ հանքարդյունաբերություն):

Այս նկատառումներից ելնելով՝ քանակականի հետ մեկտեղ, անհրաժեշտ է հնարավորինս օգտագործել նաև որակական չափորոշիչներ.

- նախորդ տարիների քանակական չափորոշիչների վերաբերյալ տվյալները (վիճակագրական շարքեր) և դրանց զարգացման միտումները մոդելավորելով՝ փորձել դրանք տարածել զարգացման ապագա միտումների վրա:
- Աճի բևեռների ընտրությունն անհրաժեշտ է իրականացնել մարզի, համայնքի ընդհանուր զարգացման տեսլականի համատեքստում, որպեսզի հնարավոր լինի ճիշտ գնահատել յուրաքանչյուր ճյուղի, ձեռնարկության ներդրումը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
- Կարևոր խնդիր է, որ քանակական չա-

[4] Мироедов А. А., Совершенствование управления региональной экономикой на базе новой концепции его информационного обеспечения, Иваново, 2007.

փորոշիչների հիման վրա ընտրված աճի բևեռները համապատասխանեն իրենց բուն նպատակին, այսինքն՝ հանդես գան որպես մարզի, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման շարժիչ ուժ՝ ապահովելով սիներգետիկ էֆեկտ բոլոր տնտեսական միավորների համար:

- Տնտեսական աճի բևեռներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ տարածաշրջանի բնապահպանական, ինչպես նաև աղետների ռիսկերի կառավարման հիմնախնդիրները: Միայն տնտեսական չափորոշիչները դեռևս բավարար պայման չեն մարզի ռազմավարությունը մշակելիս, քանի որ դրանք կարող են ներդաշնակ չլինել շրջակա միջավայրի հետ:

Տնտեսական աճի բևեռների ընտրության և ձևավորման հարցում մեր երկրի համար կարող է կիրառելի լինել ֆրանսիական փորձը, որը հիմնված է մրցունակության բևեռների ձևավորման վրա: Մրցունակության բևեռներ են համարվում գիտաարտադրական համալիրները, որոնք միավորում են տարբեր ոլորտներում գործող բարձր տեխնոլոգիական ընկերություններ ու հետազոտական ինստիտուտներ: Մրցունակության բևեռների հիմքում քլաստերային մոդելն է: Ֆրանսիայի փորձը ցույց է տալիս, որ մրցակցային քլաստերների ձևավորման գործընթացն իրականացվում է հետևյալ երկու մոտեցման համադրմամբ. 1. տեղական ընկերությունները, հաշվի առնելով ռեսուրսային ապահովվածությունը և տարածքային առանձնահատկությունները, առաջարկում են զարգացման որոշակի նախագծեր, և 2. պետական նախաձեռնությունը՝ տնտեսական ու իրավական խթանների տրամադրման և ընկերությունների ընտրության իրականացման տեսանկյունից: Համաձայն այս մոտեցման՝ մրցակցային քլաստերների ձևավորմանը մասնակցող ընկերությունները պետք է բավարարեն հետևյալ հիմնական պահանջները. ներկայացված նախագծերի համապատասխանություն տարածաշրջանի զարգացման ընդհանուր ռազմավարությանը, միջազգային համատեքստում՝ նախագծերի արդյունաբերական և տեխնոլոգիական նշանակություն, կառավարման արդյունավետ կազմակերպում, բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրություն: Բացի այդ, մրցունակության բևեռի կարգավիճակ ստանալու համար մասնակիցներից պահանջվում է ներկայացնել ճանապարհային քարտեզ, որտեղ պետք է արտացոլվեն առաջիկա 5 տարվա ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև հիմնավորվեն ծախսերի ծավալն ու գործունեության արդյունավետությունը: Մրցունակության բևեռների ձևավորման նախագիծը Ֆրանսիայում ներդրվել է 2004 թ.-ին, և մինչ այժմ իրականացվել են մի շարք արդյունավետ ծրագրեր, որոնցից կարելի է առանձնացնել մեխանիկայի ոլորտի 6 մրցակցային բևեռներից ամենանշանակալին՝ «ViaMeca»-ն[5]: Այս մրցակցային քլաստերը գտնվում է Ֆրանսիայի կենտրոնական հատվածում և ներառում է մոտ 4000 ընկերություն՝ փոքր բիզնեսից մինչև միջազգային արդյունաբերական կորպորացիաներ: «ViaMeca» նախագծում զբաղված են Ֆրանսիայի մեքենաշինության ոլորտի աշխատողների մոտ 20%-ը (235000 մարդ), 2500 հետազոտողներ՝ պետական և մասնավոր ընկերություններից[6]: Ինը տարվա ընթացքում հաստատվել է ներքլաստերային շուրջ 530 նախագիծ, որից 280-ից ավելին ֆինանսավորելու համար պետությունը հատկացրել է ավելի քան 970 միլիոն եվրո (70%-ը՝ ազգային բյուջեից[7]): Գծապատկեր 1-ում արտացոլված է «ViaMeca» աճի բևեռը ձևավորող ընկերությունների կազմն ըստ դրանց մեծության:

Մրցունակության բևեռների ֆրանսիական քլաստերային նախագծերի ֆինանսավորումը հիմնված է պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքի վրա, համաձայն որի՝ պետական կամ տարածաշրջանային ֆոնդերը

[5] Longhi C., Cluster dynamics: learning from Competitiveness Cluster policy. The case of 'Secure Communicating Solutions' in the French Provence-Alpes-Côte d'Azur Region, 2017, https://halshs.archives-ouvertes.fr/halshs-01675684/document

[6] Мовчан И., Смуров И., Бертран Ф., Французские центры конкурентоспособности как эффективный механизм трансфера технологий, 2011, Электрон. дан. М., 2011. URL: http://dialog.extech.ru/kongress2

[7] https://issek.hse.ru/news/146078886.html



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

«ViaMeca»-ում ընդգրկված ընկերությունների կազմն ըստ մեծության[8]

ֆինանսական օժանդակություն են տրամադրում դրամաշնորհների տեսքով՝ ծրագրի բյուջեի ծախսերի մինչև 60%-ը ծածկելու համար, իսկ ֆինանսավորման մնացածը մասն իրականացվում է բևեռում ընդգրկված ընկերությունների և այլ շահագրգիռ կողմերի միջոցներով:

Մրցունակության բևեռների և ընկերությունների ընտրություն կատարում են նախագծի փորձագետները, սակայն ֆինանսավորման հարցում վերջին խոսքը պատկանում է կառավարությանը: Երբ նախագիծը ստեղծվում է, այն արժանանում է պաշտոնական հավանության՝ մրցունակության-բևեռի «պիտակի» (label)[9]: Սա որակի մի յուրահատուկ բնութագրիչ է, ինչը նշանակում է, որ նախագիծն ունի մեծ պահանջարկ և միտված է տարածաշրջանի զարգացումը խոչընդոտող հրատապ խնդիրների լուծմանը, իսկ դրանում ներգրավված մարդիկ իրավասու են լուծելու այդ խնդիրները:

Ամփոփելով նշենք, որ յուրաքանչյուր մարզի/համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը մշակելիս պետք է հաշվի առնել և՛ քանակական, և՛ որակական չափորոշիչների ազդեցությունը: Մարզի, համայնքի համաչափ և ներառական զարգացման համար կարևոր է ճիշտ որոշել դրանց տնտեսական զարգացմանը նպաստող աճի բևեռները: Զարգացած երկրների (ԱՄՆ, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Ճապոնիա) փորձն ասվածի վառ վկայությունն է. օրենսդրորեն ընդունված տարածքային աճի բևեռների հայեցակարգերը՝ քաղաքների, գյուղերի հստակ մատնանշմամբ, անմիջականորեն նպաստել են որոշակի մարզերի, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Կարծում ենք՝ նման գործընթացի իրականացումն արդյունավետ կլինի նաև ՀՀ-ի դեպքում: Իհարկե, մարզերի հավասարաչափ զարգացում չի կարող տեղի ունենալ միանգամից և մեքենայաբար: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել մեկնարկային պայմաններ, իրականացնել որոշակի քայլեր՝ միտված տարածքային աճի բևեռների բացահայտմանը, ինչն առանձին վերլուծության (ների) թեմա է:

[8] Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուրը՝ http://www.mecafuture.fr/who-are-we/introduction/?lang=en
[9] http://www.mecafuture.fr/who-are-we/introduction/?lang=en

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր:
2. ՀՀ կառավարության 21.12.2017 թ. N 53 արձանագրային որոշում, Տարածքային աճի բևեռների զարգացմանը հավանություն տալու մասին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=93189
3. Perroux F., A Note on the concept of Growth Poles. In Regional Economics: Theory and Practice. New York: Free Press, 1970.
4. Longhi C. Cluster dynamics: learning from Competitiveness Cluster policy. The case of 'Secure Communicating Solutions' in the French Provence-Alpes-Côte d'Azur Region. 2017. https://halshs.archives-ouvertes.fr/halshs-01675684/document
5. Мироедов А.А., Совершенствование управления региональной экономикой на базе новой концепции его информационного обеспечения, Иваново, 2007.
6. Мовчан И., Смуров И., Бертран Ф., Французские центры конкурентоспособности как эффективный механизм трансфера технологий. 2011. Электрон. дан., М., 2011. URL: http://dialog.extech.ru/kongress2.
7. Лаженцев В. Н., Территориальное развитие как экономико-географическая деятельность (теория, методология, практика), Экономика региона, № 1/2013.
8. Леонтьев А.И., Новикова Н.В., Региональная проекция теории полюса роста: зарубежный и российский опыт. Теоретическая и прикладная экономика. 2020, № 4.
9. https://issek.hse.ru/news/146078886.html
10. http://www.mecafuture.fr/who-are-we/introduction/?lang=en

Ваге БУЛАНИКЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

ТЕРРИТОРИАЛЬНОЕ РАЗВИТИЕ

КРИТЕРИИ ПОЛЮСОВ ТЕРРИТОРИАЛЬНОГО РОСТА

Залогом устойчивого и инклюзивного развития экономики каждой страны является сбалансированное территориальное развитие регионов. С этой точки зрения важно выявление проблем формирования и развития полюсов территориального роста. Сбалансированное развитие регионов не может происходить сразу и автоматически. Для достижения этой цели необходимо создание стартовых условий и реализация конкретных шагов путем выявления полюсов территориального роста.

Ключевые слова: *стандарт, полюс территориального роста, сбалансированное развитие регионов, экономический потенциал, безопасность ресурсов*

Vahe BULANIKYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics

TERRITORIAL DEVELOPMENT

ICHOICE OF CRITERIAS FOR THE POLES OF TERRITORIAL GROWTH

The guarantee of stable and inclusive development of the economy of any country is the balanced territorial development of the regions. From this point of view, the detection of the issues of the formation and development of the poles of territorial growth is important. The balanced development of the regions cannot be put into practice immediately and mechanically. In order to achieve this goal, it is necessary to create initial conditions and take proper steps such as the detection of the poles of territorial growth.

Key words: *standard, pole of territorial growth, balanced development of regions, economic potential, resource maintenance*

ԻՆՉՊԵՍ Է COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿՆ ԱԶԴԵԼ ՊԱՐԵՆԻ ԳՆԵՐԻ ՎՐԱ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_43

Եթե ձեզ թվում է, որ ամեն ինչ թանկանում է, փորձեք ինչ-որ բան վաճառել:

Ռոբերտ Լեմբկե
Ֆրանսիացի իմաստասեր

Հիմնաբառեր. *համավարակ, պարեն, գներ, լոգիստիկա, գյուղատնտեսություն, ինքնաբավություն, կայունություն*

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, 16 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

Համաշխարհային տնտեսության միջազգայնացման արդի փուլում, եթե բացառենք տվյալ երկրի ներքին և արտաքին սպառնալիքները, տնտեսապես նպատակահարմար է որոշակի պարենամթերքի ներմուծումն այն երկրներից, որտեղ դրա արտադրությունն ավելի նպաստավոր է: Սակայն, ինչպես ցույց տվեց COVID-19 համավարակը, անգամ գյուղատնտեսական արտադրության համար բարենպաստ պայմաններում (2019-2020 թթ. բուսական և կենդանական ծագման սննդամթերքի ու հումքի արտադրության ծավալները մեծացել էին, իսկ պահանջարկի ցուցանիշը հարաբերականորեն կայուն էր) պարենի համաշխարհային գները կարող են թռիչքային վարքագիծ դրսևորել:

Ներկայացվող հոդվածում դիտարկվում են պարենի և սննդային հումքի համաշխարհային գների բարձրացման միտումները, դրանց հիմնական պատճառներն ու Հայաստանի տնտեսության վրա ներգործությունը: Միաժամանակ, շեշտադրվում է նորարարական գյուղատնտեսության և պարենային ինքնաբավության կարևորությունը՝ համավարակին և այլ վտանգավոր երևույթներին դիմակայելու համար:

Եթե հիվանդացության առումով, աշխարհի բնակչության մի ստվար հատված դեռևս խուսափել է COVID-19 համավարակից, ապա սոցիալ-տնտեսական և հոգեբանական տեսանկյունից, վերջինս համատարած բացասական ազդեցություն է ունեցել տնտեսական ու քաղաքական սուբյեկտների գործունեության վրա: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտո-

նիու Գուտերեշի կարծիքով, այս համավարակով պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամը վերջին 100 տարիների ընթացքում բռնկված ճգնաժամերից ամենաազդեցիկն է: Գուտերեշը ներկայացրել է այն երեք գլխավոր սպառնալիքները, որոնց հետ մարդկությունն առերեսվում է համավարակի ընթացքում: Դրանցից առաջինը կառավարությունների և հանրային ինստիտուտների հանդեպ վստահության կորուստն է, երկրորդը՝ համաշխարհային տնտեսական կարգի փլուզումը և երրորդն այն, որ կորոնավիրուսն օգտագործվում է բռնաճնշումների արդարացման համար[1]:

Ավստրալիայի ազգային համալսարանի հաշվարկների համաձայն՝ մինչև 2025 թ. կորոնավիրուսի համավարակի պատճառով համաշխարհային տնտեսությանը հասցված վնասը կարող է հասնել 35 տրիլիոն ԱՄՆ դոլարի[2]:

ԱՄՆ-ի ֆինանսների նախկին նախարար Լոուրենս Սամերսի և Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Դևիդ Կատլերի հոդվածում նշվում է, որ, հաշվի առնելով երկարաժամկետ հետևանքները, միայն ամերիկյան տնտեսությունը կորոնավիրուսի համավարակի պատճառով կկորցնի շուրջ 16 տրիլիոն ԱՄՆ դոլար, որը կազմում է երկրի ՀՆԱ շուրջ 90%-ը[3]:

Քյոլնի գերմանական տնտեսության ինստիտուտի տվյալներով, Գերմանիայի տնտեսությունն արդեն իսկ կրել է 300 մլրդ եվրոյի կորուստ[4]:

Ըստ ՌԴ Ազգային վարկանշային գործակալության (NRA) տվյալների՝ ռուսաստանյան տնտեսության տարեկան կորուստը կկազմի 17,9 տրիլիոն ռուբլի, և գործազուրկների թիվը կավելանա 15,5 մլն-ով[5]:

Երկրների թվարկումը կարելի է շարունակել, բայց միտումը նույնն է. համավարակը մեծ վնաս է հասցնում տնտեսությանը:

Հետաքրքրական է, որ ներկայում աշխարհի խոշոր երկրներն ավելի շատ են տուժում համավարակի պատճառով ահագնացող պարենային ապրանքների գների աճից: Օրինակ՝ Իրանում գների բարձրացումը կազմել է 65%, Արգենտինայում՝ 44%, Նիգերիայում՝ 23%, Եթովպիայում՝ 22%, Թուրքիայում՝ 17%, Պակիստանում՝ 16%, Բրազիլիայում՝ 13%: Իհարկե, սրանք պարենային զամբյուղում ներառված սննդամթերքի միջին տվյալներն են, որոնցից եթե առանձնացնենք որոշ ապրանքատեսակներ, ապա կնկատենք, որ գների աճը պարզապես սրընթաց է: Դիցուք՝ Բրազիլիայում մեկ տարվա ընթացքում բրնձի գինը բարձրացել է 80, իսկ մսինը՝ 20%-ով: Գների այսպիսի բարձրացումից էլ ավելի խոցելի են դառնում այն երկրները, որոնց պարենային ինքնաբավության մակարդակը ցածր է, այսինքն՝ վերջիններս մեծ չափով կախված են արտաքին շուկայից, և բացի այդ, բնակչության ծախսերի հիմնական մասը բաժին է ընկնում սննդամթերքին:

Ակնհայտ է, որ COVID-19 համավարակը ծանր հետք է թողել կյանքի բոլոր ոլորտների վրա: Փորձագետները համակարծիք են, որ Երկրորդ աշխարհամարտից հետո սա ամենահուժկու համաշխարհային ճգնաժամն է: Արդեն իսկ հաշվարկվել է, որ համաշխարհային տնտեսության կորուստները հատել են 3.5 տրիլիոն ԱՄՆ դոլարի սահմանը՝ 2.5 անգամ գերազանցելով 2008 թ. ճգնաժամի վնասները[6]:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ կորոնավիրուսով վարակվածների թիվն աշխարհում օրական ավելանում է 363514-ով: Վարակվել է ավելի քան 179.1 մլն և մահացել՝ 3.8 մլն-ից ավելի մարդ[7]: Սակայն, աշխարհի բազմաթիվ երկրներում ամենօրյա անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գների

[1] https://www.vedomosti.ru/society/news/2021/01/25/855397-gensek-oon-nazval-tekuschii-ekonomicheskii-krizis-hudshim-za-sto-letie
[2] https://www.forbes.ru/newsroom/finansy-i-investicii/408477-eksperty-ocenili-ushcherb-mirovoy-ekonomike-ot-koronavirusa-v
[3] https://tass.ru/ekonomika/9699479
[4] https://iz.ru/1167827/2021-05-23/ekonomisty-podschitali-ubytki-germanii-iz-za-pandemii
[5] https://www.gazeta.ru/business/2020/04/16/13050379.shtml
[6] https://www.vedomosti.ru/economics/news/2021/03/26/863291-v-mide-otsenili-poteri-mirovoi-ekonomiki
[7] https://24.kg/obschestvo/198581_COVID-19v_mire_zarazilis_bolee_1791milliona_umerli_bolee_38_milliona/

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Պարենային գնաճը Հայաստանի հարևան և հիմնական գործընկեր երկրներում (%)[8]

Երկրները	2021 թ. ապրիլ	2020 թ. ապրիլ	Գրանցման ամսաթիվը
Հայաստան	8.3	7.4	2021-04
Ադրբեջան	4.4	4.8	2021-04
Բելառուս	7.4	7.8	2021-04
ԵՄ երկրներ	0.1	0.6	2021-04
Վրաստան	3	5.7	2021-04
Իրան	61.5	63.5	2021-05
Ղազախստան	9.3	9.8	2021-05
Ղրղզստան	12.7	16.5	2021-04
Տաջիկստան	13.7	13.5	2021-01
Մոլդովա	5.1	3	2021-04
Ռուսաստան	6.55	7.58	2021-04
Թուրքիա	16.98	17.44	2021-04
Ուկրաինա	9.4	10.4	2021-04
ԱՄՆ	2.4	3.5	2021-04
Ուզբեկստան	16.9	20.1	2019-12

բարձրացումն ավելի է անհանգստացնում բնակչությանը, քան COVID 19-ով հիվանդանալու վտանգը: Հաշվի առնելով այս իրողությունը՝ գրեթե բոլոր երկրներում իշխանություններն աննախադեպ քայլեր են ձեռնարկում տնտեսական անկումը կանխելու և արդեն իսկ մեծ չափերի հասնող տնտեսական կորուստները վերականգնելու համար:

2021 թ. ապրիլի դրությամբ՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ տարում գնաճի ամենաբարձր մակարդակը գրանցվել է Իրանի Իսլամական Հանրապետությունում, Թուրքիայում, Ղրղզստանում, Ուզբեկստանում և Ուկրաինայում: Բարեբախտաբար, պարենային ապրանքների գների աճի մակարդակը համեմատաբար ցածր է Հայաստանի հիմնական գործընկեր Ռուսաստանում, իսկ ԵՄ երկրներում և ԱՄՆ-ում ցածր է նույնիսկ սպասվող մակարդակից (աղյուսակ 1):

Աշխարհում պարենային ապրանքների գների վերաբերյալ ամենաթարմ տեղեկությունները հրապարակում է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՖԱՕ): Վերջինս ունի օպերատիվ կարգով տեղեկությունների ստացման, մշակման ու հրապարակման գործուն ցանց, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու աշխարհում պարենային անվտանգության վիճակը և հավաստի ազդակներ ուղարկելու պատասխանատուներին, ինչպես նաև աջակցելու առավել խոցելի խմբերին: Ավելին, ՖԱՕ-ն տիրապետում է նաև սահմանափակ միջոցների՝ նախատեսված, այսպես կոչված, «արտակարգ աջակցության» ծրագրերի համար, որոնցից պարբերաբար օգտվում է նաև Հայաստանը:

Այդուհանդերձ, այս կազմակերպության գերխնդիրը գյուղատնտեսության և պարենի ոլորտում գլոբալ ու տարածաշրջանային առումով իրավիճակի գնահատումն է, մասնագիտական վերլուծության միջոցով հիմնախնդիրների ախտորոշումը և դրանց լուծման համար հնարավորությունների գեներացման ծրագրերի մշակումը: Առանձնակի կարևորություն ունի և գործնական հետաքրքրություն է ներկայացնում ՖԱՕ-ի գների համաթիվը, որը ցույց է տալիս պարենային ապրանքների միջազգային գների ամսական շարժը: Ներկայում այն հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 2014-2016 թթ. միջին գները: Շնորհիվ այսպիսի օպերատիվ վիճակագրության՝ պարենային ապրանքների միջազգային շուկայի գնագոյացման միտումներն ու դրանց սոցիալա-

[8] Աղբյուրը https://ru.tradingeconomics.com/country-list/food-inflation

կան հետևանքներն առավել կանխատեսելի են դառնում: Հարկ է նշել, որ այդ համաթվի հաշվարկման համակարգը հարուստ հիմք է հատկապես պարենային մեծ կախվածություն ունեցող երկրների արտաքին քաղաքականության ուղղորդման և առանձին արտադրատեսակների գների վարքագծի գնահատման համար:

Ի դեպ, ինչպես 2010-2014 թթ., այնպես էլ 2020 թ. հոկտեմբերից մինչև 2021 թ. մայիս պարենային գների բարձրացման միտումները ցույց են տալիս, որ համաշխարհային գների փոփոխության պատճառները նույնը չեն (աղյուսակ 2): Ըստ փորձագիտական գնահատականների՝ եթե առաջին դեպքում հիմնական պատճառը համաշխարհային ֆինանսական ճգնաժամն էր, հատկապես՝ նավթի գնի բարձրացումը, ապա վերջին շրջանում դա հիմնականում թելադրված է կորոնավիրուսի համավարակով: Այսպես՝ գյուղատնտեսական արտադրության վրա COVID-19-ի ազդեցությունը մեծ չէ, մինչդեռ բեռնափոխադրումների ընթացքի և մատակարար երկրների արտահանման մասնաբաժնի փոփոխության վրա՝ էական: Մասնավորապես՝ նկատելիորեն ավելացել են որոշ պարենային ապրանքների սեփական պահուստները՝ այդպիսով կրճատելով նաև առաջարկը և խախտելով լոգիստիկ համակարգի ակտիվությունն ու շարժընթացը:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, ՊԳԿ գների համաթիվը հատկապես ակտիվ աճ է դրսևորել 2021 թ. հունվար-ապրիլին, իսկ մայիսին նախորդ ամսվա համեմատությամբ բարձրացել է 4.8%-ով և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 39,7%-ով: Մայիսի ցուցանիշը 2010 թ. հոկտեմբերից հետո ամենաբարձր ամսական գնաճն է: Հատկապես անհանգստացնող է այն փաստը, որ պարենային ապրանքների գները վերջին 12 ամիսների ընթացքում անընդհատ բարձրացել են: Մայիսին գների կտրուկ բարձրացումը հիմնականում պայմանավորված է եղելյուղի, շաքարի, հատիկային և մսակաթնային ապրանքների գների թռիչքով: Այսպիսով՝ 2021 թ. մայիսին հացահատիկային ապրանքների գները նախորդ ամսվա համեմատությամբ բարձրացել են 6%-ով, իսկ 2020 թ. ապրիլի համեմատությամբ՝ 36,6%-ով: Համեմատվող ժամանակահատվածներում բուսական յուղի միջին գինը բարձրացել է 7,8, շաքարինը՝ 6,8, մսինը՝ 1,2 և կաթնամթերքինը՝ 1,5 %-ով:

Այդուհանդերձ, ՖԱՕ-ի կանխատեսմամբ, 2020-2021 թթ. բերքահավաքից մինչև բերքահավաք ընկած ժամանակահատվածում հացահատիկի վաճառքի ծավալը նախորդ տարվա ցուցանիշը կգերազանցի 5,9%-ով և կկազմի 467 մլն տոննա: Նախատեսվում է, որ հատկապես կավելանան ֆուրաժային հացահատիկի, ինչպես

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՄԱԿ-ի ՊԳԿ (FAO) պարենի գների համաթիվը[9]

Տարիները		Գների համաթիվը	Միս	Կաթ	Հացահատիկ	Բուսական յուղ	Շաքար
2010		106,7	91,0	111,9	107,5	121,9	131,7
2011		131,9	105,3	129,9	142,2	158,4	160,9
2012		122,8	105,0	111,7	137,4	138,3	133,3
2013		120,1	106,2	140,9	129,1	119,5	109,5
2014		115,0	112,2	130,2	115,8	110,6	105,2
2015		93,1	96,7	108,0	91,0	101,9	99,1
2020		98,0	95,5	101,8	102,7	99,4	79,5
2021	հունվար	113,3	96,0	111,2	124,2	138,3	94,2
	փետրվար	116,4	97,8	113,1	125,7	147,4	100,2
	մարտ	119,1	100,8	117,5	123,6	159,2	96,2
	ապրիլ	121,3	102,7	119,1	125,6	162,0	100,0

[9] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ http://www.fao.org/worldfoodsituation/foodpricesindex/ru/ տվյալների հիման վրա:

նաև բրնձի ու ցորենի վաճառքի ծավալները[10]:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ 12-րդ ամիսն անընդմեջ աճում են պարենի հումքային ապրանքների համաշխարհային գները, և, առաջին հերթին, բարձրացել է շաքարի գինը: Վերջինս բացատրվում է շաքարեղեգնի մի մասը որպես կենսավառելիքի հումք օգտագործելու հանգամանքով: 2021 թ. ապրիլին պարենի համաշխարհային գները հասել են 2014 թ.-ից ի վեր առավելագույն մեծությունների:

Քանի որ Հայաստանի պարենային շուկան ուղղակիորեն և անուղղակիորեն կախված է արտաքին շուկայի գներից, ապա վերջինիս գնային տատանումներն անխուսափելիորեն ազդում են ՀՀ ներքին շուկայի վրա: Ի դեպ, ուղղակի ազդեցության են ենթարկվում հատկապես ներկրումների հաշվին պահանջարկի զգալի մասը բավարարող՝ հացահատիկի, բուսական և կենդանական յուղերի, թռչնի և խոզի մսի շուկաները: Անուղղակի կախվածություն ունեն շաքարի և կարտոֆիլի գները, քանի որ առաջինի հումքն ամբողջովին ներկրվում է, իսկ կարտոֆիլի բարձորակ տնկանյութի պահանջը հիմնականում բավարարվում է եվրոպական երկրներից գնումների հաշվին: Բավական է նշել, որ 2021 թ. ցանքի համար ներկրված տնկանյութի 1 տոննայի գինը բարձրացել է շուրջ 100 հազ. դրամով: Վերջինս անխուսափելիորեն ազդելու է ստացվող բերքի ինքնարժեքի և իրացման գնի վրա: Բայց իրականությունն այն է, որ դա ուղղակիորեն հարվածում է սպառողի գրպանին և ազդում արտադրողի եկամտի վրա: Հատկանշական է, որ գյուղացիները մատնացույց են անում այն իրողությունը, որ 1 ձվի գինն ավելի բարձր է, քան 1 կգ կարտոֆիլինը, իսկ 1 լիտր շշալցված աղբյուրի ջրի գինը գերազանցում է կաթի գնման գինը:

Պարենային մթերքների գների բարձրացումը ոչ միայն անդրադառնում է բնակչության աղքատության խորացման վրա, այլև հարկադրում հրաժարվել որակյալ սննդից ու հավասարակշռված սննդաբաժնից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գների բարձրացման պայմաններում հատկապես աղքատության սահմանագծին մոտ գտնվող ընտանիքներում սննդամթերքի համար կատարվող ծախսերը մեծ փոփոխության չեն ենթարկվել: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ ցածր վճարունակության պայմաններում շատերը հարկադրված են փոփոխել տեսականին՝ ավելացնելով համեմատաբար էժան, ոչ որակյալ սննդամթերքի սպառումը: Նման իրավիճակում մեծ տեղ է տրվում մակարոնեղենից, կարտոֆիլից, բուսական յուղից, ալյուրից ու բանջարեղենից պատրաստվող ճաշատեսակներին: Հատկանշական է, որ անգամ գյուղական ընտանիքների դեպքում թանկ հաճույք է դարձել կենդանական ծագման սննդամթերքի՝ ձվի, կարագի, կաթնեղենի, առավել ևս՝ մսի օգտագործումը:

ՀՀ ՎԿ տվյալները ցույց են տալիս, որ 2021 թ. ապրիլին նախորդ տարվա ապրիլի համեմատությամբ շաքարը թանկացել է 41, արևածաղկի յուղը՝ 73,5, ձուկը և ձկնամթերքը՝ 41, ձուն՝ 55,7, կաթը և պանիրը՝ 13,4, մսամթերքը՝ 4, մրգերը՝ 10,4 և բանջարեղենը՝ 8,5%-ով: Իսկ, ընդհանուր առմամբ, պարենային ապրանքների գները այդ ժամանակահատվածում աճել են 8.3%-ով[11]: Ինչպես նկատելի է աղյուսակ 3-ի տվյալներից, մեկ տարվա ընթացքում պարենի գների նման տեմպով բարձրացումը 2016-2020 թթ. համեմատությամբ աննախադեպ է:

Միանգամայն տրամաբանական է, որ գների նման չափով բարձրացումը պետք է պարտադրի իշխանություններին համապատասխան միջոցներ ձեռնարկել: ՌԴ-ում, Բելառուսում և Կենտրոնական Ասիայի երկրներում, օրինակ, այս առումով, նախապատվությունը տրվում է վարչական միջոցներով գների աճի զսպմանը: Բայց պետք է խոստովանել, որ անգամ համավարակի պայմաններում գների կարգավորման վարչական ձևերն այնքան էլ արդյունավետ չեն: Հետևաբար՝ անհրաժեշտ է չշեղվել պարենային շուկայի ինքնակարգավորման ուղուց, որի հիմնական կողմնորոշիչն առաջարկի և պահանջարկի խթա-

[10] https://news.un.org/ru/story/2021/05/1402482
[11] https://ru.armeniasputnik.am/infographics/20210507/27453261/Dinamika-tsen-na-produkty-pitaniya-v-Armenii.html

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Սպառողական գների համաթվերը (2016-2020 թթ. դեկտեմբերը՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)[12]

Այրտկները	2016	2017	2018	2019	2020
Սպառողական գների համաթիվը, ընդամենը	98,5	102,6	101,8	100,7	103,7
այդ թվում՝					
սննդամթերք (ներառյալ ոչ ալկոհոլային, ալկոհոլային խմիչքը և ծխախոտը)	99.8	105.3	101.8	100.2	105.5
սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	99.7	105.5	101.6	99.7	104.9
ալկոհոլային խմիչք և ծխախոտ	101.1	104.0	103.9	104.6	110.4
ոչ պարենային ապրանքներ	96.6	101.7	103.2	101.4	103.4
ծառայություններ	99.3	99.5	100.8	101.1	101.6

նումն է: Նախ՝ գների թռիչքաձև ընթացքը կանխելու հիմնական գործոնը գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծավալների ավելացումն է և տեսականու բազմազանեցումը: Դեռևս 2020 թ. կեսերին ՀՀ կառավարությունը հաստատել է համավարակի պայմաններում գյուղատնտեսական արտադրությունը խթանելու երկուսուկես տասնյակ ծրագիր: ՀՀ-ի պայմաններում սա աննախադեպ մոտեցում է և կարող է բարձր արդյունք ապահովել: Ի դեպ, այդ ծրագրերը կոչված են ոչ միայն խթանելու առաջարկը, այլև, նոր աշխատատեղեր ստեղծելու և արտահանումը խրախուսելու շնորհիվ, ավելացնելու պահանջարկը: Սակայն, խնդիրն այն է, որ դրանց մեծ մասը լիարժեքորեն իրականացնելու և արդյունք ապահովելու համար որոշակի ժամանակ է պահանջվում: Ու թեև ջերմոցային տնտեսությունների և ինտենսիվ այգիների ծրագրերն աննախադեպ արագությամբ են իրագործվում, այնուամենայնիվ, ոռոգման, այդ թվում՝ կաթիլային համակարգերի զարգացման, հատկապես՝ նոր ջրամբարների, պոմպակայանների, և համապատասխան արտադրական ենթակառուցվածքների ծրագրերն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դանդաղում են: Պետք է հուսալ, որ մոտալուտ ապագայում այս խնդիրներն արդյունավետ լուծումներ կստանան:

[12] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 69:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները; Եր., «Տնտեսագետ», 2014, 96 էջ («Ամբերդ» մատենաշար):
2. Ավետիսյան Ս., Գրիգորյան Ա., Պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում: Եր., «Տնտեսագետ», 2015, 60 էջ («Ամբերդ» մատենաշար):
3. ՀՀ ՎԿ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/am/?nid=82&id=2359
4. Теводадж Могес, Рынки продовольствия в период пандемии COVID-19, МВФ | Бюджетные вопросы, 2020 г
5. https://www.vedomosti.ru/society/news/2021/01/25/855397-gensek-oon-nazval-tekuschii-ekonomicheskii-krizis-hudshim-za-stoletie
6. https://www.forbes.ru/newsroom/finansy-i-investicii/408477-eksperty-ocenili-ushcherb-mirovoy-ekonomike-ot-koronavirusa-v
7. https://tass.ru/ekonomika/9699479
8. https://iz.ru/1167827/2021-05-23/ekonomisty-podschitali-ubytki-germanii-iz-za-pandemii

9. https://www.gazeta.ru/business/2020/04/16/13050379.shtml
10. https://www.vedomosti.ru/economics/news/2021/03/26/863291-v-mide-otsenili-poteri-mirovoi-ekonomiki
11. https://24.kg/obschestvo/198581_COVID-19
12. http://www.fao.org/worldfoodsituation/foodpricesindex/ru/
13. https://news.un.org/ru/story/2021/05/1402482
14. https://ru.armeniasputnik.am/infographics/20210507/27453261/Dinamika-tsen-na-produkty-pitaniya-v-Armenii.html

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

КАК ПАНДЕМИЯ COVID-19 ПОВЛИЯЛА НА ПРОДОВОЛЬСТВЕННЫЕ ЦЕНЫ?

На современном этапе глобализации, если исключить внутренние и внешние угрозы данной страны, экономически целесообразно импортировать определенные продукты питания из стран, где их производство имеет преимущества. Однако, как показала пандемия COVID-19, даже в благоприятных для сельскохозяйственного производства условиях, когда в 2019-2020 годах производство продуктов растительного и животного происхождения увеличилось, а показатель спроса был относительно стабильным, мировые цены на продовольствие показали скачкообразное поведение.

В данной статье исследуется тенденция роста мировых цен на продовольствие и сырье, их основные причины и влияние на экономику Армении. В то же время подчеркивается необходимость развития инновационного сельского хозяйства и повышения уровня продовольственной самообеспеченности в целях противостояния пандемии и другим опасным явлениям.

Ключевые слова: *пандемия, продукты питания, цены, логистика, сельское хозяйство, самоокупаемость, устойчивость*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

MARKETS AND COMPETITION

HOW HAS THE COVID-19 PANDEMIC AFFECTED FOOD PRICES?

Course, at the present stage of globalization, if we exclude the internal and external threats of a given country, it is economically expedient to import certain food products from countries where their production has a priority. However, as shown by the COVID-19 epidemic, even in favorable conditions for agricultural production, when in 2019-2020 the production of plant and animal products increased, and the demand indicator was relatively stable, world food prices showed rocketing behavior.

This paper examines the growth trends of world prices for food and raw materials, their main reasons and their impact on Armenian economy. At the same time, the need to develop innovative agriculture and improve food self-sufficiency is emphasized in order to confront the pandemic and other threats.

Keywords: *pandemic, food, prices, logistics, agriculture, self-sufficiency, sustainability*

«ԽԵԼԱՑԻ» ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_50

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնում:

100-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ հինգ մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ:

ORCID - https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

Վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն կիրառումը զբոսաշրջության ոլորտում ընձեռում է բիզնես մոդելների փոխակերպման, ծառայությունների մատուցման, զբոսաշրջության զարգացման նոր հնարավորություններ: «Խելացի» զբոսաշրջությունը ներառում է ամրագրման և վճարման, տրանսպորտի, հյուրանոցային օբյեկտների, սննդի կետերի, ժամանցի կենտրոնների և այլ վայրերի «խելացի» լուծումներ: Հոդվածում դիտարկվել են զբոսաշրջության ոլորտում «խելացի» լուծումների և նորամուծությունների կիրառման տարբեր օրինակներ, կատարվել են որոշ առաջարկություններ ՀՀ-ում նորամուծական լուծումներով «խելացի» զբոսաշրջության զարգացման համար:

Հիմնաբառեր. *«խելացի» զբոսաշրջություն, տեղեկատվական տեխնոլոգիա, նորամուծություն, դեստինացիա, «խելացի» քաղաք*

XXI դարում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տարբեր ոլորտներում նպաստել է գործընթացների արագ ու արդյունավետ իրականացմանը, ընձեռել նոր բիզնես հնարավորություններ: «Խելացի» լուծումներ կիրառվում են նաև զբոսաշրջության ոլորտում:

«Խելացի» զբոսաշրջությունը (smart tourism) ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների նորարարական օգտագործում բիզնես մոդելները փոխակերպելու և հյուրընկալության կազմակերպումը դյուրինացնելու համար՝ միաժամանակ ստեղծելով եկամտի նոր հնարավորություններ[1]: «Խելացի» զբոսաշրջությունը կարելի է բնորոշել որպես զբոսաշրջության կազմակերպում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, որը կարող է նե-

[1] From Smart Cities to Smart Tourism, https://www.intellias.com/from-smart-cities-to-smart-tourism/

ռառել ամրագրման և վճարման, տրանսպորտի, հյուրանոցային օբյեկտների, սննդի կետերի, ժամանցի կենտրոնների և այլ վայրերի «խելացի» լուծումներ:

Զբոսաշրջային դեստինացիաների «խելացի» լուծումները կարելի է ներկայացնել 7 A-երի օգնությամբ.

- Attractions – տեսարժան վայրեր՝ զվարճանքի պուրակներ, թանգարաններ, ճարտարապետություն, թատրոններ, առևտրի կենտրոններ,
- Accessibility – հասանելիություն՝ տրանսպորտային ենթակառուցվածքներ, հասարակական տրանսպորտի ծառայություններ, շարժունակության սահմանափակումներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ միջոցառումներ,
- Amenities – հարմարություններ՝ կացության կազմակերպում, սնունդ, ժամանցի հետ կապված զբաղմունքներ,
- Available packages - առկա փաթեթներ՝ միջնորդների կողմից ծառայությունների փաթեթներ՝ դեստինացիայի յուրահատկության մասին տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու համար,
- Activities – գործունեություն՝ գործողությունների ամբողջություն, որ զբոսաշրջիկներին գրավում է դեպի դեստինացիա,
- Ancillary services - օժանդակ ծառայություններ՝ փոստային ծառայություններ, բանկեր, առողջապահություն (և այլ ծառայություններ, որոնք հիմնականում ուղղված չեն զբոսաշրջային շուկային):

Համավարակի պայմաններում վերոնշյալին ավելանում է նաև Assurance-ը՝ հավաստիացումը, ինչը նշանակում է, որ զբոսաշրջության մատակարարներն ու դեստինացիաները պահպանում են առողջությանը վերաբերող՝ ընդունված կանոններն ու անվտանգության չափորոշիչները[2]:

Տեխնոլոգիական նորամուծությունների կիրառումը վերոնշյալ ոլորտներում կարող է նպաստել զբոսաշրջիկների փորձառության բարելավմանը՝ թվային հարթակի օգտագործմամբ:

Այժմ հարկ ենք համարում ներկայացնել զբոսաշրջության ոլորտում կիրառվող «խելացի» լուծումների մի շարք օրինակներ.

♦ Շատ թանգարաններ թույլ են տալիս բջջային հավելվածի միջոցով ծանոթանալ իրենց հիմնական հավաքածուին, և, ներբեռնելով համապատասխան ծրագիրը, զբոսաշրջիկները թանգարանում կարողանում են լսել այն, ինչի համար պետք է վճարեին ուղեկցորդին[3]:

♦ Զբոսաշրջիկների համար ամենաօգտակար լուծումներից է զբոսաշրջային դեստինացիաներում անվճար WiFi-ի առկայությունը, ընդ որում, ոչ միայն այգիներում կամ հանգստի գոտիներում, այլև փողոցներում, խանութներում, տրանսպորտում: Այդպիսի քաղաքի օրինակ է Բարսելոնը:

♦ «Խելացի» տրանսպորտի առկայությունը նույնպես կարևոր գործոն է: Բարսելոնում համապատասխան տեխնոլոգիական լուծումներից են ավտոբուսային «խելացի» կանգառները, երբ զբոսաշրջիկը տեսնում է, թե երբ կժամանի տրանսպորտը, ավտոկայանման սենսորները (ավտոկայանման վայրերում ասֆալտի տակ տեղադրված են սենսորներ, որոնք կարող են որոշել ազատ տարածքները և հայտնել վարորդներին, ինչը նվազեցնում է նաև երթևեկության խցանումները, վառելիքի արտանետումները)[4]: Նույն կերպ, «խելացի» լուծում է էլեկտրական մեքենաների կիրառման լոգիստիկան (LIVE Barcelona - Logistics for the Implementation of the Electric Vehicle), որը նպաստում է քաղաքում էլեկտրական մեքենաների օգտագործմանը՝ ավելի քան 300 անվճար լիցքավորող կայաններով[5]:

♦ Զբոսաշրջիկներով հագեցած դեստինացիաներում կարևոր է նաև փողոցային լուսավորության ապահովման «խելացի» կազմակերպումը: Օրինակ՝ նույն Բարսելոնում LED տեխնոլոգիաների կիրառմամբ

[2] Innovation and reinvention for an industry in crisis, https://hub.beesmart.city/en/strategy/smart-tourism-innovation-and-reinvention-for-an-industry-in-crisis
[3] Smart City Tourism: The Future of Tourism, https://blog.bismart.com/en/smart-city-tourism-future-tourism
[4] The Transformation That Barcelona Had Undergone To Become A Smart City, http://www.barcinno.com/barcelona-smart-city-technologies/
[5] Electric Barcelona, http://meet.barcelona.cat/en/visit-barcelona/get-around-the-city/electric-vehicles

ոչ միայն նվազեցվում է էներգիայի ծախսը, այլև դրանց զգայնության արդյունքում, հետիոտնի բացակայության պարագայում լուսավորությունն առհասարակ անջատվում է: Սա տարեկան խնայում է 30% էներգիա՝ ավելի քան 37 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: Ընդ որում, լույսի սենսորները նաև հավաքագրում են տվյալներ օդի որակի վերաբերյալ[6]:

♦ «Խելացի» լուծում է համարվում աղբի հավաքման պնևմատիկ համակարգը, որը նույնպես կիրառվում է Բարսելոնում: Դրա արդյունքում հավաքում են օրգանական և ոչ օրգանական աղբն ու թուղթը: Աղբ թափելու վայրերը կապված են վակուումային ցանցով՝ փողոցների տակ տեղադրված և դեպի հավաքման գործարան ուղղվող խողովակների միջոցով, որտեղ հիդրավլիկ ճնշումը նվազեցնում է աղբի ծավալը[7]:

♦ «Խելացի» լուծումներից է քաղաքային գյուղատնտեսությունը: Օրինակ՝ Շանհայում երկնաքերերի վրա՝ 100 հա տարածքում նախատեսվում է կազմակերպել քաղաքային գյուղատնտեսության աշխատանքներ, ինչի արդյունքում կբավարարվի 24 մլն մարդու սննդի պահանջմունքը: Նշված շինությունները, միաժամանակ, ծառայում են որպես կրթական, ժամանցի և նորամուծությունների կենտրոններ[8]:

♦ «Ամենախելացի» քաղաքներից մեկը՝ Սինգապուրը, քաղաքացիներին ու զբոսաշրջիկներին ապահովում է արագ, հարմարավետ ու որակյալ բջջային ցանցով և ինտերնետով՝ ինչպես աշխատանքի, այնպես էլ զվարճությունների, ծառայությունների և գնումների համար: Տեխնոլոգիաներն օգտագործվում են ուղևորահոսքը և տրանսպորտային երթևեկությունը կարգավորելու նպատակով: Զբոսաշրջիկները MyTransport.SG բջջային հավելվածով կարող են ծրագրել իրենց ճանապարհորդությունն ավտոբուսով, ավտոմեքենայով, տաքսիով, գնացքով և հեծանվով[9]:

♦ «Խելացի» զբոսաշրջության քաղաքի օրինակ է Փհենչհանը (Հարավային Կորեա), որտեղ անցկացվեցին 2018 թ. ձմեռային օլիմպիական խաղերը: Այդ ընթացքում քաղաքը վերածվեց 5G գերժամանակակից տեխնոլոգիայի կենդանի թատերաբեմի՝ այցելուների համար բացելով նոր հնարավորություններ, ինչպիսիք են 4K ու 360 աստիճանի տեսանյութերը և VR/MR հեռարձակումը: Օլիմպիական խաղերի ժամանակ ներկայացվեցին նաև արհեստական բանականությամբ թարգմանիչ ռոբոտներ, ինքնակառավարվող ավտոբուսներ և պարեկային անօդաչու թռչող սարքեր[10]:

♦ 2021 թ.-ին աշխարհի առաջատար քաղաք դառնալու հավակնոտ նպատակի իրականացման համար Դուբայում կյանքի են կոչվել ավելի քան 1000 «խելացի» ծառայություններ և նախաձեռնություններ՝ ուղղված տեխնոլոգիական զարգացմանը, ինչպես նաև տեղի բնակիչների ու զբոսաշրջիկների առօրյայի դյուրացմանը: Նման նախաձեռնություններից են զբոսաշրջության «խելացի» ուղեցույցը (smart tourism guide), «խելացի» այգիները՝ առանց ուսուցման կենտրոններով և արևի էներգիայով աշխատող «խելացի» նստարաններով, որոնք այցելուներին հնարավորություն են տալիս լիցքավորելու իրենց

[6] Smart Cities in Action: 5 Reasons Why Barcelona is a Smart City, https://blog.bismart.com/en/why-barcelona-is-a-smart-city
[7] Barcelona smart city tour, Ajuntament de Barcelona, https://www.urenio.org/wp-content/uploads/2011/12/Barcelona_Smart_City_Tour.pdf
[8] Urban Farming, https://inhabitat.com/shanghai-is-planning-a-massive-100-hectare-vertical-farm-to-feed-24-million-people/
[9] Secrets to Singapore's Smart-City Success, https://partners.mastercard.com/en-us/secrets-to-signapores-smart-city-success/?Channel=InternalWebsite&Marketer=Mastercard&TestControl=0&AdCreative=Singapore
[10] From Smart Cities to Smart Tourism, https://www.intellias.com/from-smart-cities-to-smart-tourism/

հեռախոսները[11]:

♦ Աշխարհում հյուրընկալության ոլորտում վերջին տարիներին ներդրված տեխնոլոգիական նորամուծություններից են «խելացի» շենքերը (անվտանգության, հակահրդեհային, կապի, լուսավորության, էներգամատակարարման և այլ ծառայությունների «խելացի» կազմակերպմամբ), մուտք՝ առանց բանալու ծառայությունները (հյուրանոցային սենյակ մուտք գործելու համար բանալիների կամ քարտերի փոխարեն օգտագործվում են բջջային հեռախոսներ), հայելի հեռուստացույցները (օրինակ՝ գտնվելով լոգարանում՝ հայելու մեջ հնարավոր է հեռուստացույց դիտել), «խելացի» ջերմաչափերը և «խելացի» լուսավորությունը (սենյակում չլինելով՝ բջջային հեռախոսի միջոցով կարելի է կարգավորել սենյակի ջերմաստիճանը կամ միացնել ու անջատել լույսը), լույսի զգայուն սենսորները (սենյակում շարժ լինելու դեպքում սենսորների միջոցով լույսը միանում է, և հակառակը), ռոբոտները (որոնք հյուրանոցի ընդունարանում դիմավորում են հյուրերին, օգնում տանել ճամպրուկները) և այլն[12]:

♦ Համավարակի պայմաններում զարգացող միտում դարձավ առցանց տուրերի կազմակերպումը: Միջազգային շատ թանգարաններ միացան այս նախաձեռնությանը՝ իրենց հավաքածուների առցանց ցուցադրությամբ:

♦ Զբոսաշրջության զարգացման համար կարևոր է նաև իրականացնել հյուրերի կարծիքների և բողոքների վերլուծություն: 2019 թ. Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնի կողմից ՀՀ-ում ստեղծվեց «Travelinsights» գործիքը, որը միավորում է ճանապարհորդների պատմություններն ու արհեստական բանականությունը: Կիրառելով բարդ ալգորիթմներ՝ գործիքը թույլ է տալիս իրական ժամանակում հավաքել, վերլուծել ու տեսանելի դարձնել առցանց գրառումները (Tripadvisor.com, Facebook.com, Booking.com կայքերից)՝ այդ կերպ բացահայտելով ճանապարհորդների նախընտրություններն ու իրական խնդիրները, որոնց նրանք բախվում են[13]:

«Խելացի» զբոսաշրջային դեստինացիայի նորամուծական լուծումներն ավելի դյուրին են դարձնում ծառայությունների մատուցումը: Երևանում նույնպես «խելացի» տեխնոլոգիաների կիրառումը տարբեր ոլորտներում, բնականաբար, կարող է նպաստել նաև զբոսաշրջության զարգացմանը: Այդ նպատակին միտված «խելացի» լուծումներ պետք է իրականացնել հետևյալ ուղղություններով՝ տեսարժան վայրեր, տրանսպորտի հասանելիություն, հյուրանոցի, սննդի, ժամանցի հնարավորություններ, օժանդակ ծառայություններ (բջջային հավելվածներ, բանկային, բժշկական և այլն), «խելացի» լուսավորություն և WiFi-ի առկայություն: Առհասարակ որքան քաղաքը հագեցած է լինում տեխնոլոգիական լուծումներով, այնքան ավելի բարձր է լինում ինչպես տեղի բնակիչների, այնպես էլ հյուրերի սպասարկման, ծառայություններից բավարարվածության մակարդակը:

Զբոսաշրջության զարգացման նպատակով՝ «խելացի» քաղաքը պետք է ունենա բջջային հավելված, որը ցույց կտա ժամանցի հիմնական վայրերը, առկա տուրերը, հնարավոր գործողությունները, որ զբոսաշրջիկները կարող են իրականացնել քաղաքում: Ներկայում, օրինակ, Երևանն ունի տարբեր բջջային հավելվածներ քաղաքի քարտեզի, հնարավոր տուրերի, թանգարանների վերաբերյալ: Կարծում ենք՝ ավելի արդյունավետ կլինի ստեղծել մեկ ամբողջական նման հավելված, ինչը թույլ կտա համապարփակ ձևով ներկայացնել քաղաքային զբոսաշրջության հիմնական ակտիվները, ենթակառուցվածքները՝ հյուրանոցներ, սննդի օբյեկտներ, տրանսպորտ, ժամանցի վայրեր և այլն, առկա տուրերը, հնարավոր գործողությունները: Ցանկալի է, որ տվյալ հավելվածն ունենա նաև հատուկ բաժին, որտեղ հնարավոր է տարբեր տեսանկյուններից գնահատել քաղաքային զբոսաշրջությունը, հայտնել կարծիք-

[11] Նույն տեղում:
[12] 10 of the World's Best Hotel Room Innovations, https://blog.sodexoengage.com/10-of-the-worlds-best-hotel-room-innovations
[13] Travelinsights.ai, https://www.sdglab.am/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A5%D6%80#travelinsights-%D5%B0%D5%B5, Travelinsights - Where Expectations Meet Experiences, https://www.travelinsights.ai/about-us?fbclid=IwAR0IuZq1a1rij3DDLkEYuEo1_mBIHA5qsT9eB84c1sqsONYIZF78-Nolvvc, https://www.travelinsights.ai/

ներ, ինչը հնարավորություն կընձեռի գնահատելու զբոսաշրջիկների գոհունակության աստիճանը քաղաքում անցկացրած հանգստից: Զբոսաշրջիկների հնչեցրած բողոքներն ու մեկնաբանությունները, բնականաբար, օգտակար կլինեն և՛ քաղաքային իշխանությանը, և՛ Զբոսաշրջության կոմիտեին, և՛ ոլորտում գործող մասնավոր կազմակերպություններին՝ քաղաքականության մշակման, գործունեության բարելավման առումներով:

Որպես ամփոփում՝ ներկայացնենք որոշ միջոցառումներ, որոնք կարող են նպաստել ՀՀ-ում նորամուծական լուծումներով «խելացի» զբոսաշրջության զարգացմանը.

♦ ՀՀ խոշոր քաղաքների համար «խելացի քաղաքի» և զբոսաշրջության կայուն զարգացման ծրագրերի մշակում: ՀՀ կառավարության 2018 թ. մարտի 1-ի նիստի N8 արձանագրային որոշմամբ ընդունվել է «Խելացի քաղաք»-ի ստեղծման հայեցակարգը[14]: Այժմ Երևանի զարգացման 2021 թ. գերակայություններից է «Խելացի քաղաք» ծրագրի ներդրումը[15]:

♦ «Խելացի» լուծումների կիրառում քաղաքային զբոսաշրջության հետևյալ բնագավառներում՝ տեսարժան վայրեր, տրանսպորտ, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, հանրային սննդի օբյեկտներ, ժամանցի վայրեր, մշակութային հաստատություններ և այլն:

♦ Քաղաքային զբոսաշրջության ներուժն ընդգրկող համալիր բջջային հավելվածի ստեղծում ՀՀ քաղաքների համար՝ զբոսաշրջիկների կողմից, ըստ տարբեր չափանիշների, որակի գնահատման հնարավորությամբ: Ներկայում գործում են Երևանին վերաբերող մի շարք բջջային հավելվածներ, սակայն հարկ է հարստացնել դրանց տեղեկատվական բաժինները, ինչպես նաև համանման հավելվածներ պատրաստել մյուս քաղաքների համար ևս:

♦ «Խելացի» տրանսպորտային համակարգի ստեղծում, ինչը թույլ կտա զբոսաշրջիկներին իմանալ տրանսպորտի ժամանման պահը, ծրագրել իրենց ուղևորությունը ցանկալի ուղղություններով և այլն: Երևանում այսօր տրանսպորտի հետ կապված հիմնախնդիրները բազմաթիվ են, մասնավորապես՝ անբավարար հասարակական/այլընտրանքային տրանսպորտային ենթակառուցվածքներ, փոխադրամիջոցների բարձր տարիք[16], ինչի պատճառով ավելի շատ վառելիք է սպառվում, և արտանետումներն ավելի շատ են: Այս առումով, պետք է ձեռնարկվեն քայլեր էլեկտրամոբիլների ավելացման, միասնական հասարակական տրանսպորտային համակարգի ներդրման, երթևեկության գոտիների ընդլայնման, «խելացի» կանգառների ստեղծման և այլ ուղղություններով:

♦ Կանաչ տարածքների ավելացում, ինչը կայուն քաղաքների զարգացման հիմնական քայլերից է և թույլ է տալիս լուծել մի շարք բնապահպանական խնդիրներ և, իհարկե, քաղաքը բնակիչների ու հյուրերի համար ավելի գեղեցիկ, կանաչ, հյուրընկալ ու մաքուր դարձնել: Ներկայում Երևանում կանաչ տարածքները մեկ բնակչին ընկնող տիպային հարաբերակցությամբ 7,6 ք.մ. են, ինչը ցածր է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից խորհուրդ տրվող նվազագույն արժեքից՝ 9 ք.մ.-ից[17]: Ըստ որոշ հաշվարկների՝ մեկ հասուն ծառը չորս մարդու համար կարող է ապահովել օրական թթվածնի պահանջը, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում մթնոլորտից կլանել ավելի քան 48 ֆունտ ածխաթթու գազ՝ դրա դիմաց արտադրելով թթվածին[18]:

♦ Արևային էներգիայի վահանակների օգտագործում հյուրանոցների կողմից՝ նպաստելով կայուն էներգետիկ զարգացման սկզբունքների կիրառմանը: Համա-

[14] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, 1-ը մարտի, 2018 թվական, N8, http://www.irtek.am/views/act.aspx?aid=93941

[15] Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր: Հավելված Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N309-Ա որոշման, էջ 5, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/97/a04acd72cff87fb3a093ff7ec5c0fb93c9a218b2.pdf

[16] Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր, էջ 75, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/82/a1fb05c6c1ce38ca1807b35d07ada8789e7fd871.pdf

[17] Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր, էջ 64, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/82/a1fb05c6c1ce38ca1807b35d07ada8789e7fd871.pdf

[18] The Power of One Tree - The Very Air We Breathe, https://www.usda.gov/media/blog/2015/03/17/power-one-tree-very-air-we-breathe

ձայն «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի՝ նախատեսված է Երևանի ավելի քան 90 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքի վերելակների, ներշենքային և աստիճանավանդակային հատվածների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների էլեկտրաէներգիայի մատակարարումը: Միաժամանակ, ծրագրվել է շենքերի շքամուտքերում և բակային տարածքներում լուսավորություն ապահովել LED լուսատուների միջոցով: Ծրագրի իրականացմամբ, ըստ էության, ընդհանուր օգտագործման տարածքներում էլեկտրաէներգիայի սպառումն ու վճարումները կնվազեն 77%-ով[19]: Նույն կերպ, արևային ֆոտովոլտային համակարգերի լայնածավալ կիրառումը կնպաստի նաև զբոսաշրջային, հյուրանոցային կազմակերպությունների կողմից էլեկտրաէներգիայի սպառման ծավալների կրճատմանը:

♦ Բնակչության և զբոսաշրջիկների տեղեկացվածության մակարդակի բարձրացում կայուն սպառման ու կայուն զարգացման մասին՝ պատրաստելով թեմային նվիրված հաղորդումներ, ինչպես նաև ծալազդներ:

♦ Ջրի և աղբի վերամշակման համակարգերի ներդրում, էներգաարդյունավետության և կայուն շինարարության ապահովում: Ըստ որոշ հաշվարկների՝ Երևանում արտադրված ջրի ծավալի գրեթե 73%-ը կորչում է՝ նախքան սպառողներին հասնելը և չի հաշվառվում: Այդ կորուստների պատճառներն են ջրամատակարարման ցանցի վատ տեխնիկական պայմանները և ապօրինի սպառումը, որոնք լրացուցիչ և ոչ արդարացված պահանջներ են ստեղծում ջրային պաշարների նկատմամբ[20]: Հայաստանում գերխնդիր է նաև աղբի վերամշակման և տեսակավորման գործարանի կառուցումը: Նույնքան կարևոր է նաև միջազգային չափորոշիչներին համապատասխան կայուն շինարարության կիրառումը, որը կբավարարի սեյսմակայունության, էներգաարդյունավետության և այլ պահանջներ:

♦ Քաղաքային «խելացի» գյուղատնտեսության ապահովում՝ օգտագործելով հիդրոպոնիկայի, ակվապոնիկայի, ուղղահայաց հողագործության և այլ եղանակներ: Աշխարհի տարբեր երկրներում քաղաքային գյուղատնտեսություն կազմակերպվում է երկնաքերների կամ այլ շինությունների վրա, ինչը, կարծում ենք, հնարավոր է անել նաև Երևանում և այլուր: Ընդ որում, մայրաքաղաքի որոշ վայրերում արդեն իսկ շենքերի պատերին, տանիքներին կարելի է տեսնել կանաչ տարածքներ, որոնք, սակայն, դեռևս շատ քիչ են:

[19] «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագիր, https://www.yerevan.am/am/eu-for-yerevan-solar-community/

[20] Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր, էջ 61, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/82/a1fb05c6c1ce38ca1807b35d07ada8789e7fd871.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագիր, https://www.yerevan.am/am/eu-for-yerevan-solar-community/
2. Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր: Հավելված Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N309-Ա որոշման, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/97/a04acd72cff87fb3a093ff7ec5c0fb93c9a218b2.pdf
3. Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/82/a1fb05c6c1ce38ca1807b35d07ada8789e7fd871.pdf
4. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք, 1-ը մարտի, 2018 թվական, N8, http://www.irtek.am/views/act.aspx?aid=93941
5. Barcelona smart city tour, Ajuntament de Barcelona, https://www.urenio.org/wp-content/uploads/2011/12/Barcelona_Smart_City_Tour.pdf
6. Electric Barcelona, http://meet.barcelona.cat/en/visit-barcelona/get-around-the-city/electric-vehicles
7. From Smart Cities to Smart Tourism, https://www.intellias.com/from-smart-cities-to-smart-tourism/
8. Innovation and reinvention for an industry in

crisis,
https://hub.beesmart.city/en/strategy/smart-tourism-innovation-and-reinvention-for-an-industry-in-crisis
9. Secrets to Singapore's Smart-City Success,
https://partners.mastercard.com/en-us/secrets-to-signapores-smart-city-success/?Channel=InternalWebsite&Marketer=Mastercard&TestControl=0&AdCreative=Singapore
10. Smart Cities in Action: 5 Reasons Why Barcelona is a Smart City,
https://blog.bismart.com/en/why-barcelona-is-a-smart-city
11. Smart City Tourism: The Future of Tourism,
https://blog.bismart.com/en/smart-city-tourism-future-tourism
12. The Power of One Tree - The Very Air We Breathe,
https://www.usda.gov/media/blog/2015/03/17/power-one-tree-very-air-we-breathe
13. The Transformation That Barcelona Had Undergone To Become A Smart City,
http://www.barcinno.com/barcelona-smart-city-technologies/
14. Travelinsights.ai,
https://www.sdglab.am/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A5%D6%80#travelinsights-%D5%B0%D5%B5
15. Travelinsights - Where Expectations Meet Experiences,
https://www.travelinsights.ai/about-us?fbclid=IwAR0luZq1a1rij3DDLkEYuEo1_mBIHA5qsT9eB84c1sqsONYIZF78-Nolvvc
16. https://www.travelinsights.ai/
17. Urban Farming, https://inhabitat.com/shanghai-is-planning-a-massive-100-hectare-vertical-farm-to-feed-24-million-people/
18. 10 of the World's Best Hotel Room Innovations, https://blog.sodexoengage.com/10-of-the-worlds-best-hotel-room-innovations

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ОРГАНИЗАЦИЯ «УМНОГО» ТУРИЗМА С ИСПОЛЬЗОВАНИЕМ ТЕХНОЛОГИЧЕСКИХ РЕШЕНИЙ И ИННОВАЦИЙ

В последние годы бурное применение информационных технологий в сфере туризма открывает новые возможности для трансформации бизнес-моделей, предоставления услуг и развития туризма. «Умный» туризм включает в себя «умные» решения для бронирования и оплаты, транспорта, гостиничных объектов, общественного питания, развлекательных центров и других мест. В статье рассмотрены различные примеры использования «умных» решений и инноваций в сфере туризма, внесены некоторые предложения по развитию в Армении «умного» туризма с инновационными решениями.

Ключевые слова: *«умный» туризм, информационные технологии, инновации, дестинация, «умный» город*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics, Associate Professor

MARKETS AND COMPETITION

ORGANIZATION OF «SMART» TOURISM USING TECHNOLOGICAL SOLUTIONS AND INNOVATIONS

The rapid application of information technologies in the field of tourism in recent years provides new opportunities for the transformation of business models, the provision of services and the development of tourism. «Smart» tourism includes «smart» solutions for booking and payment, transport, hotel facilities, catering, entertainment centers and other places. The paper discusses various examples of the use of «smart» solutions and innovations in the field of tourism, some suggestions were made for the development of «smart» tourism with innovative solutions in Armenia.

Keywords: *«smart» tourism, information technology, innovation, destination, «smart» city*

ՀՀ-ՈՒՄ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_57

Հիմնաբառեր. *սպառող, COVID-19, սպառողական վարքագիծ, ֆինանսական վիճակ, էլեկտրոնային առևտուր*

Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

Համավարակի հետևանքով մարդկանց սպառողական վարքագիծը զգալի փոփոխություն կրեց: Որոշ մարդիկ սկսեցին ավելի շատ վճարել հատկապես դեղերի և բուժօգնության համար, մյուսները՝ կրճատեցին իրենց ծախսերը:

ՀՀ սպառողների վարքագծի փոփոխությունը պարզելու նպատակով հեղինակը կատարել է հարցում, որի արդյունքները վկայում են, որ համավարակի պայմաններում էականորեն աճել են էլեկտրոնային առևտրի ծավալները, մեծացել պարենի և դեղերի ձեռքբերման ծախսերը: Միաժամանակ, բացահայտվել է, որ շատերն անորոշություն ու վախ են զգում վաղվա օրվա նկատմամբ, չգիտեն՝ ինչպես կփոխվի իրենց կյանքի որակը, կավելանան, թե կնվազեն եկամուտները: Այս ամենով էլ պայմանավորվում է մարդկանց սպառողական վարքագիծը՝ խնայող, թե ծախսող:

Բոլոր ժամանակներում էլ սպառողները գտնվել են առևտրային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Մեր օրերում՝ առավել ևս: Կազմակերպությունները, որոնք փորձում են հաղթահարել COVID-19-ով պայմանավորված ճգնաժամը, հնարավորինս քիչ վնասներ կրելու համար անհրաժեշտ են համարում իրականացնել սպառողների վարքագծի առավել խոր ուսումնասիրություն՝ բոլոր տեսանկյուններից:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, համավարակը մեծապես անդրադարձել է մարդկային հոգեբանության վրա, հետևաբար՝ կարելի է ասել, որ սպառո-

ղի վարքագիծը և այս պարագայում կտրուկ կերպով փոխվել է: Քանի որ, COVID-19-ով պայմանավորված, մարդկանց շրջանում առաջացել են ընկճախտ, վախի զգացում վաղվա օրվա նկատմամբ, ապա ակնհայտ է՝ մեծամասնությունն ապրում է զուտ գոյատևման հոգեբանությամբ, ինչը ենթադրում է սեղմ, չափազանց անհրաժեշտ, նվազագույն ծախսեր: Այս ամենից ելնելով՝ կազմակերպությունների ղեկավարների գերխնդիրը սպառողի վարքագծի փոփոխության հանգամանալից ուսումնասիրությունն է, որի վրա հիմնվելով, հնարավոր կլինի պահպանել մրցունակությունը: Իհարկե, հարկ է հաշվի առնել նաև այն, որ, ելնելով հետազոտության արդյունքներից, չի կարելի արմատական փոփոխություններ կատարել կազմակերպության ռազմավարության մեջ: Չի կարելի նաև անտեսել այն հանգամանքը, որ սպառողի վարքագծային որոշ փոփոխություններ արտաքին ընթացիկ գործոնների արգասիք են, այսինքն՝ կրում են ժամանակավոր բնույթ և հետագայում ենթակա են վերացման: Շատ կարևոր է վեր հանել համավարակի ազդեցությունը սպառողի վարքագծի վրա, որի հետևանքով ձևավորվում են նոր դասակարգումներ, որոնք, հարց է՝ հետագայում կմնան, թե՞ համավարակի ազդեցության կորստից հետո կվերանան:

Ուսումնասիրելով սպառողական վարքագծի փոփոխության՝ թեև կարճ ժամանակում ձևավորված միջազգային փորձը, կարելի է տեսնել, որ համավարակը, կարծես թե, չի շրջանցել և ոչ մի երկիր, ուստի, արդեն իսկ առկա են բազմաթիվ թիրախային հետազոտություններ այս հարցի շուրջ:

Ամբողջ աշխարհում սպառողական վարքագծի ամենահատկանշական փոփոխություններից է սպառողների՝ խանութներ հաճախելիության նվազումը: Այս միտումը սկզբում պայմանավորված էր սահմանափակումներով, այնուհետև վերածվեց սովորության: Սպառողները նախընտրում են վարել պաշարների կուտակման սպառողական վարքագիծ, որը նվազեցնում է վարակվելու ռիսկը: Միաժամանակ, լայնածավալ բնույթ է ստացել էլեկտրոնային առևտուրը: COVID-19 համավարակով պայմանավորված՝ որոշ մանրածախ առևտրականներ սկսել են զարգացնել առևտրի մի նոր ձևաչափ՝ «սև խանութներ» («dark stores»), որոնք աշխատում են միայն առաքմամբ[1]:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ երևում է, որ նույնիսկ սահմանափակումների վերացումից հետո էլ վերոնշյալ փոփոխություններից շատերը դառնում են սովորություններ, ինչն էլ վկայում է սպառողական վարքագծի երկարաժամկետ և մնայուն փոփոխության մասին: Հետազոտությունները վկայում են, որ Ռուսաստանի սպառողների վարքագիծն այնքան կտրուկ փոփոխություն չի կրել, որքան Եվրոպայի երկրների սպառողներինը: Փորձագետների կարծիքով՝ անկախ նրանից, որ Ռուսաստանում միջին եկամուտն ավելի ցածր է, և առկա է անորոշության մեծ դաշտ, բայցևայնպես, ռուս սպառողներն ավելի լավատեսորեն են տրամադրված ապագայի հանդեպ, և հավանական է՝ սահմանափակումների վերացումից հետո նրանք վերադառնան սովորական սպառմանը[2]:

Ամբողջ աշխարհով մեկ սփռված ռուսների շրջանում անցկացված բազմաթիվ հարցումներից պարզ է դառնում, որ վերջիններիս մեծամասնությունը (54%) չի էլ պատրաստվում նշանակալիորեն փոխել իր սպառողական վարքագիծը[3]:

Ազգային հոգեկերտվածքով պայմանավորված՝ այն երկրներում, որտեղ սպառողները նախընտրում են պատրաստի սնունդ, համավարակից հետո, այս առումով, սպառողական վարքագիծը կտրուկ կերպով փոխվել է: Վերջիններս սկսել են ավելի շատ ձեռք բերել տանը պատրաստելու համար անհրաժեշտ ապրանքներ: Այս միտումը ձևավորվել է և՛ եվրոպական երկրներում, և՛ Ռուսաստանում: Այսպես՝

[1] Wyman Oliver, Как изменились потребительские предпочтения во время пандемии? https://www.oliverwyman.com/ru/our-expertise/insights/2020/apr/how-are-consumers-shopping-during-the-covid-19-outbreak.html

[2] Նույն տեղում:

[3] Халилов Дмитрий, Future Consumer Index: COVID-19 как влияет на поведение потребителей в России, https://www.ey.com/ru_ru/consumer-products-retail/ey-future-consumer-index-russia



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հարցվողների ամսական եկամտի մակարդակը

սպառողները սկսել են գնել բարդ կերակրատեսակների, ինչպես նաև թխվածքի պատրաստման բաղադրիչներ՝ ալյուր, կարագ, մարգարին, տոմատի մածուկ, համեմունքներ և այլն[4]: Մեկ այլ կարևոր միտում է սպառողական վարքագծի ուղղվածությունը դեպի ցածր գնով ապրանքները: Այսինքն՝ ամբողջ աշխարհում սպառողների շրջանում վարվում է խնայելու քաղաքականություն: Համավարակով պայմանավորված սահմանափակումների կիրառումից հետո ամբողջ աշխարհում սպառողական վարքագծում փոփոխվել է նաև ժամանցի կազմակերպման ձևաչափը: Սպառողներն իրենց ժամանցը կազմակերպում են հեռուստացույց դիտելով և համացանցի կիրառմամբ[5]: Ի դեպ, մեկուսացման պայմաններում համացանցը ծառայում էր նաև որպես կարևոր աշխատանքային գործիք, որի միջոցով իրականացվում էին համապատասխան գործառույթներ՝ ապահովելով կյանքի բնականոն ընթացքը:

Անկասկած, սպառողական վարքագծի փոփոխության նորանոր միտումներ շարունակելու են ի հայտ գալ բոլոր երկրներում նաև համավարակի ավարտից հետո՝ կախված տվյալ երկրի տնտեսական ճգնաժամի տևականությունից և խորությունից, ինչպես նաև ազգային հոգեկերտվածքից: Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս հարցում գերակա դեր ունի պետությունը՝ իր աջակցության կառուցակարգերով[6]:

Պարզելու համար, թե ՀՀ-ում COVID-19 համավարակը որքանով է ազդել սպառողական վարքագծի վրա, 2021 թ. մայիսին կատարել ենք հարցում՝ ֆոկուս խմբերի կազմմամբ, որին մասնակցել է 100 մարդ, որից 62%-ը՝ 31-45, 24%-ը՝ 46-63, 1%-ը՝ 19-30, 10%-ը՝ 64 և ավելի տարեկան: Հարցման մասնակիցների 62%-ը իգական սեռի ներկայացուցիչ է, 38%-ը՝ արական:

Հարցվող սպառողների ամսական եկամտի պատկերը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Պարզվել է, որ հարցվողների 65%-ի սպառողական վարքագիծը փոփոխվել է, իսկ 25%-ինը՝ ոչ, իսկ մնացյալ 10%-ը՝ դժվարացել են պատասխանել նշված հարցին:

Հետաքրքրական պատասխաններ են արձանագրվել այն հարցի վերաբերյալ, որը վերաբերում է վերջին մեկ տարվա ֆինանսական վիճակին: Արդյունքում, պարզ է դարձել, որ հարցվողների մոտ 45%-ի ֆինանսական վիճակը վատացել է՝ կապված մասնագիտական առանձնահատկությունների, աշխատատեղերի կրճատման, առաջարկվող ծառայությունների նկատմամբ պահանջարկի անկման կամ առհասարակ վերացման և այլ հանգամանքների հետ:

[4] Маккензи Скотт, Конец шопинга: как изменилось поведение потребителей в России и в мире из-за кризиса, https://www.forbes.ru/biznes/407223-konec-shopinga-kak-izmenilos-povedenie-potrebiteley-v-rossii-i-v-mire-iz-za-krizisa

[5] BrandScience: влияние COVID-19 на поведение потребителей, https://www.sostav.ru/publication/brandscience-vliyanii-koronavirusa-covid-19-na-povedenie-potrebitelej-42604.html?fbclid=IwAR19_s2P3RBQXpgWAJqMK4I-cQ3AZJR9rzQJqDDV0iKmP-nup9Pg1uRxfHfw

[6] Wright Oliver, Blackburn Emma, How COVID-19 will permanently change consumer behavior, https://www.accenture.com/_acnmedia/PDF-123/Accenture-COVID19-Pulse-Survey-Research-PoV.pdf#zoom=40



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ֆինանսական վիճակի փոփոխությունն ապագայում

Միաժամանակ, հարցվողների 49%-ի վիճակը, պայմանավորված կայուն աշխատավարձով աշխատանքի առկայությամբ, մնացել է նույնը: Հետաքրքրական է այն փաստը, որ հարցվողների 6%-ի ֆինանսական վիճակը լավացել է, ինչը կապված է իրավիճակին համահունչ՝ թիրախավորված արտադրանքի (ալկոգել, դիմակներ և այլն) արտադրության, վաճառքի ծավալների ավելացման (օրինակ՝ դեղատներ), բուժական ծառայությունների իրականացման (մասնավորապես՝ բուժքույրեր, բժիշկներ և այլն) հետ:

Սպառողի վարքագծի վրա ազդող առավել կարևոր գործոններից է հետագա ֆինանսական վիճակի նկատմամբ տրամադրվածությունը: Բանն այն է, որ, կախված սեփական ֆինանսական վիճակի ապագայի վերաբերյալ կանխատեսումների լավատեսական կամ վատատեսական սցենարներից, սպառողի վարքագիծը և կողմնորոշումը փոփոխվում են: Հարցումներից պարզ դարձավ, որ մարդկանց մեծամասնությունը պարուրված է սեփական ֆինանսական վիճակի ապագայի նկատմամբ անորոշության զգացումով, ինչն էլ պայմանավորված է ՀՀ-ում անորոշության դաշտի բազմագործոն լինելու հանգամանքով՝ COVID-19, հետպատերազմյան վիճակ, քաղաքական անկայունություն և այլն: Միաժամանակ, սպառողների 29%-ը լավատեսական, իսկ 14.3%-ը՝ վատատեսական սցենարի կողմնակից է (գծապատկեր 2):

Քանի որ մեր երկրում վաղվա օրվա նկատմամբ վախի զգացումը բարձր մակարդակում է, սպառողները ձգտում են իրենց վաստակած գումարները խնայել՝ ծախսերը բացառապես կենտրոնացնելով պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների, առողջության պահպանման միջոցների, դեղորայքի ձեռքբերման, հարկ եղած դեպքում՝ բժշկական ծառայություններից օգտվելու վրա (գծապատկեր 3):

Հարկ է ասել, որ փոփոխվել են նաև սպառողական նախապատվությունները:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունները վերջին մեկ տարվա ընթացքում (%, հարցվողները կարող էին նշել մեկից ավելի պատասխաններ)

Ուշագրավ է այն փաստը, որ մեծացել է ծխախոտի համար կատարվող ծախսը: Նախ՝ ելնելով հիվանդության առանձնահատկություններից, շատ չծխողներ սկսել են ծխել, և դա պարզաբանում են նրանով, որ ծխախոտը կանխարգելում է համավարակը, մյուսները նշում են, որ ծխախոտը ծառայում է որպես հակասթրեսային միջոց: Ի դեպ, հարցվողների 9%-ն ասում է, որ իր պարենային ծախսերում աճել են նաև ալկոհոլային խմիչքների ձեռքբերման ծախսերը (դրանք նույնպես բնորոշելով իբրև հակասթրեսային միջոց, ընդ որում, գերակշռում է գարեջրի ձեռքբերումը):

Սպառողական վարքագծի առանձնահատկություններից է համացանցի սպառման ծավալների ավելացումը: Հարցվողները վկայում են, որ դա դարձել է ժամանցի հիմնական աղբյուր, ինչպես նաև անփոխարինելի աշխատանքային գործիք՝ նույնիսկ սահմանափակումների վերացումից հետո:

Հարցման արդյունքում պարզվել են սպառողական վարքագծի մի շարք էական փոփոխություններ ևս: Դրանցից մեկը վերաբերում է ինքնաթիռով ճանապարհորդություններին, երբ ակտիվ ճամփորդողներն անգամ խուսափում են թռիչքներից՝ նույնիսկ որոշ ուղղություններով չվերթների բացման պարագայում: Սպառողական վարքագծի հաջորդ հատկանշական փոփոխությունն առնչվում է սպառողի կողմից հանրային տրանսպորտը տաքսի ծառայությամբ փոխարինելուն: Առավել անվտանգ երթևեկելու ցանկությունից դրդված՝ մեծամասնությունը, որ նախկինում երթևեկում էր ավելի մատչելի հանրային տրանսպորտով, սկսեց օգտվել տաքսի ծառայություններից, մինչդեռ եկամուտները ոչ թե աճել էին, այլ նվազել, հետևաբար՝ որոշակի այլ ծախսերի ուղղությամբ խնայելով՝ առաջնայնությունը տրվել է անվտանգությանը:

Համավարակից ամենից շատ տուժել են ժամանցի կազմակերպման ոլորտները՝ ռեստորաններ, հանգստյան գոտիներ, մարզական հաստատություններ: Այս առումով, այժմ նկատվում է աշխուժացում, որը նախ՝ պայմանավորված է սահմանափակումների վերացմամբ, ապա հիվանդացած և արդեն ապաքինված անձանց թվի մեծացմամբ:

Համավարակի ազդեցությամբ հատկապես կրճատվել են սպառողների հագուստի և հանգստի ծախսերը: Ուսումնասիրելով հագուստի շուկան՝ կարելի է եզրակացնել, որ սպառողական վարքագծի փոփոխության հիման վրա հագուստի գները զգալիորեն իջել են, այս ոլորտում սկսել է գործել զեղչային ճկուն քաղաքականություն (խոսքը հատկապես վերաբերում է առցանց վաճառքին, որն ինքնին ենթադրում է ծախսերի կրճատում, քանի որ բացակայում է տարածքի վարձակալության գործոնը, ինչը թույլ է տալիս իջեցնել գները):

Մինչդեռ, հանրապետության տարածքում հանգստի կազմակերպման ոլորտում սահմանափակումների վերացումից հետո գների իջեցում տեղի չի ունեցել: Հարցմանը մասնակից հանգիստ կազմակերպող կազմակերպությունները դա պարզաբանում են ծախսերի մեծությամբ և ընդհանուր գների մակարդակի աճով:

Ինչ վերաբերում է գների աճին, ապա հարցված սպառողների շուրջ 71%-ը կարծում է, որ ապրանքների գների աճը շարունակական բնույթ է կրելու, և միայն 10%-ն է համարում, որ դա կդադարի, իսկ 19%-ի համար այս առումով դեռևս անորոշություն է:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով սպառողական վարքագծի դրսևորումները և ծախսերի կառուցվածքի փոփոխությունը, կարելի է տարբերակել սպառողների հետևյալ կատեգորիաները.

- ✓ սպառողներ, որոնք ծախսերը կրճատել են խնայողության մոտեցումներից ելնելով՝ սպասելով անորոշության ավարտին. նրանք նվազագույնի են հասցրել բոլոր և կրճատել երկրորդային ծախսերը,
- ✓ սպառողներ, որոնց ապրելակերպում ոչինչ չի փոխվել,
- ✓ սպառողներ, որոնք սկսել են ավելի շատ ծախսել:

Հարցվողների 19%-ը նշել է, որ, անորոշության մտայնությունից ելնելով, ավելի շատ խնայել է, կատարել միայն հույժ կարևոր

ծախսեր: Խնայող-հարցվողների մեջ կան նաև անձինք, որոնք խնայել են՝ COVID-19-ի սահմանափակումներից ելնելով (մարդաշատ վայրերից խուսափելու, հավաքույթների սահմանափակության, հանգստի, ճանապարհորդությունների բացակայության արդյունքում): Այսինքն՝ խնայող-հարցվողների խնայողություն կատարելու պատճառները տարբեր են:

Մասնավորապես՝ առկա է տարբերություն հարկադրված և սահմանափակումներից դրդված խնայողների միջև: Վերջիններիս տրամադրվածությունն այդչափ վատատեսական չէ, իսկ առաջինները հակված են այն մտքին, որ ապագայում հնարավոր է՝ ընդհանրապես եկամտի աղբյուրներ չլինեն, և պետք է միայն խնայել: Իհարկե, մտածելակերպի հիմքում նաև տարիքային և մասնագիտական առանձնահատկություններն են: Այս խնայող-հարցվողների եկամուտները կրճատվել էին, կամ նրանք դարձել էին գործազուրկ COVID-19-ի պատճառով: Այս կատեգորայի սպառողները հիմնականում աշխատել են ծառայության այն ոլորտներում, որոնք առավել տուժել են համավարակի հետևանքով:

COVID-19-ի պարագայում որոշ մասնագիտական ոլորտներ կորցրել են իրենց արդիականությունը, իսկ որոշները, ընդհակառակը, ավելի են զարգացել՝ դառնալով եկամտաբեր (օրինակ՝ տնայց կատարող բուժքույրի աշխատանքը): Առաջին դասակարգման սպառողական վարքագիծ կրողները նույնիսկ երբեմն լավատես են՝ կարծելով, որ այսօր խնայելով՝ վաղն ավելի լավ կապրեն: Ի դեպ, խնայողության համար նպաստավոր պայման է նաև խանութ չհաճախելը, քանի որ առցանց առևտրի ժամանակ գնումները կատարվում են ըստ անհրաժեշտության, իսկ հակառակ դեպքում՝ երկրորդային գնումներն առավել հաճախակի են:

Երկրորդ դասակարգման սպառողներն առավել կայուն աշխատավարձով աշխատանք ունեցողներն են: Վերջիններիս կարծիքով՝ կուտակելով և խնայելով կենսագործունեությունը կլճանա, և հետևանքներն ավելի աղետալի կլինեն: Պետք է ծախսել՝ ընդհանուր շրջանառություն ապահովելու և կյանքը բնականոն հունի բերելու համար: Հարցումների արդյունքում պարզվեց, որ այս կատեգորիայի սպառողական վարքագիծը, բացի կայուն աշխատանք ունեցողներից, բնորոշ է նաև թոշակառուներին: Վերջիններս այն համոզմանն են, որ պետք է ծախսել, քանի որ հարկերից է ձևավորվում իրենց թոշակի չափը:

Հարցվողների 66.7%-ը սկսել է ավելի շատ ծախսել, և այդ ծախսերը միտված են դեղորայքի, բժշկական ծառայությունների և հավելյալ պաշպանիչ միջոցների ձեռքբերմանը (գծապատկեր 4):

Այսպիսով՝ COVID-19 համավարակը, մեծապես ունենալով հոգեբանական ազդեցություն, հատկապես մեծահասակ՝ 65-ից բարձր տարիքի սպառողների շրջանում ձևավորել է վաղվա օրվա անորոշությամբ պայմանավորված ֆենոմեն: Հարցվողնե-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Սպառողական վարքագծի փոփոխությունը վերջին մեկ տարվա ընթացքում



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Կյանքի որակի սպասվող փոփոխությունը

րի մի մասը սկսել է սովորականից ավելի շատ ծախսել՝ պարզաբանելով դա վաղվա օրվա նկատմամբ անորոշությամբ և կյանքից առավելագույնը վերցնելու մտայնությամբ:

Անորոշության բարձր մակարդակը պայմանավորված է նաև կյանքի որակի լավացման հանդեպ հավատի կորստով: Հարցվողների մեծ մասը հույս չունի, որ հնարավոր է վերականգնել, դեռ ավելին, լավացնել կյանքի որակը:

Հարցվողների պատասխանների գերակշիռ մասն արտահայտում է անորոշություն, որը չի կարելի համարել զուտ COVID-19-ի ազդեցություն. այն շատ ավելի բազմագործոն է: Ամեն դեպքում, հետպատերազմյան իրավիճակը և քաղաքական անկայունությունը նույնքան ազդեցիկ դիրքում են, որքան համավարակը (գծապատկեր 5):

Ներկա իրավիճակում ՀՀ-ում սպառողական վարքագծի վրա ազդող ամենահատկանշական գործոնն էլեկտրոնային առևտրի մշակույթի ներդրումն ու զարգացումն է: COVID-19-ի ժամանակ էլեկտրոնային առևտուրն աճել է 70%-ով և պահպանում է իր դիրքը նույնիսկ սահմանափակումների վերացումից հետո: Սպառողների այն զանգվածը, որ երբևէ չէր կատարել էլեկտրոնային առևտուր, գտնվելով 14-օրյա կարանտինի մեջ, ստիպված եղավ օգտվել այս հարթակից (գծապատկեր 6):

Ավելին, նույնիսկ համավարակի վերացումից հետո էլ հարցվողների 47.6%-ը ցանկանում է պահպանել այս մշակույթը (գծապատկեր 7):

Էլեկտրոնային առևտրի հետ միաժամանակ, այժմ լայն տարածում է գտել մի նոր ձևաչափ՝ «սև խանութները» («dark



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Էլեկտրոնային առևտրի ծավալների փոփոխությունը

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Էլեկտրոնային առևտուր կատարելու ցանկությունն ապագայում

stores»): ՀՀ-ում հատկապես այս ոլորտը համավարակի պայմաններում զարգացրեց իր գործունեությունը՝ բացելով սեփական կայքեր կամ օգտվելով սոցիալական ցանցերից (ինստագրամյան կամ ֆեյսբուքյան էջերի միջոցով):

Այսպիսով՝ ամփոփելով սպառողական վարքագծի վրա COVID-19-ի ազդեցության վերլուծությունը, կարելի է եզրակացնել, որ սպառողների շրջանում անորոշության դաշտն այնքան մեծ է, որ խաթարում է վերջիններիս բնականոն սպառողական վարքագծի դրսևորումը: Միաժամանակ, պետք է նշել, համավարակի ազդեցությունը սպառողական վարքագծի վրա բազմագործոն է, ուստի, հնարավոր չէ դա դիտարկել մեկուսի: Մեկ այլ հարց է սպառողական վարքագծում COVID-19-ի ազդեցությամբ որոշակի մշակույթի ձևավորումը, ինչպիսին է, օրինակ, էլեկտրոնային առևտուրը, որին զուգընթաց, լայն տարածում են ստացել միջազգային փորձում հայտնի «սև խանութները» («dark stores»), որոնք Հայաստանի համար նորույթ են:

Սպառողական վարքագծում ձևավորվել է նաև մեկ այլ մշակույթ՝ կանխարգելիչ միջոցների ձեռքբերումը, որը նախկինում շատ ցածր տոկոս էր կազմում:

COVID-19-ի պայմաններում ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում սպառողները, առավել քան երբևէ, նախապատվություն են տալիս համացանցին՝ և՛ որպես ժամանցի ապահովման միջոց, և՛ որպես անփոխարինելի աշխատանքային գործիք, որն ապահովում է կյանքի բնականոն ընթացքը:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ, ելնելով հետազոտական արդյունքներից, չի կարելի կատարել ամբողջական արմատական փոփոխություններ կազմակերպության ռազմավարության մեջ: Մասնավորապես՝ ՀՀ-ում չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ սպառողական վարքագծի որոշակի փոփոխություններ արտաքին ընթացիկ գործոնների արգասիք են, որոնք, կրելով ժամանակավոր բնույթ, հետագայում նույնպես ենթակա են փոփոխման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Дмитрий Халилов, «Future Consumer Index: COVID-19 как влияет на поведение потребителей в России», https://www.ey.com/ru_ru/consumer-products-retail/ey-future-consumer-index-russia
2. Oliver Wright, Emma Blackburn, «How COVID-19 will permanently change consumer behavior», https://www.accenture.com/_acnmedia/PDF-123/Accenture-COVID19-Pulse-Survey-Research-PoV.pdf#zoom=40
3. Oliver Wyman, Как изменились потребительские предпочтения во время пандемии?

https://www.oliverwyman.com/ru/our-expertise/insights/2020/apr/how-are-consumers-shopping-during-the-covid-19-outbreak.html
4. Скотт Маккензи, Конец шопинга: как изменилось поведение потребителей в России и в мире из-за кризиса, https://www.forbes.ru/biznes/407223-konec-shopinga-kak-izmenilos-povedenie-potrebiteley-v-rossii-i-v-mire-iz-za-krizisa
5. BrandScience: влияние COVID-19 на поведение потребителей, https://www.sostav.ru/publication/brandscience-vliyanii-koronaviru-sa-covid-19-na-povedenie-potrebitelej-42604.html?fbclid=IwAR19_s2P3RBQXpgWAJqM-K4I-cQ3AZJR9rzQJqDDV0iKmPnup9Pg1uRxfHfw

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ТЕНДЕНЦИИ ИЗМЕНЕНИЯ ПОВЕДЕНИЯ ПОТРЕБИТЕЛЕЙ В УСЛОВИЯХ ЭПИДЕМИИ В РА

Вследствие эпидемии поведение потребителей претерпело значительные изменения. Некоторые стали тратить больше, особенно на медицину и медицинское обслуживание, другие сократили свои расходы. В статье был проведен опрос, чтобы выяснить, как изменилось поведение потребителей РА. Результаты показывают, что в условиях пандемии значительно возросли объемы электронной коммерции, увеличились расходы на продукты питания и лекарства. В то же время было выявлено, что многие люди не уверены в завтрашнем дне, не знают, как изменится их качество жизни, как изменится их доход, что определяет их потребительское поведение: экономия или трата.

Ключевые слова: *потребитель, COVID-19, поведение потребителей, финансовое положение, электронная коммерция*

Tereza SHAHRIMANYAN
Administrator at "Amberd" Research Center, ASUE

MARKETS AND COMPETITION

TRENDS IN CHANGING CONSUMER BEHAVIOR IN THE CONDITIONS OF THE PANDEMIC IN THE RA

As a result of the pandemic, consumer behavior changed significantly. Some people started spending more, especially on medicine and medical care, some people reduced their expenses. A survey was conducted in this paper to find out the change in the behavior of RA consumers. The results show that in the conditions of the pandemic, the volumes of e-commerce have significantly increased, the expenditures on food and medicine have increased. At the same time, many people have uncertainty about tomorrow, many do not know how their quality of life will change, how their income will change, which determines their consumer behavior, whether it depends on saving or spending.

Keywords: *consumer, COVID-19, consumer behavior, financial situation, e-commerce*

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԳԵՏՆՅԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ. ՀԱՎԱԿՆՈՏ ԾՐԱԳՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_66

Նշանակություն չունի, թե ինչպիսին են մարդու նպատակները, մտադրությունները, համոզմունքները, նրան դատելու են... ըստ իր գործերի:

Հարիեթ Բիչըր Սթոու

Հիմնաբառեր. *Երևան, տեղական ինքնակառավարում, բարեփոխումների ծրագիր, հասարակական տրանսպորտ, նոր երթուղային ցանց*

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը:

Սկսած 1993 թ., շուրջ 25 տարի աշխատել է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2004 թվականից դասավանդում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Երկու տասնյակից ավել գիտական, վերլուծական հոդվածների և 2 մենագրության հեղինակ է:

Տեղական ինքնակառավարման մարմնի հիմնական առաքելությունը՝ մարդու կյանքի որակի բարելավման առումով, իրեն վերապահված՝ սեփական, պատվիրակված և կամավոր լիազորությունների շրջանակում համայնքի կայուն ու համաչափ զարգացման ապահովումն է: Երևանի պարագայում առաջադրանքը յուրահատուկ է, քանի որ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը նաև երկրի հիմնական այցեքարտն է, և հետևաբար՝ այստեղ յուրաքանչյուր ոլորտի զարգացում ու ենթակառուցվածքների արդիականացում դիտարկվում են ոչ միայն ներազգային, այլև միջազգային տեսանկյունից, ինչն էլ ընդգծված կերպով տեսանելի է դարձնում խոստացվածչիրագործվածը և իրագործվածի թերացումները: Հոդվածում ուսումնասիրվել և վերլուծվել է ներկա պահին մայրաքաղաքի բնակչությանը հուզող առաջնային հիմնախնդիրներից մեկի՝ վերգետնյա հասարակական տրանսպորտի բարեփոխումների ծրագրի իրականացման փաստացի վիճակը: Որպես ուսումնասիրության մեկնակետ ընդունելով անկախ Հայաստանի ժամանակաշրջանը՝ կատարվել է հասարակական տրանսպորտային համակարգի կենսագործունեության հետահայաց վերլուծություն, ապա ներկայացվել են ոլորտի արդիականացմանն ու բարեփոխմանը միտված աշխատանքների ընթացքն ու տրամաբանությունը:

Այդ համատեքստում փորձ է արվել գտնելու բնակչությանը, ինչպես նաև ոլորտի բարեփոխումներով շահագրգիռ այլ կողմերին մտահոգող հարցերի պատասխանները, մասնավորապես՝ ինչո՞ւ է դանդաղել գործընթացը, ինչո՞ւ և ի՞նչ տրամաբանությամբ են ներկայում տրվում մասնակի և ոչ համակարգային լու-

ծումներ, և ի վերջո, ինչ պատճառով է քաղաքային ներկայիս իշխանությունը մինչ օրս հապաղում Երևանի հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումների այն հավակնոտ ծրագրի իրականացման գործում, որի գործնական մեկնարկն ազդարարվել էր քաղաքային նախորդ իշխանության օրոք՝ դեռևս 2017 թվականին:

Յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմնի առաջնահերթ խնդիրն է իրեն վերապահված՝ սեփական, պատվիրակված և կամավոր լիազորությունների շրջանակում, պետական, սեփական կամ փոխառու միջոցների արդյունավետ օգտագործմամբ, մասնագիտացված աշխատակազմի ներուժով, գործընկեր կազմակերպությունների մասնակցությամբ, ինչպես նաև փոխշահավետության սկզբունքով համագործակցող գործընկերների ակտիվ ներգրավմամբ իրականացնել համայնքի կայուն ու համաչափ զարգացում: Այս համատեքստում, խնդիրն առավել բազմաշերտ է քաղաքային տնտեսությունների կառավարման և, իհարկե, յուրահատուկ՝ պետության մայրաքաղաքը լինելու պարագայում:

Երևան համայնքը, որպես Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք, նախևառաջ, երկրի այցեքարտն է, ուստի, ամեն մի ոլորտի զարգացում ու ենթակառուցվածքների արդիականացում դիտարկվում են ոչ միայն ներազգային, այլև միջազգային տեսանկյունից: Մայրաքաղաքի խնդիրները բազում են, և յուրաքանչյուր քաղաքային իշխանություն իր կառավարման ժամանակահատվածում փորձում է լուծել հուզող ու կարևոր որևէ խնդիր՝ ցանկանալով շահել ու ամրապնդել բնակչության վստահությունը: Իհարկե, ցանկալի է և քաղաքացու համար՝ շահեկան, որ գաղափարի ու դրա իրականացման հիմքում, որպես առաջնային նպատակ, դիտարկվի բնակչի կյանքի որակի տեսանելի բարելավումը, որը, միաժամանակ, դրականորեն կներգործի քաղաքի ազգային ու միջազգային հեղինակության ձևավորման վրա:

Հասարակական տրանսպորտի, կոշտ թափոնների կառավարման, կանաչապատման ու էկոհամակարգի բարելավման, հանգըստի ու զվարճանքի նոր գոտիների կառուցման, բազմաբնակարան շենքերի պահպանման, քաղաքային լուսավորության, ճանապարհաշինության և բազմաթիվ այլ հիմնախնդիրների համախմբից յուրաքանչյուրի՝ նոր մոտեցումներով ու արդյունավետ լուծումը համարվում է բնակչի կյանքի որակի բարելավման որոշիչ գործոն: Հետևապես՝ վերոթվարկյալ ոլորտներում իրականացվող նպատակային բարեփոխումները ոչ միայն անհրաժեշտություն են, այլև քաղաքային իշխանության գործունեության հաջողության գրավական:

Սույն հոդվածում մեր դիտարկման ընտրանքը սահմանափակվում է Երևան քաղաքի վերգետնյա հասարակական տրանսպորտի հիմնախնդրով, առանց մետրոպոլիտենի, քանի որ միայն վերգետնյա տրանսպորտի ընտրությունն է բխում տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների շրջանակի օրենսդրական սահմանումից, որի մասին առկա է դրույթ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում[1]:

Որպես մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի հիմնախնդրի ուսումնասիրության ու վերլուծության մեկնակետ ընտրելով Հայաստանի հետանկախացման ժամանակաշրջանը՝ կատարել ենք համակարգի իրավիճակային արձանագրում, այնուհետև վերլուծել արդիականացման ու բարեփոխման ուղղությամբ կատարված աշխատանքների ընթացքն ու տրամաբանությունը: Նաև փորձել ենք գտնել այն կարևոր հարցի պատասխանը, թե ինչու և ինչ պատճառներով քաղաքային ներկա իշխանությունը մինչ օրս այդպես էլ չի իրականացրել Երևանի հասարակական տրանսպորտի բարեփոխումների այն հավակնոտ ծրագիրը, որի սկիզբն ազդարարվել էր դեռևս 2017 թվականին՝ հրապարակավ հայտարարելով այդ բարեփոխումների գործ-

[1] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 57:

նական փուլի մեկնարկի մասին[2]: Ի դեպ, նշյալ հայտարարությունից ընդամենը կես տարի անց Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ ստեղծված հասարակական տրանսպորտի բարեփոխումների մասնագիտական աշխատանքային խումբն[3] արդեն իր քննարկման սեղանին ուներ բնակչությանը հուզող այս կարևորագույն հիմնախնդրի լուծման ճանապարհային քարտեզն ու համակարգված բարեփոխումների փաթեթը, որոնք ներառում են ծրագրի հիմնական բաղադրիչի՝ Երևան քաղաքի հասարակական վերգետնյա տրանսպորտի երթուղային նոր ցանցի լիարժեք մշակված նախագիծն ու ուղևորահոսքի ամբողջական վերլուծությունը:

Ժառանգական մեկնակետ. 1991 թվական

Որպես հետխորհրդային ժառանգություն՝ նորանկախ Հայաստանի մայրաքաղաք Երևանի նոր ձևավորվող իշխանությանն անցած վերգետնյա հասարակական տրանսպորտային համակարգն իրենից ներկայացնում էր խորհրդային իշխանության վերջին տարիներից սկսված, արդեն իսկ փլուզման գործընթացում գտնվող մի միավոր, որի այդպիսին լինելու պատճառները և՛ օբյեկտիվ էին, և՛ սուբյեկտիվ: Եթե սկզբնական փուլում դեռևս գոյություն ունեին պետական կազմակերպություններ, որոնք, օգտագործելով առկա ռեսուրսները, որոշակի ժամանակահատվածում կարողանում էին իրականացնել ուղևորափոխադրումներ, ապա հետագայում էներգետիկ ճգնաժամի և տնտեսական շրջափակման հետևանքով, վառելիքի ներկրման դժվարությունների, ներդրումների բացակայության, Արցախյան գոյամարտի և տրանսպորտային կազմակերպությունների մասնավորեցման գործընթացներով պայմանավորված, իրավիճակն էապես վատթարացավ: Արձանագրենք, որ էներգետիկ ճգնաժամը, նախևառաջ, բացասական հետք թողեց վերգետնյա էլեկտրական տրանսպորտի՝ տրամվայների ու տրոլեյբուսների երթուղիների վրա՝ անվտանգ ու ապահով սպասարկման տեսանկյունից:

Տրանսպորտի այս տեսակները, որոնք, իրավամբ, համարվում են քաղաքային ուրույն միջավայրի ձևավորման լիիրավ մասնակիցներ[4], անկախ Հայաստանի ժառանգությանն անցան տրամվայի 10 և տրոլեյբուսների 20 երթուղով[5], մեծաքանակ շարժակազմով, սպասարկող ուղեգծերով, ենթակայաններով, կայանատեղերով ու դեպոներով: Էլեկտրական տրանսպորտի երթուղիները հիմնականում կապում էին քաղաքի գործարանային շրջանները բնակելի թաղամասերի հետ, և այն արդյունավետ աշխատել էր խորհրդային տարիներին ու համարվել մայրաքաղաքի վերգետնյա հասարակական տրանսպորտային ընդհանուր ցանցի անբաժանելի ու լիարժեք մասը:

Էներգետիկ ճգնաժամը, Արցախյան պատերազմն ու շրջափակումը, հասարակական տրանսպորտի այս տեսակի առումով, կատարեցին «ճշգրտումներ», և մինչև 1990-ականների միջնամաս էլեկտրատրանսպորտը փաստացի մատնված էր անգործության կամ աշխատում էր չափազանց անարդյունավետ: Իսկ երբ վերականգնվեց բնականոն էներգամատակարարումը, արդեն խնդիրներ առաջացան շարժակազմերի, սպասարկող ենթակայանների սարքավորումների, տրամվայների ռելսային ուղիների, տրոլեյբուսների էլեկտրական պղնձալարերի մաշվածության և նորի ձեռքբերման առումներով: Այդ ամենին գումարվեց նաև արտագաղթի պատճառով առաջացած՝ որակյալ մասնագետների բացակայության խնդիրը:

Ստեղծված պայմաններում հասարակական տրանսպորտով բնակչության սպասարկման անընդհատությունն ապահովելու նպատակով քաղաքային իշխանությունները փորձեցին գտնել իրավիճակային և

[2] https://www.pastinfo.am/hy/news/2017/04/20/%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%BA%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/535116

[3] «Մասնագիտական աշխատանքային խումբ ստեղծելու մասին» Երևանի քաղաքապետի 9.02.2017 թ. N 333-Ա որոշում:

[4] Տրամվայի առաջին նեղուղի գծերը Երևանում շահագործվել են 1906 թ. (ձիաքարշերով), առաջին էլեկտրաքարշով լայնակոս ուղով տրամվայները՝ 1933 թ., իսկ տրոլեյբուսները՝ 1949 թ.:

[5] Սիմոնյան Ա., Քաղաքամայր Երևան, «Հայաստան», Եր., 1983:

ժամանակավոր անցումային լուծումներ, որոնց հետևանքով մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի «զինանոցից» դանդաղորեն դուրս մղվեցին ոչ միայն տրամվայներն ու տրոլեյբուսները, այլև արդեն հնամաշ, պահպանման ծախսերի և վառելիքի օգտագործման տեսանկյունից՝ անարդյունավետ, իսկ շահագործման տեսանկյունից՝ ոչ այնքան անվտանգ, մեծ ու միջին ուղևորատար ավտոբուսները:

Այդպիսով՝ բնակչության տրանսպորտային սպասարկումը գրեթե ամբողջությամբ սկսեց իրականացվել տարբեր տիպի միկրոավտոբուսների միջոցով՝ ըստ փաստացի իրավիճակի ձևավորված երթուղային ցանցի: Ընդ որում, հախուռն ու հաճախ տարերային այդ գործընթացում ի սկզբանե չսահմանվեցին հստակ չափորոշիչներ՝ կապված միկրոավտոբուսների տեսակների կամ ուղևորատարության անվտանգության հետ: Ի վերջո, մայրաքաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկումը «վստահվեց» դեռևս խորհրդային ժամանակներում ամորտիզացիայի առումով ժամկետանց ՝ Ռիգայի և Երևանի ավտոգործարանների արտադրության «ՌԱՖ» և «ԵՐԱԶ» մակնիշի միկրոավտոբուսներին:

Միկրոավտոբուսների «միանձնյա իշխանությունը» Երևանի վերգետնյա հասարակական տրանսպորտի երթուղիներում շարունակվեց մինչև 2005 թվականը՝ մեկ մակնիշային ճշգրտումով. «ԵՐԱԶ»-ները փոխարինվեցին ռուսական արտադրության «ԳԱԶԵԼ»-ներով: Այդ ընթացքում երթուղային ցանցը տձևացավ, եկամտաբեր ուղղություններում առաջացան կրկնվող երթուղիներ, ժողովրդական բառապաշարում հայտնվեց «գծատեր» բառը, որը, համաձայն մասնագիտական եզրաբանության, տվյալ երթուղին սպասարկող օպերատորն էր: «Գծատերերի» թիվն օր օրի ավելանում էր և, ըստ էության, նրանք էին դարձել իրավիճակային լուծումների թելադրողն ու ցանցը «լրամշակողը»: Ինչ-որ պահի շահագործվող միկրոավտոբուսների մեծ քանակությունը, կրկնվող երթուղիների առատությունը, վարորդների անառողջ՝ «ուղևոր փախցնելուն» ուղղված՝ բառիս բուն իմաստով փողոցային պայքարը դարձան ոչ միայն սպասարկման որակին առնչվող, այլև անվտանգային խնդիրներ:

Այդ տարիներին մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի ցանցում շահագործվող միկրոավտոբուսների թիվը հասավ 3300-ի, որոնց «տրանսպորտային վարքագիծը» մեծ պատուհաս դարձավ մայրաքաղաքի համար՝ և՛ փողոցային երթևեկության, և՛ սպասարկման ցածր մակարդակի առումով:

2004 թվականին, ցավոք, դադարեց գործել Երևանի տրամվայի վերջին երթուղին, ու զուտ քաղաքային համարվող հասարակական տրանսպորտի այս տեսակն ավարտեց իր պատմությունը մայրաքաղաք Երևանի և, ընդհանրապես, Հայաստանի կյանքում: Սա, անկասկած, քաղաքային իշխանության կողմից ընտրված սխալ ռազմավարության հետևանք էր, քանի որ այլ երկրների մայրաքաղաքների հասարակական տրանսպորտի կառուցվածքի հպանցիկ ուսումնասիրությունից անգամ պարզ է դառնում, որ տրամվայները, որպես բնապահպանական տեսանկյունից անվտանգ, խցանումները բացառող տրանսպորտային միջոց, միաժամանակ, քաղաքային մշակույթի յուրօրինակ այցեքարտ են և քաղաքացու կենսակերպի անբաժան մասնիկ: Հուսանք՝ ապագայում կունենաք գոնե ծայրամասային շրջագծով (Փարիզի օրինակով) անցնող տրամվայի կամ վերգետնյա նեղուղի գնացքների շրջանաձև ցանց:

2005-2012 թվականներին գործող երթուղային ցանցում էական փոփոխություններ չիրականացվեցին, սակայն որոշակի տեղաշարժ կատարվեց միկրոավտոբուսները միջին տարողության ավտոբուսներով փոխարինելու գործընթացում, որի արդյունքում դանդաղորեն, սակայն արդեն տեսանելի կերպով սկսեց փոփոխվել հասարակական տրանսպորտային միջոցների հարաբերակցությունը: Արդեն 2011 թվականին հինգ տասնյակից ավելի մասնավոր օպերատորների կողմից շահագործվող միկրոավտոբուսների քանակը նվազեց 700-ով՝ հասնելով 2600-ի, որոնք, սակայն, շարունակում էին ապահովել ուղևո-

ռափոխադրման շուրջ 90%-ը, իսկ ավտոբուսային շարժակազմի թիվն ավելացավ՝ դառնալով 360: Ավտոբուսների շարժակազմի էական ավելացումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2011-2012 թվականներին Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջկառավարական համագործակցության շրջանակում Հայաստանին տրամադրվել էր դրամաշնորհ, որի միջոցներով էլ Երևանն ունեցավ միջին ուղևորատարողության ժամանակակից ավտոբուսներ[6]: Նշենք, որ այդ ժամանակահատվածում ավտոբուսները սպասարկվում էին հիմնականում քաղաքային ենթակայության կազմակերպությունների կողմից:

Առաջին փորձ. մասնակի օպտիմալացում. 2012 թվական

Ստեղծված իրավիճակն արդեն իսկ պարտադրում էր երթուղային ցանցի օպտիմալացում, և արդյունքում, 2012 թվականին ընդունվեց մասնակի օպտիմալացված անցումային երթուղային ցանցը[7], որով նախատեսվում էր էականորեն (կրկնակի) կրճատել շահագործվող միկրոավտոբուսների թիվը՝ այն հասցնելով 1284-ի, իսկ ավտոբուսների քանակը դարձնել 768: Անցումային երթուղային ցանցի ընդունմամբ գրեթե հավասարաչափ կերպով բաշխվեցին միկրոավտոբուսների և ավտոբուսների միջև ուղևորափոխադրման ծավալները, սկսեց 5 երթուղով աշխատել նաև տրոլեյբուսային համակարգը, որոշակի չափով թարմացվեցին միկրոավտոբուսների և ավտոբուսների շարժակազմերը՝ փորձելով բացառել արդեն արտադրությունից դուրս եկած տրանսպորտային միջոցների շահագործումը:

Չնայած այս փոփոխություններին՝ պետք է արձանագրել, որ Երևանի վերգետնյա հասարակական տրանսպորտային համակարգը չէր բավարարում անվտանգ, հարմարավետ և որակյալ սպասարկում ապահովելու տարրական չափորոշիչները: Ընթացքում խնդիրներն առավել տեսանելի դարձան, երբ բարձրացան պահեստամասերի ու վառելիքի գները, ինչը ցանցով սահմանված միջակայքերի և ուղևորների քանակի սահմանափակման պայմանների պահպանման պարագայում մի շարք երթուղիներ դարձնում էր ոչ այնքան շահութաբեր՝ սպասարկող օպերատորների շրջանում առաջացնելով տրամաբանական անհանգստություն: Հիմնախնդրի՝ ոչ թե մասնակի, այլ համակարգված լուծման անհրաժեշտության մասին արդեն խոսվեց 2013 թվականին, սակայն հընթացս, տրանսպորտային համակարգի կոլապսից խուսափելու նպատակով անհրաժեշտ էր ինչ-որ կերպ մեղմել օպերատորների (գծատերերի) անհանգստությունը, և քաղաքային իշխանությունը, համակարգային լուծման նախապատրաստմանը զուգահեռ, փորձեց գտնել ընթացիկ ու ժամանակավոր լուծման կառուցակարգ: Սակայն, այդ ժամանակ մայրաքաղաքի ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի՝ անգամ 50 դրամով թանկացման մոտեցումը (ավտոբուսների և միկրոավտոբուսների պարագայում 100-ից դարձնել 150 դրամ, իսկ տրոլեյբուսների պարագայում 50-ից՝ 100 դրամ) արժանացավ հանրության որոշակի շերտի՝ քաղհասարակության դիմադրությանը, և այդ գործընթացը, ըստ էության, կասեցվեց քաղաքային իշխանության կողմից, ինչը ևս մեկ կարևոր ազդակ էր՝ համակարգային մոտեցման անհրաժեշտության գիտակցման առումով: Հետագայում տարբեր իրավիճակներում և տարբեր առիթներով քաղհասարակության նպատակային թիրախավորման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «50 դրամի շարժումն» ավելի շատ հուզական տիրույթում էր, իսկ երիտասարդության մի հատվածի համար՝ նաև ինքնակայացման և իրեն երկրի տերը զգալու յուրօրինակ արտահայտչաձև՝ ուղղորդված որոշակի ուժերի կողմից՝ քաղաքական նպատակով:

Ի վերջո, 2013 թվականի հուլիսին մաս-

[6] https://armenpress.am/arm/news/663558/%D4%B1%D5%BE%D5%BF%D5%B8%D5%A2%D5%B8%D6%82%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6_%D5%AD%D5%B4%D5%A2%D5%A1%D6%84-%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8_%D5%89%D5%AB%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81_%D4%B5%D6%80%D5%A5%D6%82%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D6%80%D5%BE%D5%AB_.html

[7] https://www.yerevan.am/am/transport-department/

նակի կարգավորման գործընթացը կասեցվեց, և քաղաքային իշխանությունը որոշեց իրագործել համակարգված բարեփոխումներ, որոնք, սակայն, չէին կարող կյանքի կոչվել մեկ կամ երկու տարվա ընթացքում: Նախ՝ անհրաժեշտ էր ունենալ վերգետնյա և ստորգետնյա հասարակական տրանսպորտի տարեկան և ամսական ուղևորահոսքի հստակ պատկերը, ինչի համար պահանջվում էր իրականացնել մշտադիտարկում ու արդյունքների մշակում, այնուհետև կատարել հասարակական տրանսպորտի ամբողջ համակարգի օպտիմալացման հնարավորությունների և իրագործելիության գնահատում: Սրանք բավական ժամանակատար գործընթացներ էին: Ընդ որում, օպտիմալացումը, իր հերթին, ենթադրում էր նոր երթուղային ցանցի մոդելավորում, էլեկտրոնային տոմսային միասնական համակարգի ներդրման մշակում և կառավարման համակարգերի կառուցվածքների ու նոր չափորոշիչների սահմանում:

Ցանցի մոդելի ընտրություն և չափորոշիչներ. 2015-2016 թվականներ

Ժամանակակից մայրաքաղաքին վայել հասարակական տրանսպորտային համակարգ ձևավորելու համար պետք է լուծել միմյանց փոխկապակցված մի շարք հիմնախնդիրներ: Ընդ որում, լուծումները պետք է լինեն ինչպես աստիճանական, այնպես էլ թիրախային ու նպատակային: Փոխկապակցված այդ շղթայում որևէ թերացում կամ անարդյունավետության դրսևորում կարող է հանգեցնել համընդհանուր անարդյունավետության: Այդ շղթան բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով[8]. ֆիզիկական հասանելիություն, ֆինանսական հասանելիություն, արդյունավետություն, հարմարավետություն, անվտանգություն, բնապահպանություն:

Խնդիրների համակարգված լուծման համար նախ՝ անհրաժեշտ է ունենալ արդյունավետ գործող երթուղային ցանց: Երևանի պարագայում տեսանելի էին հասարակական տրանսպորտի մասնակի օպտիմալացման թերություններն ու գործող ցանցի անարդյունավետությունը, հետևապես՝ առաջնայինը, գործող անցումային ցանցի փոխարեն, նոր երթուղային ցանցի մոդելավորումը, մշակումն ու գործարկումն էր: Քաղաքային իշխանությունն ուներ խնդրի լուծման երկու տարբերակ. կամ իրականացնել ամբողջական օպտիմալացում, այսինքն՝ մեկանգամյա գործողությամբ քաղաքում ամբողջապես փոփոխել երթուղային ցանցն ու շարժակազմերը, վճարման ու ֆինանսական հոսքերի կառավարման և վերահսկման համակարգերը՝ դրանցից բխող բոլոր ռիսկերով ու առավելություններով հանդերձ, կամ նոր ցանցի ընդունումից հետո կատարել փուլային օպտիմալացում՝ նոր շարժակազմերի ու դրանց համապատասխանող երթուղիների փուլային ներդրմամբ՝ պահպանելով, նախևառաջ, ոլորտի անվտանգությունը, իսկ որոշակի երթուղիների շահագործման պարագայում՝ նաև դրանց ազդեցության չափաբաժինն ընդհանուր ցանցի սպասարկման մեջ:

Նոր ցանցի մոդելավորման և բնակչությանը հասարակական տրանսպորտի ծառայությունների մատուցման չափորոշիչների մշակման նպատակով հրավիրված միջազգային փորձագետների խորհրդատվական խումբը[9], հաշվի առնելով աշխարհի առաջավոր փորձը, առաջարկեց գնալ ամբողջական ու միանգամից օպտիմալացման ճանապարհով, որը ենթադրում էր փոխկապակցված հիմնախնդիրների զուգահեռ ու համարյա միաժամանակյա լուծումներ: Ինքնին հասկանալի է, որ նման մոտեցումը հանգեցնելու էր հասարակական տրանսպորտի ծառայություններից օգտվելու նոր մշակույթի ձևավորման անհրաժեշտությանը: Հետևապես՝ պետք էր իրականացնել լայնածավալ, բազմակողմանի ու նպատակային տեղեկատվական աշխատանք բնակչության շրջանում:

Հասարակական քաղաքային տրանս-

[8] https://www.mckinsey.com/ru/

[9] Բրիտանական WYG International Limited խորհրդատվական ընկերությունն այդ ժամանակահատվածում իրականացնում էր Երևանի նոր հանրային տրանսպորտի երթուղային ցանցի մշակման աշխատանքը, որը ենթադրում էր նաև սակագնային և տոմսային միասնական համակարգի ներդրման առաջարկությունների փաթեթ:

պորտի ցանցի մոդելի ընտրության համար ուսումնասիրվեցին Ցյուրիխյան ու Բանգկոկյան մոդելները[10], որոնք ունեն սկզբունքային տարբերություններ: Մասնավորապես՝ Բանգկոկյան մոդելում բացակայում են կարգավորման կառուցակարգերն ու հանրային ֆինանսավորման սկզբունքը, ցանցի ծածկույթը հատվածային է, հիմքում երթուղիների շահութաբերության գործոնն է, այլ ոչ թե բնակչի սպասարկումը, իսկ երթուղիները կարող են լինել զուգահեռ ու կրկնվող, տեղփոխի[11] կետերը, որպես կանոն, մի քանիսը (հատուկ կետեր), ուղեվարձն էլ՝ ըստ երթուղու ծախսատարության: Այս մոդելն իր բնույթով չի կարելի համարել մարդակենտրոն, քանի որ դրա հիմքում եկամուտն է, այլ ոչ թե ուղևորը:

Ի տարբերություն Բանգկոկյանի, Ցյուրիխյան մոդելն ավելի մարդակենտրոն է՝ ուղևորի համար հնարավորինս պարզեցված ու դյուրին կառուցակարգերով, ստանդարտացված ծառայություններով, հստակ չափորոշիչներով, ամբողջական ծածկույթի ապահովմամբ և կրկնվող երթուղիների բացառմամբ: Այս մոդելում տեղփոխ կետերը շատ են՝ տարածված ամբողջ ցանցով, տրանսպորտային ծանրաբեռնվածությունից ելնելով՝ կարող են լինել կենտրոնացված (հատուկ կետեր) և միջանկյալ, իսկ ուղեվարձը կարող է ներառել նաև անվճար տեղփոխներ՝ անգամ տրանսպորտի տարբեր տեսակների դեպքում (վերգետնյա, ստորգետնյա և այլն):

Հավակնոտ ծրագիր. գործնական մեկնարկ. 2017 թվական

Մոդելի ընտրության հիմքում քաղաքային իշխանությունը, նախևառաջ, դրեց մարդակենտրոնության սկզբունքը՝ նախապատվությունը տալով Ցյուրիխյան մոդելին, որը, ըստ էության, այլընտրանք չունի: Ի դեպ, եվրոպական բազմաթիվ մայրաքաղաքներում ու քաղաքներում հիմնականում ներդրված է հենց այս մոդելը:

Արդեն 2017 թվականին հանրությանը ներկայացվեցին Երևանում մինչև 2022 թվականը հասարակական տրանսպորտի ոլորտում իրականացվելիք բարեփոխումների ծրագրային կետերը.

- հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի մշակում և գործնական կիրառում,
- մեկ կամ երկու օպերատորի կազմավորմամբ հասարակական տրանսպորտի՝ միջազգային չափանիշներով սպասարկման ծառայությունների մատուցում,
- նոր ցանցում միկրոավտոբուսների հնարավորինս բացառում,
- երթուղիների սպասարկման միջազգային չափորոշիչները բավարարող մեծ (12 մ և 18 մ) և միջին (8-9 մ) տեղատարողության նոր ավտոբուսների ձեռքբերում,
- էլեկտրոնային և միասնական տոմսային նորագույն համակարգի ներդրում՝ սոցիալական խմբերի համար հստակ զեղչային համակարգի կիրառմամբ,
- տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ երթուղիների, չվացուցակների, տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի և ժամանման իրական ժամանակի վերաբերյալ տեղեկությունների առցանց հասանելիության ապահովում,
- ցանցին համապատասխան՝ նոր տեղաբաշխմամբ կանգառասրահների արդիականացում և կահավորում,
- նոր տրոլեյբուսների ձեռքբերում և լիարժեք ինտեգրում վերգետնյա տրանսպորտային ցանցին,
- երթևեկության կանոնակարգմանն ու փողոցային տրանսպորտային հոսքերի բեռնաթափմանը միտված կառավարման (ներառյալ լուսացուցային օբյեկտները, ճանապարհային նշանները և այլն) միասնական ծրագրի մշակում ու ներդրում,
- երթուղային նոր ցանցի գործնական կիրառման համատեքստում՝ ավտոկայանատեղերի կանոնակարգում, հիմնական երթուղիներում՝ ավտոբուստրոլեյբուսների անխափան երթևեկության ապահովում (գծանշումներ և

[10] https://sudipyerevan.am/en/public-transport-reforms/

[11] Տեղփոխի կետը մեկ ուղղությամբ շարժվող ուղևորի՝ տրանսպորտային մի միջոցից մյուսը տեղափոխվելու վայրն է:

այլն),

- նոր երթուղային ցանցի ներդրման համատեքստում՝ մետրոպոլիտենի շահագործման արդյունավետության բարձրացման ապահովում, ինչպես նաև մետրոպոլիտենի ցանցի զարգացման հավանական ուղղությունների և նոր կայարանների կառուցման երկարաժամկետ ծրագրի մշակում՝ ֆինանսավորման աղբյուրների հստակեցմամբ:

Ծրագիրը, իրոք, հավակնոտ էր, քանի որ վերաբերում էր մի հիմնախնդրի, որի լուծումն այդ ժամանակահատվածում, ըստ երևանցիների շրջանում անցկացված հարցումների, օրախնդիր էր (գծապատկեր 1)[12]: Ընդգծենք նաև, որ այն ուներ հստակ ժամանակացույց և գործնական կիրառման մեկնարկի ժամկետ:

Ինչ էր տալու այդ հավակնոտ ծրագրի իրականացումը Երևանին, երևանցուն և քաղաք այցելող հյուրին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Երևանի առաջնային խնդիրներն ըստ բնակիչների կարծիքների[13]

Առաջին, ավտոբուսային երթուղային ցանցի առումով, բացառվելու էր երթուղիների կրկնությունը, նախատեսելով տրամագծային, լարային և շառավղային ֆունկցիոնալ խմբերի օպտիմալ երթուղիներ՝ փոխհամաձայնեցված ինչպես միմյանց, այնպես էլ հասարակական տրանսպորտի այլ տեսակների՝ մետրոպոլիտենի ու էլեկտրատրանսպորտի հետ: Դա հնարավորություն կընձեռեր անգամ նույն ուղևորահոսքի պարագայում էականորեն նվազեցնելու տրանսպորտային միջոցների քանակը, բարձրացնելով ծառայության գրավչությունը, ինչպես նաև թեթևացնելու ճանապարհատրանսպորտային ծանրաբեռնվածությունը, որն օր օրի ավելի դժվարլուծելի հարց էր դառնում մայրաքաղաքի համար:

Երկրորդ, երթուղային ցանցը շահագործվելու էր հիմնականում մեծ տեղատարողությամբ ավտոբուսներով, միաժամանակ, Երևանի յուրահատկություններից ելնելով, միայն որոշակի երթուղիներում թույլատրվելու էր միջին տեղատարողությամբ ավտոբուսներով ուղևորափոխադրման իրականացում՝ բացառելով միկրոավտոբուսները:

Երրորդ, անհրաժեշտ պայման էր դառնալու էլեկտրոնային և տոմսային միասնական համակարգի ներդրումը, ինչը թույլ կտար ուղևորին ցանցի փոփոխության պարագայում (ժամային կամ կիլոմետրաժի սկզբունք) չկատարել կրկնակի վճարում:

Չորրորդ, հայտարարվող միջազգային մրցույթի շրջանակում նախատեսվում էր ծառայության մատուցում իրականացնող օպերատորների քանակի սահմանափակում (առավելագույնը՝ 3):

Օպերատորների մրցութային գործընթացը կազմակերպվելու էր ըստ արդյունքի գնահատման չափորոշիչների, որոնք պետք է բավարարեին առնվազն հետևյալ պահանջները.

1. սպասարկման իրականացում ժամանակակից և ճանաչված մակնիշի նոր տրանսպորտային միջոցներով՝ հագեցված լիարժեք հովացման և ջեռուցման,

[12] https://transport-yerevan-am/

[13] Այս և մնացյալ գծապատկերները վերցված են Երևանի հասարակական տրանսպորտի բարեփոխումների հանրային փոխգործակցության հարթակից:

էլեկտրոնային տոմսային համակարգերով և անվտանգային սարքավորումներով, ինչպես նաև GPRS-ով և GPS-ով (վերջիններս հնարավորություն կտան տրանսպորտային միջոցում և կանգառներում գտնվող ուղևորին ստանալու ամբողջական տեղեկություններ ավտոբուսի տեղաշարժի իրական ժամանակահատվածի, չվացուցակի և պարբերականության վերաբերյալ): Նման տրանսպորտային միջոցների առկայության պարագայում քաղաքապետարանի վերահսկողության կենտրոնը պետք է իրականացներ անընդհատ վերահսկողություն՝ սպասարկման գործընթացի համապատասխանության առումով, ապահովելով ուղևորի և վերահսկողության կենտրոնի փոխադարձ կապը: Միաժամանակ, բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիություն ապահովելու նպատակով տրանսպորտային միջոցները պետք է կահավորված լինեին համապատասխան սարքավորումներով:

2. Պայմանագրային ողջ ժամանակահատվածում անվտանգ սպասարկման ապահովում, ինչը ենթադրում է անվտանգ ուղևորափոխադրում, մեքենաների տեխնիկական բավարար վիճակի և դրանց անվտանգ շահագործման միջոցառումների թափանցիկություն և հաշվետվողականություն:

3. Որակյալ սպասարկում, ինչը նախատեսում է վարորդների հատուկ մասնագիտական վերապատրաստում, վերջիններիս վարքագծային կանոնների, արտաքին վայելուչ տեսքի սահմանում, տրանսպորտային միջոցների սրահների մաքրության և կահավորանքի ապահովում:

4. Էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրում, որն, ըստ էության, ամբողջապես պետք է բացառի վարորդ-ուղևոր դրամային շփումը, ինչպես նաև հնարավորություն ընձեռի որոշակի խմբերի համար սահմանելու արտոնություններ և կիրառելու տոմսերի երկարաժամկետ կամ քանակային զեղչային քաղաքականություն:

5. Ժամանակակից կանգառասրահների առկայության ապահովում, որոնց անբաժան բաղադրիչները կլինեն էլեկտրոնային չվացուցակները, էլեկտրոնային տոմսերի լիցքավորման կետերը, համացանցին միանալու հնարավորությունն ու ժամանակակից տեղեկատվական այլ միջոցներ:

Ինքնին հասկանալի է, որ մշակվող նոր ցանցը ներկայացնելու էր մայրաքաղաքի հասարակական տրանսպորտային համակարգն ամբողջապես: Այս համատեքստում, իհարկե, կարևորվում էր նաև վերգետնյա տրանսպորտի մյուս տեսակը՝ էլեկտրատրանսպորտը, ավելի ճշգրիտ՝ տրոլեյբուսային տնտեսությունը, որի խնդիրներն ու զարգացման հեռանկարները համարվում էին հասարակական տրանսպորտի համակարգի բարեփոխումների կարևոր տարրերից մեկը: Իր տեսակով լինելով զուտ քաղաքային՝ այն, որպես մեծ տեղատարողության և էկոլոգիապես մաքուր տրանսպորտի միջոց, ներկայում մայրաքաղաքի տրանսպորտային ցանցում՝ տեղափոխվող ուղևորների տեսակարար կշռով, էապես զիջում է վերգետնյա մյուս տրանսպորտին, սակայն նոր ցանցի պարագայում կրկնապատկվելու էին տրոլեյբուսային գծերը՝ փաստացի գործող 5-ից դառնալով պլանային 10, նորացվելու էր շարժակազմը: Փորձագետներն առաջարկում էին նաև մեծ ուղևորատարողության ավտոբուսների պարագայում կիրառել էլեկտրական սնուցմամբ ավտոբուսների շահագործման տարբերակը՝ որպես «Կանաչ Երևան» ծրագրի բաղկացուցիչ մաս: Ընդ որում, նմանատիպ ավտոբուսների ձեռքբերման դեպքում հնարավոր էր սովորական վառելիքով և էլեկտրական սնուցմամբ ավտոբուսների գնման գնի տարբերությունը ծածկել բնապահպանական դրամաշնորհային ծրագրերի միջոցներով:

Ինչ խնդիրներ էր լուծելու նոր ցանցի ներդրումը: Նախ՝ էապես կրճատվելու էր երթուղիների քանակը, ինչն ինքնին հանգեցնելու էր մայրաքաղաքային տրանսպորտային միջոցների թվի (շուրջ երեք անգամ) և գերծանրաբեռնվածության էական նվազման՝ մի քանի անգամ կրճատելով ցանցի ուղեգծի երկարությունը, ինչպես նաև շարժակազմի տարեկան վազքը: Այս ցուցանիշների մեծ մասը թույլ էր տալու կատարել էական տնտեսումներ, որոնք,





ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Նոր ցանցի առավելությունների պատկերը

որպես նոր սակագնի ձևավորման բաղադրիչներ, հնարավորություն էին ընձեռելու այն դարձնել առավել մատչելի, ինչպես նաև հիմնական երթևեկող ուղևորների համար կիրառել ճկուն զեղչերի քաղաքականություն:

Իրերի դրվածքը ներկայում կամ կոլապսի վախը. 2021 թվական

Ինչ ունենք այսօր:

Տրանսպորտային ցանցի մոդելի առումով, կարող ենք արձանագրել, որ Երևանում ներկայում, ավաղ, դեռևս գործում է Բանգկոկյան մոդելի վատթարագույն տարբերակը, երբ վերգետնյա ցանցում ոչ միայն անհարկի շատ են կրկնվող գծերը, այլև դրանք հաճախ անցնում են մայրաքաղաքի մետրոպոլիտենի երթուղուն զուգահեռ, որը ոչ միայն տրամաբանական չէ և ուղղակի խթանում է քաղաքային տրանսպորտային գերծանրաբեռնվածությունը, այլև դրանով էականորեն նվազեցնում է առանց այն էլ ոչ շահութաբեր աշխատող մետրոպոլիտենի ուղևորատարությունը:

Երկրորդ, որքան էլ տարօրինակ է, այսօրվա քաղաքային իշխանությունը, նախ՝ մերժեց միջազգային փորձագետ խորհրդատուների ներկայացրած ցանցի նախագիծը, ապա նույն խորհրդատվական կազմակերպությանը հանձնարարեց մշակել նոր նախագիծ, որն արդեն առկա է և նախկինում ներկայացվածից տարբերվում է շատ աննշան ու ոչ սկզբունքային շտկումներով: Հետևաբար՝ կարելի է եզրակացնել, որ, անկախ ծրագրի հաջողված լինելու հանգամանքից, քաղաքային նոր իշխանությունը, կարծես թե, ի սկզբանե չընդունեց դա և կյանքի չկոչեց:

Երրորդ, եթե խորհրդատուն մնալու էր նույնը և, ըստ էության, մի քանի շտկումներ անելով, կրկին ներկայացնելու էր իր նախորդ մշակած երթուղային ցանցը, ապա

ինչ հիմնավորմամբ կորսվեց թանկարժեք ժամանակը (շուրջ երեք տարի):

Չորրորդ, ներկա գործընթացը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ փորձ է արվում խնդիրը լուծելու սեփական միջոցներով, ինչն անիրական է՝ պայմանավորված ամբողջական ծրագրի ծախսային բաղադրիչի մեծությամբ: Ի վերջո, ընկալելի չէ, թե առանց պետության ակտիվ մասնակցության՝ ինչպես և, որ ավելի կարևոր է, ինչ ժամկետում է իրականացվելու համակարգային բարեփոխումը:

Այս պահին տեսանելի է, որ Երևանի հասարակական վերգետնյա տրանսպորտային համակարգի ամբողջական ու միանգամից բարեփոխման գաղափարը հեռացվել է քննարկման սեղանից: Դրա ապացույցն է այն, որ ներկայում գործող երթուղային ցանցի գրավիչ (ծանրաբեռնված) երթուղիներում, ներկա իշխանության ջանքերով, քաղաքային բյուջեի հսկայական ծախսերի արդյունքում կրկին հայտնվել են ընդամենը 15-17 նստելատեղով «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսներ: Անկախ նրանից, թե ինչպես են դրանք այսօր կոչվում՝ միկրոավտոբուս թե կոմպակտ դասի ավտոբուս, իրերի դրվածքը չի փոխվում՝ հատկապես ուղևորահոսքի կառավարման և փողոցների բեռնվածության նվազման համատեքստում, հետևապես՝ իրավիճակային լուծման այս մարտավարությունը ոչ միայն գաղափարային ու ծրագրային շեղում է, այլև, վերոշարադրյալ բաղադրիչների առումով, անարդյունավետ: Նոր ձեռք բերված միկրոավտոբուսները որևէ աղերս չունեն բնակչի կյանքի կամ սպասարկման որակի բարձրացման խնդրի հետ, քանի որ թեկուզ փոքրիշատե հարմարավետ (չկռացած) դարձած երթևեկությունը փոխկապակցվում է ուղևորին ներկայացվող պահանջների, այդ թվում՝ որոշակի արժողության (100 դրամ) մանրադրամ ունենալու անհրաժեշտության հետ, իսկ սպասարկման այդ ձևը Երևանի հասարակական տրանսպորտում կիրառվում էր մեր օրերից դեռևս 50 տարի առաջ[14]:

Ոչ մարդակենտրոն մոտեցման մասին է վկայում նաև գործող ցանցի շարունակական վատթարացման փաստը: Մասնավորապես՝ մի շարք երթուղային գծեր ուղղակի դադարեցրել են իրենց գործունեությունը, իսկ մաշվածության բոլոր թույլատրելի ժամկետները վաղուց սպառած միկրոավտոբուսները («մահվան գազելները») շարունակում են քաղաքում վտանգավոր երթևեկության և գերծանրաբեռնվածության «ապահովման» առաջամարտիկը մնալ:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է արձանագրել, որ վերջին երեք տարիներին Երևանի հասարակական տրանսպորտի կառավարումն ընթացիկ և իրավիճակային լուծումների տիրույթից այն կողմ այդպես էլ չի անցել: Հավակնոտ ծրագրի իրականացումը դեռևս հեռու հորիզոնում է, իսկ քաղաքային իշխանությունն իր գործողություններով ցույց է տալիս, որ սկսել է վերադառնալ մասնակի օպտիմալացման՝ ոչ այնքան արդյունավետ տարբերակին: Այս տարվա սկզբին հայտարարվեց, որ աշնանը քաղաքը կունենա միջին տարողության 200 նոր ավտոբուսներ: Հիշեցնենք, որ մշակված նոր ցանցի սպասարկման համար հին կամ նոր միկրոավտոբուսների (կոմպակտ դասի ավտոբուսների) կարիք չի լինելու այլևս, իսկ քաղաքին անհրաժեշտ մեծ ու միջին ուղևորատարողության ավտոբուսների քանակը պետք է կազմի շուրջ 900 միավոր[15]:

Վարվող քաղաքականության հետևանքով նոր շարժակազմի՝ փոքր խմբերով պարբերական ներդրումը հին ցանցում առաջացնելու է տարբեր ֆիզիկական մաշվածության, անվտանգային տարբեր համակարգեր ունեցող, վճարման վերահսկման տեսանկյունից՝ տարբեր չափորոշիչներով շարժակազմերի անհամադրելի մի համախումբ, որը չի կարող եզրեր ունենալ համակարգային ամբողջական բարեփոխման ծրագրի հետ:

[14] Մտաբերում եմ երևանյան ավտոբուսները՝ նախորդ դարի 70-ականներին, երբ ուղևորը որոշակի արժողության մետաղադրամը գցում էր ավտոբուսում տեղադրված տոմսարկղի մեջ, ինքնուրույնաբար ստանում ուղևորատոմսը և երթևեկում: Սակայն, նշենք, որ նշված ժամանակաշրջանից անցել է կես դար, և մայրաքաղաքի բնակչին այսօր վայել չէ օգտվել վճարման այդպիսի արխայիկ կառուցակարգով աշխատող հասարակական տրանսպորտից:

[15] https://transport.yerevan.am/

Հավակնոտ ծրագրից շեղվելու և մասնակի օպտիմալացման գործընթացին սահուն կերպով անցնելու որոշիչ գործոններից է նաև տրանսպորտային կոլապսի «ուրվականից» շարունակական վախը: «Կոլապսի խնդիրն» ակտիվորեն շահարկում են բազմաթիվ օպերատորներ՝ դեռևս «50 դրամների» շարժման ժամանակից սկսած, և դա, նմանատիպ վախերով «զինված» կառավարիչների պարագայում կարող է շեղել ռազմավարական խնդիրներից՝ պարզ իրավիճակային լուծումների առաջարկմամբ:

Հատկանշական է, որ Երևանի գործող քաղաքապետը դեռևս 2019 թվականի հուլիսին, հանդիպելով եզրափակիչ հաշվետվությամբ Երևան այցելած բրիտանական «WYG International Limited» խորհրդատվական ընկերության պատվիրակության անդամների հետ, հույս էր հայտնել, որ ամբողջական ցանցը գործակելու ժամկետը չի գերազանցի երկու տարին[16]:

Արձանագրենք, որ այդ երկու տարին արդեն իսկ լրացել է, ու դեռևս ունենք այն, ինչ ունեինք. երթուղային ցանցի Բանգկոկյան աղճատված մոդել, միջին տարողության՝ արդեն իսկ մաշված ավտոբուսային շարժակազմ, մաշվածության և սպասարկման որակի ենթադրելի սահմանները վաղուց հատած միկրոավտոբուսային շարժակազմով մի քանի տասնյակ երթուղիներ: Մայրաքաղաքի ներկայիս վերգետնյա հասարակական տրանսպորտային համակարգը ոչ միայն անվտանգային, բնապահպանական և կենցաղային առումով է հնացած ու ոչ պիտանի, այլև մարդու կյանքի որակի տեսանկյունից կարող է դիտարկվել որպես չափազանց անբավարար:

Խորապես գիտակցելով երևանցիների համար գերակա հիմնախնդրին առնչվող բարեփոխումների համակարգային ծրագրի՝ օր առաջ մայրաքաղաքում կյանքի կոչելու հրամայականն ու անհրաժեշտությունը, պետք է արձանագրել, որ Երևանում, փաստացիորեն, իրականացվում է 2018 թվականից իր մեկնարկին սպասող հավակնոտ ծրագրի մասնակի և տրոհված տարբերակը, իսկ համակարգային ու ամբողջական բարեփոխումը հետաձգվել է՝ անորոշ ժամանակով:

Ակամայից մտքիդ է գալիս Ռուսաստանի նախկին վարչապետ Վ. Չերնոմիրդինի թևավոր դարձած խոսքը. «Хотели как лучше, а получилось как всегда»…

[16] https://www.yerevan.am/am/news/nerkayats-vel-e-hasarakakan-transporti-nor-ts-ants-i-verjnakan-nakhagitse/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:
2. «Մասնագիտական աշխատանքային խումբ ստեղծելու մասին» Երևանի քաղաքապետի 9.02.2017 թ. N333-Ա որոշում:
3. Սիմոնյան Ա., Քաղաքամայր Երևան, «Հայաստան», Երևան, 1983:
4. https://transport.yerevan.am/
5. https://www.yerevan.am/am/news/nerkayats-vel-e-hasarakakan-transporti-nor-ts-ants-i-verjnakan-nakhagitse/
6. https://sudipyerevan.am/en/public-transport-reforms/
7. https://www.mckinsey.com/ru/
8. https://www.yerevan.am/am/transport-department/
9. https://www.pastinfo.am/hy/news/2017/04/20/%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%BA%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/535116
10. https://armenpress.am/arm/news/663558/%D4%B1%D5%BE%D5%BF%D5%B8%D5%A2%D5%B8%D6%82%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6_%D5%AD%D5%B4%D5%A2%D5%A1%D6%84%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A8_%D5%89%D5%AB%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81_%D4%B5%D6%80%D5%A5%D6%82%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D6%80%D5%BE%D5%AB_.html

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

ГОРОДСКАЯ ЭКОНОМИКА

НАЗЕМНЫЙ ОБЩЕСТВЕННЫЙ ТРАНСПОРТ В ЕРЕВАНЕ: ОДИССЕЯ АМБИЦИОЗНОГО ПРОЕКТА

В контексте повышения качества жизни людей основной миссией органа местного самоуправления является обеспечение устойчивого и пропорционального развития сообщества в рамках делегированных, собственных и добровольных полномочий. В случае с Ереваном вышеуказанная задача уникальна, так как Ереван, будучи столицей Республики Армения, также является главной визитной карточкой страны. Следовательно, развитие любой сферы города и модернизация инфраструктуры рассматриваются не только с внутринациональной, но и с международной точки зрения, что делает видимыми недостатки нереализованного, а тем более совершенного. В статье исследуется и анализируется реальная ситуация с реализацией программы реформирования наземного общественного транспорта, что является одним из основных вопросов, волнующих население столицы. Был проведен также ретроспективный анализ жизнедеятельности системы общественного транспорта, затем были представлены процесс и логика работ, направленных на модернизацию и реформирование сферы. В этом контексте была предпринята попытка найти ответы на вопросы, волнующие население и другие заинтересованные стороны, в частности, почему процесс замедлился, почему и по какой логике реализуются частичные несистемные решения, по каким причинам нынешнее власти города до сих пор не реализовали амбициозную программу реформирования системы общественного транспорта в Ереване, о практическом запуске которой было объявлено предыдущей городской властью ровно 4 года назад, в 2017 году.

Ключевые слова: *Ереван, местное самоуправление, программа реформ, общественный транспорт, новая маршрутная сеть*

Hamazasp GALSTYAN
Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

URBAN ECONOMY

OVERGROUND PUBLIC TRANSPORT IN YEREVAN: THE ODYSSEY OF AN AMBITIOUS PROJECT

In the context of improving the quality of human life, the main mission of the local self-government body is to ensure the sustainable and proportional development of the community within the framework of delegated, own and voluntary powers. In the case of Yerevan the above-mentioned is more unique, as Yerevan, being the capital of the Republic of Armenia, is also the main business card of the country. Consequently, the development of any sphere of the city and the modernization of the infrastructures are viewed not only from the domestic, but also from the international point of view, which makes visible the shortcomings of the unfulfilled, and even more of the accomplished. The paper examines and analyzes the actual situation of the implementation of the overground public transport reform program, which is one of the main issues of concern to the population of the capital. Assuming the period of formation of independent Armenia as the starting point of the study, a retrospective analysis of the vital activity of the public transport system was done, then the process and logic of the works aimed at the modernization and reform of the sphere were presented.

In this context, for the population, as well as for the other stakeholders interested in the reforms in the field, an attempt was made to find the answers to the following questions: Why has the process slowed down? Why and by what logic are partial non-systemic solutions being implemented? For which reasons has not the current city government yet implemented the ambitious program of the public transport system reform in the city of Yerevan, the practical launch of which was announced by the previous city government exactly 4 years ago, in 2017?

Key words: *Yerevan, local self-government, reform program, public transport, new route network*

ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.

ԱՐԴՅՈ՞Ք ԱՇԽԱՐՀԸ ՆՈՒՅՆԸ ԿԼԻՆԻ COVID-19-ԻՑ ՀԵՏՈ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_79

Հիմնաբառեր. *թվային տնտեսություն, մարտահրավերներ, գլոբալացում, ռազմավարություն, թվայնացում*

Նարինե Պետրոսյան

ՀՊՏՀ մագիստրանտ

2021 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ, ապա ընդունվել մագիստրատուրա՝ «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրով:

2020 թ.-ից աշխատում է Enlight հանրային հետազոտությունների կենտրոն ՀԿ-ում՝ որպես տնտեսագետ-վերլուծաբան: Միաժամանակ, ներգրավվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբերում՝ որպես հրավիրյալ փորձագետ:

Հեղինակ է 10-ից ավելի գիտական հրապարակումների, ինչպես նաև համահեղինակ՝ մեկ կոլեկտիվ մենագրության:

2020 թ. համավարակի պատճառով համաշխարհային տնտեսությունը կրճատվել է մոտ 4,4%-ով: Միաժամանակ, աշխարհում նկատելի է դարձել համընդհանուր մի միտում՝ թվայնացումը: Համավարակի նոր ալիքով պայմանավորված՝ շարունակական սահմանափակումների ռիսկի պայմաններում թվային գործընթացները (հեռավար ուսուցում, էլեկտրոնային առևտուր, հեռավար աշխատանք և այլն) ձեռք են բերել ավելի մեծ պահանջարկ: Իսկ ինչպե՞ս են դրանք դրսևորվել տարբեր երկրներում, և ի՞նչ պետք է անեն կառավարությունները, ձեռնարկություններն ու ներդրողները՝ դուրս գալու համար կորուստների ռիսկային շղթայից: Հոդվածագրի ուշադրության կենտրոնում հենց այս հարցերն են:

Գլոբալացման ժամանակակից պայմաններում թվային հնարավորություններն օրեցօր ավելի են կարևորվում տնտեսական աճ ու կայունություն ապահովելու գործում: Իսկ ինչպե՞ս են տարբեր երկրների տնտեսություններ, թվային զարգացման առումով, համեմատվում միմյանց հետ, և համավարակի ընթացքում տարբեր գործոններ ի՞նչ անդրադարձ են ունեցել թվային տնտեսության զարգացման վրա:

Digital Evolution Scorecard-ի վերջին հետազոտությունը ներառում է 90 տնտեսության համապարփակ վերլուծություն՝ հիմնված թվային զարգացման 160 հիմնական ցուցանիշների վրա: Այդպիսով՝ աշխարհի տնտեսությունները բաժանվում են չորս տարբեր գոտիների[1]: Ու թեև յուրաքանչյուր երկիր ու տնտեսություն յուրահատուկ են,

[1] Chakravorti Bhaskar, Bhalla Ajay, and Chaturvedi Ravi Shankar, Which Economies Showed the Most Digital Progress in 2020?, December 2020, https://hbr.org/2020/12/which-economies-showed-the-most-digital-progress-in-2020#

և չկան միատարր լուծումներ, այդ թվում՝ թվայնացման գործընթացում, այնուամենայնիվ, հարկ է տարբերակել երկրների տարբեր խմբերի թվային տնտեսությունների զարգացման տեսլականները, ինչը հնարավորություն կտա քաղաքականություն մշակողներին ավելի լավ պատկերացնելու թվային տնտեսության զարգացման ներկայիս միտումները և առաձնացնելու ոլորտային զարգացման հնարավոր ուղիներ կամ տեսակետներ:

Տնտեսության թվայնացման համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ և ապահովել անհրաժեշտ նախապայմաններ[2]: Նախ՝ հարկ է դիտարկել անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունը և հասկանալ, թե՝

- որքա՞նով են զարգացած թվային և ֆիզիկական ենթակառուցվածքները՝ թվային էկոհամակարգի (թողունակության հասանելիություն, էլեկտրոնային առևտրի իրականացման պայմանների մատչելիություն, որակ և այլն) ձևավորումը հեշտացնելու տեսանկյունից,
- արդյո՞ք սպառողներն ունեն ցանկություն և ունակություն՝ ներգրավվելու թվային էկոհամակարգում,
- արդյո՞ք սպառողները տիրապետում են համապատասխան գործիքների ու հմտությունների՝ թվային տնտեսության մեջ ընդգրկվելու համար:

Հաջորդ կարևոր գործոնն ինստիտուցիոնալ միջավայրն է: Հետևաբար՝ անհրաժեշտ է գնահատել, թե՝

- արդյո՞ք տվյալ երկրի օրենսդրությունն ու կառավարության գործողությունները խոչընդոտում կամ աջակցում են թվային տեխնոլոգիաների զարգացմանը,
- կառավարություններն արդյո՞ք կատարում են ներդրումներ թվայնացումը խթանելու նպատակով,
- տվյալների օգտագործումն ու պահպանումը կարգավորող կանոնակարգերն արդյո՞ք խոչընդոտում կամ նպաստում են թվայնացման աճին:

Համաշխարհային տնտեսության թվայնացման ներկայիս միտումները որպես հիմք ընդունելով, ինչպես վերը նշեցինք, աշխարհի ֆիզիկական քարտեզը բաժանվում է 4 հիմնական խմբերի[3]:

Առաջին խմբի երկրներն ունեն և՛ թվայնացման բարձր մակարդակ, և՛ իրենց թվային կարողություններն առաջ մղելու շարունակական միտում: Հատկապես ուշագրավ են երեք տնտեսություններ՝ Սինգապուր, Հարավային Կորեա և Հոնկոնգ:

Երկրորդ խմբում այն երկրներն են, որոնք տիրապետում են սահմանափակ թվային ենթակառուցվածքի, բայց ունեն արագ թվայնացման միտում: Այս խմբում առավել ուշագրավ է Չինաստանի օրինակը, որի թվային առաջընթացը զգալիորեն ավելի մեծ է, քան մնացած բոլոր տնտեսություններինը, ինչն առավելապես պայմանավորված է արագորեն աճող պահանջարկի և նորարարության համադրությամբ: Ինդոնեզիան և Հնդկաստանը նույնպես այս խմբի կարևոր անդամներն են, որոնք նույնպես աչքի են ընկնում թվայնացման աճող տեմպերով՝ ինչպես հետհամավարակային տնտեսական վերականգնման, այնպես էլ երկարաժամկետ վերափոխման տեսանկյունից:

Երրորդ խմբում ընդգրկված են հիմնականում ԵՄ անդամ երկրները, որոնց հատուկ են «հասուն» թվային ենթակառուցվածքները, բայց, միաժամանակ, ավելի քիչ նախաձեռնողականությունը՝ թվայնացման գործընթացի հետագա առաջխաղացման առումով:

Վերջին խմբում ներառված են Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Հարավային Եվրոպայի երկրները, որոնք բնութագրվում են ինչպես տնտեսության, այնպես էլ թվայնացման հետագա աճի միտումների համեմատաբար ցածր մակարդակով:

Վերոնշյալ երկրները, հիմքում ունենալով հաջողված երկրների փորձը, կարծում ենք՝ պետք է իրականացնեն հնարավորինս ակտիվ քայլեր տնտեսության թվայնացումը խթանելու համար: Մասնավորապես՝

[2] Fedorychak Volodymyr, 20 Digital Transformation Statistics You Should Know in 2021, April, 2021. https://lvivity.com/digital-transformation-statistics

[3] Նույն տեղում:

- կատարել երկարաժամկետ ներդրումներ թվային ենթակառուցվածքների հիմնական բացթողումները լրացնելու համար,
- ստեղծել ինստիտուցիոնալ միջավայր, որը կաջակցի թվային ապրանքների և ծառայությունների անվտանգ իրացմանը,
- խրախուսել այն նախաձեռնությունները (պետական-մասնավոր գործընկերության միջոցով), որոնք միտված են բնակչության անապահով խավերի թվային հասանելիության գործընթացում ներդրումների կատարմանը:

Անշուշտ, համաշխարհային տեխնոլոգիական զարգացման վերջին տարվա միտումների վերլուծությունը թերի կլիներ՝ առանց COVID-19 համավարակի ազդեցության ուսումնասիրության: Ամենահետաքրքրականն այն է, որ թվայնացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող մի շարք տնտեսություններ ձգտում են իրենց ՀՆԱ մեծ մասը ստանալ բարձր տեխնոլոգիական ոլորտներից, որտեղ աշխատուժն ավելի հեշտությամբ է անցնում հեռավար աշխատանքի: Բացի այդ, թվայնացված զարգացած տնտեսությունները, որպես կանոն, զարգացած թվային ենթակառուցվածքների և մատչելի ինտերնետ հասանելիության շնորհիվ, առցանց շատ ավելի լավ են մատուցում հանրային ծառայություններ: Որոշ երկրներ, օրինակ, կիրառեցին իրենց գերակա դիրքը վարակակիրների շփման շրջանակի նույնականացման, տվյալների հավաքագրման նպատակով, ինչը հնարավորություն տվեց նվազագույնի հասցնելու համավարակի սոցիալ-տնտեսական հնարավոր բացասական հետևանքները (Հարավային Կորեա, Թայվան): Թվայնացման բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկիր, ինչպիսին Մեծ Բրիտանիան է, միջոցառումներին անհամաչափ արձագանքմամբ արձանագրեց նշանակալի տնտեսական անկում: Երկրի ՀՆԱ 10.9%-ը ձևավորվում է զբոսաշրջությունից, ինչը համավարակի հետևանքով չափազանց մեծ անկում ապրեց: Ընդհանուր առմամբ, համավարակի պայմաններում թվային առաջընթացն էականորեն նպաստում է տնտեսական կայունությանը, կանխելով ավելի մեծ անկումը, բայց դա նույնպես բավարար չէ:

Microsoft ընկերության փորձագետների իրականացրած գնահատումների համաձայն՝ կարճաժամկետ հեռանկարում COVID-19 համավարակը շարունակելու է հանգեցնել տեխնոլոգիական ռեսուրսնե-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող աշխատատեղերը համաշխարհային տնտեսության մեջ (մլն մարդ)[4]

[4] Smith Brad, Microsoft launches initiative to help 25 million people worldwide acquire the digital skills needed in a COVID-19 economy, Jun 30, 2020, https://blogs.microsoft.com/blog/2020/06/30/microsoft-launches-initiative-to-help-25-million-people-worldwide-acquire-the-digital-skills-needed-in-a-covid-19-economy/

ից հանրության կախվածության աճին[5]: Դեռևս չհաղթահարվող այս իրավիճակում մենք շարունակելու ենք ապրել ու գործել «հիբրիդային տնտեսությունում», որտեղ ոմանք աշխատավայրում են, իսկ մյուսները շարունակում են աշխատել տնից:

Ընկերության վերլուծությունից պարզ է դառնում, որ հաջորդ հինգ տարիների ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ կստեղծվեն տեխնոլոգիական ուղղվածության մոտ 149 միլիոն նոր աշխատատեղեր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տվյալների վերլուծությունը, տվյալագիտությունը, կիբեռանվտանգությունը և գաղտնիության պաշտպանությունը (գծապատկեր 1)[6]:

Թվային տնտեսության կարևորագույն և ներկայում զգալիորեն արագ աճող հատվածը էլեկտրոնային առևտուրն է, ինչը թվային տնտեսության մյուս բաղադրիչների կատարելագործման անմիջական հիմքն է: Վերջին մի քանի տարիների ընթացքում այն դարձել է համաշխարհային մանրածախ առևտրի անփոխարինելի մասը: 2020 թ. էլեկտրոնային մանրածախ առևտուրը գերազանցել է 4.2 տրիլիոն ԱՄՆ դոլարի շեմն ամբողջ աշխարհում: Ենթադրվում է, որ էլեկտրոնային առևտրի շուկայում եկամուտը 2021 թ. կկազմի 2,7 տրիլիոն ԱՄՆ դոլար: Ըստ կանխատեսումների՝ էլեկտրոնային առևտրից ստացվող եկամուտը տարեկան կաճի շուրջ 6,29%-ով (CAGR 2021-2025), որի արդյունքում առևտրի կանխատեսվող շուկայական ծավալը մինչև 2025 թ. կկազմի մոտ 3,5 տրիլիոն ԱՄՆ դոլար, իսկ սպառողների թիվը՝ մոտ 4,9 մլրդ[7]:

Նկատելի է, թե համավարակի հե-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Էլեկտրոնային առևտրի աճն ըստ ապրանքախմբերի (2021 թ., հունվար)[8]

[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Digital Markets, eCommerce, https://www-statista-com/outlook/dmo/ecommerce/worldwide
[8] Kemp Simon, DIGITAL 2021: GLOBAL OVERVIEW REPORT, 27 Jan, 2021, https://datareportal.com/reports/digital-2021-global-overview-report

տևանքներն ինչպես են դրսևորվել ըստ առանձին ապրանքախմբերի՝ ընդգծելով, թե իրացման ինչ խնդիրների են բախվել ճանապարհորդության և զբոսաշրջության ապրանքախմբերը: Statista-ն հայտնում է, որ այս ոլորտի առցանց եկամուտները տարեկան կտրվածքով ավելի քան 50%-ով նվազել են, ինչը հանգեցնում է տարեկան ավելի քան 0,5 տրիլիոն ԱՄՆ դոլարի սպառողական ծախսերի անկման: Մյուս կողմից, մի շարք ապրանքային կատեգորիաներում 2020 թ. նկատելի է էլեկտրոնային առևտրից ստացվող եկամուտների էական աճ[9]: Աճի առավելագույն ցուցանիշը գրանցել են սննդի և անձնական սպառման ապրանքների ոլորտները, ինչը տրամաբանական է և համահունչ COVID-19-ի սահմանափակումներով պայմանավորված հանրային վարքագծի դրսևորմանը: Համաշխարհային առումով, 2020 թ. այս ապրանքախմբերի էլեկտրոնային առևտրից ստացվող եկամուտն աճել է շուրջ 400 միլիարդ ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով ավելի քան 40%-ով (գծապատկեր 2)[10]:

Էլեկտրոնային առևտրի բնագավառում առավել տեսանելի միտումներից է բջջային սարքավորումների օգտագործման ծավալների շարունակական աճը: 2019 թ. ամբողջ աշխարհում մանրածախ առևտրի ինտերնետային կայքերի այցելությունների ավելի քան 60%-ը բաժին է ընկել սմարթֆոններին: Հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ այլ թվային ենթակառուցվածքներ չկան կամ թերի են, բջջային սարքավորումների ինտեգրումը կարող է լինել էլեկտրոնային առևտրի ծավալների շարունակական աճի նախադրյալ: Դա առավելապես վերաբերում է Ասիային, որտեղ Հարավային Կորեայի նման երկրները բջջային կապի միջոցով իրականացնում են իրենց առցանց գործարքների ընդհանուր ծավալի 65%-ը[11]:

Կորոնավիրուսի համավարակն ամբողջ աշխարհում շարունակում է էական ազդեցություն ունենալ էլեկտրոնային առևտրի և սպառողների վարքագծի վրա: Մասնավորապես՝ 2020 թ. էլեկտրոնային մանրածախ առևտրին բաժին է ընկել ամբողջ աշխարհում մանրածախ առևտրի 18%-ը: Ակնկալվում է, որ այս ցուցանիշը 2024 թ. կհասնի 21,8%-ի (գծապատկեր 3)[12]:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Էլեկտրոնային առևտրի տեսակարար կշիռն ընդհանուր մանրածախ առևտրում[13]

[9] EcommerceDB.com Trend Report, eCommerce 2020: trends and Outlook, September 2020, https://www.statista.com/study/79060/ecommerce-trends-and-outlook/

[10] Gorbachevskaya E.Yu., Significance Of Electronic Commerce In Development Of Rf Innovative Economy, December 2018, https://www.researchgate.net/publication/329723371_Significance_Of_Electronic_Commerce_In_Development_Of_Rf_Innovative_Economy

[11] Statista Digital Market Outlook, eCommerce report 2020, November 2020, https://www.statista.com/study/42335/ecommerce-report/

[12] Coppola Daniela, E-commerce share of total global retail sales from 2015 to 2024, 21 Apr, 2021, https://www.statista.com/statistics/534123/e-commerce-share-of-retail-sales-worldwide/

[13] Coppola Daniela, E-commerce share of total global retail sales from 2015 to 2024 , 21 Apr, 2021 https://www.statista.com/statistics/534123/e-commerce-share-of-retail-sales-worldwide/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ամսական այցելությունների թիվն ըստ էլեկտրոնային առևտրի կայքերի[14]

Մանրածախ առևտրի կայքերը զգալի առաջընթաց են գրանցել հատկապես համավարակի պայմաններում: Amazon.com-ը, որն էլեկտրոնային առևտրի հսկաներից է, 2020 թ. ունեցել է ամսական գրեթե 3,68 միլիարդ այցելու, որին հաջորդում է eBay.com-ը՝ ամսական միջին հաշվով 1,01 միլիարդ այցով (գծապատկեր 4):

Նշենք, որ ամբողջ աշխարհում էլեկտրոնային առևտրի մասնակիցների մեծամասնության հիմնական մարտահրավերն առցանց խանութների տեխնոլոգիական բաղադրիչի աճող պահանջներն են, բազմակողմանի խթանման անհրաժեշտությունը և հաճախորդների անձնական ու վճարային տվյալների անվտանգությունը: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության մեջ COVID-19-ով պայմանավորված իրավիճակը՝ կարող ենք ասել հետևյալը. զգալիորեն մեծացել է հասարակության

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

ՀՀ թվայնացման ռազմավարության ուղղությունները[15]

[14] Clement J., Leading retail websites worldwide 2020, by traffic, 12 Feb, 2021, https://www.statista.com/statistics/274708/online-retail-and-auction-ranked-by-worldwide-audiences/

լայն շերտերի հետաքրքրությունն առցանց առևտրի նկատմամբ: Ուստի էլեկտրոնային առևտրով զբաղվողների հիմնական խնդիրը պետք է լինի հաճախորդների բազմազանեցումը: Այս տեղեկությունից օգտվելով՝ առցանց վաճառքի կետերը կարող են իրականացնել անհատականացված և նպատակային արշավներ՝ թիրախավորված յուրաքանչյուր խմբի նախընտրությունները բավարարելու համար:

Հայաստանյան իրականությունը:

ՀՀ տնտեսության թվայնացման առումով, կարևոր և գործնական քայլերից մեկը կարելի է համարել երկրում թվայնացման ռազմավարության ընդունումը[15], ըստ որի՝ որոշակիորեն հստակեցվում են տնտեսության թվայնացման հետագա ուղղությունները: Այնուամենայնիվ, թվային տնտեսության զարգացման առումով, շարունակում են գոյություն ունենալ ակնհայտ խնդիրներ ու ռիսկեր:

Թեև ռազմավարության մեջ առանձնակի անդրադարձ է կատարվում հանրության շրջանում թվային կրթության մակարդակի բարձրացմանը, սակայն, մեր կարծիքով, միջնաժամկետ հեռանկարում էական ռիսկեր են ի հայտ գալիս թվայնացված ծառայություններից օգտվելու գործընթացում: Ինչպես և նշվում է ռազմավարության մեջ, արդեն իսկ կիրառվող թվային հարթակներն աչքի են ընկնում ցածր արդյունավետությամբ, անհարմարությամբ և օգտագործման դժվարությամբ, ինչը հանրության շրջանում անվստահության մթնոլորտ է ձևավորում թվային տեխնոլոգիաների նկատմամբ: Մյուս խնդիրն այն է, որ թվային գործիքակազմի զարգացման ներկայիս մակարդակը ստեղծում է այնպիսի խնդիրներ, երբ թվային հարթակների մեծածավալ և միաժամանակյա օգտագործման պայմաններում նվազում է դիմումներին կամ հարցումներին արձագանքման արագությունը: Այս միտումը հատկապես դրսևորվեց համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմմանն ուղղված՝ աջակցության միջոցառումների իրականացման գործընթացում:

Թեև Հայաստանում տնտեսության թվայնացումը համարվում է տնտեսական առաջընթացի կարևոր նախապայման և առաջնահերթություն, այնուամենայնիվ, երկրում էլեկտրոնային առևտուրը նշանակալիորեն կաղում է: Խնդիրն առավել նկատելի է դառնում արտահանողների համար՝ ժամանակատար բարդ փաստաթղթավորման, օրենսդրական ու բյուրոկրատական քաշքշուկների տեսանկյունից:

Տնտեսական շրջափակման մեջ գտնվող ու արտահանման զարգացումը որպես տնտեսական առաջնահերթություն և ռազմավարական նպատակ սահմանած Հայաստանում դեռևս գոյություն չունի էլեկտրոնային առևտուրը կարգավորող օրենք, այն պարագայում, երբ աշխարհում նկատվում է առևտրային գործընթացը լիարժեքորեն թվայնացնելու համընդհանուր միտում: Հայաստանում էլեկտրոնային առևտուրն իրավական կարգավորումների դաշտ է մտել 2016 թ., այն էլ միայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում[16]: Իհարկե, մեզանում ոլորտն ունի զարգացման մեծ ներուժ, սակայն հանրության կասկածամիտ վերաբերմունքը և զգուշավորությունը նույնպես խոչընդոտում և սահմանափակում են դրա արդյունավետ իրացումը:

Ամենատարածված խնդիրներից են նաև PayPal վճարահաշվարկային համակարգի ոչ լիարժեք աշխատանքը և մաքսային ձևակերպումների բարդությունը: Համակարգը Հայաստանում լիարժեքորեն չի գործում, ինչը խանգարում է ոլորտի զարգացմանը: Բանն այն է, որ արտերկրից ապրանք պատվիրելիս Հայաստանից հնարավոր է վճարումներ կատարել այս համակարգով, մինչդեռ ապրանք արտահանելիս՝ ոչ: Սա է պատճառը, որ էլեկտրոնային առևտրի հայաստանյան սուբյեկտները գրանցվում են այլ երկրների PayPal համակարգում՝ հետագայում վաճառքից ստացված գումարը փոխանցելով իրենց հայաստանյան հա-

[15] Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշում, փետրվար, 2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957

[16] «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=107095

շիվներին: Այս իրավիճակը նույնպես լրացուցիչ անհարմարություններ է ստեղծում, որոնց միջով ոչ բոլորն են պատրաստ անցնելու: Ինչ վերաբերում է մաքսային ձևակերպումների բարդությանը, ապա պետք է նշել, որ ՀՀ-ից 200 եվրոյից ավելի արժողությամբ ապրանք արտահանելիս պահանջվում է ներկայացնել մաքսային հայտարարագիր, ինչը ոչ միայն ժամանակատար գործընթաց է, այլև ենթադրում է լրացուցիչ ծախսեր: Սա նույնպես հարվածի տակ է դնում հայաստանյան փոքր ու միջին բիզնեսի՝ էլեկտրոնային առևտրին ինտեգրման հնարավորությունը:

Հայաստանյան շուկայում ոլորտի զարգացման խոչընդոտներից է լոգիստիկ խընդիրների առկայությունը: Բազմաթիվ փոքր ու միջին ընկերություններ էլեկտրոնային առևտուր իրականացնելիս Հայաստանից ապրանքն այլ երկիր են առաքում հիմնականում մարդատար ինքնաթիռներով՝ պայմանավորված նաև բեռների փոքր ծավալով: Սակայն, համավարակի հետևանքով թռիչքների կրճատումը, իսկ սկզբնական շրջանում՝ նաև բացարձակ արգելքը պատվերների առաքման էական խնդիրներ են առաջացրել մատակարարների համար: Ներմուծման դեպքում նույնպես ամեն ինչ հարթ չէ. օրինակ՝ ԱՄՆ-ից դեպի ՀՀ բեռնատար ինքնաթիռներ չեն ժամանում, ուստի ներմուծողները ստիպված են լինում բեռների տեղափոխումն իրականացնել Վրաստանի միջոցով:

Այսպիսով՝ ՀՀ թվային տնտեսության և հատկապես էլեկտրոնային առևտրի ոլորտում իրականացվող կարգավորումների ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ ներկայում այս բնագավառում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք ունեն լուծման կարիք: Ընդ որում, դրանց մեծ մասը էլեկտրոնային առևտրի դաշտը կարգավորող օրենքի բացակայության հետևանքով է: Կարծում ենք՝ օրենքի ընդունումը կմեղմի ոլորտում առկա անորոշությունը և հնարավորություն կտա ավելի համակարգված ձևով կանոնակարգելու և իրականացնելու առևտրային գործընթացը: Մտահոգիչ է նաև խոցելի խմբերում իրազեկվածության և թվային գրագիտության մակարդակի բարձրացման խնդիրը: Թեև թվայնացման ռազմավարությունում այս առումով նախանշվում է տարաբնույթ ծրագրերի իրականացում, այնուամենայնիվ, մեր համոզմամբ, միայն կրթական ծրագրերը բավարար չեն հասարակության այդ խմբերում էլեկտրոնային ծառայություններից օգտվելու հնարավորությունների մեծացման համար: Անգամ եթե բարձր տարիքային խմբում ընդգրկված քաղաքացիներն ունակ լինեն ընկալելու և կիրառելու թվային գործիքներ, շատ դեպքերում առաջանալու է համապատասխան տեխնիկական սարքավորումներով ապահովվածության խնդիր, որին լուծում տալը կարճաժամկետ հեռանկարում քիչ հավանական է:

Ամփոփելով նշենք՝ Չինաստանի փորձը հուշում է, որ էլեկտրոնային առևտրի համակարգի արդյունավետ կիրառումը համավարակի հաղթահարման կարևորագույն ուղիներից է՝ տարբեր ոլորտների աշխատանքը կորցրած քաղաքացիներին թվային լոգիստիկ հարթակներում առաջադեմ տեխնոլոգիական միջոցների կիրառմամբ աշխատանքի ներգրավելով: Ստեղծված իրավիճակում մարդկանց եկամտի էական մասն ուղղվում է առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերմանը՝ փոխելով նրանց սպառման կառուցվածքը, ինչը, բնականաբար, հանգեցնում է էլեկտրոնային առևտրի ծավալի աճին: Սահմանափակումներով պայմանավորված՝ գնումների և տարաբնույթ գործարքների մեծ մասն իրականացվում է էլեկտրոնային հարթակներում՝ հնարավորություն տալով սպառողներին բացահայտելու և գնահատելու էլեկտրոնային առևտրի՝ մինչ այդ չգնահատված դրական կողմերը: Անընդհատ դեպի հարմարավետություն ձգտողներն առցանց հարթակների միջոցով կարողանում են արագ և հարմար տարբերակով բավարարել իրենց պահանջմունքները՝ ձեռք բերելով անհրաժեշտ ապրանքներ, ինչպես նաև խնայելով ժամանակը: Ուստի, էլեկտրոնային առևտրի դրական կողմերը հենց այն նախադրյալներն են, որոնք պայմանավորելու են դրա հետագա աճը՝ նույնիսկ համավարակի հաղթահարումից հետո: Փորձը ցույց է տալիս, որ պետություն-շուկա փոխգործակ-

ցության արդյունքում հաջողությամբ լուծվում են զարգացման գործընթացում ի հայտ եկող բոլոր խնդիրները, իսկ առավել արդյունավետ լուծումներն արագորեն դառնում են տնտեսության արդի չափորոշիչներ: Ուստի, մեր համոզմամբ, թվային տնտեսության ստեղծումը և զարգացումը պետք է իրականացվեն համակարգված ու շարունակական միջոցառումների արդյունքում՝ նախապես ապահովելով տեղեկատվական, տեխնիկական և կրթական անհրաժեշտ հիմք, և միայն այդ գործընթացների լիարժեք իրագործումից հետո կարելի է անցում կատարել էլեկտրոնային ծառայությունների լայնածավալ կիրառմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=107095
2. Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշում, փետրվար, 2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957
3. Bhaskar Chakravorti, Ajay Bhalla, and Ravi Shankar Chaturvedi, Which Economies Showed the Most Digital Progress in 2020?, December 2020, https://hbr.org/2020/12/which-economies-showed-the-most-digital-progress-in-2020#
4. Brad Smith, Microsoft launches initiative to help 25 million people worldwide acquire the digital skills needed in a COVID-19 economy, Jun 30, 2020, https://blogs.microsoft.com/blog/2020/06/30/microsoft-launches-initiative-to-help-25-million-people-worldwide-acquire-the-digital-skills-needed-in-a-covid-19-economy/
5. Daniela Coppola, E-commerce share of total global retail sales from 2015 to 2024, 21 Apr, 2021, https://www.statista.com/statistics/534123/e-commerce-share-of-retail-sales-worldwide/
6. Digital Markets, eCommerce, https://www.statista.com/outlook/dmo/ecommerce/worldwide
7. E.Yu. Gorbachevskaya, Significance Of Electronic Commerce In Development Of Rf Innovative Economy, December 2018, https://www.researchgate.net/publication/329723371_Significance_Of_Electronic_Commerce_In_Development_Of_Rf_Innovative_Economy
8. ecommerceDB.com Trend Report, eCommerce 2020: trends and Outlook, September 2020, https://www.statista.com/study/79060/ecommerce-trends-and-outlook/
9. How COVID-19 triggered the digital and e-commerce turning point, March 2021,UNSTAD, https://unctad.org/news/how-covid-19-triggered-digital-and-e-commerce-turning-point
10. J. Clement, Leading retail websites worldwide 2020, by traffic, 12 Feb, 2021, https://www.statista.com/statistics/274708/online-retail-and-auction-ranked-by-worldwide-audiences/
11. Simon Kemp, DIGITAL 2021: GLOBAL OVERVIEW REPORT, 27 Jan, 2021, https://datareportal.com/reports/digital-2021-global-overview-report
12. Statista Digital Market Outlook, eCommerce report 2020, November 2020, https://www.statista.com/study/42335/ecommerce-report/
13. Volodymyr Fedorychak, 20 Digital Transformation Statistics You Should Know in 2021, April, 2021, https://lvivity.com/digital-transformation-statistics

Нарине ПЕТРОСЯН
Магистрант, АГЭУ

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

ТЕКУЩИЕ ТЕНДЕНЦИИ В ЦИФРОВОЙ ЭКОНОМИКЕ: БУДЕТ ЛИ МИР ТАКИМ ЖЕ ПОСЛЕ COVID-19?

В 2020 году из-за пандемии мировая экономика сократилась примерно на 4,4%. В то же время в мире наблюдается глобальный тренд - цифровизация. Поскольку страны сталкиваются с риском непрерывных ограничений, обусловленных новой волной пандемии, цифровые процессы (дистанционное обучение, электронная коммерция, дистанционная работа и т. д.) становятся все более популярными. Но как это проявилось во всем мире и что должны сделать правительства, предприятия и инвесторы, чтобы вырваться из продолжающейся цепочки риска и убытков? В статье автор рассматривает вышеуказанные вопросы.

Ключевые слова: *цифровая экономика, вызовы, глобализация, стратегия, цифровизация*

Narine PETROSYAN
MA Student, ASUE

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

CURRENT TRENDS IN DIGITAL ECONOMY: WILL THE WORLD BE THE SAME AFTER COVID-19?

In 2020, due to the pandemic, the global economy contracted by about 4.4%. At the same time, there is a global trend in the world - digitalization. As countries face a new risk of continuing constraints due to a new wave of pandemics, digital processes (distance learning, e-commerce, telecommuting, etc.) are becoming more and more popular. But how has this manifested itself around the world, and what must governments, businesses and investors do to break out of the ongoing chain of risk and loss? The author addresses the above-mentioned issues in the paper.

Key words: *digital economy, challenges, globalization, strategy, digitalization*

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ. Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ Է ՀՀ-Ն ՄՐՑՈՒՆԱԿ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_89

Հիմնաբառեր. *արտահանում, համեմատական առավելություններ, մասնագիտացում*



Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

ORCID - https://orcid.org/0000-0001-7669-8626

Արտահանման աճը կարևոր է տնտեսական անվտանգության, կայուն տնտեսական աճի ապահովման, արտաքին ցնցումներին դիմակայելու տեսանկյունից: ՀՀ տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից են արտահանման խթանումն ու բազմազանեցումը: Արտահանման խթանման քաղաքականության իրականացման համար, նախևառաջ, անհրաժեշտ է բացահայտել այն ոլորտները, որոնք ունեն համապատասխան ներուժ:

Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ արտահանման համեմատական առավելություններն ու արտահանման մասնագիտացումը՝ նպատակ ունենալով բացահայտելու արտահանման ներուժ ունեցող ապրանքները:

Վերջին տարիներին ՀՀ-ում քաղաքականություն մշակողները հատուկ շեշտադրում են կատարում արտահանման զարգացման, ինչպես նաև արտահանման կառուցվածքի բարելավման անհրաժեշտություն վրա[1]: Միաժամանակ, միջազգային առևտրի վաղ տեսություններում առկա է այն պնդումը, որ երկրների միջև տեղի ունեցող առևտուրը հիմնվում է արտադրության ծախսերի տարբերության վրա: Այլ կերպ ասած, երկրները մասնագիտանում են այն ապրանքների արտադրության և արտահանման մեջ, որոնց գծով ունեն համեմատական առավելություն: Հետևապես՝ արտահանման խթանման քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել այն

[1] https://armenpress.am/arm/news/944757.html և ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, հուլիս, 2020, էջ 32:

ապրանքները, որոնք մրցունակ են արտաքին շուկաներում և ունեն արտահանման ներուժ, ապա միայն խթանող քաղաքականությամբ նպաստել դրանց արտահանման ծավալների ավելացմանը:

Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ արտահանման ներուժային ուղղությունները, որոնց գնահատման համար կիրառվել է Ուլլայի և Կազուոյի (Ullah M. S. և Kazuo I[2]) առաջարկած՝ ապրանքների քարտեզագրման մեթոդաբանությունը, որը հիմնված է համեմատական առավելությունների տեսության վրա: Վերջինս հատկապես կիրառելի է բնական ռեսուրսների արտահանման վրա հիմնված երկրների առևտրի օրինաչափությունները բացահայտելիս, ինչով էլ պայմանավորված է ՀՀ արտահանման մրցունակության գնահատման համար ապրանքների քարտեզագրման մոդելի ընտրությունը:

Ապրանքների քարտեզագրման մոդելը բաղկացած է երկու ցուցանիշից՝ նորմալացված բացահայտված համեմատական առավելությունների գործակից (NRCA) և առևտրային հաշվեկշռի գործակից (TBI): Առաջին ցուցանիշը վերաբերում է արտահանման միջազգային մրցունակությանը, իսկ երկրորդը՝ արտահանման մասնագիտացմանը: Համեմատական առավելությունների ցուցանիշը թույլ է տալիս առանձնացնել այն ապրանքները, որոնք մրցունակ են արտաքին շուկաներում: Նորմալացված բացահայտված համեմատական առավելությունների գործակիցն համեմատական առավելությունների գնահատման նոր և կատարելագործված ցուցանիշ է, որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$NRCA_{ij} = \frac{E_{ij}}{E} - \frac{E_j E_i}{EE},$$

որտեղ՝

NRCAij – i-րդ երկրի j ապրանքի գծով նորմալացված բացահայտված համեմատական առավելությունն է,

Eij - i-րդ երկրից j ապրանքի արտահանման ծավալն է,

E- համաշխարհային արտահանումն է,

Ej - j ապրանքի համաշխարհային արտահանումն է,

Ei - i-րդ երկրի արտահանումն է:

NRCA ցուցանիշը գտնվում է -0,25 մինչև 0,25 սահմաններում, 0-ն համեմատական առավելությունների չեզոք կետն է: NRCA դրական արժեքը ցույց է տալիս, որ i-րդ երկրից j ապրանքի արտահանման ծավալը բարձր է համեմատական առավելությունների չեզոք մակարդակից, հետևապես՝ երկիրն ունի համեմատական առավելություն j ապրանքի արտահանման գծով և հակառակը: Որքան բարձր է NRCA-ն, այնքան մեծ է համեմատական առավելությունը:

Առևտրային հաշվեկշռի գործակիցը (TBI) ցույց է տալիս երկրի արտահանման մասնագիտացման աստիճանը՝ հաշվարկվելով հետևյալ բանաձևով.

$$TBI_{ij} = \frac{(X_{ij} - M_{ij})}{(X_{ij} + M_{ij})},$$

որտեղ՝

TBIij – i-րդ երկրի j ապրանքի առևտրային հաշվեկշռի ցուցանիշն է,

Xij - i-րդ երկրից j ապրանքի արտահանման ծավալն է,

Mij - i-րդ երկրի j ապրանքի ներմուծման ծավալն է:

TBIij գտնվում է -1-ից մինչև +1 սահմաններում: Առևտրային հաշվեկշռի դրական ցուցանիշը ենթադրում է, որ երկիրը j ապրանքի զուտ արտահանող է, իսկ բացասական ցուցանիշը՝ զուտ ներմուծող:

Ապրանքների քարտեզագրման սխեման ներկայացված է աղյուսակ 1-ում: Ըստ վերոնշյալ երկու ցուցանիշի՝ ապրանքները դասակարգվում են չորս խմբում:

Ա խմբում ներառված են այն ապրանքները, որոնք ունեն համեմատական առավելություններ (NRCA>0), և երկիրն այդ ապրանքների զուտ արտահանողն է: Բ խմբում ընդգրկված են այն ապրանքները, որոնց գծով երկիրն ունի համեմատական առավելություններ, սակայն մասնագիտացած չէ դրանց արտահանման մեջ, այսինքն՝ զուտ ներմուծող է: Գ խմբում ներկայացված են այն ապրանքները, որոնք չունեն համեմատական առավելություն՝ հա-

[2] Ullah M.S., Kazuo I. Dynamics of Comparative Advantage and Export Potentials in Bangladesh, 2012.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ապրանքների քարտեզագրման սխեման

Խումբ Բ	Խումբ Ա
NRCA >0, TBI<0 Երկիրն ունի համեմատական առավելություն Զուտ ներմուծող է	NRCA >0, TBI>0 Երկիրն ունի համեմատական առավելություն Զուտ արտահանող է
Խումբ Դ	**Խումբ Գ**
NRCA <0, TBI<0 Երկիրը չունի համեմատական առավելություն Զուտ ներմուծող է	NRCA <0, TBI>0 Երկիրը չունի համեմատական առավելություն Զուտ արտահանող է

մածայն նորմալացված բացահայտված համեմատական առավելությունների ցուցանիշի, սակայն երկիրը դրանց զուտ արտահանողն է: Դ խմբի ապրանքները չունեն համեմատական առավելություն և ունեն բացասական առևտրային հաշվեկշիռ:

Հոդվածում վերլուծվել են ՀՀ-ից արտահանվող 222 ապրանքի տվյալներ՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի եռանիշ դասակարգման (SITC Rev. 3): Հաշվի առնելով 2020 թ. մի շարք ապրանքների (պարենային, դեղագործական)[3] նկատմամբ արտահանման սահմանափակումների համատարած կիրառումը՝ պայմանավորված համավարակով, դիտարկել ենք 2019 թ. ՀՀ արտահանման ցուցանիշները՝ հիմնվելով ՄԱԿ-ի Միջազգային առևտրի վիճակագրական տվյալների բազայի վրա (UN Comtrade)[4]:

ՀՀ-ից արտահանվող ապրանքների քարտեզագրումը ներկայացված է աղյուսակ 2-ում: Քանի որ համեմատական առավելությունները բացատրվում են ռեսուրսների հարաբերական առատությամբ, խմբերում ընդգրկված ապրանքներն արտացոլել ենք ըստ դրանց ռեսուրսատարության:

Հայաստանը համեմատական առավելություններ ունի ուսումնասիրված 222 ապրանքախմբից 32-ի գծով (աղյուսակ 2-ի Ա և Բ խմբերում ընդգրկված արտադրատեսակներ): Ա խմբում ներառված են ՀՀ-ից արտահանվող այն արտադրատեսակները, որոնց համեմատական առավելությունների և առևտրային հաշվեկշռի գործակիցները դրական են, այլ կերպ ասած, այս խումբը բաղկացած է մրցունակ արտադրատեսակներից, որոնց արտահանման մեջ երկիրը մասնագիտացած է: Հայաստանը ամենամեծ համեմատական առավելությունն ունի «Պղնձի հանքաքար, խտանյութ», «Ծխախոտ՝ մշակված», «Ոգելից խմիչք», «Զուգուն», «Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ», «Ալյումին», «Էլեկտրական հոսանք» ապրանքախմբերի արտահանման մեջ (գծապատկեր 1):

Մետաղների («Պղնձի հանքաքար, խտանյութ», «Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ», «Զուգուն», «Գունավոր մետաղների ջարդոն և թափոն», «Սև մետաղի ջարդոն և թափոն», «Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ», «Հանքաքար, խտանյութ, բազային մետաղներ») առևտրային հաշվեկշռի գործակիցը մոտ է մեկին, այսինքն՝ Հայաստանն այս ապրանքախմբերից ապրանք չի ներմուծում: «Ծխախոտ՝ մշակված», «Ոգելից խմիչք», «Միրգ՝ պատրաստված կամ պահածոյացված», «Զուկ՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած», «Էլեկտրական հոսանք» ապրանքախմբերն ունեն բավական բարձր զուտ արտահանման ցուցանիշ (TBI>0.7): Ցածրորակ աշխատուժ պահանջող ապրանքատեսակներից ՀՀ-ն մրցունակ է հագուստի, հագուստի պարագաների արտահանման մեջ: Բարձրորակ աշխատուժ պահանջող ապրանքնատեսակներից Ա խմբում ընդգրկված է երկու տեսակի ապրանք՝ «Ժամացույց» և «Ոսկերչական իրեր՝ չնշված այլ տեղում»: Տեխնոլոգիատար ապրանքներից ՀՀ-ն համեմատական առավելություններ ունի միայն «Հաշվիչներ՝ չնշված այլ

[3] Movsisyan Shushan, Covid-19 pandemic promotes trade protectionism // Амберд. 2020. №2 (3), URL: https://cyberleninka.ru/article/n/covid-19-pandemic-promotes-trade-protectionism

[4] https://comtrade.un.org/

ՀՀ-ից արտահանվող ապրանքների քարտեզագրումը (2019 թ.)*

ԽՈՒՄԲ Բ

Ռեսուրսատար արտադրանք
- Բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված, չնշված այլ տեղում
- Միրգ, ընկուզեղեն
- Շոկոլադ, կակաո պարունակող այլ մթերք
- Ոչ ալկոհոլային ըմպելիք՝ չնշված այլ տեղում
- Չմշակված բանջարեղեն՝ չնշված այլ տեղում
- Մարգարիտ, թանկարժեք քարեր

Տեխնոլոգիատար արտադրանք
- Միաթել ձողիկներ (պլաստմասսայից)
- Տպագրական, կազմարարական սարքավորումներ, մասեր

Ցածր որակավորմամբ աշխատուժ պահանջող ապրանքներ
- Ապակյա իրեր

ԽՈՒՄԲ Ա

Ռեսուրսատար արտադրանք
- Կենդանի կենդանիներ
- Պանիր, կաթնաշոռ
- Ձուկ՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած
- Բանջարեղեն
- Միրգ՝ պատրաստված կամ պահածոյացված
- Ոգելից խմիչք
- Ծխախոտ՝ մշակված
- Այլ չվերամշակված հանքային նյութեր
- Սև մետաղի ջարդոն և թափոն
- Պղնձի հանքաքար, խտանյութ
- Հանքաքար, խտանյութ, բազային մետաղներ
- Գունավոր մետաղների ջարդոն և թափոն
- Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ
- Սալիկներ, գորշ ածուխ, տորֆ
- Էլեկտրական հոսանք
- Ձուգուն
- Ալյումին

Ցածր որակավորմամբ աշխատուժ պահանջող ապրանքներ
- Հագուստ՝ չհյուսված (տղ.)
- Հագուստ՝ չհյուսված (կն.)
- Հագուստի պարագաներ, գործվածք

Տեխնոլոգիատար արտադրանք
- Հաշվիչներ՝ չնշված այլ տեղում

Բարձրորակ աշխատուժ պահանջող արտադրատեսակներ
- Ժամացույց
- Ոսկերչական իրեր՝ չնշված այլ տեղում

ԽՈՒՄԲ Դ

- այլ 184 արտադրատեսակ

ԽՈՒՄԲ Գ

Ռեսուրսատար արտադրանք
- Ձուկ, խեցգետնանմաններ՝ պատրաստված կամ պահածոյացված, չնշված այլ տեղում
- Մորթեղեն՝ չմշակված
- Թուղթ և թղթի թափոն
- Կաշվե իրեր՝ չնշված այլ տեղում

Տեխնոլոգիատար արտադրանք
- Այլ շարժիչ և ուժային կայանք, մասեր (ոչ էլեկտրական)
- Մասեր՝ չնշված այլ տեղում, մշակման հաստոցների համար

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներն ըստ UN COMTRADE-ի տվյալների:

տեղում» ապրանքախմբի ապրանքների արտահանման մեջ և մասնագիտացած է դրանց արտադրության մեջ: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Ա խմբում ներառված են ՀՀ արտահանման առանցքային նշանակության ապրանքները:

Բ խմբում մրցունակ ապրանքներն են, որոնց արտահանման մեջ, սակայն, Հայաստանը մասնագիտացած չէ: Ունենալով համեմատական առավելություններ՝ երկիրն այս ապրանքների զուտ ներմուծող է, ինչը նշանակում է, որ դրանց նկատմամբ կա ներքին պահանջարկ, և խթանող քաղաքականությամբ հնարավոր է նվազեցնել առևտրային հաշվեկշռի պակասուրդն ու մեծացնել արտահանման ծավալը: Ռեսուրսատար ապրանքներից այս խմբում ներառված են միրգը, բանջարեղենը, ընկուզեղենը, ոչ ալկոհոլային ըմպելիքները, շոկոլադը, ինչպես նաև «Մարգա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ ամենաբարձր համեմատական առավելություններ ունեցող 10 ապրանքը (2019 թ.)

րիտ և թանկարժեք քարեր» ապրանքախումբը, ցածր որակավորմամբ աշխատուժ պահանջող ապրանքատեսակներից՝ «Ապակյա իրեր» ապրանքախումբը, տեխնոլոգիական ապրանքներից՝ «Միաթել ձողիկներ (պլաստմասսայից)» և «Տպագրական, կազմարարական սարքավորումներ, մասեր» ապրանքատեսակները:

Գ խմբում այն ապրանքներն են, որոնց նորմալացված բացահայտված համեմատական առավելությունների գործակիցը փոքր է զրոյից, իսկ առևտրային հաշվեկշռի գործակիցը մեծ է զրոյից: Սրանք ապրանքներ են, որոնց արտահանման գծով երկիրը չունի համեմատական առավելություն և դրանց զուտ արտահանողն է: Այս խմբում ընդգրկված են միայն ռեսուրսատար և տեխնոլոգիատար ապրանքները, մասնավորապես՝ «Ձուկ, խեցգետնանմաններ՝ պատրաստված կամ պահածոյացված, չնշված այլ տեղում», «Մորթեղեն՝ չմշակված», «Թուղթ և թղթի թափոն», «Կաշվե իրեր՝ չնշված այլ տեղում», «Այլ շարժիչ և ուժային կայանք, մասեր (ոչ էլեկտրական)» և «Մասեր՝ չնշված այլ տեղում, մշակման հաստոցների համար» ապրանքախմբերը: Նշված խմբի գոյությունը բացատրվում է նրանով, որ թեև այստեղ ներառված ապրանքները մրցունակ չեն համաշխարհային շուկայում, սակայն, հնարավոր է՝ երկիրը համեմատական առավելություններ ունի որոշակի երկրների կամ երկրների խմբի հետ առևտրում[5] (օրինակ՝ ԵԱՏՄ):

Այսպիսով՝ Բ և Գ խմբերում ներառված են այն արտադրատեսակները, որոնց արտահանման խթանման քաղաքականությամբ հնարավոր է ավելացնել արտահանման ծավալները, բարելավել առևտրային հաշվեկշիռը:

Ապրանքների մեծ մասը ներկայացված է Դ խմբում, ինչն օրինաչափ է յուրաքանչյուր երկրի համար: Ա և Դ խմբի ապրանքներն ընդհանուրի 93,3%-ն են, ինչը ցույց է տալիս համեմատական առավելությունների և միջազգային շուկայում երկրի՝ որպես զուտ արտահանողի կամ զուտ ներմուծողի դիրքավորման ուժեղ կապը[6]:

Աղյուսակ 3-ում ներկայացված են ՀՀ-ից արտահանվող հիմնական արտադրատեսակները: Ինչպես երևում է աղյուսակից, ամենից շատ արտահանվող ապրանքատեսակներն առավելապես ներկայացնում են Ա խումբը և միայն «Մարգարիտ, թանկարժեք քարեր» ապրանքատեսակը՝ Բ խումբը: Վերջին ապրանքախմբի ապրանքները ներմուծվում են ՀՀ, վերամշակվում և արտահանվում:

[5] Ishchukova N. & Smutka Lubos, Comparative Advantage: Products Mapping of the Russian Agricultural Exports. Agris On-line Papers in Economics and Informatics. 5. 13-24, 2013, p. 21.

[6] Ishchukova, N. & Smutka, Lubos. (2013). Comparative Advantage: Products Mapping of the Russian Agricultural Exports. Agris On-line Papers in Economics and Informatics. 5, 13-24, page 21.

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ-ից արտահանվող գլխավոր 10 արտադրատեսակը, 2019 թ.

Ապրանքի ծածկագիր	Ապրանքի անվանում	Արտահանում, մլն դոլար
283	Պղնձի հանքաքար, խտանյութ	626,7
122	Ծխախոտ՝ մշակված	290,4
112	Ոգելից խմիչք	281,3
971	Ոսկի, ոչ մոնետար, բաց. հանքաքարի	230,4
671	Չուգուն	142,4
684	Ալյումին	98,5
289	Թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութ	84,6
841	Հագուստ՝ չհյուսված (տղ.)	68,2
351	Էլեկտրական հոսանք	65,6
667	Մարգարիտ, թանկարժեք քարեր	59,7

Ամփոփելով նշենք, որ ՀՀ-ն համեմատական առավելություններ ունի հիմնականում մետաղների, ծխախոտի, ոգելից խմիչքների, որոշ գյուղատնտեսական ապրանքների, էլեկտրաէներգիայի, հագուստի, իսկ մեծ ավելացված արժեք ունեցող ապրանքներից՝ հաշվիչների, ժամացույցի, ոսկերչական իրերի արտահանման մեջ: Արտահանման ներուժային ուղղություններից են միրգը, բանջարեղենը, ոչ ալկոհոլային ըմպելիքները, մորթեղենը, կաշվե իրերը, թուղթը, թանկարժեք քարերը, ապակյա իրերը, տպագրական, կազմարարական սարքավորումները, մշակման հաստոցների մասերը: Հարկ է նշել, որ «համեմատական առավելությունները» կայուն հասկացություն չէ, և արտահանման զարգացումը, հանգեցնելով տնտեսական աճի, իր հերթին, երկրի համեմատական առավելությունները տեղափոխում է դեպի ավելի բարձր ավելացված արժեք ունեցող ոլորտներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, հուլիս, 2020:
2. Ishchukova N. & Smutka Lubos, Comparative Advantage: Products Mapping of the Russian Agricultural Exports. Agris On-line Papers in Economics and Informatics. 5, 2013, 13-24.
3. Shushan Movsisyan Covid-19 pandemic promotes trade protectionism. Амберд, 2020, №2 (3), URL: https://cyberleninka.ru/article/n/covid-19-pandemic-promotes-trade-protectionism
4. Ullah M.S., Kazuo I., Dynamics of Comparative Advantage and Export Potentials in Bangladesh, 2012.
5. Widodo Tri, Comparative Advantage: Theory, Empirical Measures And Case Studies, Review of Economic and Business Studies, issue 4, 2009.
6. https://armenpress.am/arm/news/944757.html
7. https://comtrade.un.org/

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ЭКСПОРТНЫЙ ПОТЕНЦИАЛ АРМЕНИИ: В КАКИХ СФЕРАХ АРМЕНИЯ ЯВЛЯЕТСЯ КОНКУРЕНТОСПОСОБНОЙ?

Развитие экспорта важно с точки зрения экономической безопасности, обеспечения стабильного экономического роста, устойчивости к внешним сотрясениям. Одним из ключевых направлений экономической политики РА является стимулирование и диверсификация экспорта. Для осуществления политики стимулирования экспорта, прежде всего, необходимо выявлять отрасли, обладающие экспортным потенциалом.

В статье были изучены сравнительные экспортные преимущества и экспортная специализация РА с целью выявления товаров с экспортным потенциалом.

Ключевые слова: *экспорт, сравнительные преимущества, специализация*

Shushan MOVSISYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND WORLD

EXPORT POTENTIAL OF ARMENIA: WHICH AREAS ARMENIA IS COMPETITIVE IN?

Export growth is crucial in terms of ensuring economic security and stable economic growth, as well as withstanding external shocks. One of the key directions of Armenian economic policy is export promotion and diversification. Implementation of export promotion policy primarily requires identification of the industries with export potential.

The paper aims at studying comparative advantage and export specialization of the Republic of Armenia and revealing products with export potential.

Keywords: *export, comparative advantage, specialization*

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՏԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_96

Հիմնաբառեր. *բարձր տեխնոլոգիատար ապրանք, արտահանում, դասակարգում, միջազգային առևտուր*

Հոդվածում միջազգային առևտրի ստանդարտ դասակարգման հնգանիշ մակարդակում ուսումնասիրվել է ՀՀ բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանման շարժընթացը 2007-2019 թթ.-ի ընթացքում, բարձր տեխնոլոգիատար ապրանքների ընդհանուր աճին նպաստումը, հաշվարկվել է ՀՀ արտահանումն ըստ բարձր տեխնոլոգիատարության խոշորացված խմբերի: Իրականացվել է համեմատություն ԵԱՏՄ երկրների հետ: Պարզվել է, որ չնայած 2016 թ.-ին սկիզբ առած տպավորիչ աճին, որի արդյունքում 2019 թ.-ին, 2007 թ.-ի համեմատ, բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումն ավելացել է շուրջ ինն անգամ, մշակող արդյունաբերության արտահանման մեջ այդ ապրանքների տեսակարար կշիռը շարունակում է մնալ ցածր՝ այլ երկրների և աշխարհի միջինի համեմատությամբ:

Բարձր տեխնոլոգիատար ապրանքները (ԲՏԱ) միջազգային առևտրի ամենադինամիկ բաղադրիչներից են: ԲՏԱ արտահանումը համարվում է երկրի կայուն տնտեսական աճի կարևոր գործոն: Ժամանակակից բարձր մրցակցային համաշխարհային շուկայում ԲՏԱ արտադրելու և արտահանելու կարողությունը երկրի նորարարական հզորության ցուցիչ է:

ՏՀԶԿ-ն մշակել է արտահանվող ապրանքների դասակարգման քառաստիճան համակարգ, համաձայն որի՝ ապրանքներն ըստ տեխնոլոգիատարության դասակարգվում են որպես բարձր, միջինից բարձր, միջինից ցածր և ցածր տեխնոլոգիատար: Դասակարգումը հիմնված է հետազոտության և մշակումների վրա կատարված ծախսերի կարևորության վրա՝ կապված արտահանման



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումը (մլն ԱՄՆ դոլար) և դրանց տեսակարար կշիռը մշակող արդյունաբերական ապրանքների արտահանման մեջ (%)

համար ապրանքներ արտադրող մշակող արդյունաբերության տարբեր ճյուղերի համախառն արտադրանքի և ավելացված արժեքի հետ[1]: Բարձր տեխնոլոգիատար ապրանքների օրինակ են օդանավերը, համակարգիչները, դեղագործական արտադրանքը և այլն[2]: Միջինից բարձր տեխնոլոգիատար ապրանքներ են համարվում տրանսպորտային միջոցները, էլեկտրական սարքավորումները, քիմիական նյութերի մեծ մասը: Միջինից ցածր տեխնոլոգիատար ապրանքներ են կաուչուկը, պլաստմասսան, հիմնական մետաղները և այլն: Ցածր տեխնոլոգիատար արդյունաբերությունը ներառում է սննդի վերամշակումը, տեքստիլը, հագուստը, կոշկեղենը և այլն:

ՀՀ ԲՏԱ արտահանումը և դրա տեսակարար կշիռն ընդհանուր մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման մեջ ներկայացված են գծապատկեր 1-ում[3]:

ՀՀ-ում բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումը, բացառությամբ 2009 թ., 2010 թ. և 2014 թ., շարունակաբար աճել է: Եթե 2007 թ. այն կազմում էր մոտ 5.2 մլն ԱՄՆ դոլար, որը ՀՀ ընդհանուր մշակող արդյունաբերության ընդամենը 1,1%-ն էր, ապա 2019 թ.՝ ավելի քան 45.6 մլն ԱՄՆ դոլար՝ ընդհանուր մշակող արդյունաբերական արտահանման շուրջ 10%-ը: 2007-2019 թթ.-ի ընթացքում բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումն աճել է միջինում 23%-ով, սակայն հիմնական առաջանցիկ աճն արձանագրվել է 2015-2016 թթ.-ից սկսած. միայն 2016 թ. աճը, նախորդ տարվա համեմատ, կազմել է գրեթե 84%: Մասնավորապես՝ ավելի քան 2,5 անգամ ավելացել է հեռահաղորդակցական սարքավորումների (ձայնի, պատկերների (այլ տվյալների) փոխանցման (ընդունման) սարքեր, ներառյալ լարային (անլար) ցանցում հաղորդակցության ապարատներ) արտահանումը: Եթե 2015 թ. վերոնշյալ ապրանքախումբն արտահանվում էր 12, ապա 2019 թ.՝ 24 երկիր՝ 1.39 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ (ընդ որում, ավելի մեծ ծավալով արտահանվել է դեպի Իրան, Նիդեռլանդներ, Հունգարիա, ՄԱԷ, Իռլանդիա և Շվեյցարիա): Դեղագործական ապրանքներից հակաշիճուկի, արյան այլ ֆրակ-

[1] ISIC REV. 3 TECHNOLOGY INTENSITY DEFINITION Classification of manufacturing industries into categories based on R&D intensities, https://www.oecd.org/sti/ind/48350231.pdf

[2] Eurostat indicators on High-tech industry and Knowledge – intensive services Annex 5 – High-tech aggregation by SITC Rev.4, https://ec.europa.eu/eurostat/cache/metadata/Annexes/htec_esms_an5.pdf

[3] Կազմվել է ըստ Համաշխարհային բանկի տվյալների, https://data.worldbank.org/indicator



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումը 2019 թ.՝ ըստ խոշորացված խմբերի, (մլն ԱՄՆ դոլար)[4]

ցիաների և պատվաստանյութերի արտահանումը 2016 թ., 2015 թ.-ի համեմատ, ավելի քան կրկնապատկվել է, իսկ 2018 թ.՝ ավելի քան քառապատկվել: Արտահանման գերակշիռ մասը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, անհամեմատ ավելի փոքր ծավալ՝ Ուզբեկստանին և Վրաստանին: 2016 թ.-ից սկսած՝ գազային տուրբինների մասերի արտահանումն էական նպաստում է ունեցել ԲՏԱ արտահանման աճին: Օպտիկական մանրաթելերի արտահանումը՝ հիմնականում դեպի Գերմանիա, Իսրայել, Նիդեռլանդներ և Ռուսաստանի Դաշնություն, 2019 թ., 2015 թ.-ի համեմատ, նույնպես աճել է կայուն տեմպերով՝ ավելանալով շուրջ 50%-ով և կազմելով 1.2 մլն ԱՄՆ դոլար: Լուսազգայուն կիսահաղորդչային սարքերի, լուսադիոդների՝ գերազանցապես Ռուսաստանի Դաշնություն արտահանման շեշտակի աճը ևս 2019 թ. նպաստել է ԲՏԱ ընդհանուր աճին: Նույն ժամանակահատվածում ԲՏԱ արտահանման աճին էական նպաստում է ունեցել նաև օրթոպեդիկ սարքավորումների արտահանումը՝ նախորդ տարվա համեմատ աճելով ավելի քան 60%-ով և կազմելով 1.58 մլն ԱՄՆ դոլար:

Ընդհանուր առմամբ, 2019 թ., 2015 թ.-ի համեմատ, ոչ միայն ավելացել է ԲՏԱ արտահանման տեսականին, այլև ծավալը: Համեմատության համար նշենք, որ եթե 2015 թ. ԲՏԱ արտահանման մեջ, ըստ միջազգային առևտրի ստանդարտ հնգանիշ դասակարգման (SITC), կար ընդամենը 4 ապրանք, որի մաքսային արժեքը գերազանցում էր 1 մլն ԱՄՆ դոլարը, ապա 2019 թ.՝ արդեն 11:

ՀՀ ԲՏԱ արտահանումն ըստ խոշորացված խմբերի ներկայացված է գծապատկեր 2-ում:

Ինչպես երևում է գծապատկերից, ՀՀ-ն բարձր տեխնոլոգիատար ապրանքներից գերազանցապես արտահանում է գիտատար և հեռահաղորդակցական սարքավորումներ, դեղագործական ապրանքներ և էլեկտրոնիկա:

Թեև նախորդ տարիների համեմատ ԲՏԱ արտահանման տեսակարար կշիռը տպավորիչ աճ է գրանցել, սակայն, այլ երկրների համեմատությամբ, ցուցանիշը բարելավման կարիք ունի: Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամ երկրներին, ապա վերջիններիս համեմատական ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 3-ում:

Ինչպես երևում է գծապատկերից, ԲՏԱ արտահանման տեսակարար կշռի ցուցանիշով ԵԱՏՄ-ում առաջատարը Ղազախ-

[4] Հաշվարկել է հեղինակը՝ UN COMTRADE-ի տվյալների հիման վրա:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

ԵԱՏՄ երկրների բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանման տեսակարար կշիռը մշակող արդյունաբերության մեջ[5]

ստանն է, որին հաջորդում է Ռուսաստանը, իսկ 2019 թ.-ից՝ Հայաստանը: Արդյունաբերական արտադրանքի արտահանման մեջ ԲՏԱ տեսակարար կշիռն աշխարհում 20 % է, իսկ այս առումով աշխարհի առաջատար Հոնգկոնգի ցուցանիշը 66% է:

Հատկանշական է, որ ՀՀ ԲՏԱ արտահանման աշխարհագրական ուղղության մեջ ԵԱՏՄ երկրների կշիռն առանց ՌԴ-ի աննշան է: Աղյուսակ 1-ում ներկայացված է առավել բարձր մաքսային արժեք ունեցող որոշ ապրանքատեսակների արտահանումումն ըստ երկրների:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ՀՀ ԲՏԱ-ն ԵԱՏՄ երկրներից գերազանցապես ՌԴ է արտահանվում, որոշ ապրանքատեսակների մասով փոքր ծավալով արտահանվում է նաև Ղազախստան և Բելառուս, մինչդեռ օրինակ Ղրղզստան որևէ ԲՏԱ չի արտահանվում: Աղյուսակ 2-ում ներկայացված է ԵԱՏՄ երկրների կողմից ԲՏԱ որոշ ապրանքների ներմուծումը: Ըստ այդմ՝ 2019 թ. Բելառուսը ավելի քան 107 մլն ԱՄՆ դոլարի հակաշիճուկ և արյան այլ ֆրակցիաներ է ներմուծել, մինչդեռ Հայաստանից ներմուծումը զրո է, Ղազախստանը ներմուծել է 119 մլն ԱՄՆ դոլարի ապրանք, որի աննշան մասն է միայն ներմուծվել Հայաստանից: ՀՀ-ն 2019 թ. գազային տուրբիններ արտահանել է բացառապես Շվեյցարիա, 2018 թ.-ին փոքր քանակով նաև՝ ՌԴ, այնինչ ԵԱՏՄ երկրներում գազային տուրբինների ներմուծումը 2019 թ. կազմել է ավելի քան 277 մլն ԱՄՆ դոլար, սակայն ՀՀ-ն այդ ապրանքատեսակն ընդհանրապես ԵԱՏՄ չի արտահանել:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

2019 թ. առավել բարձր մաքսային արժեք ունեցող բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումն ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար, SITC 4-րդ հրտ.)[6]

Հակաշիճուկ, արյան այլ ֆրակցիաներ և պատվաստանյութ (54163)		Գործիքներ, ապարատներ, մոդելներ՝ նախատեսված ցուցադրման համար (87452)		Գազային տուրբիններ (71499)		Տերմոստատ (87461)		Օպտիկական մանրաթելեր (88419)	
Երկիր	ԱՄՆ դոլար	Երկիր	ԱՄՆ դոլար	Երկիր	ԱՄՆ դոլար	Երկիր	ԱՄՆ դոլար	Երկիր	ԱՄՆ դոլար
Աշխարհ	7,882,522	Աշխարհ	2,587,078	Աշխարհ	1,888,822	Աշխարհ	1,853,692	Աշխարհ	1,225,914
ՌԴ	6,522,391	ՌԴ	2,171,695	Շվեյցարիա	1,888,822	Գերմանիա	646,84	Գերմանիա	373,328
Ուզբեկստան	584,421	Բելառուս	600,000			ՌԴ	478,908	Իսրայել	357,716
Վրաստան	386,507	Ղազախստան	130,000			Իտալիա	182,244	Պորտուգալիա	300,000
Ղազախստան	292,391	Բահրեյն	72,873			Ֆրանսիա	109,291	Նիդեռլանդներ	175,261
Ուկրաինա	79,980	Պերու	62,250			ՄԱԷ	99,902	ՌԴ	72,731

[5] Կազմվել է ըստ Համաշխարհային բանկի տվյալների, https://data.worldbank.org/indicator
[6] Կազմվել է UN COMTRADE-ի տվյալների հիման վրա:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

2019 թ. ԵԱՏՄ երկրների կողմից բարձր տեխնոլոգիատար որոշ ապրանքների ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար, SITC 4-րդ հրտ.)[7]

Երկիր	Հակաշիճուկ, արյան այլ ֆրակցիաներ և պատվաստանյութ (54163)	Գործիքներ, ապարատներ, մոդելներ՝ նախատեսված ցուցադրման համար (87452)	Գազային տուրբիններ (71499)	Տերմոստատ (87461)	Օպտիկական մանրաթելեր (88419)
Բելառուս	107,815,30	8,631,50	8,954,300	6,209,200	14,452,400
Ղազախստան	119,260,979	9,320,439	12,446,927	4,222,268	3,328,855
Ղրղզստան	8,265,881	324,446	737,792	152,053	37,099
Հայաստան	14,696,334	263,182	132,182	660,297	122,285
Ռուսաստան	772,433,288	54,693,921	255,526,821	52,648,313	62,695,479

Նույնն է պատկերն է նաև ԲՏԱ մյուս ապրանքատեսակների գծով: Հայաստանն օպտիկական մանրաթելեր է արտահանում Գերմանիա, Իսրայել, Պորտուգալիա, Նիդեռլանդներ, տերմոստատ՝ Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, ՄԱԷ, մինչդեռ ԵԱՏՄ երկրներից՝ միայն ՌԴ: Ակնհայտ է, որ մրցունակությունը չէ խնդիրը, գուցե արտադրության ծավալը բավարար չէ, որի հետևանքով ԵԱՏՄ շուկայի ներուժը չի օգտագործվում:

Պանելային տվյալների վրա հիմնված որոշ հետազոտություններ վկայում են, որ մարդկային կապիտալը, ՕՈՒՆ-ի ներհոսքը և միջազգային առևտրի բացությունն այն հիմնական գործոններն են, որոնք ազդում են բարձր տեխնոլոգիատար ապրանքների համաշխարհային շուկայում երկրի մասնակցության վրա[8]: Միաժամանակ, բարձր տեխնոլոգիատար արտահանման վրա անուղղակի ազդեցություն ունեն ինստիտուտները՝ մարդկային կապիտալի և ՕՈՒՆ-ի ներհոսքի վրա ազդելու ճանապարհով: Թե՛ մարդկային կապիտալի, թե՛ ՕՈՒՆ-ի ներհոսքի հետ կապված՝ ՀՀ-ում առկա են խնդիրներ: Մասնավորապես՝ մարդկային կապիտալի համաթվով 2018 թ. 157 երկրի շարքում ՀՀ-ն 0,57 միավորով զբաղեցնում էր 78-րդ հորիզոնականը՝ հետ մնալով ԱՊՀ բոլոր երկրներից, բացառությամբ՝ Տաջիկստանի: ՀՀ մարդկային կապիտալի համաթվի ոչ տպավորիչ վիճակը մեծապես պայմանավորված է դպրոցական կրթության ցածր որակով. հայաստանցի երեխան, որն ակնկալում է սովորել 11.1 տարի, իրականում, հաշվի առնելով իր ստացած գիտելիքի ծավալը, ստանում է ընդամենը 7.9 տարվա կրթություն. տարբերությունը՝ 3.2 տարի: Այսինքն՝ աշակերտը ստանում է 7.9 տարվան համարժեք գիտելիք, մինչդեռ դպրոց է հաճախում 3.2 տարի ավելի ժամանակահատված[9]: Ուստի Հայաստանի գերխնդիրը պետք է լինի դպրոցական կրթության՝ որպես ուսման մյուս փուլերի հիմքի որակի վերանայումը, որը հետագայում անուղղակիորեն դրական կերպով կարող է ազդել ԲՏԱ արտահանման վրա:

Ինչ վերաբերում է ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքին, ապա 2008 թ. ներդրումները հասել են գագաթնակետին (943.7 մլն ԱՄՆ դոլար), իսկ 2009 թ.-ից սկսած՝ շարունակաբար նվազել են՝ 2020 թ. կազմելով 47,2 մլն ԱՄՆ դոլար, որն ամենացածր ցուցանիշն է 1997 թ.-ից ի վեր[10]: Պետք է նաև նշել, որ, համավարակով պայմանավորված, ներդրումները կրճատվել են ամբողջ աշխարհում: Այնուամենայնիվ, ՀՀ-ն ներդրումային միջավայրը, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը վերանայման կարիք ունեն:

Այսպիսով՝ ՀՀ ԲՏԱ արտահանումը շեշտակիորեն աճել է՝ սկսած 2016 թ.-ից: Ընդ որում, մեծացել է ոչ միայն ԲՏԱ արտահանվող տեսականին, այլև ծավալը: Մեր երկիրը արտահանում է հիմնականում գիտատար և հեռահաղորդակցական սար-

[7] Կազմվել է UN COMTRADE-ի տվյալների հիման վրա:
[8] Tebaldi, E. The Determinants of High-Technology Exports: A Panel Data Analysis. Atl Econ J 39, 343–353 (2011). https://doi.org/10.1007/s11293-011-9288-9, https://link.springer.com/article/10.1007/s11293-011-9288-9#citeas
[9] Թադևոսյան Ռ. (2020), Մարդկային կապիտալը, մարդկային ներուժը և համավարակը, «Ամբերդ» տեղեկագիր, 2(3), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատ.:
[10] Տվյալները վերցվել են ՀՀ վճարային հաշվեկշռից, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

քավորումներ, դեղագործական ապրանքներ և էլեկտրոնիկա: Թեև դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ԲՏԱ արտահանման ծավալներն ավելացել են, սակայն մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման մեջ դրանց կշիռը դեռևս ցածր է մնում համաշխարհային միջինից: Ուստի, անհրաժեշտ է բարելավել ՀՀ արտահանման ներուժը՝ մեծացնելով ԲՏԱ արտադրության ծավալները և ընդլայնելով արտահանման աշխարհագրական ուղղությունները (հատկապես ԵԱՏՄ տարածքում իրացնելով արտահանման չօգտագործված հնարավորությունները): Հետազոտությունները վկայում են, որ ինստիտուտներն ուղղակիորեն չեն կարող ազդել ԲՏԱ արտահանման ծավալների մեծացման վրա, փոխարենը՝ նրանց ազդեցությունը միջնորդավորված է՝ ՕՈՒՆ-ի, մարդկային կապիտալի վրա ազդելու միջոցով: Հետևաբար՝ ՀՀ-ն կարող է նպաստել ԲՏԱ արտահանման աճին ՕՈՒՆ-ների ներգրավման և մարդկային կապիտալի զարգացման ճանապարհով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թադևոսյան Ռ. (2020), Մարդկային կապիտալը, մարդկային ներուժը և համավարակը, «Ամբերդ» տեղեկագիր, 2(3), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատ.:
2. ՀՀ վճարային հաշվեկշռից, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
3. Eurostat indicators on High-tech industry and Knowledge – intensive services Annex 5 – High-tech aggregation by SITC Rev. 4, https://ec.europa.eu/eurostat/cache/metadata/Annexes/htec_esms_an5.pdf
4. ISIC REV. 3 TECHNOLOGY INTENSITY DEFINITION Classification of manufacturing industries into categories based on R&D intensities, https://www.oecd.org/sti/ind/48350231.pdf
5. Tebaldi, E. The Determinants of High-Technology Exports: A Panel Data Analysis. Atl Econ J 39, 343–353 (2011), https://doi.org/10.1007/s11293-011-9288-9, https://link.springer.com/article/10.1007/s11293-011-9288-9#citeas
6. UN COMTRADE, https://comtrade.un.org/data/
7. World Bank, https://data.worldbank.org/indicator

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», аспирант АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ДИНАМИКА ЭКСПОРТА ВЫСОКОТЕХНОЛОГИЧНЫХ ТОВАРОВ РА

В статье рассматривается динамика экспорта высокотехнологичных товаров Республики Армения за 2007-2019 годы на пятизначном уровне стандартной классификации международной торговли, его вклад в общий рост высокотехнологичных товаров. Экспорт Армении рассчитан по укрупненным группам высоких технологий. Проведено сравнение со странами ЕАЭС. В результате оказалось, что несмотря на начавшийся с 2016 года впечатляющий рост, в результате которого в 2019 году экспорт высокотехнологичных товаров увеличился почти в девять раз по сравнению с 2007 г., его доля в экспорте продукции обрабатывающей промышленности по сравнению со средним мировым показателем остается низкой.

Ключевые слова: *высокотехнологичные товары, экспорт, классификация, международная торговля*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at
«Amberd» Research Center,
PhD student at ASUE

ARMENIA AND WORLD

THE DYNAMICS OF THE EXPORT OF HIGH-TECH PRODUCTS OF THE RA

The paper examines the dynamics of high-tech exports of the Republic of Armenia at the five-digit level of the standard classification of international trade during 2007-2019, its contribution to the general growth of high-tech goods. The export of Armenia has been calculated according to the enlarged groups of high-tech. A comparison has been made with the EEU countries. The research showed that despite the impressive growth since 2016, as a result of which in 2019 high-tech exports increased almost nine times compared to the 2007, its share in the manufacturing exports compared to the world average remains low.

Keywords: *high-technology goods, export, classification, international trade*

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ԻՍՐԱՅԵԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

DOI: 10.52174/2579-2989_2021_3_103

Հիմնաբառեր. *Իսրայել, Հիստադրութ, տնտեսություն, գաղափարախոսություն, աշխատավորական կառավարություն, կենտրոնական բանկ, կենտրոնական բանկի անկախություն*

Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ տնտեսագիտության տեսություն մասնագիտությամբ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստացել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում: Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

Իսրայելի կայուն տնտեսական զարգացման ֆենոմենը իշուվի ժամանակներից մինչև սոցիալիզմ և սոցիալիզմից մինչև մեր օրեր շարունակում է գիտական հետաքրքրություն ներկայացնել: Դա, մասնավորապես, ցույց է տալիս, թե ինչպես է կառավարության տնտեսական քաղաքականության հիմքում առկա փիլիսոփայության փոփոխությունն ազդում երկրի տնտեսության վրա: Սույն հոդվածում առաջ է քաշվել հետևյալ երկու հարցը. «Ինչո՞ւ Իսրայելի կառավարությունն արմատապես փոխեց իր տնտեսական քաղաքականությունը», և «Ինչպե՞ս Իսրայելի կենտրոնական բանկը ստացավ անկախություն»: Հոդվածը հիմնված է քեյս սթադի մեթոդի վրա: Վերջինս, որպես կանոն, օգտագործվում է ուսումնասիրության առարկան ավելի խորությամբ հասկանալու, այլ ոչ թե նոր տեսություն ստեղծելու համար: Հոդվածում հանգել ենք այն եզրակացության, որ Իսրայելի կառավարությունը կապիտալի շուկայի դերի բարձրացմամբ նպաստել է, որ վերջինս դառնա երկրի խոշոր վարկատուներից մեկը: Ավելին, հաշվի առնելով ԱՄՆ-ի իշխանությունների դիրքորոշումը պետական կառավարման համակարգում ԿԲ դերի վերաբերյալ, կառավարությունը խթանել է կենտրոնական բանկի հզորացման գործընթացը:

Ընդհանուր տեղեկություններ

Սիոնիստների՝ պատմական հրեական հողեր վերադառնալու գաղափարն առաջ էր քաշել դեռևս Հերցելը, որի պնդմամբ, հրեական պետության հիմնասյունները պետք է դառնային գաղափարական ու քաղաքական հարցերով զբաղվող հրեական համայնքը,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հրեական բուրգի շրջումը

ինչպես նաև նշված գաղափարների իրականացումն ապահովող հրեական ընկերությունը[1]: Սիոնիզմի նպատակը, այսպես կոչված, «Հրեական բուրգի» շրջումն էր, որը ենթադրում էր գյուղատնտեսության հենքի վրա հրեական միջին խավի ձևավորում՝ Պաղեստինի տարածքում հետագա տարածման և զարգացման հեռանկարով (գծապատկեր 1):

Առաջին հրեական կոնգրեսի կողմից 1897 թ. ընդունված Գեուլաթ Հաարեցի (Geulat Haaretz) դրույթները ենթադրում էին Ցարական Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի ճնշումներին ենթարկվող հրեաների վերադարձ դեպի Պաղեստին, որն իրականացվեց մասամբ, քանի որ հրեաների մեծ մասը նախընտրեց հաստատվել ԱՄՆ-ում[2]:

Հրեական բնակչության ավելացման արդյունքում, 1909 թ.-ին իշուվում[3] երկու կարևորագույն իրադարձություններ տեղի ունեցան: Առաջինը հրեական քաղաքի՝ Թել-Ավիվի հիմնադրումն էր, իսկ երկրորդը՝ էգալիտար գաղափարների վրա հիմնված հրեական գյուղատնտեսական համայնքների՝ կիբուցների ստեղծումը[4]: Հրեաների միգրացիան դեպի պատմական հողեր բացատրվում էր գերիշխող՝ սոցիալիստական և լեյբորիստական գաղափարախոսությամբ, որը, ըստ նրանց, կարող էր պաշտպանել հրեաներին ինչպես հակասեմիթականությունից, այնպես էլ կապիտալիստական համակարգի կողմից շահագործումից: Պատահական չէ, որ պետականության հիմնադրումից ի վեր՝ երեք տասնամյակ երկիրը ղեկավարում էր Իսրայելի լեյբորիստական կուսակցությունը:

Ներգաղթը և Իսրայելի տնտեսության կառուցվածքային փոփոխությունները

Հրեաների ներգաղթը դեպի Պաղեստին ընթացել է չորս հիմնական ալիաներով[5] (փուլերով).

- 1881-1903 թթ.՝ Ցարական Ռուսաստանում տեղի ունեցած ջարդերի հետևանքով (1-ին ալիա)[6],
- 1904-1914 թթ.՝ Եվրոպայում իշխող հակասեմիթական տրամադրությունների

[1] Herzl, Theodor. The Jews' State: A Critical English Translation. Jason Aronson, Incorporated, 1997.
[2] Berkowitz, Michael. Zionist Culture and West European Jewry before the First World War. Cambridge University Press, 1993.
[3] Իշուվը հրեա բնակչության հավաքական անվանումն է, որն օգտագործվում էր մինչև Իսրայելի պետության հիմնադրումը:
[4] Plaut, Steven. "The Israeli Economy from the Foundation of the State through the 21st Century." Middle East Quarterly 18, no. 3 (2011): p. 94.
[5] «Ալիա»՝ եբրայերենից թարգմանաբար նշանակում է ալիք: Տվյալ դեպքում խոսքը ներգաղթյալների «ալիքի» մասին է:
[6] Rivlin, Paul. The Israeli Economy from the Foundation of the State through the 21st Century. Cambridge University Press, 2010.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Պաղեստինի ՀՆԱ կառուցվածքը 1922 թ.[7]

Ոլորտ	Արաբական տնտեսություն (%)	Հրեական տնտեսություն (%)
Գյուղատնտեսություն	12.9	39.4
Արտադրություն	19.7	5.2
Շինարարություն	12.5	1.8
Ծառայություններ	54.9	53.6

հետևանքով (2-րդ ալիա)[8],

- 1917 թ.՝ Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության հետևանքով (3-րդ ալիա)[9],
- 1924-1929 թթ.՝ կապված Մեծ Բրիտանիայի կողմից Պաղեստինի գրավման և ԱՄՆ-ի կողմից արտագաղթի պայմանների խստացման հետ (4-րդ ալիա)[10]:

1922-1947 թթ. Պաղեստինում արագորեն աճում էր իշուվի տնտեսությունը: Սկզբնական շրջանում հրեաները կենտրոնացած էին գյուղատնտեսության բնագավառում, քանի որ սիոնիզմի գաղափարախոսները կասկածանքով էին վերաբերվում ծառայությունների ոլորտին՝ համարելով այն անարդյունավետ և «մակաբույծ»: Տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր աշխատուժի աճով, ինչպես նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Մեծ Բրիտանիայից եկող՝ ռազմական արտադրանքի պատվերներով[11]: Գյուղատնտեսության ոլորտում կուտակված եկամուտները տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացման) լայն հնարավորություններ էին ընձեռում, ինչը համահունչ էր Մեծ Բրիտանիայի կառավարության որդեգրած հովանավորչական քաղաքականությանը: Ավելին, աշկենազի հրեաների ներհոսքը, կապիտալից բացի, իր հետ բերեց նաև Եվրոպայում ձեռք բերած հմտություններ ու գիտելիքներ: Իշուվի տնտեսական աճը գերազանցեց արաբական տնտեսական աճը՝ փոխելով նաև իշուվի տնտեսության կառուցվածքը:

Ի տարբերություն 1922 թ.-ի, 1947 թ.-ին հրեական արդյունաբերական արտադրանքը գերազանցեց արաբականն ավելի քան 14 անգամ: Հրեաները 25 տարի բրիտանական մանդատի ներքո գտնվելու ընթացքում զգալիորեն բարելավել էին իրենց դիրքերը նաև շինարարության ոլորտում:

Այդուհանդերձ, կառուցվածքային փոփոխությունները տարբեր կերպ անդրադարձան հրեա ներգաղթյալների բազմազան խմբերի վրա. ղեկավար օղակը, որպես կանոն, բաղկացած Եվրոպայից ժամանած աշկենազի հրեաներից, կախյալ վիճակ պարտադրեց հարավային հրեաներին[12]:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Պաղեստինի ՀՆԱ կառուցվածքը 1947 թ.[13]

Ոլորտ	Հրեական տնտեսություն (%)	Արաբական տնտեսություն (%)
Գյուղատնտեսություն	10.7	38.9
Արտադրություն	33.1	2.3
Շինարարություն	6.0	2.4
Ծառայություններ	50.2	56.7

[7] Aharoni, Yair. The Israeli Economy (Routledge Revivals): Dreams and Realities. Routledge, 2014, Ch. 2, p. 19.
[8] Goldscheider, Calvin. Israel's changing society: Population, ethnicity, and development. Westview Press, 2002.
[9] Paul, p. 16.
[10] Tartakovsky, Eugene, and Shalom H. Schwartz. "Motivation for emigration, values, wellbeing, and identification among young Russian Jews." International Journal of Psychology 36, no. 2 (2001): pp. 88-99.
[11] Metzer, Jacob. The divided economy of mandatory Palestine. No. 11. Cambridge University Press, 1998.
[12] Bernstein, Deborah, and Shlomo Swirski. "The rapid economic development of Israel and the emergence of the ethnic division of labour." British Journal of Sociology (1982): pp. 64-85.
[13] Aharoni, op cit., p. 19.

Իսրայելի տնտեսությունը 1948-1985 թթ.

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 181-րդ բանաձևի[14] հիման վրա Իսրայելի պետության հիմնադրումն առաջացրեց հարևան արաբական պետությունների բուռն դժգոհությունը՝ հանգեցնելով Իսրայելի նկատմամբ ռազմական գործողությունների և արաբական 700,000 ու հրեական 300,000 բնակչության տեղահանման[15]: Ռազմական գործողություններով պայմանավորված՝ Իսրայելի կառավարության տնտեսական քաղաքականությունը ոչ միայն կոշտ էր, այլև միաժամանակ, կապված իշխող լեյբորիստական կուսակցության գաղափարախոսության հետ, ուներ էգալիտար (իրավահավասարության) բաղադրիչներ: Տնտեսության ֆինանսավորման համար կառավարությունը ստիպված էր դիմել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին փոխառությունների՝ զուգահեռաբար զգալիորեն բարելավելով ենթակառուցվածքները:

1950-ական թթ. կառավարությունը բախվեց մի շարք խնդիրների՝ աճող գործազրկություն, արտարժույթի և արտասահմանյան ապրանքների սակավություն, որոնց հաղթահարման նպատակով որդեգրեց ազգային արժույթի արժեզրկման քաղաքականություն: Վերականգնմանը որոշակի չափով նպաստեցին նաև Գերմանիայի կողմից վճարվող հատուցումները: Մեկ այլ խնդիր էր նաև ջրային և վառելիքային ռեսուրսների պակասությունը: Առաջինի լուծումը հանդիսացավ ազգային ջրամբարի կառուցումը, որը սկզբնական շրջանում նախատեսված լինելով գյուղատնտեսության կարիքները բավարարելու համար՝ 1990 թ.-ից սկսած՝ ապահովեց երկրի խմելու ջրի 50%-ը:

Նախքան իրանական հեղափոխությունը՝ Իրանն ապահովում էր Իսրայելի վառելիքի սպառման 90%-ը, ուստի, հեղափոխության հետևանքով մատակարարումների դադարեցումը մեծ սպառնալիք էր տնտեսության համար, ինչը, սակայն, հաղթահարվեց 1979 թ.՝ Եգիպտոսի հետ խաղաղության համաձայնագրի կնքմամբ, քանի որ Եգիպտոսն այլևս չէր խոչընդոտում նավթի արտահանումը դեպի Իսրայել: Վերջին իրադարձությունը դրականորեն ազդեց ինչպես հրեաների ազգային ինքնագիտակցության, այնպես էլ տնտեսության վրա՝ մի քանի ուղղություններով. վստահության մակարդակի բարձրացմամբ պայմանավորված՝ ներդրումների ներհոսք, ՀՆԱ կառուցվածքում ներդրումների տեսակարար կշռի աճ (1950-1970 թթ.-ի ընթացքում 33%-ից աճել է մինչև 65%)[16], որը հիմնականում արձանագրվեց ռազմարդյունաբերության ոլորտում, ինչն էլ, իր հերթին, հանգեցրեց ներքին պահանջարկի ավելացմանը: 1950-1970 թթ. ընկած ժամանակաշրջանն աչքի ընկավ Իսրայելի տնտեսության կայուն արագ աճով՝ կապված գերմանական ռազմատուգանքների (ռեպարացիաների) վճարման, աշխատուժի ավելացման և արտասահմանում բնակվող հրեաների դրամական փոխանցումների արդյունքում կապիտալի ներհոսքի հետ:

Այնուամենայնիվ, ներքին պահանջարկի չափազանցված աճի պայմաններում արտահանման խաթարումը և դրա հետևանքով առևտրի հաշվեկշռի վատթարացումը, ինչպես նաև 1973 թ. Յոմ Կիպուրի պատերազմը, որի ծախսերը կազմում էին ՀՆԱ 75%-ը, ինչպես նաև հետագայում վառելիքի համաշխարհային շուկայում գների աճը հանգեցրին տնտեսության վատթարացմանը, ինչն էլ պատճառ դարձավ, որ լեյբորիստներն իշխանությունը զիջեն Լիքուդ կուսակցությանը[17]: Վերջինս ձեռնամուխ եղավ տնտեսության ազատականացմանն ուղղված մի շարք քայլերի, սակայն անկարող գտնվեց լուծել գերխնդիրը՝ փրկել ազգային արժույթն արժեզրկումից:

Գծապատկեր 2-ից երևում է, որ 1980-ականների սկզբին Իսրայելում գնաճը հատել է 350%-ը, ինչը բացասաբար է անդ-

[14] United Nations, Resolution N181, for more information http://daccess-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/038/88/IMG/NR003888.pdf?OpenElement
[15] Paul, op cit., pp. 34-35.
[16] Chenery, Hollis B., and Michael Bruno. "Development alternatives in an open economy: the case of Israel." The Economic Journal (1962): pp. 79-103.
[17] Chenery, op cit., p. 46.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Իսրայելի սպառողական գների ինդեքսը 1960-2006 թթ.[18]

ռադարձել ֆինանսական շուկայի վրա:

Այս պայմաններում Իսրայելի կառավարությունն օժանդակության համար ստիպված էր դիմել ԱՄՆ-ին, որն էլ, իր հերթին, տնտեսության ազատականացմանն ուղղված մի շարք պահանջներ առաջադրեց:

Նշված ժամանակահատվածում կառավարության մեծագույն ձեռքբերումը գնաճի զսպումն էր, որը հնարավոր դարձավ միայն գների, աշխատավարձերի և փոխարժեքների ինդեքսավորման քաղաքականությունից հրաժարման արդյունքում: Մեկ այլ քաղաքական փոփոխություն էր սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերի կրճատումը: Ավելին, Իսրայելի կառավարությունը հրաժարվեց բոլոր տեսակի հովանավորչական միջոցառումներից՝ բացելով սահմանները միջազգային շուկաների համար, ինչպես նաև խթանելով արդյունավետությունն ու մրցակցությունը:

Նոր տնտեսական քաղաքականությունը և շուկայական բարեփոխումները

1985 թ. կառավարությունը ներկայացրեց Կայունացման ծրագիրը կամ Նոր տնտեսական քաղաքականությունը, որն ուղղված էր կարճ ժամկետում բյուջեի պակասուրդը կրճատելուն, վճարային հաշվեկշիռը բարելավելուն և գնաճի զսպմանը: Վերջինս հաջողվեց իրականացնել ազգային արժույթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի փոխարժեքի հետ կապակցման շնորհիվ: Ընդհանուր առմամբ, փաստաթղթի հիմնական նպատակն էր հանրային և մասնավոր սպառման կրճատմամբ գների կայունացումը, ինչը հանգեցրեց եռանիշ գնաճի կրճատմանը՝ 1985 թ.-ին դա հասցնելով 10%-ի[19]:

Բարեփոխումներն իրականացվում էին ամերիկացի լավագույն տնտեսագետների հետ համատեղ և, իհարկե, ԱՄՆ-ի ֆինանսական աջակցությամբ: Միաժամանակ, կառավարությունն իրավունք չուներ բյուջեի պակասուրդը լրացնելու արժույթի թողարկմամբ: Կայունացման ծրագրի ներքո Իսրայելի ԿԲ-ն ազատ էր իր գործողություններում, մասնավորապես՝ թիրախավորված գնաճի քաղաքականության վարման մեջ:

Տեղի ունեցան կապիտալի շուկայի ազատականացմանն ուղղված մի շարք կառուցվածքային փոփոխություններ: Այսպես՝ 1987-1989 թթ.-ի ընթացքում կառավարության վարկերի տեսակարար կշիռը 85%-ից նվազեց մինչև 15%, վերացավ պարտատոմսերի թողարկման լիցենզիայի պահանջը, Իսրայելի բանկի և ֆինանսների

[18] World Bank, Inflation, consumer prices (annual %) – Israel, available at https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=IL

[19] Aharoni, op cit., Ch. 3.

նախարարության կառուցվածքում ստեղծվեցին բանկերի և կապիտալի շուկայի վերահսկողության ստորաբաժանումներ: Այդ ամենի հետ մեկտեղ, ապակենտրոնացվեց ֆինանսական շուկան, էականորեն նվազեց պետության և հատկապես Հիստադրուտի դերը և մեկնարկեց մասնավորեցման լայնածավալ գործընթաց: Բանկերը դուրս մղվեցին ոչ բանկային գործունեության ոլորտից, կապիտալի շուկան ամրապնդվեց և ինտեգրվեց կապիտալի համաշխարհային շուկային[20]: Հիպերինֆլյացիան ստիպեց քաղաքական գործիչներին վերանայել իրենց տնտեսական ռազմավարությունը: Կապիտալի շուկան, որը նախկինում ուղղորդում էր կառավարությունը, ստացավ անկախության զգալի մակարդակ:

Պետություն-տնտեսություն հարաբերությունները քաղաքատնտեսական բարեփոխումներից հետո

Հիպերինֆլյացիոն ճգնաժամից հետո Իսրայելում վերանայվեց պետության դերը տնտեսության մեջ[21]՝ սահմանափակվելով տնտեսության մշտադիտարկման և կարգավորման գործառույթներով: Ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման ուղղությամբ հատկանշական էին համապատասխան մասնագիտացված կառույցների՝ արժեթղթերի հանձնաժողովի ու տնտեսական մրցակցության պաշտպանության մարմնի ստեղծումը, ինչպես նաև կենտրոնական բանկի անկախացումը: Իսրայելի բանկը դադարեցրեց տեղական արժույթով նպատակային վարկավորումը և զգալիորեն սահմանափակեց արտարժույթով տրամադրված վարկերը՝ նշված գործառույթները զիջելով մասնավոր բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին: Կառավարության կողմից թույլատրված մասնավորեցումը նպաստեց Թել-Ավիվի բորսայի զարգացմանը, իսրայելական ընկերությունների ցուցակմանը նաև միջազգային բորսաներում:

1985 թ.-ից հետո պետությունը խթանեց մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների ստեղծումը և Հիստադրուտին պատկանող կենսաթոշակային հիմնադրամների մասնավորեցման գործընթացը (մինչև 1985 թ. այն վերահսկում էր ընդհանուր կենսաթոշակային հիմնադրամների 60%-ը)[21]:

Մինչև 1985 թ. պետությունն ուղղակի սուբսիդիաներով անմիջական մասնակցություն էր ունենում գործնականում բոլոր տնտեսական գործընթացներում՝ նպատակ հետապնդելով ապահովելու լրիվ զբաղվածություն: Սակայն, այդուհետ առաջնահերթությունը տրվեց ավելացված արժեքի ստեղծմանը: Արդյունքում, զգալիորեն աճեցին օտարերկրյա ներդրումները՝ 1981-1990 թթ. միջինը կազմելով տարեկան 597 միլիոն ԱՄՆ դոլար, 2006-2007 թթ.՝ հասնելով մինչև 17,6 միլիարդ ԱՄՆ դոլարի[22]:

Կառավարությունը նպաստեց նաև իսրայելական բարձր տեխնոլոգիաների ոլորտի արագ աճին՝ ստեղծելով մի շարք վենչուրային հիմնադրամներ, որոնց մի մասը գործում էր հանրային միջոցների հաշվին, իսկ մյուս մասը համաֆինանսավորվում էր մասնավոր ներդրողների կողմից:

Ընդհանուր առմամբ, պետությունը հրաժարվեց լեյբորիստական գաղափարախոսությունից և ձևավորեց բիզնեսի համար բարենպաստ միջավայր: Կառավարությունն աստիճանաբար վաճառեց իր հիմնական ակտիվների մեծ մասը՝ միաժամանակ, չկորցնելով իր դերը և մինչ օրս աջակցում է գերակա ոլորտներին՝ ապահովելով տնտեսության և օտարերկրյա ներդրումների համար այնքան կարևոր ինստիտուցիոնալ միջավայրը:

Իսրայելի ԿԲ անկախացման հիմքում առկա իրավական գործոնները

Իսրայելի ԿԲ գործունեության անկախությունը հաստատվեց շատ ավելի վաղ, քան այլ երկրներում: Նախկինում թույլ և անկարող ԿԲ-ն իր անկախությանը հա-

[20] Նույն տեղում:
[21] Aharoni, Y., 1998. The changing political economy of Israel. T*he Annals of the American Academy of Political and Social Science,* 555(1), pp. 136-137.
[22] Maman, Daniel, and Zeev Rosenhek. The Israeli central bank: political economy, global logics and local actors. Taylor & Francis, 2011.p. 355.

սավ ոչ թե աշխարհաքաղաքական հանգամանքների, այլ ներքաղաքական վերադասավորումների արդյունքում՝ ոլորտի առաջատար գիտնականների և ԱՄՆ-ի՝ նորլիբերալ մեծամասնության կողմնակից քաղաքական գործիչների ազդեցության շնորհիվ: Ամենանշանակալից իրողությունն այն էր, որ «Իսրայելի բանկի» մասին օրենքում կատարված փոփոխությունն արգելեց ԿԲ-ին այդուհետ ֆինանսավորել կառավարության բյուջեի պակասուրդը՝ այդպիսով գլխավոր դրամատունը զերծ պահելով կառավարության քաղաքական ճնշումներից՝ հատկապես արժույթի թողարկման առումով:

Իսրայելի դեպքը եզակի է, քանի որ «Իսրայելի բանկի մասին» օրենքի փոփոխությունը տեղի ունեցավ հիպերինֆլյացիոն ճգնաժամի պայմաններում: Տնտեսագետներն ընդհանուր հայտարարի չեն եկել ճգնաժամի պատճառների վերաբերյալ: Ըստ փորձագետների մի խմբի, որը ղեկավարում էր Յորան Արիդորը, գնաճը բխում էր, այսպես կոչված, «պղպջակի էֆեկտից»: Նրանց առաջարկած լուծումն ազգային արժույթից հրաժարումն էր և տնտեսության դոլարայնացումը[23]: Իհարկե, այս լուծումը լավագույնը չէր, քանի որ Իսրայելի բանկն այդպիսով լիովին կկորցներ իր լծակները փողի բազայի նկատմամբ: Եթե Արիդորի ծրագիրն իրականություն դառնար, ապա Իսրայելի տնտեսությունն ավելի մեծ կախվածություն ձեռք կբերեր ԱՄՆ-ի տնտեսությունից: Հայտնի տնտեսագետ Մայքլ Բրունոյի գլխավորած մեկ այլ խումբ պնդում էր, որ գնաճը բյուջեի պակասուրդի ֆինանսավորման հետևանք էր[24]: Եթե նկատառումը ձևակերպենք ավելի պարզ կերպով, ապա դրա էությունն այն է, որ կառավարությունը շարունակաբար փոխառություններ է ներգրավում (ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա դոնորներից) և պարտքը վերադարձնելու համար ԿԲ-ին հանձնարարում թողարկել փող՝ այդ կերպ արժեզրկելով ազգային արժույթը: Այլ կերպ ասած, գնաճը ոչ այլ ինչ է, քան պարտքերի արատավոր շրջապտույտի հետևանք:

Այսպիսով՝ հանգում ենք այն եզրակացության, որ Իսրայելի օրինակը վերստին ապացուցում է Ածխի և պողպատի եվրոպական հանձնաժողովի առաջին նախագահ Ժան Մոնեի հետևյալ մտքի ճշմարտացիությունը. «Մարդիկ փոփոխություններն ընդունում են միայն այն ժամանակ, երբ բախվում են անհրաժեշտության և գիտակցում այն ժամանակ, երբ վրա է հասնում ճգնաժամը»[25]: Իսրայելցի քաղաքական գործիչները վերանայեցին իրենց գաղափարախոսության վրա հիմնված քաղաքականությունը միայն հիպերինֆլյացիոն ճգնաժամից հետո: Սկզբնական շրջանում նրանք տատանվում էին: Ավելին, ընդլայնողական դրամավարկային քաղաքականության կիրառմամբ նրանք ավելացրին փողի ծավալը՝ այն նվազեցնելու փոխարեն: Նրանք գիտակցեցին իրենց սխալը միայն 1985 թ., երբ հիպերինֆլյացիան հասել էր իր գագաթնակետին: Կառավարությունը նվազեցրեց վարկերի ծավալը, սակայն, մյուս կողմից, ձեռնարկություններին հնարավորություն տրվեց պարտատոմսեր թողարկելու: Ընդլայնվեց կապիտալի շուկայի դերը, և այն դարձավ երկրի խոշոր վարկատուներից մեկը: Հիստադրուտը՝ աշխատավորական և պաշտպանողական քաղաքականության խորհրդանիշը, սնանկացավ և վաճառեց իր ակտիվների հիմնական մասը: Կառավարության բոլոր քաղաքական փոփոխությունները նպատակ ունեին զսպելու հիպերինֆլյացիոն ճգնաժամը:

Ճգնաժամից առաջ և հետո Իսրայելի տնտեսությունը մեծապես կախված էր իր գլխավոր դաշնակցից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Վերջինս ցանկանում էր ուժեղ դաշնակից ունենալ Մերձավոր Արևելքում: Այդ նպատակին հասնելու համար ԱՄՆ-ն օգնեց Իսրայելին հաղթահարել տնտեսական ճգնաժամը: Այնուամե-

[23] Maman and Rosenhek, op cit., p. 259

[24] Michael Bruno, Deep Crises and Reform What Have We Learned? World Bank publications, 1996, p. 3 available at https://documents1.worldbank.org/curated/en/744981468740209362/pdf/multi0page.pdf

[25] European Central Bank, The Financial Crisis- looking back and the way forward, 22 January 2009, for further information https://www.ecb.europa.eu/press/key/date/2009/html/sp090122.en.html

նայնիվ, ԱՄՆ-ը պակաս շահագրգռված չէր խթանել այն փիլիսոփայությունը, որն առկա է իր իսկ տնտեսական որոշումների կայացման հիմքում: ԱՄՆ-ի փորձագետներին հաջողվեց այն, ինչն անիրագործելի էր Իսրայելի ԿԲ աշխատակիցների պարագայում: ԱՄՆ-ի կառավարության աջակցությամբ վերջիններս, իսրայելցի իրենց գործընկերների հետ միասին, հորդորեցին կառավարությանն ուժեղացնել կենտրոնական բանկի դերը: Կարևորելով ֆինանսական օգնության փաթեթը և մատնանշելով Իսրայելի տնտեսական կախվածությունն ԱՄՆ-ից՝ նրանք հասան օրենսդրական փոփոխության, ըստ որի՝ ԿԲ-ին արգելվում է պատասխանատվություն կրել կառավարության պարտքի համար, ինչպես նաև ֆինանսավորել կառավարությանը՝ պետական պարտքի սպասարկման նպատակով:

Այս հոդվածի շրջանակում փորձեցինք ներկայացնել Իսրայելի տնտեսության զարգացման ու վերափոխման վրա շոշափելի ազդեցություն ունեցած սոսկ երկու գործոն՝ կառավարության աշխատավորական, մասամբ՝ սոցիալիստական քաղաքականությունից անցումը դեպի տնտեսության (զգալի) ազատականացում և, իհարկե, հիպերինֆլյացիայի ժամանակ կենտրոնական բանկին տրված առավել լայն ինքնավարությունը: Այդուհանդերձ, կարծում ենք՝ նշյալ երկու գործոններից բացի, Իսրայելի տնտեսական հաջողությունները գուցե այդքան ակնհայտ չլինեին, եթե պետությունը չունենար մեծ ներդրում կրթության ու գիտության մեջ, ինչը լուրջ նախադրյալ էր տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում առաջընթացի համար: Առաջընթացն այնքան շոշափելի էր, որ Իսրայելը հայտնի դարձավ որպես ստարտափների և նորարարությունների պետություն[27]: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ Իսրայելի պես հարաբերականորեն փոքր երկիրը Միջին Արևելքում միակն է, որ NASDAQ-ում ունի 79 ցուցակված ընկերություններ՝ 88 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր կապիտալով: Ըստ այդ ցուցանիշի՝ Իսրայելը զբաղեցնում է աշխարհում երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից ու Չինաստանից հետո:

[27] Ministry of Trade and Industry, Israeli companies on the NASDAQ, for further information, https://itrade.gov.il/spain/israeli-companies-on-the-nasdaq/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Aharoni Yair, The changing political economy of Israel. The Annals of the American Academy of Political and Social Science, 555(1), 1998.
2. Aharoni Yair, The Israeli Economy (Routledge Revivals): Dreams and Realities. Routledge, 2014, Ch. 2.
3. Berkowitz Michael, Zionist Culture and West European Jewry before the First World War. Cambridge University Press, 1993.
4. Bernstein, Deborah, and Shlomo Swirski. "The rapid economic development of Israel and the emergence of the ethnic division of labour." British Journal of Sociology, 1982.
5. Bialer Uri, Fuel Bridge across the Middle East—Israel, Iran, and the Eilat-Ashkelon Oil Pipeline. Israel studies 12, no. 3, 2007.
6. Chenery Hollis B. and Michael Bruno, Development alternatives in an open economy: the case of Israel. The Economic Journal, 1962.
7. European Central Bank, The Financial Crisis-looking back and the way forward, 22 January 2009, https://www.ecb.europa.eu/press/key/date/2009/html/sp090122.en.html
8. Goldscheider Calvin. Israel's changing society: Population, ethnicity, and development. Westview Press, 2002.
9. Herzl Theodor. The Jews' State: A Critical English Translation. Jason Aronson, Incorporated, 1997.
10. Marcussen Martin, The power of EMU-ideas: Reforming central banks in Great Britain, France, and Sweden. 1999.
11. Maxfield Sylvia, Gatekeepers of growth. Princeton NJ: Princeton University, 1997.
12. Metzer Jacob, The divided economy of mandatory Palestine. No. 11. Cambridge University Press, 1998.
13. Michael Bruno, Deep Crises and Reform What Have We Learned? World Bank publications, 1996, https://documents1.worldbank.org/curated/en/744981468740209362/pdf/multi0page.pdf

14. Ministry of Trade and Industry, Israeli companies on the NASDAQ, https://itrade.gov.il/spain/israeli-companies-on-the-nasdaq/
15. Plaut Steven, The Israeli Economy from the Foundation of the State through the 21st Century. Middle East Quarterly 18, no. 3, 2011.
16. Rivlin Paul, The Israeli Economy from the Foundation of the State through the 21st Century. Cambridge University Press, 2010.
17. Tartakovsky Eugene and Shalom H. Schwartz, Motivation for emigration, values, wellbeing, and identification among young Russian Jews. International Journal of Psychology 36, no. 2, 2001.
18. United Nations, Resolution N181, http://daccess-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/038/88/IMG/NR003888.pdf?OpenElement
18. World Bank, Inflation, consumer prices (annual %) – Israel, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=IL

Альберт АЙРАПЕТЯН
Ассистент кафедры международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук

ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХРОНИКА

ВЛИЯНИЕ ЛИБЕРАЛИЗАЦИИ ПОЛИТИКИ ПРАВИТЕЛЬСТВА НА ЭКОНОМИКУ (НА ПРИМЕРЕ ИЗРАИЛЯ)

Феномен устойчивого экономического развития Израиля со времен ишува до социализма и от социализма до современной эпохи продолжает представлять научный интерес. Этот пример показывает, как изменение философии, лежащей в основе принятия экономических решений, влияет на экономическое развитие страны. В данной статье автором были выдвинуты следующие исследовательские вопросы: почему правительство Израиля изменило свое отношение к выработке экономической политики и как Центральный банк Израиля получил независимость? Статья основана на тематическом исследовании с использованием метода ситуативного анализа (case study), который обычно применяется для более глубокого понимания явления, а не построения теории.

В рамках исследования автор пришел к выводу, что роль рынка капитала в Израиле возросла, и он стал одним из основных кредиторов страны. Кроме того, правительство Израиля, учитывая позиции властей США относительно роли ЦБ в госаппарате, стимулировало процесс усиления Центрального банка.

Ключевые слова: *Израиль, Гистадрут, экономика, идеология, лейбористское правительство, Центральный банк, независимость Центрального банка*

Albert HAYRAPETYAN
PhD in Economics, Assistant Professor in the Chair of International Economics of ASUE

GEOPOLITICAL CHRONICLE

IMPACT OF LIBERALIZATION OF GOVERNMENT'S POLICIES ON THE ECONOMIC AFFAIRS (THE CASE OF ISRAEL)

The phenomena behind the vehement economic development of Israel from Yishuv times to socialism and from socialism to modern era continue to be an interesting case to realize the nexus between the impact of the change of philosophy behind the economic decision-making on the economic development of the country. In this paper, I am going to answer the following two research questions: "Why the Israeli government changed its attitude in the economic policymaking?" and "How did the Bank of Israel (Israeli Central Bank) get its independence?". The method which was applied to tackle the research questions is called intrinsic case study. This type is normally used for deeper understanding of the case and not for the theory building. I arrived at the conclusion that the role of the capital market was enhanced and it became one of the major lenders of the country. Furthermore, the Israeli government decided to make the Central Bank stronger in consideration of the position of the USA authorities regarding the role of the CB in the state apparatus.

Key words: *flsrael, Histadrut, economy, ideology, labor government, Central Bank, independence of the Central Bank*

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԳԻՏԱՑՈՒՄԸ՝

«ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ԱԶԳ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԻ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_112

Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 30 գիտական հոդվածների:

Ո՛չ, ախոռը, ուր անասունները կ՚ուտեն և կը պառկեն՝ հայրենիք չէ:
Ֆելիսիտե Ռոբեր Լամենե
(ֆրանս. փիլիսոփա)

Հիմնաբառեր. *ծննդավայր, հայրենիք, ազգ, պետություն, Հայկական բարձրավանդակ, միջավայրի պատշաճեցում, ներդաշնակություն, հայրենիքի և ազգի կորուստ*

Մարդկության պատմությունն ասք է ոչ միայն տնտեսական, սոցիալ-քաղաքական և մշակութային հաղթանակների ու նվաճումների, այլև պարտությունների ու կորուստների մասին: Կործանվում են երբեմնի հզոր կայսրություններն ու ազգերը, և նրանց փոխարինելու են գալիս նորերը: Այս գործընթացն ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Այդ պատճառների թվում առանձնակի կարևորություն ունի աշխարհագրական միջավայրի և նրանում ապրող ժողովրդի միջև փոխադարձ կապի, ներդաշնակության խախտումը: Մահվան են դատապարտվում այն բոլոր ժողովուրդները, որոնք չեն կարողանում բնական միջավայրը պատշաճեցնել իրենց: Հեղինակը հոդվածում զարգացնում է այն տեսակետը, որ «պատշաճեցման» գործընթացի անգիտակցումը և խախտումը դարձել են այն հիմնական պատճառները, որ կործանել են Մերձավոր Արևելքի երբեմնի հզորագույն պետություններից մեկը՝ «ծովից-ծով» ընդգրկող Տիգրան Մեծի կայսրությունը, որի բնակչությունը հինգ միլիոն էր՝ այն դեպքում, երբ աշխարհի բնակչության թիվը չէր գերազանցում մոտ 200 միլիոնը: Երկու հարյուր տարի շարունակ Բյուզանդական կայսրությանը կայսեր ու զորավարներ տված, իր ազնվականությամբ, ռազմական արվեստով և մտավորականությամբ Վրաստանի, Օսմանյան և Ռուսական կայսրությունների կայացմանն ու հզորացմանը մեծապես օժանդակած այդ Մեծ ժողովուրդը, որ XX դարում ցեղասպանություն և հայրենազրկում ապրելուց հետո հրաշքով կարողացել է պահպանել իր պատմական հայրենիքի 1/10 մասը, այսօր էլ կանգնել է լինել-չլինելու և հայրենազրկման ծանրագույն խնդրի առաջ, քանզի ինչպես նախկինում, այսօր նույնպես չի կարողանում Հայկական բարձրավանդակը պատշաճեցնել իրեն...

Ար պետության և ժողովրդի պատմության վերջին իրադարձությունները մեկ անգամ ևս եկան վկայելու և ապացուցելու այն դառը ճշմարտությունը, որ մենք, թերևս, միակ ժողովուրդն ենք աշխարհում, որ յուրահատուկ հմտությամբ կարողանում ենք հրաժարվել այն ամենից, ինչը, ամենայն հավանականությամբ, ամենաթանկն է ուրիշ ժողովուրդների համար՝ Հայրենիքից… Եվ դրա համար բերում ենք տարբեր հիմնավորումներ, թվարկում օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոններ, մասնավորապես՝ աշխարհագրական միջավայրի անհարմարություն, հարևանների անհանդուրժողականություն կամ ագրեսիվություն, «մեծահոգություն», որ հատուկ է մեզ, դաշնակիցների դավաճանություն, աստղերի և մոլորակների ոչ բարեհաճ դասավորվածություն… Հիմնավորում ենք՝ որպես միակ հնարավոր և ճշգրիտ լուծում տվյալ պահի համար՝ հնարավորինս անտեսելով սուբյեկտիվ գործոնները, ինչպիսիք են կառավարման արվեստի անկատարությունը, Հայրենիքի հանդեպ Տիրոջ վերաբերմունք չդրսևորելը և այլն, թերևս, հետագայում մի նոր «Ողբ» գրելու ակնկալիքով, Խորենացու կամ Շնորհալու «Ողբ»-երի նմանությամբ՝ «ի սփոփանս տրտմեցելոց»:

Համոզված եմ՝ յուրաքանչյուր ընթերցող տարակուսանքով է կարդալու այս հոդվածի վերնագիրը: Կարդալու է ու մտածելու, որ այստեղ ինչ-որ բան իր տեղում չէ: Տրամաբանող ու վերլուծող ընթերցողը կարծելու է, որ հեղինակն ու խմբագիրներն անփույթ են գտնվել, քանի որ «արվեստը» կարող է հատուկ լինել «Ազգ և Հայրենիք» կառուցելուն, նրա շենացմանը, շինարարությանը, ստեղծագործությանը, սահմանների ընդլայնմանը, տնտեսական ու քաղաքական հզորության մեծացմանը, բարգավաճմանը, բայց ո՛չ «կորցնելուն», մինչդեռ «Հայրենիքի և Ազգի» կազմաքանդումն ու կորուստը արդեն իսկ ենթադրում են կառավարման արվեստի, տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և ռազմական գիտելիքի ու հմտությունների, արիության, հոգևոր-բարոյական արժեհամակարգի բացակայություն… Ոչ, բարեկամներս, այստեղ մի՛ որոնեք ոչ քերականական և ոչ էլ տրամաբանական սխալ, կարդացե՛ք այն, ինչ գրված է՝ «Ազգ և Հայրենիք կորցնելու արվեստը», քանի որ աշխարհում, համոզված եմ, դուք չեք գտնի երկրորդ մի ժողովուրդ, որն իր ամբողջ պատմության ընթացքում ձգտել է ազատության ու անկախ պետականության և, մեծագույն զոհողությունների շնորհիվ, ստեղծել է դրանք՝ ի դեմս Արարատյան (Ուրարտական) թագավորության (IX-VI դդ., մթա), Մերձավոր Արևելքի հզորագույն՝ «Ծովից-ծով» ընդգրկող Արտաշեսյանների թագավորության (189 մթա. – 1 մթ.), Արշակունիների թագավորության (66–428 թթ.), Բագրատունիների թագավորության (885-1045 թթ.), Կիլիկիայի հայկական թագավորության (1198-1375 թթ.) և գրեթե նույն տարիներին հիմնադրված Զաքարյանների իշխանապետության (1200-1360 թթ.)՝ չհաշված միասնական պետականության տրոհման արդյունքում ձևավորված պետությունները Վասպուրականում (908-1021 թթ.), Կարսում կամ Վանանդում (963-1064 թթ.), Սյունիքում (987-170 թթ.) և այլուր: Ժողովուրդ, որ առաջիններից մեկն է արարել իր այբուբենը, գիրը, գրականությունը, թատրոնը, ժամանակի առաջադեմ փիլիսոփայությունը, Օրենսգրքեր, Սահմանադրություն՝ ի դեմս «Որոգայթ փառացի» (1773 թ.) և «Արևմտահայոց Սահմանադրության» (1860 թ.), առաջինն է պետական մակարդակով ընդունել Քրիստոնեությունը, իր Երկիրը վերածել Թանգարանի՝ բաց երկնքի տակ, գրեթե երկու հարյուր տարի կայսրեր ու զորավարներ տվել Բյուզանդական կայսրությանը՝ մեծապես օժանդակելով նրա երբեմնի հզորության վերականգնմանը, իր ազնվականությամբ և ռազմական արվեստով աջակցել Վրաստանի, Օսմանյան և Ռուսական կայսրությունների կայացմանն ու հզորացմանը, և…. XX դարի սկզբին ենթարկվել ցեղասպանության ու հայրենազրկման և, որպես «հիշողություն» երբեմնի փառավոր պատմության, կարողացել է պահպանել Հայաստանի Հանրապետություն կոչվող Սրբազան հողակտորն ու այսօր կանգնել այդ Սրբազան մասունքը կորցնելու սպառնալիքի առաջ… Գիտակցու՞մ ենք մենք, արդյոք, այս սպառնալիքը: Կարծում եմ՝ ո՛չ:

Դեռևս անցյալ դարի 30-ական թվականների կեսերին, անդրադառնալով Խորհրդային Հայաստանի շուրջ ընթացող իրադարձություններին, Հ. Ասատրյանը գրում է. «Եթե մի բոլշևիկի հարցնենք, թե ինչ է կատարվում Խորհրդային Հայաստանում, նա կպատասխանի՝ չտեսնված շինարարություն», և անկասկած, նա սխալված չի լինի, որովհետև իսկապես առկա է այդ շինարարությունը: Սակայն՝ «Եթե մի լուրջ պատմագետի հարցնենք, թե ինչ է կատարվում Հայաստանի շուրջը, նա կպատասխանի՝ այնտեղ քաշվում է դեղին այն պարիսպը, որ մի ժամանակ թուրքերը քաշեցին Բյուզանդիոնի շուրջը»[1], և դարձյալ իրավացի կլինի նա, որովհետև արտաքին աշխարհի հետ Հայաստանն այսօր ունի ընդամենը մեկ բաց ճանապարհ՝ Լոռվա ձորը, որը նույնպես կարող է օրերից մեկ օր փակվել նույն այդ դեղին օղակի կողմից: Այդ նույն բանը տեղի է ունենում է նաև այսօր՝ ավելի վտանգավոր դրսևորմամբ: Լոռվա ձորի ճանապարհը վաղուց արդեն անվտանգ չէ՝ պայմանավորված հայ-վրացական հարաբերությունների անորոշությամբ, թեև այդ մասին չենք բարձրաձայնում, իսկ մյուս կողմից՝ Հայաստանը Վրաստանով աշխարհին կապող ճանապարհն անցնում է ադրբեջանցիներով բնակեցված շրջաններով, որը կարող է փակվել ամեն մի գործողությամբ, ինչի բազմաթիվ օրինակներն արդեն ունենք: Հայաստանն արտաքին աշխարհին կապող միակ, համեմատաբար անվտանգ ճանապարհը մնում է Իրանը: Այսօր հավանական է դարձել Հայաստանը Իրանին կապող այդ միակ ճանապարհի կորուստը:

Քամյուն իր «Կալիգուլա» փիլիսոփայական դրամայում Կալիգուլայի շուրթերով ասում է. «Մարդիկ ճագարների նման են, Մակրո'ն, երբ սահմանափակում ես նրանց ազատությունը, սկսում են մերձենալ միմյանց անհագորեն: Դա, երևի թե, օգնում է համակերպվել նվաստացմանը»[2]…

Թագավորությունների (պետությունների) բազմության առկայությունը որևէ ժողովրդի պատմության մեջ ամենևին չի վկայում նրա հոգևոր-բարոյական առաքինությունների, քաղաքագիտական և ռազմավարական հմտությունների, որպես ազգ և ժողովուրդ՝ կազմակերպվածության և քաղաքակրթվածության մասին: Թերևս, ուղիղ հակառակը: Սակայն, դա պայմանավորված է նաև աշխարհագրական միջավայրով, որի մասին խոսում էին դեռևս Հերոդոտոսն ու Արիստոտելը, որը, սակայն, համակարգված տեսության վերածվեց միայն XVIII-XIX դարերում՝ շնորհիվ Շարլ Մոնտեսքյոի, Յոհան Գ. Հերդերի և Հիպոլիտ Տենի աշխատությունների, իսկ մեզանում այդ տեսությանը հետևում էին Ղևոնդ Ալիշանը, Ստեփանոս Պալասանյանը, Հայկ Ասատրյանը, Հակոբ Պողոսյանը և ուրիշներ: Աշխարհագրական դետերմինիզմը հիմնավորում է, որ երկրի կլիմայական պայմաններն են որոշում ոչ միայն մարդկանց բնավորությունը, բարքերն ու հակումները, որոնցից կախված են տվյալ ժողովուրդների կյանքի բնույթը, օրենքները, այլև հասարակական ու քաղաքական կառուցվածքը: Օրինակ՝ գերմանացի աշխարհագրագետ Կարլ Ռիտերը ձգտում էր ապացուցել, որ աշխարհագրական միջավայրը և առաջին հերթին՝ տվյալ երկրի աշխարհագրական դիրքը որոշիչ նշանակություն ունեն տվյալ ժողովրդի պատմական ճակատագրի համար: Այս հայեցակարգի հիմնական դրույթն ասում է. «Միջավայրի և կլիմայի իշխանությունը ուժեղ է ամեն մի իշխանությունից»[3], յուրատեսակ փրկօղակ է պարտվողական մտածողության համար, համաձայն որի՝ լեռները և անդնդախոր ձորերը բաժանում են նույնիսկ միևնույն ծագումնաբանությունը, մշակույթը, լեզուն և հավատալիքներն ունեցող ժողովուրդներին՝ անհիրագործելի դարձնելով միասնական պետություն ունենալու նրանց ձգտումը, աղավաղելով հայրենիքի ըմբռնման բովանդակությունը, որին կանդրադառնանք ստորև:

Սկսենք ամենապարզ հարցից. ***Ինչ է Հայրենիքը…***

Կան հասկացություններ, որոնք ոչ այն-

[1] Ասատրյան Հ., Հատընտիր, Եր., 2004, էջ 59:
[2] Քամյու Ա., Կալիգուլա, գլ. VIII:
[3] Монтескье Ш., О духе законов. СПб.:1900, с. 306.

քան բանականությամբ ու մտքով են ընկալվում, որքան մարմնի յուրաքանչյուր բջջով, հոգով ու սրտով… Նման հասկացությունները, կարծես թե, բացատրության անհրաժեշտություն չունեն: Դրանք հասկանալի են ինքնին: Այդպիսի հասկացություններից է Հայրենիքը… «Հայրենի՞ք… Այն քիչ անուններէն մէկն է այս՝ զոր գրեթէ ամոթ է բացատրել բարեկիրթ և զգօն անձի մը…», որովհետև այն «գրեթէ մտքէն առաջ սիրտն կու հասնի, կ'ըմբռնէ, կ'իմանայ զայն նաեւ, երբ չկրնար քիչ բառով կամ խօսքով բացատրել. մանաւանդ ուր քաղաքական եւ բարոյական տեսութիւնք ասոր իմաստն այլ այլայլած կամ զանազանած ըլլան», - այսպես է սկսում հայ մշակույթի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ղևոնդ Ալիշանը, դեռևս 1869 թ. հրատարակված իր «Հուշիկները» աշխատությունը[4]: Մինչդեռ, Հայրենիքը նույնպես ունի ոչ միայն «բացատրության», այլև վերլուծության ու հիմնավորման անհրաժեշտություն: Խնդիրն այն է, որ «Հայրենիք» հասկացությունը ոչ միայն հայերենում, այլև եվրոպական լեզուներում ունեցել է միանգամայն տարբեր ըմբռնում և իմաստ: Չնայած այն հանգամանքին, որ, հնագույն ժամանակներից սկսած, խոսվում է «Հայրենիքի», առավել հաճախ՝ նրա հանդեպ տածած մեծագույն սիրո, նվիրումի և ինքնազոհության մասին, այնուամենայնիվ, այդ հասկացությունը հանդես է գալիս միանգամայն տարբեր իմաստով ու բովանդակությամբ և մեկնաբանվում ոչ միայն որպես աշխարհագրական տարածք, որտեղ համախմբված ապրում են միևնույն ծագումնաբանությունը, լեզուն, մշակույթը ունեցող և նույն աստվածներին դավանող մարդիկ, այլև որպես վայր, որտեղ ծնվել և հուղարկավորվել են իրենց նախնիները կամ ինչպես բնութագրում է Ղ. Ալիշանը. «Մեր Հայրենիքն այնտեղ է, որտեղ մեր ազգակիցների «ծնարանքն և քնարանքն են», որոնք «Հայրենեաց կէտք եւ կենդրոնք կ'երևին»[5]: Այդ կարծիքին է նաև Գարեգին Նժդեհը. «Զատեցէք նախահայրերի աճիւնը հայրենի հողից եւ դուք կ'ունենաք երկիր մշակելի, բնակելի, բայց ոչ հայրենիք»[6],- գրում է նա:

Սակայն, այդ գործոնները, եթե անգամ անհրաժեշտ են, ապա բավարար չեն Հայրենիքը «սահմանելու» համար:

Հնդեվրոպական լեզուներում «Հայրենիքը» հիմնականում մեկնաբանվում է որպես «հոր կողմից տրված ժառանգություն», որպես «հոր երկիր»: Այդ իմաստն ունեն ինչպես ռուսերեն «отечество»-ն, անգլերեն «*fatherland*»-ը, այնպես էլ գերմաներեն «*Vaterland*»»-ը, որտեղ շեշտվում է արական սկիզբը՝ Հայրը, որը ոչ միայն պաշտպանում է այդ Երկիրը, պայքարում՝ հանուն Երկրի միասնության, իրավունքների և ազատության, այլև վերամշակում-վերափոխում է այն «ի պատկերի յուրում», և այս իմաստով, ամենևին էլ պատահական չէ, որ գերմանական ազգային օրհներգը սկսվում է հետևյալ բառերով. «Einigkeit und Recht und Freiheit für das deutsche Vaterland!» («Միասնություն և իրավունք և ազատություն՝ գերմանական հայրենիքի համար»): «Հայրենիք» հասկացությունն այս տեսանկյունից է մեկնաբանվել նաև Հին Հայաստանում, և գրաբարում այն ունեցել է «Հօրից մնացած՝ ժառանգած գոյք, հայրական ժառանգութիւն, կալուածք»[7] իմաստը:

Սակայն, հնդեվրոպական լեզուներում, այդ թվում՝ հայերենում գոյություն ունեն «Ծննդավայր», «Մայր երկիր», ռուսերենում՝ «Родина», անգլերենում՝ «Motherland», գերմաներենում՝ «Heimat» հասկացությունները, որտեղ շեշտվում է կանացի սկիզբը՝ Մայրը (Մայր Հայաստան, Մայր Ռուսաստան և այլն):

Այս հասկացությունների տարբերակումը չափազանց կարևոր է, քանի որ միշտ չէ, որ ծննդավայրը նաև հայրենիք է կամ հայրենիքը՝ ծննդավայր: Իրականում, այդ հասկացություններն ունեն մի շարք նրբություններ, որոնց շնորհիվ՝ ոչ միայն չեն նույնանում, այլև տարբերվում են (մաս-

[4] հ. Ղ. վ. Մ. Ալիշան, Յուշիկք Հայրենեաց Հայոց, հ. Ա –Բ, Վենետիկ, սբ. Ղազար, 1869-1870, էջ 1:
[5] Նույն տեղում, էջ 6:
[6] Նժդեհ Գ., Հատընտիր, Եր., 2001, էջ 249:
[7] Խաչատրեան Լ. Մ., Գրաբարի ուսումնական բառարան, Սուրբ Ղազար, Վենետիկ, 2016, էջ 225:

նավորապես՝ երբ մարդը ծնվել է մի երկրում և քաղաքացին է մեկ այլ երկրի կամ, միաժամանակ, ունի երկքաղաքացիություն): Լինում են դեպքեր, երբ մարդն իր ամբողջ կյանքն ապրում և նվիրում է տվյալ երկրին, սակայն այդ Երկիրը չի դառնում նրա Հայրենիքը, ինչպես դա պատահեց նշանավոր Արիստոտելի հետ, որ մինչև «երկինք» բարձրացրեց Աթենքի անունը, սակայն չդարձավ նրա քաղաքացին, զրկված մնալով քաղաքացիական, այդ թվում՝ ձայնի (ժողովրդական ժողովներում), օրինական ամուսնության և անշարժ գույք ձեռք բերելու իրավունքներից: Ուստի Աթենքը չդարձավ Արիստոտելի Հայրենիքը: Այս առումով, արդարացի է այն մոտեցումը, երբ Հայրենիքը սահմանվում է ոչ միայն նրա հանդեպ ունեցած պարտականությունների, այլև իրավունքների տեսանկյունից[8]. ապրելու, արարելու, ընտրելու և ընտրվելու, նաև սեփականության, այսինքն՝ Հայրենիքը Քոնը համարելու իրավունք, որից բխում է նաև վերջինս կորցնելու, վերջինից զրկվելու վախը… Բայց սա այն դեպքում, երբ Հայրենիքը նույնացվում է պետության հետ: Ուշագրավ է, որ դեռևս վաղ միջնադարյան Հայաստանում «Հայրենիք» կամ «հայրենական» հասկացությունը հիմնականում կիրառվել է հենց այս իմաստով՝ որպես «ժառանգաբար հորից ավագ որդուն անցնող հողեր»: Հողատիրության մյուս ձևը, որ գրեթե համարժեք էր առաջինին, «Գանձագինն» էր, հողեր, որոնք, ենթակա լինելով առք ու վաճառքի, նույնպես ժառանգաբար անցնում էին հորից որդուն՝ ի տարբերություն պետական պաշտոնյաներին կամ զինվորականներին իրենց ծառայության դիմաց հանձնվող հողերի՝ «Պարգևականքի», որոնք հետ էին վերցվում, երբ դադարեցվում էր ծառայությունը:

Հայրենիքները ձևավորվում են աշխարհագրական միջավայրի, այսինքն՝ տվյալ երկրի և նրա վրա ապրող ժողովրդի միջև ձևավորված ներդաշնակությամբ, և այդ ներդաշնակության խախտումը կործանարար է դառնում ոչ միայն ժողովրդի, այլև բնաշխարհի համար: Ապացուցված է, որ յուրաքանչյուր երկրի աշխարհագրությունն ու պատմությունը սերտորեն կապված են միմյանց հետ: Պատահական չէ, որ գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Ի. Կանտը աշխարհագրությունը համարում է պատմության հիմքը, իսկ Յ. Գ. Հերդերը նշում է. «Պատմությունը շարժման մէջ դրված աշխարհագրություն է»[9]: Այդ կարծիքին է նաև XX դարի առաջին կեսի սփյուռքահայ ինքնատիպ մտածողներից մեկը՝ հոգեբան և փիլիսոփա Հակոբ Պողոսյանը: «Այսօր ինչ-որ միջաւայրի մը ու երկրի մը համար իրողութիւն է, անիկա վաղը պատմութեան կորիզը պիտի կազմէ»,- գրում է նա: Նրա համոզմամբ՝ հնարավոր չէ հասկանալ Հայոց պատմությունը, գրականությունը, լեզուն, ավանդույթներն ու սովորույթները, կրոնն ու եկեղեցին, ազգային նկարագիրը, եթե «մինակ ժողովուրդը առնուի եւ խնդիրները այդ անկիւնէն դիտուին եւ կամ սերտուին: Պէտք է որ հայը Հայաստանի տեսակէտէն եւ Հայաստանը Հայու տեսակէտէն ուսումնասիրուին: Հայաստանը եւ Հայը իրարու պատճառ եւ արդիւնք են եւ փոխադարձաբար»[10]: Այսինքն՝ Հայոց պատմությունը պետք է ուսումնասիրել Հայաստանի աշխարհագրության, իսկ Հայաստանի աշխարհագրությունը՝ Հայոց պատմության տեսանկյունից, քանի որ հայ ժողովրդի պատմությունը սերտորեն կապված է Հայկական բարձրավանդակի հետ, որը, Հայկ Ասատրյանի բնութագրմամբ, մի մարզ է, որտեղ «միանում են շրջակայ երկրների բնական իրականութիւնները»՝ ձևավորելով չափազանց ինքնատիպ մի միջավայր. «Իր բնական առանձնայատկութիւններով՝ նա տարբերւում է աշխարհագրական բոլոր այս միջավայրերից: Արեւելքից արեւմուտք նա իրար է կցում իրանական արիների եւ արմենօիդ - դինարեան - ալպեան ցեղի հայրենիքները, հիւսիսից հարաւ՝ նա միմեանցից բաժանում է զուտ կովկասեան եւ միջերկրական ցեղերի, մանաւանդ մոնգոլների եւ սեմական ժողովուրդների աշխարհները»[11]: Նշվածը համապատասխան

[8] Васильев А.В., Что такое отечество? Постов н/Д, 1905, с. 13.
[9] Պողոսյան Հ., Ներածութիւն…, էջ 86:
[10] Նույն տեղում, էջ 87:
[11] Ասատրյան Հ., Արթնացիր, հայ մարդ, էջ 33:

ազդեցություն է ունեցել հայ ցեղի «հոգեմարմնական կառոյցին վրայ». «Ցեղատիպ հայի մարմնակերպութիւնը կրում է իր երկրի բարձրաւանդակային բնութեան կնիքը – նա տիպար լեռնա - հովտական մարդ է»: Քանի որ նա ձևավորվել է Հայկական բարձրավանդակում, իսկ վերջինս դեռևս լինելիական վիճակում է, քանի որ համեմատաբար երիտասարդ գոյացություն է, ուրեմն՝ հայը հին ցեղ չէ: «Նա իր արեան շաղախը եւ ոգու բնագծումը ստացել է Հայկական բարձրաւանդակում. ունի լինելիական նկարագիր եւ իր բոլոր մեծ յղացումները կրում են դրա դրոշմը… Հովտական ապրումը հային պարգեւել է իդէալիստական ոգեաշխարհ. կիրճերի եւ լեռների զգացումը՝ դրան միացրել խորհրդապաշտական երանգը: Հայ ոգում իդէալիստական եւ խորհրդապաշտական գծերն այնպէս են խառնուել իրար, ինչպէս մեր աշխարհում միմեանցով պայմանաւորուող հովիտը, կիրճը, լեռը»[12],- գրում է Հ. Ասատրյանը:

Այստեղից էլ մեր մտածելակերպի և աշխարհայեցության առանձնահատկությունները՝ «իդեալիստական ոգե-աշխարհ» և «խորհրդապաշտական երանգ»՝ միաժամանակ, ինչպես նաև արմատական իրատեսություն: Ապրելով Ասիայի և Եվրոպայի սահմանագծին՝ մեր մտածողությունը և, հատկապես, փիլիսոփայությունը չհակվեցին դեպի Արևելք, այլ հարազատ մնացին Արևմուտքին, չնայած Արևելքից կրած մշակութային հսկայական ազդեցություններին: Մեր հոգեկերտվածքը, մտածողությունը և մշակույթը ձևավորվեցին այդ հակադիր արժեքների, իսկ որոշ դեպքերում՝ ներքին պայքարի արդյունքում: «Արժէքների պայքարը տարբեր հոգեբանական տիպերի ճշմարտութեանց պայքար է, իսկ ո՛չ մէկ դէպքում մարտնչողն այնքա՛ն ժըխտական չէ դէպի թշնամին, որքան սոյնորակ պայքարում»,- ասում է Հ. Ասատրյանը: Նրա կարծիքով՝ այդ պայքարը պայմանավորված էր նրանով, որ արևելյան՝ իրանական, մոնղոլ – թաթարական և իսլամական մշակույթների հանդեպ հայերը՝ «գրական կեանք ունենալուց յետոյ, … գարշանքից բացի այլ զգացում չեն ունեցել: Այս իրողութեան պատճառն ա՛յն է, որ հայերը ցեղաբանօրէն մօնգոլներին բոլորովին խորթ են, արաբների հետ ոչ մէկ կապ չունեն, իսկ պարսիկներին կապւում են միայն հեռաւոր, գրեթէ, աղօտւած մի գծով»[13]: Այստեղ ամենևին էլ չենք ցանկանում անդրադառնալ այն խնդրին, թե ինչքանով էր ճիշտ, որ ապրելով այդ ժողովուրդների քաղաքական տիրապետության տակ, մեծապես կրելով նրանց քաղաքական ու կենցաղային մշակույթի ազդեցությունը, մեր մտածողությամբ չհարեցինք նրանց, հետևաբար՝ չկարողացանք ճանաչել ոչ միայն եվրոպացիների, այլև մեր անմիջական հարևանների հոգին ու մտածողությունը: Ընդհանրացնելով Հ. Ասատրյանն ասում է. «Ցեղաբանական տարբերութիւնները պատճառում են հոգեբանական խորթութիւն, իսկ վերջինս՝ արժէքմբռնումների հակամարտութիւն»: Նա այն համոզման է, որ բազմաթիվ գծերով հայերը կապված են փոքրասիական հին ժողովուրդների և հույների, իսկ մեկ գծով էլ՝ հրեական, ինչպես նաև արևմտյան (ալպյան) որոշ ցեղերի հետ: Նույնպես, պատահականություն չէ քրիստոնեական արժեքների ընդունումը՝ որպես արդյունք «հելլենա-հրեական հոգեմշակութային ոգորումների - այս ժողովուրդների մշակույթների փոխադարձ ազդեցության, որով՝ նրա որդեգրումն հայերի կողմից՝ հոգեբանօրէն, ըստ ամենայնի, հասկանալի է»:

Այսպիսով՝ արևմտյան էությունը հայը պատկերացնում է որպես պայծառ և հարազատ, արևելյանը՝ իբրև մութ և խորթ մի գիծ, որտեղից էլ. «Էլ աւելի հասկանալի է հայոց ողբերգական սէրը դէպի արեւմտեան էութիւնը»[14]: Մի խոսքով, Արևելքն ու Արևմուտքը հայն էապես ապրում ու զգում է՝ որպես հակադրություն: Այլ խնդիր է, որ ինքը, լինելով «շրջակայ երկրների բնական իրականությունները» միավորող (Լինչ) Հայկական բարձրավանդակի արդյունք, չի կարողացել վերջնականապես «հաղթահարել» իր հոգում ամբարված հա-

[12] Նույն տեղում, էջ 39:
[13] Նույն տեղում, էջ 72:
[14] Նույն տեղում, էջ 72–73:

կադիր էությունների հակամարտությունը. մի կողմից՝ ծայրահեղության հասնող ներկայապաշտություն, իրապաշտություն ու առօրեական իմաստով՝ գործնական խելք (հատկապես, երբ խոսքը վերաբերում է անհատներին), մյուս կողմից՝ աներևակայելի գաղափարապաշտություն, անհեթեթության հասնող հակակրանք այն ամենի հանդեպ, ինչն աշխարհիկ է ու առօրեական (խոսքը վերաբերում է հավաքականությանը): «Հրեան իր հետ Եւրոպա բերեց ասիական ոգին, հայն Ասիա տարաւ Եւրոպական էութիւնը»,- գրում է Ասատրյանը, ապա շարունակում՝ հրեան ձգտեց տնտեսապես նվաճել Եվրոպան, հայը՝ Ասիայի դեմ տարավ «ցեղա-մշակութային պայքար»[15]:

Աշխարհագրական միջավայրը որոշիչ դեր է խաղացել ինչպես տվյալ էթնիկական խմբի կազմախոսության, այնպես էլ հոգեբանության, արժեքային համակարգի, աշխարհընկալման ձևի և մտածողության վրա՝ հատկապես նրա պատմության սկզբնական շրջանում: Իր ծագումնաբանությունը կապելով որոշակի կենդանու՝ արջի, գայլի, բիզոնի, կոկորդիլոսի հետ, նա ոչ միայն մշակել է արգելքների՝ տաբուների որոշակի համակարգ, այլև աստվածացրել է այդ կենդանիներին, վերածել տոտեմների, ընդօրինակելով նրանց կենսակերպը, վարքագիծը և աշխարհագրական ընդգրկման սահմանները՝ որպես իր էթնիկական խմբի կենսատարածություն, որը, ստեղծագործաբար մշակելով և վերափոխելով՝ իր հոգևոր և նյութական պահանջմունքներին համապատասխան, դարձրել է պատմական հայրենիք՝ միաժամանակ իր վրա կրելով այդ միջավայրի ազդեցությունը: Անդրադառնալով այս խնդրին՝ Լ. Գ. Գումիլյովը նշում է, որ մարդը ոչ միայն հարմարվում է լանդշաֆտին, այլև աշխատանքի միջոցով լանդշաֆտը հարմարեցնում է իր կարիքներին և պահանջմունքներին[16]: Լանդշաֆտի և կենսոլորտի փոխկապվածության հիմնախնդիրը հիմնավորվել է հատկապես Վ. Ի. Վերնադսկու աշխատություններում, որտեղ նշվում է, որ ինչպես լանդշաֆտի, այնպես էլ կենսոլոտի կտրուկ փոփոխություններն առաջ են բերում առկա ներդաշնակության խախտում, որը կարող է աղետալի լինել ինչպես մեկի, այնպես էլ մյուսի համար: Այս առումով, Հ. Ասատրյանը գրում է՝ արդյո՞ք դրանով չի բացատրվում այն իրողությունը, որ «Հայաստանում, գրեթէ ամեն քաղաքական աղէտից յետոյ տեղի է ունենում եւ երկրաշարժ»[17]: Նշված դրույթի ճշմարտացիությունն ապացուցելու համար անգամ կարիք չկա պատմության էջերը թերթելու: 1988 թ. դեկտեմբերյան և 2021 թ. փետրվարյան երկրաշարժերի փաստն ապացուցում է այդ կապի գոյությունը:

Վ. Ի. Վերնադսկին դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին նշում է. «Երկրաքիմիայի տեսանկյունից, կենդանի օրգանիզմները պատահական գործոններ չեն երկրակեղևի կազմակերպվածության մեջ: Դրանք երկրակեղևի առավել էական և անքակտելի մասն են՝ անբաժանելիորեն կապված երկրակեղևի քարացած նյութի, միներալների և լեռնային տեսակների հետ»[18]: Նա համոզված է, որ կենդանի նյութն օժտված է երկրաքիմիական էներգիայով, որով և ազդում է երկրակեղևի վրա ու փոխադարձաբար իր վրա կրում վերջինիս ազդեցությունը: Վերնադսկու կարծիքով՝ ինչպես մարդը, այնպես էլ յուրաքանչյուր կենդանի էակ անբաժանելիորեն կապված է մոլորակի երկրաբանական որոշակի թաղանթի՝ կենսոլորտի հետ, որը ոչ միայն տարբերվում է մյուս թաղանթներից իր յուրահատուկ կազմակերպվածությամբ, այլև ընդգծված տեղ ունի միջավայրին հարմարված կենդանի նյութի մեջ: Նրա քարացած անկենդան մասի և այն բնակեցնող կենդանի նյութի միջև ընթանում է նյութական և էներգետիկական չդադարող փոխանակություն, որը նյութականորեն արտահայտվում է ատոմների շարժումով, որը ձգտում է հավասարակշռություն և կայունություն հաստատել այդ երկու ոլորտի միջև[19]: Հ. Ասատրյանը հավասարակշռության և կայունության խախտումը համեմատում է երե-

[15] Ասատրեան Հ., Հայաստան- արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում, Եր., 2000, էջ 148:
[16] Гумилев Л .Г., Этногенез и биосфера Земли. М.: 1990, с. 179.
[17] Ասատրյան Հ., Հատընտիր, էջ 23:
[18] Вернадский В. И., Биосфера, Избр. труды по биогеохимии, М.: 1960, с. 64.
[19] Вернадский В. И., Научная мысль как планетарноеявление, М.: 1991, с. 15-17.

խայի և ծնողների հարաբերության հետ, երբ միմյացից երկարատև բաժանման հետևանքով և՛ երեխան, և՛ ծնողները տառապում են մի հիվանդությամբ, որը կոչվում է կարոտախտ: Եվ եթե այսօր դեռևս հնարավոր չէ բացահայտել նման կապն ամբողջությամբ, ապա դա չի նշանակում, որ այն չկա ու չի բացատրվելու հետագայում: Հանճարեղ Գյոթեին է վերագրվում այն միտքը, որ մենք կարող ենք բացահայտել միայն այն, թե ինչպես է ընթացել այս կամ այն երևույթը, բայց երբեք՝ ինչո՞ւ և ինչպե՞ս:

Ժամանակի ընթացքում ցեղերը ոչ միայն կերպարանափոխվում են՝ հարմարվելով համապատասխան միջավայրին, այլև կերպարանափոխում են այդ միջավայրն՝ ըստ իրենց հոգևոր ու գործնական ներգործության: Այս երևույթը հայտնի է որպես «պատշաճեցման» գործընթաց: «Ըստ այսմ՝ ցեղը նախ եւ առաջ պատշաճեցման բնաճիգ է»,- ասում է Հ. Ասատրյանը, ապա ընդհանրացնում. «Ոչնչանալու են դատապարտուած բոլոր այն անհատներն ու խմբակցութիւնները, որոնք ընդունակ չեն իրենց մշակութային կամքը պարտադրել իրենց միջավայրին»: Միաժամանակ, միջավայրում է, որ «ձեւակերպւում» է մարդը. «Միջավայրի պատճառած այս ձեւակերպումները ժառանգելի չեն, բայց նրանք ոչնչացուցիչ անդրադարձում ունին այն անհատների եւ խմբակցութիւնների վրայ, որոնք յարմարուելու ընդունակութիւնից զուրկ են... Ապրում են ա'յն ժողովուրդները, որոնք ցեղօրէն օժտուած են միջավայրը իրենց պատշաճեցելու եւ նրան յարմարուելու ընդունակութեամբ»[20]: Իսկ հայերն արդյո՞ք կարողացան պատմական անցյալում նպատակահարմար կերպով բավարարել կենսաբանական այս պահանջները: Այս հարցին Հ. Ասատրյանը պատասխանում է բացասաբար:

Նրա կարծիքով՝ «Հայոց հերոսականը չկնքվեց հաղթանակով», քանի որ «հայերը վատ կերպով միայն կարողացան յարմարուել իրենց Հայրենիքին», նրանք չհասկացան իրենց լեռների խորհուրդը և խուսափեցին բնակության կայաններ հաստատել այդ լեռների ձյունամերձ բարձունքներում, և իրենց բերդերն ու վանքերն էլ հիմնականում կառուցեցին մինչև 2000 մետր բարձրության վրա, չօգտվեցին կամ չկարողացան օգտվել «իրենց անառիկ լեռների ռազագիտական արժէքից»[21]: Ավելին, այդ բարձունքները նրանք կամովին հանձնեցին օտարներին, որոնք հետագայում չարիք դարձան հովիտներում ապրող հայության համար: Մի խոսքով, նրանք չկարողացան իրենց բարձրավանդակը պատշաճեցնել իրենց էությանը կամ հակառակը, որի հետևանքով էլ չկարողացան Հայ ցեղի կենսական ուժերն ուղղել հայրենի պետականության կայացմանն ու նրա սահմանների պաշտպանությանը՝ ժամանակի ընթացքում զրկվելով ոչ միայն պետականությունից, այլև Հայկական բարձրավանդակի 90%-ից:

Աշխարհագրական այն տարածքները, որոնք ժամանակային որոշ միջակայքում կարող են միանգամայն բարենպաստ լինել այս կամ այն կենսաբանական տեսակի զարգացման համար, որոշակի փոփոխությունների ենթարկվելուց հետո հնարավոր է՝ դառնան անբարենպաստ՝ տեղիք տալով կենսաբանական մեծ տեղաշարժերի: Դեռևս Արիստոտելն էր ասում, որ «եթե մարմինը բնության մեջ գրավում է իր տեղը, ապա լինում է անշարժ, իսկ եթե մի այնպիսի տեղում է, որը հատուկ չէ իր բնույթին, ապա շարժվում է դեպի այն տեղը, որը հատուկ է իր բնույթին»[22]: Այսինքն՝ եթե օրգանիզմը (օբյեկտը) վատ է հարմարվում կամ չի հարմարվում բնական-աշխարհագրական այն միջավայրին, որտեղ ապրում է, ժամանակի ընթացքում լքում է այդ միջավայրը, քանի որ նրա վրա ազդում են «տեղանքի կամ դիրքային ճնշման» ուժերը: Նման ճնշման հետևանքով «դյուրաշարժ» տարրերը գաղթում են, իսկ ավելի նվազ շարժուն տարրերը՝ փոխում իրենց ֆիզիկական հատկությունները, կենսակերպը, մտածողությունը, գործելակերպը: Այն տարրերը, որոնք անընդունակ են ինչպես գաղթի, այնպես էլ փո-

[20] Ասատրյան Հ., Արթնացիր, հայ մարդ, էջ 28-29:
[21] Ասատրյան Հ., Հատընտիր, էջ 30 – 31:
[22] Аристотель, Соч. в 4-х т., т. 3, с. 123-124.

փոխության, աստիճանաբար անկում են ապրում, ձուլվում են այլ ժողովուրդների հետ և ոչնչանում:

Դա է պատճառը, որ յուրաքանչյուր նվաճող բռնակալ ձգտում է խախտել այդ ներդաշնակությունը, «անդունդ բացել» բնաշխարհի և նրանում ապրող ժողովրդի միջև: Դեռևս 1913 թ. արևմտահայ նշանավոր գրող Երվանդ Օտյանը, անդրադառնալով այդ խնդրին, գրում է. «Համիտեան բռնաւոր կառաւարութիւնը իր հայահալած քաղաքականութեամբ անդունդ մը բացաւ հայ ժողովուրդին եւ անոր բնաշխարհին միջեւ, տեսակ մը անհարազատութիւն առաջ բերելով անոնց մէջ՝ իրարու հանդէպ: Եւ արագօրէն կը պարպուի Թրքական Հայաստանը իր զաւակներէն, որոնք խելակորոյս ու յուսաբեկ օտար ու հեռաւոր աշխարհները խոյս կուտան, հարազատ երկընքի տակ իրենց զլացուած հանգիստ կեանքն ու ապահովութիւնը անծանօթ հորիզոններուն տակ գտնելու յոյսով»[23]: Այդ քաղաքականությունը, ցավոք, չսկսվեց ու չավարտվեց միայն Համիդով... Թերևս, դրանով է պայմանավորված, որ հայ ժողովուրդը, որ մշտապես աչքի է ընկել իր մեծաքանակ լինելով, այսօր էլ գրեթե նույն քանակությունն ունի, ինչ դարեր առաջ: Մինչդեռ հայերի բազմանդամ ընտանիքների մասին ճանապարհորդներն առասպելներ էին պատմում՝ ասելով, թե տներում այնքան շատ էին երեխաները, որ օրորոցներն առաստաղներից էին կախում՝ չխանգարելու համար անցուդարձը... Այդ առողջ և երիտասարդ ցեղը Տիգրան Մեծի իշխանության տարիներին կազմում էր հինգ միլիոն, այն դեպքում, երբ աշխարհի բնակչության թիվը չէր գերազանցում 200–220 միլիոնը, իսկ Տրդատ Մեծի օրոք՝ ութ միլիոն, երբ աշխարհի բնակչության թիվը հազիվ 220-250 միլիոն լիներ (այդ մասին վկայում է նաև Ագաթանգեղոսն իր «Հայոց պատմության» մեջ)... Աշխարհի բնակչության թիվը ներկայում հասել է գրեթե ութ միլիարդի, ու եթե ընդունենք, որ ազգաբնակչությունն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, ինչպես ենթադրում էր Թոմաս Մալթուսը, ապա բնական հարց է ծագում՝ ինչ եղան այդ միլիոնավոր սերունդները: Ամենահամեստ հաշվարկների դեպքում անգամ, նկատի առնելով նաև պատերազմների ու համաճարակների պատճառած կորուստները, հայերի թիվն այսօր աշխարհում պետք է լիներ առնվազն մի քանի հարյուր միլիոն, եթե ոչ՝ միլիարդ... Այս հարցի պատասխանը տալիս է XIX դարի մեր մեծագույն մտածողներից մեկը՝ Ղևոնդ Ալիշանը: Նրա կարծիքով՝ «Մենք պատվաստի բողբոջներ եղանք ուրիշ ազգերի չորացող ճյուղերի վրա»[24]:

Մեր փիլիսոփայական մշակույթի երախտավորներից Մկրտիչ Սմբատ Գաբրիելյանը Հայկական բարձրավանդակի առանձնահատկություններով էր բացատրում նաև հետևյալը. «Մեր ցեղին կպակսեր աշխարհակալութեան եռանդն ու խիզախ ոգին, որ յանդուգն քայլեր առնելու կը մղեր ժողովուրդ մը»[25], քանի որ «Հայաստանի լեռնային հանգամանքը թեպետ ինքնապաշտպանութեան յարմար, բայց միացեալ ուժերով յարձակողական գործունեութեանց և աշխարհակալական ձեռնարկներու նպաստաւոր չէր»: Այս հանգամանքն օգտագործելով՝ յուրաքանչյուր նախարարություն «գրաւած էր գաւառ մը և կը նկատեր զայն իր պզտիկ տերութիւնը, ու չէր ուզեր այդ նեղ սահմանէն անդին իր ցեղակիցներով գործակցիլ ազգային նպատակի մը համար...»[26]: Հայ ժողովրդի պատմությանը քաջածանոթ հեղինակներն այն կարծիքին են, որ դա նոր երևույթ չէ: Դա բխում է մեր էությունից, մեր մտածողությունից: Այն, որ մենք «աշխարհակալներ» չենք, ապացուցել է մեր ողջ պատմությունը, թեև հաճախակի ենք խոսում Տիգրան աշխարհակալի և «Ծովից ծով» Հայաստանի մասին: Այդ մասին է վկայում նաև մեր պատմությանն ու հոգեբանությանը քաջածանոթ Ղ. Ալիշանը, երբ Արտաշես Պարթևի[27] նվաճումների մասին խոսելիս ոչ միայն չի փառա-

[23] «Հեռաձայն» ժողովրդական օրաթերթ, ազգային, գրական և քաղաքական, 1913, թ. 39:
[24] Ալիշան Ղ., Երկեր, էջ 223-228:
[25] Գաբրիելեան Մ.Ս., Հայ ցեղը, Նիւ-Եէորք, 1911, էջ 8-10:
[26] Նույն տեղում, էջ 10:
[27] Արտաշես Բարեպաշտ, թագավորել է 189-160 թթ., որի մասին Ստրաբոնը գրում է, որ «Հայաստանը ... աճել է Արտաշեսի ջանքերով ...և այստեղ բոլորը միալեզու են», այսինքն՝ հայալեզու: Նրան է վերագրվում հետևյալ արտահայտությունը. «Կտրել նրա լեզուն, ով չի խոսում հայերեն»:

բանում այդ հզոր աշխարհակալին, այլև պարսավում է նրան, քանի որ նրա «հպարտ և փառասեր» սրտին Հայաստանի ընդարձակ սահմանները շատ նեղ էին թվացել, և նա, տիրելով պարսիկներին Արևելքում, ցանկացել էր տիրել նաև Հունաստանին՝ Արևմուտքում, իսկ երբ «կարգը Հռովմա եկավ», նրա բախտը չժպտաց, որովհետև «հայ ազգը հանիրավի օտարի արյուն թափելու համար եղած չէ: Զզվեցավ այն անգութ փառքեն, զզվեցավ օտար հողե, հիշեց իր հայրենի հողն և ջուրն և տեսնելով, որ բռնավորի մը ձեռք ուրիշի բռնավոր ըլլալու գործիք մը եղած է, քաշեց բարկութեան ատեն սուրը իր թագավորին դեմ, և իջավ հարվածը Արտաշիսի սրտին, երբոր անիկա Աթենքի հրաշակերտ տաճարաց մեջ կպտտցներ հաղթող աչվները»[28]:

«Թուրքիան՝ Եվրոպայում»[29] աշխատության հեղինակ Չարլզ Էլիոտը նույնպես անդրադարձել է այս թեմային՝ ասելով, որ հայ ժողովուրդը ոչ միայն աշխարհակալ չէ, այլև պետություն կառուցելու «հանճարը» չունի. «Անոնք ցեղ մըն են, որ խիստ քիչ յարմարութիւն և կամ հանճար ունին պետութիւն կառուցելու մէջ: Այս կիրքին պակասը թրքական յաղ-թութիւններուն վերագրելի չեն, ինչու որ անկէ շատ առաջ ալ հայերը ապացուցեցին թէ պետութիւն մը չեն կրնար պահել: Անոնք մշտական անմիաբանութիւններով բաժանուած լինելով՝ ստրուկները դարձան յաջորդաբար Պարթեւներուն, Հռոմեացիներուն, Պարսիկներուն և Յոյներուն: Ասիկա մասամբ արդիւնք է իրենց երկրին աշխարհագրական դիրքին: Բայց վերջապէս այդ դիրքին համար ալ իրենք են պատասխանատուն»: Բայց չէ՞ որ հայերը ժամանակին կարող էին գրավել ինչպես Կ. Պոլիսը, այնպես էլ Կովկասյան լեռնաշղթան: «Ազգ մը, որ այդ երկու անառիկ ամրոցներուն կը տիրանար՝ անպայման հզոր ազգ մը լինելու էր»[30],- գրում էր Էլիոտը: Մինչդեռ հայերը չգրավեցին ոչ Կ. Պոլիսը (քանի որ չգիտակցեցին՝ Կ. Պոլսին իշխողը ամբողջ տիեզերքի ճշմարիտ իշխանն է, ինչպես պնդում էին Պետրոս Առաջինը և Նապոլեոնը)[31], ոչ էլ Կովկասյան լեռնաշղթան: Հետագայում նույնպես Կ. Պոլիսը եղավ Օսմանյան կայսրության շուրջ ստեղծված քաղաքական լուծումների անկյունաքարը: Մինչդեռ մենք երբեք չգիտակցեցինք դա և հաշվի չնստեցինք այդ հանգամանքի հետ նաև մեր ազատագրական պայքարի տարիներին: Աշխարհագրական միջավայրի գործոնը, ցավոք, անտեսում ենք նաև հիմա, որը պայմանավորված է ոչ միայն համապատասխան միջավայրի և պետության բնական սահմանների, այլև ազգային և պետական կենսատարածքների գոյության և կարևորության չիմացությամբ:

Մենք միշտ էլ ցանկացել ենք հաշտ ու խաղաղ ապրել մեր դրացի ազգերի հետ, ու թե արյուն է հեղվելու, ապա գերադասել ենք, որ դա լինի մեր արյունը, քան մենք լինենք արյուն հեղող: Գերադասել ենք լինել ստրուկ, բայց արդարացի և անմեղ, քան ինքներս ստրկացնել՝ համարվելով անարդար և մեղսագործ: Մեկ անգամ ընդունելով այս ազգակործան, սխալ և արժանապատվությունը վիրավորող գաղափարախոսությունը՝ այլևս երբեք չենք հրաժարվել դրանից (աննշան բացառություններով հանդերձ), չենք փորձել վերաիմաստավորել այն, նման կենսաձևը համարել ենք ճշմարիտ և քրիստոնեակերպ՝ մնալով նույն խորհրդապաշտն ու երազողը, անհիմն «լավատեսն» ու «օդում պարողը», որի մասին Ավ. Ահարոնյանը ի գրել է. «Ազգ էինք մանուկ հաւատով դէպի յաւիտենական արեւը... Բիբերս յոգնեցին, ո՞ւր է արշալոյսը, ո՞ւր են առաջին ցոլքերը հեռաւոր արեւի: Չէ՞ մեր մայրերը մեր օրօրոցների վրայ լոյսի օրօրները երգեցին, եւ արեւի վառ հեքիաթներով մեր մանուկ երեւակայութիւնը շոյեցին: Չէ՞ մեզ հաւատացրին, որ բարբարոսութիւնն անկարող է սպանել լոյսը եւ արդարութիւնն ու ճշմարտութիւնը յաւիտենական են, անմահ»[32]:

Մենք Հայկական բարձրավանդակը չկարողացանք պատշաճեցնել մեր էությանը, չկարողացանք մեր մշակութային կամքը

[28] Ալիշան Ղ., Երկեր, էջ 215-216:
[29] Turkey in Europe by Eliot, Sir Charles, Published by Frank Cass & Co. Ltd., London, 1965.
[30] Պողոսեան Յ.Պ., Ներածութիւն հայ հոգեբանութեան, էջ 423:
[31] Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. 2, էջ 185, 191:
[32] Ահարոնեան Ավ., Հայրենիքիս համար, Պոսթոն, 1920, էջ 13–14:

պարտադրել միջավայրին, օգտվել մեր բարձրավանդակի բնական ուժերից և «տեղանքի կամ դիրքային ճնշման» տակ աստիճանաբար լքեցինք այն՝ տարերայնորեն կամ կազմակերպված ձևով: Թիկունքը լեռներին տված՝ մեր Երկիր ներխուժած թշնամուն հալածելու և անդնդախոր ձորերը նրանց համար գերեզման դարձնելու փոխարեն, առաջին իսկ բախումներից հետո զիջեցինք մեր հողը՝ գրեթե առանց պատերազմի, լքեցինք այն և սփռվեցինք աշխարհով մեկ, քանի որ մենք ինքներս մեզ այդ բարձրավանդակի, այդ միջավայրի արդյունքը չհամարեցինք, մենք մեզ վերագրեցինք աստվածային ծագում, և քանի որ Աստված է ստեղծել Երկիրը, այն համարեցինք մեր Հայր Աստծո արարչության արգասիքը, ու Որդու իրավունքով հաստատվեցինք աշխարհի տարբեր անկյուններում, մեր աշխատանքով ու հանճարով շենացնելով այն, Իրականի փոխարեն երազելով Պատմական դարձած Հայրենիքի մասին... Եվ ինչքան էլ անցանկալի է արձանագրել, այդ մտայնությունը մեր արյան մեջ մտավ քրիստոնեության պետականացումից հետո: Քրիստոնեական կրոնում տեղ չունի հայրենիքի գաղափարը, քանզի այս աշխարհը համարվում է ժամանակավոր հանգրվան, որն անցողիկ է և անարժեք՝ հավիտենական երկնային աշխարհի համեմատությամբ:

Մեր ազգային խառնվածքին հատուկ սնապարծությամբ Հայոց պատմությունը կասկածի ենթարկողներին հաճախ ենք մատնացույց անում ամենահնագույն քարտեզները՝ բաբելոնականը (VI դ. մթա.), որտեղ Հայաստանը հիշատակվում է որպես Ուրարտու կամ Հերոդոտոսին վերագրվողը (V դ. մթա), որտեղ մեր երկիրն ամենակենտրոնում է, մոռանալով, որ դրանք սոսկ աշխարհագրական, պատմական կամ լավագույն դեպքում՝ ցեղագրական տարածության արձանագրումներ են: «Հայրենիք չէ դա: Անշուշտ, Հայրենիքը պարունակում է իր մէջ անհրաժեշտօրէն եւ՝ աշխարհագրական, եւ՝ պատմական, եւ՝ ազգագրական տարրեր, բայց իր ամբողջութեան մէջ մի բան աւելի է, քան այդ տարրերը – էապէս քաղաքական գաղափար է Հայրենիքը: Եւ ահա այդ էականն է, որ պակասել է մեր ըմբռնողութեան, որովհետեւ պակասել է մեր պատմական կեանքեն»[33]: Աշխարհագրական այդ տարածքի հանդեպ, մի տեսակ, պակասել է մեր իրավունքի և հատկապես՝ պարտականության գիտակցությունը, այսինքն՝ մենք, լինելով այդ աշխարհագրական տարածքի բնակիչներ, չդարձանք նրա քաղաքացին, ապրելով այդ աշխարհագրական տարածքում, մշակելով և վերափոխելով այն «ի պատկերի յուրում», տալով նրան որոշակի ձև և բովանդակություն՝ հայկականություն, այնուամենայնիվ, մեր մշակած ու շենացրած երկրում մենք մնացինք որպես «քաղաքական մետեկ»՝ առանց քաղաքական իրավունքների ու պարտականությունների...

«Քաղաքացու համար,- ինչպես նկատում է Քաջազնունին,- Հայրենիքը այն Երկիրն է, որի տէրն ու տնօրէնը ինքն է, իր համաքաղաքացիների հետ միասին», իսկ «Հայրենիք կազմելու, այսինքն՝ մի երկրի տէր ու տնօրէն լինելու միակ միջոցը պետութիւն հաստատելն է»[34]: Սակայն, խնդիրը նրանում է, որ «Պետություն ստեղծում են այն ազգերը, որոնց ցեղային բաղկացութեան գծերը յանգում են ներդաշնակութեան: Այս ներդաշնակութիւնը հնարաւոր է այն դէպքում, երբ ազգութիւնը բաղկացնող խմբակցութիւններից մէկը կարողանում է իր ցեղային խառնուածքը պարտադրել եւ հարազատել տալ միւսներին: Հայաստանի ներանջատական բնութեան շնորհիւ այս առաջընթացը մեզանում չափազանց դանդաղ կերպով տեղի ունեցաւ: Մենք համակարծիք ենք Հայկ Ասատրյանի հետ այն հարցում, որ «Արմեններ»-ը չկարողացան իսպառ նլաճել «հայեր»-ին: Հայաստանում ապրեցին քաղաքական տարբեր զգացումներ: «Արմեններ»-ը մահը նախընտրեցին ստրկութիւնից, «հայեր»-ը հացի աշխատանքը՝ ազատութիւնից: Մէկը հետապնդեց ազատութեան իդէալը, միւսը՝ շինարարութեան եւ հենց դրա շնորհիվ էլ հայոց մշակութային եւ քա-

[33] Քաջազնունի Հ., Ազգ եւ հայրենիք, Պեյրութ, 1979, էջ 299-300:
[34] Նույն տեղում, էջ 299 – 300:

ղաքական «ես»-ը մնաց պառակտուած»[35]: Եվ ինչպես որ չենք կարող չհամաձայնել Ասատրյանի հետ, քանի որ մինչև այսօր էլ Հայաստանում առկա է այդ երկու «իդեալների» առճակատումը, «ցեղային բաղկացութեան գծերի» ներդաշնակության բացակայությունը, առանց որի հնարավոր չէ կայուն և ամուր պետության ստեղծումը, նույն կերպ էլ չենք կարող հակադարձել Քաջազնունուն, երբ ասում է. «Քաղաքացին քաղաքացի է եւ, հետեւապէս, ունի Հայրենիք այն չափով միայն, ինչ չափով տէր է երկրին: Պարզ հպատակը, այսինքն՝ քաղաքականապէս իրաւազուրկ մարդը Հայրենիք չունի, ինչպէս չունի Հայրենիք նաեւ քաղաքականապէս իրաւազուրկ ազգը»[36]: Բայց սա բոլորովին այլ խնդիր է, որ հատուկ վերլուծության կարիք ունի:

Գերմանացի մեծ իմաստասեր Իմանուել Կանտն իր սոցիալական փիլիսոփայության հիմքում դրել էր ազատության գաղափարը և իր բարոյագիտության ոսկե կանոնն էր դարձրել այն, որ մարդն ինքնին նպատակ է, այսինքն՝ երբեք և ոչ մեկի կողմից (նույնիսկ՝ Աստծո) չի կարող օգտագործվել սոսկ որպես միջոց: Շատ բան է կախված մարդուց: Կա այսպիսի մի հասկացություն՝ արժանապատվություն: Պահպանեցե՛ք դա: Դրա ստեղծման համար հաճախ մի ամբողջ կյանք է պետք, կորցնելու համար՝ բավական է նույնիսկ մեկ ակնթարթը: Մի՛ դարձեք ուրիշի ճորտը: Թո՛ւյլ մի տվեք՝ ձեր իրավունքներն անպատիժ կերպով ոտնահարվեն: Թո՛ւյլ մի տվեք, որ ձեզ տրորեն: Անգամ պարտք մի վերցրեք, եթե համոզված չեք, որ կարող եք խոստացված ժամանակում վերադարձնել: Հրաժարվե՛ք ուրիշի բարերարությունից: Մի՛ վերածվեք մակաբույծի և շողոքորթի: Միայն այդպես է հնարավոր պահպանել սեփական արժանապատվությունը: Իսկ ով իրեն կամովին դարձնում է ճիճու, թո՛ղ չբողոքի, թե ոտքերով տրորում են[37]:

[35] Ասատրյան Հ., Հատընտիր, էջ 27:
[36] Քաջազնունի Հ., Ազգ եւ հայրենիք, էջ 302:
[37] Гулыга А., Кант, М.: 1977, с. 160-161.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ., Երկեր, Եր., 1981:
2. Ահարոնեան Ավ., Հայրենիքիս համար, Պոսթոն, 1920:
3. Ասատրեան Հ., Հայաստան- արիական նախադիրք Առաջաւոար Ասիայում, Եր., 2000:
4. Ասատրյան Հ., Արթնացիր, հայ մարդ, Եր. 1998:
5. Ասատրյան Հ., Հատընտիր, Եր., 2004:
6. Գաբրիելեան Մ.Ս., Հայ ցեղը, Նիւ-Եէորք, 1911:
7. Խաչատրեան Լ. Մ., Գրաբարի ուսումնական բառարան, Սուրբ Ղազար, Վենետիկ, 2016:
8. Նժդեհ Գ., Հատընտիր, Եր., 2001:
9. Պողոսեան Յ.Պ., Ներածութիւն հայ հոգեբանութեան, 1958:
10. Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. 2, Ժնև, 1912:
11. Քաջազնունի Հ., Ազգ եւ հայրենիք, Պեյրութ, 1979:
12. «Հեռաձայն» ժողովրդական օրաթերթ, ազգային, գրական և քաղաքական, 1913, թ. 39:
13. Аристотель, Соч. в 4-х т., т. 3, М., 1981.
14. Васильев А. В., Что такое отечество? Постов н/Д, 1905.
15. Вернадский В. И., Биосфера, Избр. труды по биогеохимии, М., 1960.
16. Вернадский В. И., Научная мысль как планетарноеявление, М., 1991.
17. Гулыга А., Кант, М., 1977.
18 Гумилев Л .Г., Этногенез и биосфера Земли. М., 1990.
19. Turkey in Europe by Eliot, Sir Charles, Published by Frank Cass & Co. Ltd., London, 1965.

Юрий ОВАКАНЯН
Преподаватель кафедры философии и армянской истории, АГЭУ,
кандидат философских наук, доцент

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

НЕОСОЗНАВАНИЕ ГАРМОНИЧНОСТИ ГЕОГРАФИЧЕСКОЙ СРЕДЫ И НАРОДА В КОНТЕКСТЕ «ИСКУССТВА ПОТЕРИ РОДИНЫ И НАЦИИ»

Человеческая история – это не только история экономических, социально-политических и культурных побед и завоеваний, но и поражений и потерь. Разрушаются бывшие могущественные империи и нации, и на замену им приходят новые. Этот процесс имеет как объективные, так и субъективные причины. В числе этих причин особую значимость имеет нарушение взаимосвязи и гармонии между географической средой и проживающего в ней народа. Обречены на смерть все те народы, которые не могут приспосабливать, адаптировать под себя окружающую среду. Автор в этой статье развивает идею о том, что неосознавание и нарушение процесса «приспосабливания» стали одним из основных причин упадка, разрушения одного из могущественных государств Ближнего Востока – империи Тиграна Великого «от моря до моря», население которого составляло 5 миллионов армян, тогда как население мира было около 200 миллионов. Этот Великий народ, давший в течении двух столетий Византийской империи много императоров и военачальников, внесший большой вклад в становление и укрепление Грузинской, Османской и Русской империй, переживший в начале XX века геноцид, лишившийся родины, сумевший чудом спасти лишь 1/10 часть своей исторической родины, и сегодня стоит перед сложнейшей проблемой «бытия-небытия» и потери родины, и это потому, что не только в прошлом, но и сегодня не смог приспособить, адаптировать под себя Армянское нагорье...

Ключевые слова: *место рождения, родина, нация, государство, Армянское нагорье, адаптация окружающей среды, гармония, потеря отечества и нации*

Yuri Hovakanyan
Acting Head of the Chair of Philosophy and Armenian History, ASUE,
PhD in Philosophy, Associate Professor

VISION OF ARMENIAN SOCIETY

IGNORANCE OF GEOGRAPHICAL ENVIRONMENT AND PEOPLE'S HARMONY IN THE CONTEXT OF "THE ART OF LOSING MOTHERLAND AND NATION"

The history of humanity is not only a history of economic, socio-political, cultural victories and achievements, but also a history of defeats and losses. The once powerful empires and nations are being destroyed, and new ones are coming to replace them. This process has both objective and subjective reasons. Of particular importance among these reasons is the disruption of the interconnection and harmony between the geographical environment and the people living in it. All the people who are unable to adapt the natural environment to themselves are doomed to death. In this paper, the author develops the view that disruption and ignorance of the process of "adaptation" has become one of the main reasons for the destruction of one of the most powerful countries in the Middle East, the empire of Tigran the Great, which included area of "sea from sea" with the population of five million, when the world's population was about 200 million. The Great Nation, who gave emperors and generals to the Byzantine Empire for two hundred years, with their nobility, martial arts and intellectuals, greatly contributed to the establishment and strengthening of the Georgian, Ottoman and Russian empires, who miraculously managed to preserve 1/10 of its historical homeland after surviving in genocide in the twentieth century, today faces the most serious issue of being deprived of the motherland and an issue of "to be or not to be", because today as before, they have not been able to adapt the Armenian Plateau to themselves....

Keywords: *Place of birth, homeland, nation, state, Armenian Highlands, adaptation of the environment, harmony, loss of homeland and nation*

ԲՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ՝ ՀԱՆՈՒՆ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԻԶՆԵՍԻ ՄՈՆՈՊՈԼԱՑՄԱՆ

DOI: 10.52174/2579-2989_2021_3_125

Հիմնաբառեր. *ձկնաբուծություն, գենետիկ և հորմոնալ միջամտություններ, սեռի կարգավորում, նույնասեռ կամ ստերիլ սերունդներ, պոլիպլոիդներ*

Աշխարհի բնակչության շարունակական աճն ու դրան ուղեկցող պարենային հիմնախնդիրը դարձել են ձկնամթերքի բնական պաշարների գերշահագործման սպառնալիք: Եվ պատահական չէ, որ ձկնորսությունն աստիճանաբար իր տեղը զիջում է ձկնաբուծությանը՝ խթանելով արտադրողականության բարձրացման տեխնոլոգիաների կատարելագործումը: Ուստի, գլոբալ մրցակցության սրումը և մատակարարման շուկաներում նշանակալի տեղ զբաղեցնելու ձգտումները նպաստում են ձկնաբուծության մեջ գենային վերափոխումների, հորմոնալ միջամտությունների, նույնասեռ և ստերիլ սերունդների թողարկման տեխնոլոգիաների լայնորեն կիրառմանը, որոնք թույլ են տալիս բարձրացնել արտադրողականությունն ու շահութաբերությունը: Այդուհանդերձ, նմանօրինակ միջամտությամբ արտադրվող սննդամթերքը հիմնականում վնասակար է մարդու առողջության համար և արգելվում է մի շարք երկրներում՝ ձկնամթերքի նկատմամբ սահմանված տեխնիկական կանոնակարգերով:

Մարդկության մի ստվար զանգվածի համար կայուն ձկնորսությունը և ձկնաբուծական արտադրությունը ծառայում են որպես պարենային անվտանգության և զբաղվածության ապահովման միջոց: Ձկնային տնտեսությունը կարևոր դերակատարում ունի ոչ միայն թերսնուցման խնդիրների լուծման գործում, այլև, շնորհիվ աճող պահանջարկի և արտահանման ծավալների շարունակական ընդլայնման, բազմաթիվ երկրների համար վերածվել է եկամուտների ավելացման կայուն աղբյուրի:

Աննա ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2006 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն», իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2012 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2019 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում: «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է, ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ: Վերապատրաստվել և դասախոսություններ է վարել եվրոպական մի շարք բուհերում: Հեղինակ է 45 գիտական և 8 գիտահանրամատչելի վերլուծական աշխատանքների:

ORCID ID https://orcid.org/0000-0002-5854-2473

Բարձրակարգ սպիտակուցների անփոխարինելի աղբյուր հանդիսացող ձկնամթերքի նկատմամբ համաշխարհային պահանջարկի աճին զուգընթաց, մեծանում է վայրի բնության գերշահագործման սպառնալիքը: Բացի այդ, ձկների և ձկնամթերքի՝ ներկայում պահանջվող որակը և անհրաժեշտ քանակության անխափան մատակարարումը գրեթե անհնար է ապահովել բացառապես ձկնորսության հաշվին: Ուստի և ձկնորսությունն աստիճանաբար իր տեղը զիջում է ձկնաբուծությանը (ակվակուլտուրային)[1], որտեղ վերջին շրջանում լայն տարածում են գտել գործարար նպատակներով գենետիկական և հորմոնային միջամտությունները՝ ձկների բազմացման և ցանկալի սեռի սերնդի ստացման հնարավորությունների կարգավորմամբ:

Ըստ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության 2020 թվականի զեկույցի գնահատականների՝ 2018 թվականին աշխարհում արտադրվել է շուրջ 179 մլն տոննա ձուկ, որի առաջնային վաճառքից ստացված հասույթը դրամական արտահայտությամբ կազմել է 401 մլրդ ԱՄՆ դոլար, և դրանից 250 մլրդ ԱՄՆ դոլար գնահատված շուրջ 82 մլն տոննան ակվակուլտուրայի արտադրանքն է: Ընդ որում, ձկների ընդհանուր ծավալի գերակշիռ մասը՝ 156 մլն տոննան, արտադրվել է մարդու կողմից սննդի տեսքով սպառման, իսկ մնացած 22 մլն տոննան՝ ոչ սննդային օգտագործման (հիմնականում՝ ձկան ալյուրի և ձկան յուղի արտադրության) նպատակով[2]:

Ակվակուլտուրային է բաժին ընկել 2018 թվականին համաշխարհային շուկաներ մատակարարված ձկների ամբողջ ծավալի 46%-ը, ինչը 25.7%-ով գերազանցում է 2000 թվականի նույն ցուցանիշը[3]: Սա, ինչ խոսք, դրական միտում է, քանզի արհեստական պայմաններում ձկների բուծման ծավալների ավելացմամբ թուլանում է կախվածությունն օվկիանոսների և այլ բնական ջրային ռեսուրսների ձկնային պաշարներից:

Միաժամանակ, խոր մտահոգության տեղիք են տալիս ձկնորսության և ձկնաբուծության ոլորտում կորուստների ծավալները. տարեկան կորչում կամ փչանում է որսված ձկների մոտ 35%-ը: Աշխարհի շատ շրջաններում կորած և փչացած ձկների ընդհանուր քանակը 30–35% է: Փչացման մասնաբաժինն ամենաբարձրն է Հյուսիսային Ամերիկայում և Օվկիանիայում, որտեղ որսված ձկների մոտ կեսը թափվում է սպառման փուլում[4]:

Ձկնաբուծության ոլորտում առաջատար դիրք է զբաղեցնում Ասիան, որտեղ վերջին 20 տարվա ընթացքում բնեղեն արտահայտությամբ արտադրվում է ձկնեղենի համաշխարհային ծավալի շուրջ 89%-ը: Միայն Չինաստանը, սկսած 1991 թվականից, այնքան ձուկ է աճեցնում ուտելու համար, որքան աշխարհի մնացած երկրները՝ միասին վերցված: 2002 թվականից Չինաստանը ոչ միայն ձկների ամենախոշոր արտադրողն է, այլև ձկների և ձկնամթերքի հիմնական արտահանողը: Խոշոր արտահանողներ են Նորվեգիան, Վիետնամը, Հնդկաստանը, Չիլին և Թաիլանդը[5]:

Արտադրողականության բարձրացման, շուկայի մոնոպոլացման (մենատիրության) և գերշահույթների ստացման ձգտումները հանգեցրել են ձկնաբուծության ոլորտում կենսատեխնոլոգիական, գենետիկական և հորմոնային միջամտությունների տարածմանը, ինչի միջոցով հնարավոր է դարձել սահմանափակել կամ խթանել ձկների բազմացումը, կանխորոշել սպասվող սերնդի սեռը[6] և այլ բնական հատկանիշներ: Այդ-

[1] Ակվակուլտուրան կամ ձկնաբուծությունը ձկնային տնտեսությունների, կենդանիների և բույսերի բուծումն է ջրում: Ի տարբերություն բնական պայմանների, ակվակուլտուրայում կենդանիների և բույսերի բուծումն իրականացվում է արհեստականորեն՝ մարդու անմիջական միջամտությամբ և վերջինիս կողմից անհրաժեշտ պայմանների ապահովմամբ:

[2] ФАО. 2020. Состояние мирового рыболовства и аквакультуры – 2020. Меры по повышению устойчивости. Рим, ФАО. https://doi.org/10.4060/ca9229ru с. 2.

[3] Նույն տեղում, էջ 6:

[4] Նույն տեղում, էջ 65:

[5] Նույն տեղում, էջ 6-8:

[6] Ձկների սեռը գենետիկորեն որոշվում է՝ ըստ սեռական քրոմոսոմների: Եթե մարդկանց և այլ կաթնասունների դեպքում էգը հոմոգամետ է (բնորոշվում է XX քրոմոսոմներով), իսկ արուն՝ հետերոգամետ (XY), թռչունների պարագայում գերակշռում է հակառակ համակարգը՝ էգը հետերոգամետ է (WY) և (XY), իսկ արուն՝ հոմոգամետ (YY), ապա ձկների դեպքում երկու համակարգն էլ առկա է:

պիսով՝ գիտատեխնիկական առաջընթացը մարդուն թույլ է տվել միջամտել բնության օրենքներին՝ դրանք ծառայեցնելով սեփական շահադիտական նկրտումներին...

Մրցակցության սրման և պահանջարկի աճի պայմաններում ձկնաբուծական արդյունաբերությունը մեծապես կենտրոնանում է նույնասեռ սերունդների ստացման մեթոդների մշակման և կիրառման վրա, հատկապես այն ձկնատեսակների համար, որոնց դեպքում տնտեսապես արժեքավոր հատկանիշները (չափսեր, զանգված՝ արտաքին գրավչություն՝ դեկորատիվ ձկնատեսակների պարագայում) էապես խեղաթյուրվում են վաղ սեռահասունացման պատճառով՝ այդպես էլ չհասնելով որսի և վաճառքի համար ընդունելի չափսերի: Նմանօրինակ գենետիկական-կենսաբանական միջամտությունները կարող են մեծապես ազդել որոշ տեսակների բուծման շահութաբերության վրա:

Նույնասեռ վտառները կարող են օգտագործվել նաև ձկների բնական վերարտադրության կենսաբանական զսպման համար, ինչը պակաս արդյունավետ է, քան ստերիլ վտառների ձևավորումը:

Ձկնաբուծության արդյունաբերական և տնտեսական ցուցանիշների բարելավման նպատակով հաճախ կիրառվում է նաև վերջիններիս վերարտադրողական կարողությունների չեղարկման՝ ստերիլացման (ստերջացման, ամուլացման) մեթոդը: Ստերիլ ձկները կամ այլ կերպ՝ «տրիպլոիդները» ֆիզիոլոգիապես ընդունակ չեն վերարտադրվելու: Տրիպլոիդիան ենթադրում է միջամտություն բեղմնավորման գործընթացին, որի արդյունքում ձկներն աճում են, հասունանում, բայց անկարող են լինում արտադրելու կենսունակ սեռական բջիջներ: Սա գենետիկական փոփոխություն չէ. որևէ գեն չի փոփոխվում կամ ներդրվում: Փոխարենը, արհեստական մեթոդներով քրոմոսոմների քանակն ավելացնելու հետևանքով ձկները դառնում են անպտուղ:

Բնության վերարտադրողականության նմանօրինակ խախտումներն ունեն ակնհայտ տնտեսական շարժառիթներ: Մասնավորապես՝ գոյություն ունի որոշակի կապ ձկների սեռահասունացման և աճի միջև. սեռահասուն ձկների աճը դանդաղում է կամ ընդհանրապես դադարում, փոխարենը, ստերիլ ձկները կամ տրիպլոիդներն արագ աճի առավել լայն հնարավորություններ ունեն, քանի որ սեռական գեղձերի զարգացման խափանումների արդյունքում խթանվում է վերջիններիս ֆիզիկական աճը, ավելանում քաշը՝ դրանց վաճառքից ապահովելով ավելի բարձր եկամուտներ: Ավելին, սննդի և վաճառքի կետերում նախապես ստերիլացված կենդանի ձկների պահպանման պարագայում երաշխավորվում է դրանց բազմացման անհնարինությունը, ինչը ձկների բնական վերարտադրության դեպքում խոշոր մատակարարներին «ապահովագրում» է պահանջարկի անցանկալի վայրիվերումներից...

Միաժամանակ, ձկների ցանկալի սեռի ընտրությունը կարող է պայմանավորված լինել նաև արտաքին տվյալների տարբերությամբ: Մասնավորապես՝ դեկորատիվ ձկնաբուծություն մեջ որոշ ձկնատեսակների արուների նկատմամբ պահանջարկն ավելի բարձր է էգերի համեմատ, դրանց առավել ակնառու էսթետիկական գրավչության պատճառով: Նման դեպքերում էգերի կարիքը զգացվում է միայն բազմացման նպատակով:

Ստերիլ կամ նույնասեռ սերնդի զանգվածային արտադրության համար մատչելի տեխնիկաներից առավել լայնորեն կիրառվում է սեռափոխության հորմոնային հարուցումը[7]:

Գենետիկական ուսումնասիրությունները բացահայտել են մի հետաքրքրական ֆենոմեն. ձկների սեռը կարող է վերափոխվել, և արուն կարող է վերածվել ֆունկցիոնալ էգի, իսկ էգը՝ ֆունկցիոնալ արուի. երևույթը հայտնի է որպես սեռափոխություն կամ մոնոսեքս մշակույթ[8]: Ամենաուշագրավը, թերևս, այն է, որ ձկների սեռափոխությունը կարելի է խթանել արհես-

[7] Atul K.Singh, Introduction of modern endocrine techniques for the production of monosex population of fishes // General and Comparative Endocrinology, Volume 181, 15 January 2013, Pages 146-155, DOI: https://doi.org/10.1016/j.ygcen.2012.08.027

[8] Saraswati J., Monosex Culture and Sex Reversal in Fishes: Genetics / https://www.yourarticlelibrary.com/fish/genetics-fish/monosex-culture-and-sex-reversal-in-fishes-genetics/88716

տականորեն՝ արական հորմոնների, անդրոգենների (ներառյալ՝ տեստոստերոն և անդրոգեն C 19 ստերոիդ) և իգական հորմոնի՝ էստրոգենների (C 18 ստերոիդների) կիրառմամբ:

Հորմոնային բուծմամբ՝ ամենահաջողվածը տիլապիայի սեռափոխությունն է, որի դեպքում սեռափոխված էգերը զուգորդվում են նորմալ էգերի հետ՝ 100%-անոց իգական սերունդ արտադրելու համար: Աշխարհում նման տեխնոլոգիա ներկայում լայնորեն կիրառվում է ծիածանափայլ իշխանի բուծման համար[9]:

Թեև ձկնաբուծության մեջ կանխամտածված սեռափոխությունը գլխավորապես ունի առևտրային շարժառիթներ, սակայն դրա ամենամեծ թերությունն այն է, որ նման հորմոնով մշակված ձկները չեն կարող օգտագործվել սննդի համար՝ մի շարք երկրներում սննդամթերքում քիմիական նյութերի օգտագործման վերաբերյալ գործող կանոնակարգերի պատճառով: Այդուհանդերձ, դեկորատիվ ձկնաբուծության նկատմամբ այդ արգելքները չեն տարածվում:

Ընդհանուր առմամբ, ձկների սեռի կարգավորման բոլոր տեխնիկաներն էլ (ձեռքով բեղմնավորում, հիբրիդացում, գինոգենեզ, անդրոգենեզ, սեռափոխություն, որը կարող է զուգակցվել նույնասեռ կամ ստերիլ սերունդների բուծման այլընտրանքային ծրագրերով և այլն) ունեն որոշակի սահմանափակումներ, որոնք կանխում են դրանց լայն կիրառումը: Ուստի, կախված առանձին երկրներում գործող չափորոշիչներից և սահմանափակումներից, տարբերվում են նաև տվյալ երկրի համար արտադրվող կամ ներմուծվող ձկնատեսակների սեռի կարգավորման տեխնոլոգիաները:

Այդուհանդերձ, համաձայն ԵՄ օրգանական չափորոշիչների, ձկների բազմացման վերոնշյալ տեխնոլոգիաներից որևէ մեկը չի կարող կիրառվել օրգանական արտադրանք թողարկող ձկնաբուծական տնտեսություններում[10]: ԵԱՏՄ կարգավորումներն առավել մեղմ են ձևակերպված՝ առանց բազմացման տեխնոլոգիաների հստակեցման: Ըստ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի՝ «ձկնաբուծական սննդամթերքը չպետք է պարունակի բնական կամ սինթետիկ հորմոնալ նյութեր և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ» :

Ինչևիցե, ձկների նույնասեռ վտառների ստացման ակնհայտ տնտեսական օգուտները դրդել են տեխնոլոգիաների կատարելագործմանը՝ թույլ տալով նման փորձը տարածել նաև ուտելի ձկնատեսակների շրջանում: Մասնավորապես՝ Օհայոյի պետական համալսարանում գործող Ակվակուլտուրայի հետազոտության և զարգացման Օհայոյի կենտրոնը (OCARD) մշակել և, Կանադայի խոշորագույն ակվակուլտուրային ֆերմայի՝ Sandplains Aquaculture-ի հետ համատեղ, կյանքի է կոչել արդյունաբերական առումով արագորեն աճող նույնասեռ դեղին թառի (yellow perch, տես նկար 1) և կապտախռիկավորների (bluegill, տես նկար 2) աճեցման տեխնոլոգիան: Փորձարկումները սկսվել են Տորոնտոյի և Նյու Յորքի շուկաներում՝ բացառիկ պահանջարկ վայելող կապտախռիկավորների արական սեռի սերնդի ստացմամբ: Արդյունքներն առավել քան խոսուն

ՆԿԱՐ 1

Դեղին թառ (yellow perch)

[9] Dunham R.A., Pruduction and use of monosex or sterile fishes in aquaculture // Journal "Rewiews in Aquatic Sciences", 1990 Vol. 2, No. 1, pp. 1-17, ref. 223.

[10] Требования к выращиванию аквакультуры в органических хозяйствах согласно с Директивой органического производства для третьих стран, равносильной Директиве ЕС, https://organicstandard.ua/files/aquaculture/ua/II.2-H-OT-01-2_%D0%A2%D1%80%D0%B5%D0%B1%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F%20%D0%BA%20%D0%B2%D1%8B%D1%80%D0%B0%D1%89%D0%B8%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8E%20%D0%B0%D0%BA%D0%B2%D0%B0%D0%BA%D1%83%D0%BB%D1%8C%D1%82%D1%83%D1%80%D1%8B_ru_v2.pdf

[11] Технический регламент Евразийского экономического союза «О безопасности рыбы и пищевой рыбной продукции», http://docs.cntd.ru/document/420394425.

ՆԿԱՐ 2

Կապտախռիկավոր (bluegill)

են. ա) բացառապես արական սեռի վտառներում ձկնատեսակի աճի տեմպերն ու քաշի ցուցանիշները 2.1 անգամ գերազանցում են սովորական երկսեռ վտառների համապատասխան ցուցանիշները, բ) միայն արական սեռի խմբերում աճն անհամեմատ համաչափ է՝ տատանումների ավելի ցածր գործակցով, գ) խառը սեռերի խմբերի համեմատ՝ միայն արական սեռի խմբերում նշանակալիորեն բարձր է ձկների գոյատևման հնարավորությունը՝ շնորհիվ առավել համասեռ չափերի: Այսպիսով՝ կապտախռիկավորների միայն արական սեռի սերնդի հաջող ստացման արդյունքում 30-35%-ով բարձրանում է աճի տեմպը և 20-30%-ով՝ էլեկտրաէներգիայի խնայողության ծախսերը՝ ի հաշիվ առավել արագ աճի տեմպերի[12]:

Ինչ վերաբերում է դեղին թառին, ապա այս դեպքում տնտեսապես շահավետ է բուծել միայն էգերի, քանի որ, համաձայն ուսումնասիրությունների, միայն էգերից բաղկացած վտառները 26.3%-ով ավելի արագորեն են աճում երկսեռ և 66%-ով ավելի արագորեն՝ միայն արուներից կազմված վտառների համեմատ[13]:

Հնդկաստանում նույնասեռ սերունդների խթանման փորձը լայնորեն կիրառվում է ծովախեցգետինների (նկար 3) արտադրության մեջ: Պատճառները դարձյալ տընտեսական են. արուների միջավայրում բուծվող վաղաժամ հասունացած էգերի սոմատիկ աճը դադարում է վերարտադրության փուլ անցնելու դեպքում, ինչն ի վերջո ազդում է ծովախեցգետինների ընդհանուր «բերքատվության» վրա՝ մեծացնելով արտադրական ծախսերը, քանի որ փոքր չափսերով էգերը վաճառքի համար հետաքրքրություն չեն ներկայացնում: Սա էլ հանգեցրել է ծովախեցգետինների արուների նույնասեռ արտադրության խթանմանը[14]:

Նիգերիայում աֆրիկյան լոքոների (Clarias gariepinus, տես նկար 4) նույնասեռ թրթուռների ստացման համար կիրառվում են այնպիսի կենսատեխնոլոգիական մեթոդներ, ինչպիսիք են անդրոգենեզը և գի-

ՆԿԱՐ 3

Ծովախեցգետին (freshwater prawn)

ՆԿԱՐ 4

Աֆրիկյան լոքո (Clarias gariepinus)

[12] "Commercialization of fast-growing monosex fish on the way, says Wang", by Hanping Wang, CONNECTIONS NEWSLETTER: Winter 2021 / https://southcenters.osu.edu/newsletter/winter-2021/commercialization-fast-growing-monosex-fish-the-way-says-wang

[13] Նույն տեղում:

[14] Balamurugan P., Mariappan P., Balasundaram Ch. (2004), Impacts of mono-sex Macrobrachium culture on the future of seed availability in India // Aquaculture Asia, Volume IX No.2, April-June 2004, ISSN 0859-600X, pp. 15-16.

նոգենեզը: Ըստ էության, լոքոները շուրջ 15 րոպե ենթարկվում են ուտրամանուշակագույն ճառագայթման, որից հետո՝ 20 րոպե տևողությամբ սառը ցնցման՝ 2°C ջերմաստիճանում[15]:

Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ թեև ձկների և այլ ջրային կենդանիների «ճակատագրում» մարդու նմանօրինակ մասնակցությունն արդարացվում է տնտեսական արդյունավետության բարձրացման, ձկնամթերքի բնական պաշարների խնայողության, պարենային անվտանգության ապահովման տեսանկյուններից, այդուհանդերձ, բնության օրինաչափությունների խախտմամբ «Աստվածային գործառույթների» ստանձնումը վտանգավոր երևույթ է... Մանավանդ, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ գիտությունը զարգանալու և ներգործության նոր թիրախներ փնտրելու «սովորություն» ունի...

[15] Olaniyi W.A., Omitogun O.G. (2014) Monosex Fish Production in Fisheries Management and Its Potentials for Catfish Aquaculture in Nigeria. In: Behnassi M., Syomiti Muteng'e M., Ramachandran G., Shelat K. (eds) Vulnerability of Agriculture, Water and Fisheries to Climate Change. Springer, Dordrecht. https://doi.org/10.1007/978-94-017-8962-2_19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Commercialization of fast-growing monosex fish on the way, says Wang», by Hanping Wang, CONNECTIONS NEWSLETTER: Winter 2021, https://southcenters.osu.edu/newsletter/winter-2021/commercialization-fast-growing-monosex-fish-the-way-says-wang
2. Atul K.Singh, Introduction of modern endocrine techniques for the production of monosex population of fishes // General and Comparative Endocrinology, V. 181, 15 January 2013, P. 146-155, DOI: https://doi.org/10.1016/j.ygcen.2012.08.027
3. Balamurugan P., Mariappan P., Balasundaram Ch. (2004), Impacts of mono-sex Macrobrachium culture on the future of seed availability in India // Aquaculture Asia, Volume IX No.2, April-June 2004, ISSN 0859-600X, pp. 15-16.
4. Dunham R.A., Pruduction and use of monosex or sterile fishes in aquaculture // Journal «Rewiews in Aquatic Sciences», 1990 Vol. 2, No. 1, pp. 1-17, ref. 223.
5. FAO (2019). The State of the World's Aquatic Genetic Resources for Food and Agriculture. FAO Commission on Genetic Resources for Food and Agriculture assessments. Rome.
6. Olaniyi W.A., Omitogun O.G. (2014) Monosex Fish Production in Fisheries Management and Its Potentials for Catfish Aquaculture in Nigeria. In: Behnassi M., Syomiti Muteng'e M., Ramachandran G., Shelat K. (eds) Vulnerability of Agriculture, Water and Fisheries to Climate Change. Springer, Dordrecht. https://doi.org/10.1007/978-94-017-8962-2_19
7. Saraswati J., Monosex Culture and Sex Reversal in Fishes: Genetics / https://www.yourarticlelibrary.com/fish/genetics-fish/monosex-culture-and-sex-reversal-in-fishes-genetics/88716
8. Технический регламент Евразийского экономического союза «О безопасности рыбы и пищевой рыбной продукции». Режим доступа: http://docs.cntd.ru/document/420394425. Дата обращения 04.08.2021.
9. Требования к выращиванию аквакультуры в органических хозяйствах согласно с Директивой органического производства для третьих стран, равносильной Директиве ЕС, https://organicstandard.ua/files/aquaculture/ua/II.2-H-OT-01-2_%D0%A2%D1%80%D0%B5%D0%B1%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F%20%D0%BA%20%D0%B2%D1%8B%D1%80%D0%B0%D1%89%D0%B8%D0%B2%D0%B0%D0%B-D%D0%B8%D1%8E%20%D0%B0%D0%BA%D0%B2%D0%B0%D0%BA%D1%83%D0%B-B%D1%8C%D1%82%D1%83%D1%80%D1%8B_ru_v2.pdf
10. ФАО. 2020. Состояние мирового рыболовства и аквакультуры – 2020. Меры по повышению устойчивости. Рим, ФАО, с. 2. https://doi.org/10.4060/ca9229ru,

Анна ПАХЛЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук, доцент

А ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...?

НАРУШЕНИЕ ПРИРОДНЫХ ЗАКОНОВ ВО ИМЯ МОНОПОЛИЗАЦИИ РЫБОВОДСТВЕННОГО БИЗНЕСА

Растущее население мира и связанная с этим продовольственная проблема стали угрозой чрезмерной эксплуатации природных рыбных запасов. И вполне разумно, что рыболовство постепенно уступает место рыбоводству, способствуя совершенствованию технологий повышения продуктивности. Таким образом, обострение глобальной конкуренции и стремление занять значительное место на рынках сбыта способствует широкому использованию генетических модификаций, гормональных вмешательств, технологий разведения однополых и стерильных потомств в рыбоводстве, позволяющих повысить продуктивность и прибыльность. Однако продукты питания, произведенные в результате таких вмешательств, как правило, вредны для здоровья человека и запрещены в некоторых странах техническими регламентами на рыбную продукцию.

Ключевые слова: *рыбоводство, генетические или гормональные вмешательства, регулирование пола, однополые или стерильные потомства, полиплоиды*

Anna PAKHLYAN
Researcher of «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics, Associate Professor

DO YOU KNOW THAT...?

VIOLATION OF NATURE LAWS FOR MONOPOLIZATION OF FISHERY BUSINESS

The growing world population and the associated food problem have become a threat to the overexploitation of natural fish stocks. And it is quite reasonable that fishing is gradually giving way to fish farming, contributing to the improvement of technologies for increasing productivity. Thus, the aggravation of global competition and the desire to occupy a significant place in the sales markets contributes to the widespread use of genetic modifications, hormonal interventions, technologies for breeding mono-sex and sterile offspring in fish farming, which makes it possible to increase productivity and profitability. However, food produced as a result of such interventions is generally harmful to human health and is prohibited in some countries by technical regulations on fishery products.

Keywords: *fish farming, genetic or hormonal interventions, sex regulation, mono-sex or sterile progeny, polyploidy*

Լրատվական գործունեություն իրականացնող
«**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Լույս է տեսնում տարեկան 6 անգամ

Խմբագիր՝ ՍԱԹԵՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Օտար լեզուների խմբագիրներ՝ ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ձևավորումը՝ ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ

Լուսանկարները՝ ՌԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ԱՄԲԵՐԴ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հասցե՝ Նալբանդյան 128, 3-րդ մասնաշենք, 10-րդ հարկ

Հեռախոս՝ (010) 593 429

Էլփոստ՝ amberd.asue@gmail.com, amberd@asue.am

Կայքէջ՝ www.asue.am → «Ամբերդ» տեղեկագիր

Ստորագրված է տպագրության՝ 01.09.2021 թ.:
Պատվեր՝ 645:
Տպաքանակ՝ 150:

Չափսը՝ 70x108 1/16:

«Տնտեսագետ» հրատարակչություն
Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության տպագրական արտադրամասում
Երևան, Նալբանդյան 128

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ամբերդ» գիտահանրամատչելի տեղեկագրի խմբագրություն ներկայացվող նյութերը պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

- շարվածքի տառատեսակ՝ GHEA Grapalat,
- տառաչափ՝ 12,
- տողամեջ՝ 1,5,
- հեղինակի անուն, ազգանուն, աշխատավայր, պաշտոն, գիտական աստիճան, կոչում (*հայերեն, ռուսերեն, անգլերեն)*, հեռախոսահամար,
- հակիրճ ինքնակենսագրություն,
- տողատակում՝ հղումներ.
  աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ, մամուլի դեպքում՝ համար, էջ,
- համառոտագիր, հիմնաբառեր (*հայերեն, ռուսերեն, անգլերեն),*
- գրականության ցանկ: